Բ. Խ. ՄԵԺԼՈՒՆՑ

# Շամշադին Դիլիջանի ԽՈՍՎԱԾՔԸ

ԵՐԵՎԱՆ • 1989

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Բ. Խ. ՄԵԺՈՒՆՑ

# ՇԱՄՇԱԴԻՆ-ԴԻԼԻՋԱՆԻ ԽՈՍՎԱԾՔԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1989

ԳՄԴ 81.2Հ
Մ 459

Գ ր ա խ ո ս՝ բան. գիտ. դոկտոր Ա. Ե. ՄԱՐԳՍՅԱՆ

**Մեժունց Բ. Խ.**

*Մ 459 Շամշադին—Դիլիջանի խոսվածքը /Երևանի պետ. համալս.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1989.— 224 էջ.*

Գրքում քննության են առնված խոսվածքի հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները ու բառային կազմը: Ներկայացված են գրաբարից Շամշադին—Դիլիջանի խոսվածքին անցած և բարբառային հատուկ բառերի բառացանկեր, ինչպես նաև առանձին բաժնով՝ խոսվածքի նմուշներ:

Մ $\frac{4602020100}{704(02)-89}$ 51—89 ԳՄԴ 81.2Հ

ISBN—5—8084—0033—3

МЕЖУНЦ БАРМИК ХАЧАТУРОВИЧ
ШАМШАДИН-ДИЛИДЖАНСКИЙ ГОВОР
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1989

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1989

# ԱՌԱՋԱԲԱՆ

*Շամշադին—Դիլիջանի խոսվածքն ընդգրկում է Շամշադինի, Իջևանի, Դիլիջանի և Կրասնոսելսկի շրջանները, որոնք պատմական Հայաստանի հնագույն գավառներից են։ Այդ են վկայում պեղումներից հայտնաբերված խեցեղեն և պղնձե իրերը, որոնց հնությունը հասնում է մինչև մ. թ. ա. առաջին հազարամյակը*[1]*, ինչպես նաև հայ և որոշ օտար պատմական աղբյուրներ. «Մեծ Կուենք (Մեծ Կուանք) Արցախ նահանգի 4-րդ գավառը... տեղավորվում է այժմյան Իջևանի շրջանում՝ շուրջ 975* կմ$^2$ *տարածությամբ։ Այդ գավառում հայտնի էր Լալ ավանը (այժմ Լալի գյուղ)»*[2]*։*

*Պատմագիրների վկայությամբ հիշյալ շրջանների մի մասը բնիկ է, մի զգալի մասն էլ տեղափոխվել է պատմական Արցախ նահանգի տարբեր գավառներից։ Այդ մասին մանավորապես մանրամասն է խոսվում Մ. Բարխուդարյանցի «Արցախ»*[3] *գրքում։ Ըստ հեղինակի ամբողջությամբ բնիկ է շրջաններից Զորաթան, Մովսես, Նորաշեն, Կարմիրաղբյուր, Ներքին Ծամքարակ, Նորագյուղ, Ջողազ գյուղերի բնակչությունը, իսկ Ղրղի, Բերդ, Լալիգյուղ, Այգեհովիտ, Ռևազլու, Խաշթառակ, Սևքար, Թալա, Լուսաձոր, Ներքին Աղդան, Աչաջուր գյուղերի բնակչությունը մասամբ է բնիկ, մեծ մասն էլ տեղափոխվել է Արցախի Ջրաբերդ, Խաչեն, Գյուլիստան գավառներից և այլ վայրերից։ Բաշգյուղ, Նավուր, Թովուզ, Հախում, Վերին Աղդան, Դիլիջան, Պողոսքիլիսա (Շամախյան), Իջևան գյուղերը*

---

[1] Տե՛ս Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի, Երևան, 1969։

[2] **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ Աշխարհացույցի, Երևան, 1963, **էջ 66։**

[3] **Մակար եպ. Բարխուդարյանց**, Արցախ, Բաքու, 1895։

*ստեղծվել են ուշ շրջանում՝ մերձակա բնակավայրերից և Երևանի նահանգից տեղափոխված հայերի շնորհիվ։*

*Այսպիսով, Շամշադին—Դիլիջանի խոսվածքով խոսող հայերը երկու հիմնական շերտ են կազմում՝ բնիկներ և Արցախի գավառներից տեղափոխվածներ։ Բնակչության համապատասխան խոսվածքը ևս դրսևորում է երկվություն՝ մի խումբ հատկանիշներով այն հարազատ է Արարատյան բարբառին, իսկ մի շարք այլ հատկանիշներով նույնանում է Ղարաբաղի բարբառի հետ։ Այսպիսի երկվությունը, բնականաբար, պատճառ է դարձել հայ լեզվաբանների անորոշ, երբեմն էլ հակասական կարծիքների համար։ Այսպես, Հր. Աճառյանը իր 1911 թ. լույս տեսած «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ ներկայացնելով Երևանի բարբառի տարածման առանձին վայրերը՝ նրա մեջ է ընդգրկում նաև Շամշադինի շրջանը. «Երևանի բարբառը հյուսիսային կողմերը երկու կղզյակներ ալ կձևացնի, մեկը Բորչալուի գավառին մեջ (Շուլավեր, Շամշադին, Լոռի և շրջակաները) և երկրորդը Թիֆլիզի Հավլաբար թաղը՝ որ Երևանի գաղթականություն մէ»[4]։ Նույն աշխատության 61-րդ էջում Ղարաբաղի բարբառի տարածման սահմանների մեջ հեղինակը ընդգրկում է նաև Դիլիջանը, Ղազախի գավառը. «Այսպիսով Ղարաբաղի բարբառին գրաված գլխավոր տեղերը հետևյալներն են. Շուշի, Գանձակ, Նուխի, Բագու, Դարբանդ, Շամախիի գյուղերը, Աղստաֆա, Դիլիջան, Ղարաքիլիսա, Ղազախի գավառը»։*

*Այնուհետև հեղինակը Շամշադինի, Իջևանի և Դիլիջանի խոսվածքները առանձնացնում է որպես Ղարաբաղի բարբառի մեկ ենթաբարբառ՝ Ղազախի ենթաբարբառ անվանումով։ Վերջին կարծիքն մասնավորապես հաստատվում է աշխատության 73-րդ էջի նմուշով, որը վերցված է Հ. Ճուղուրյանի «Մոռացված աշխարհ» գրքից (հ. Ա, էջ 103—104)։*

*«Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ ևս Հ. Աճառյանը վերոհիշյալ խոսվածքի համար ընդունում է Ղազախի ենթաբարբառ անվանումը. «Ղարաբաղի բարբառով կա հարուստ գրականություն. ամենից նշանավորներն են Տմբլաշի*

---

[4] **Հ. Աճառյան,** Հայ բարբառագիտություն, Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Ը, Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911 թ., էջ 37։

*խաշանի գրվածքները Ղարաբաղի բարբառով և Ծուղուրյանի պատմվածքները Ղազախի ենթաբարբառով»*[5]։

*Իսկ ահա Ա. Ղարիբյանն իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ գրում է. «Արարատյան բարբառը Դիլիջանի և Ղազախի ու Շամշադինի շրջանում խառնվելով Ղարաբաղի բարբառի հետ կամ ազդելով այդտեղի խոսվածքների վրա՝ ըզգալի չափով փոխել է Ղարաբաղի բարբառի ընդհանուր պատկերը, որի հետևանքով դժվար է լինում որոշել, թե այդտեղի բարբառները Երևանին են պատկանում, թե Ղարաբաղին»*[6]։ *Նույն աշխատանքի հետագա շարադրանքի մեջ հեղինակն արդեն այն կարծիքն է հայտնում, որ Շամշադինի, Դիլիջանի շրջանների բնակչությունը խոսում է Ղարաբաղի բարբառով. «Այդ բարբառով (Ղարաբաղի) խոսում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու շրջանում և Թաջիկիստանում, նաև՝ Զանգեզուրի և Կապանի բնակիչները, Կիրովաբադի շրջանի բնակչությունը, Ղազախի, Շամշադինի, Դիլիջանի շրջանի բնակչությունը»*[7]։

*Վերոհիշյալ տեսական դիտողությունները հիմնավորելու և խոսվածքի՝ որպես բարբառային միավորի առանձնացման հարցը որոշելու նպատակով դիմենք հայերենի բարբառների համար ընդունված բազմահատկանիշ դասակարգման սկզբունքներին*[8]։ *Խոսվածքի հնչյունական և քերականական հատկանիշների քննության համար համեմատության եզր ենք ընդունել մի դեպքում Աշտարակը, իսկ մյուս դեպքում՝ Բոլնիս-Խաչենը, քանի որ առաջինը բարբառային կենտրոն է ընդունված Արարատյան բարբառի, իսկ երկրորդը՝ Ղարաբաղի բարբառի համար։ Միավորների քանակը որոշելիս առաջնորդվել ենք Գ. Ջահուկյանի առաջ քաշած հետևյալ պայմաններով. «Բարբառախոս վայրերի՝ իրարից ունեցած տարբերությունները հաշվելիս ա) իրար դիմաց նույնարժեք նշանների (+ և +, — և —, ∓ և ∓, ± և ±, այլև ∓ և ±) առկայությունը գնահատվում է զրո, բ) — և + (այլև — և $+^1$, — և $+^2$ և այլն) նշանների*

---

[5] **Հ. Աճառյան,** Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, Երևան, 1951 թ., էջ 332:

[6] **Ա. Ղարիբյան,** Հայ բարբառագիտություն, Երևան, 1953 թ., էջ 220:

[7] **Ա. Ղարիբյան,** նույն տեղը, էջ 230:

[8] Տե՛ս **Գ. Ջահուկյան,** Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972 թ.:

առկայությունը՝ մեկ միավոր, գ) մնացած բոլոր տարբերությունները (— և $\mp$, — և $\pm$, + և $\mp$, + և $\pm$, + և $\pm^{1}$, + և $+^{2}$, $+^{1}$ և $+^{2}$, և այլն)՝ կես միավոր»[9]։

Խոսվածքի՝ բարբառների նկատմամբ ունեցած տարբերությունները առավել պարզորոշ ցույց տալու համար հատկանիշները ոչ թե տարբերակել ենք ըստ հնչյունական (բաղաձայնական և ձայնավորային) և ձևաբանական (անվանական, դերանվանական և բայական) համակարգերի, այլ բաժանել ենք երեք տարբեր խմբերի։

Առաջին խմբի մեջ են առնված այնպիսի հատկանիշներ, որոնք առկա են բարբառներում, բայց բնորոշ չեն խոսվածքին։ Երկրորդ խմբի մեջ են առնված այնպիսի հատկանիշներ, որոնք առկա են խոսվածքում, բայց բնորոշ չեն բարբառներին։ Իսկ երրորդ խմբի մեջ են առնված այն հատկանիշները, որոնք առկա են թե՛ բարբառներում և թե՛ խոսվածքում, սակայն ունեն տիպաբանական-համեմատական տարբերություն։

Արարատյան բարբառի և Շամշադին—Դիլիջանի խոսվածքի տարբերակիչ հատկանիշները հետևյալ պատկերն են ներկայացնում։

Բարբառին բնորոշ հատկանիշներ.

1(2)[10]. Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղություն (բ, գ, դ, ձ, ջ ~ բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛)

2(6). Ր-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի հետձայնավորային դիրքերում գտնվող խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ճ ~ բ, գ, դ, ձ, ջ)

3(7). Ոչ բառասկզբի շնչեղ-խուլերի ապաշնչեղության առկայություն (-փ, -թ, -ք, -ց, -չ ~ -պ, -տ, -կ, -ծ, -ճ)

4(11). Տ-ի առնմանական փոփոխություն ն, ր, ռ ձայնորդներից առաջ.

5(31). Շեշտակիր ո-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն (ո ~ ուօ)

6(67). Ցուցական դերանունների թեք հոլովաձևերում (և հոգնակի ուղղականում) հավելական ա, դ.

Խոսվածքին բնորոշ հատկանիշներ.

[9] Նույն տեղը, էջ 41։

[10] Փակագծի թվանշանները ներկայացնում են Գ. Ջահուկյանի գրքում տրված զուգաբանությունները։

7(3). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խլություն (բ, գ, դ, ձ, ջ~պ, տ, կ, ծ, ճ)

8(34). Քմայնացած ձայնավորների (ա̈, ո̈, օ̈, ու̈) առկայություն

9(35). Ա-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ա~ա̈, ո̈, օ̈, ու̈)

10(36). Ո-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ո~ո̈, օ̈, ու̈)

11(37). ՈՒ-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ու~ու̈, ո̈, օ̈)

12(50). Ը-ից տարբեր խառն («միջին շարքի») ձայնավորների (աը, ըէ, ըի) առկայություն

13(52). Նի և նրանով բաղադրված հոգնակին (նի, նէ, նիք)

14(51—1). Ք-եր հոգնակերտ

15(92—1). Գիտի եղանակիչի սղված ձև. առաջին վանկի սկզբում (տի, տ, դի, դ)

16(100—2). Գրաբարատիպ անցյալ անկատար

17(100—5). Անցյալ կատարյալի միավանկ հիմքերի եզակի 3-րդ դեմքի ե-(է-) նախահավելված

Արարատյան բարբառին բնորոշ են նաև երրորդ խմբի հետևյալ հատկանիշները.

18(8—1). գյ, կյ, քյ~ջ, ճ, չ

19(15—1). ձայնեղ հ( ɦ ) առկայություն

20(25—2). միջձայնավորային ս-ի դիմաց ñ (-ս-~-հ-)

Իսկ Շամշադին—Դիլիջանի խոսվածքում առկա են երրորդ խմբի հետևյալ հատկանիշները.

...(8). Քմայնացած ետնալեզվայինների առկայություն ոչ փոխառյալ բառերում (գյ, կյ, քյ)

...(25). Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզուների համեմատությամբ հավելական շնչի (հ, հ>խ, այլև ɦ) առկայություն

...(25—4). Ցուցական դերանունների միջձայնավորային ր-ի դիմաց ñ (-ր-~-հ-).

Այժմ ներկայացնենք այն հատկանիշները, որոնցով Ղարաբաղի բարբառը և Շամշադին—Դիլիջանի խոսվածքը տարբերվում են միմյանցից։

Բարբառին բնորոշ հատկանիշներն են.

1(6). Ր-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող խուլ պայթականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ճ~բ, դ, գ, ձ, ջ)

2(7). Ոչ բառասկզբի շնչեղ-խուլերի ապաշնչեղության առկայություն (-փ, -թ, -ք, -ց, -չ, ~-պ, -տ, -կ, -ծ, -ճ)

3(11). Տ-ի առնմանական փոփոխություն ր, ռ ձայնորդներից առաջ. տն~նն

4(41). Շեշտակիր ե-ի (է-ի) դիմաց վերին շարքի (ավելի փակ) չեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ե, է~ի, էի և այլն)

5(42). Շեշտակիր ո- (օ-ի) դիմաց վերին շարքի (ավելի փակ) չեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ո, օ~ու, öւ, ուէ և այլն)...

6(43). Շեշտակիր ի-ի դիմաց միջին կամ ստորին շարքի (ավելի բաց) չեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ի~ե, է, ա, այ և այլն)

7(44). Շեշտակիր ե-ի (է-ի) դիմաց ստորին շարքի (ավելի բաց) չեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ե, է~ա, ä, այ և այլն)

8(45). Շեշտակիր ու-ի դիմաց միջին շարքի (ավելի բաց) չեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ու~ո, օ, ոէ, օէ և այլն)

9(58—1). ան-ով բացառական

10(61—1). Գործիականի՝ -ով-ից (ով, ուվ, օվ, öվ) տարբեր ... վերջավորություն՝ և՛ եզակի, և՛ հոգնակի թվերի համար ընդհանուր (ավ) (äվ)

11(67). Ցուցական դերանունների թեք հոլովաձևերում (և հոգնակի ուղղականում) հավելական ռ, դ

12(91—1). Այլ տիպի դերբայներով բաղադրյալ ապառնի. Ն-ով վերջացող դերբայներով (-äն, -ական, -ացկան, -ակուն) խոսվածքին բնորոշ հատկանիշներն են.

13(17). Բառասկզբի հ-ի դիմաց շրթնային շփական հ~ֆ

14(27). ույ-ի դիմաց ոչ շրթնային ձայնավոր (ույ~ի, է, ա)

15(55—1). Ք-եր տիպի հոգնակերտ

16(59). ց-ով բացառական (ից, ուց, իծ)

17(92—1). Պիտի եղանակիչը սղված ձև, առաջին վանկի սղում (տի, տ, դի, դ)

18(100—2). գրաբարատիպ անցյալ անկատար

19(100—5). անցյալ կատարյալի միավանկ հիմքերի եզակի 3-րդ դեմքի ե- (է) նախահավելված

*Ղարաբաղի բարբառը Շամշադին—Դիլիջանի խոսվածքից տարբերվում է նաև երրորդ խմբի մեկ հատկանիշով. այսպես, բարբառին բնորոշ է.*

*20(24). բաղաձայնահաջորդ ն-ի պահպանություն*

*Իսկ Շամշադին—Դիլիջանի խոսվածքին՝*

*...(24—1). բաղաձայնահաջորդ ը (ն~ը)*

*Տարբերակիչ հատկանիշների ընդհանուր պատկերից պարզվում է, որ Շամշադին—Դիլիջանի խոսվածքը Արարատյան բարբառից տարբերվում է 20 հատկանիշներով (6 քերականական և 14 հնչյունական), իսկ Ղարաբաղի բարբառից՝ 21 հատկանիշներով (9 քերականական և 12 հնչյունական)։ Նշենք նաև, որ բերված հատկանիշները ոչ միատեսակ արժեք ունեն։ Այսպես, խոսվածքի՝ Արարատյան բարբառի նկատմամբ ցուցաբերած տարբերակիչ հատկանիշներից միայն 14-ը, իսկ Ղարաբաղի բարբառի նկատմամբ ցուցաբերած 21 հատկանիշներից միայն 15-ը ունեն մեկ միավորի, մինչդեռ մյուս 6 տարբերակիչ հատկանիշներն ունեն կես միավորի արժեք։ Ուստի ամբողջական միավորներով արտահայտված՝ տարբերակիչ հատկանիշների ընդհանուր քանակը, Արարատյան բարբառի համեմատությամբ, հավասարվում է 17-ի, իսկ Ղարաբաղի բարբառի համեմատությամբ՝ 18-ի։ Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի համաձայն միավորների այդ քանակով Շամշադին—Դիլիջանի տարածքի հայերի խոսակցական լեզուն առանձնանում է որպես մի խոսվածք։ Քանի որ տարբերակիչ հատկանիշների համարյա միևնույն քանակով (իհարկե, ոչ միևնույն հատկանիշներով) Շամշադին—Դիլիջանի խոսվածքը հեռանում է թե՛ Արարատյան և թե՛ Ղարաբաղի բարբառից, ուստի այն կոչում ենք «միջին խոսվածք»[11]։*

---

[11] Աշխատանքի հետագա շարադրանքի մեջ «միջին խոսվածք»-ի փոխարեն օգտագործում ենք «խոսվածք» եզրույթը:

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Այս բաժնում քննության են առնվում ինչպես պատմական ու դիրքային, այնպես էլ շեշտի հետ կապված հնչյունափոխական երևույթները խոսվածքում։ Պատմական և դիրքային հնչյունափոխական երևույթները ցույց տալու համար համեմատության եզր ենք վերցրել գրաբարը՝ առանձնապես հիմք ընդունելով նրա բառային այն շերտերը, որոնք հայերենին են անցել տարբեր աղբյուրներից։ Համեմատվող բառացանկի հիմնական մասը հնդեվրոպական ու անհայտ ծագում ունեցող բնիկ (մոտ 950 բառ) և պահլավերենից փոխառնված (մոտ 150 բառ) բառերն են։ Բառացանկի մեջ փոքր թիվ են կազմում ասորերեն (մոտ 45 բառ), հունարեն (մոտ 25 բառ), կովկասյան տարբեր լեզուներից կատարված (մոտ 25 բառ) փոխառությունները։*

*Բառերի այս շարքերը արժեքավոր են ոչ միայն իրենց քանակով ու կիրառական հաճախականությամբ, այլև հնարավորություն են տալիս ներկայացնելու խոսվածքի հնչյունական համակարգի կրած փոփոխությունները, քանի որ ամենից առաջ այս բառերի մեջ են արտացոլվում հնչյունական բազմաթիվ օրինաչափություններ (ձայնեղ պայթականների խլացում,* **ա, ու, ո** *ձայնավորների քմայնացում, երկբարբառների պարզեցում*[12] *ևն)։*

*Բացի վերոհիշյալ բառերից, բառացանկում տեղ են գտել նաև պարսկական կամ իրանական ծագում ունեցող (մոտ 35 բառ), արաբերենից փոխառնված (մոտ 10 բառ), ինչպես նաև ուշ շրջանի գրաբարում գործածված (մոտ 16 բառ) մի շարք բառեր։ Բառերի այս շարքը նոր փոխառություններից (ուշ*

---

[12] Օրինակները տե՛ս «Հնչյունափոխություն» բաժնում:

*պարսկերեն, արաբերեն, թուրքերեն)*[13] *տարբերվում է նրանով, որ գործածական է ոչ միայն խոսվածքում, այլև ժամանակակից հայոց լեզվում։ Այս բառերում ևս արտացոլվում է խոսվածքի հնչյունական համակարգի փոփոխությունների պատկերը։*

## 1. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

*1. Շամշադին—Դիլիջանի խոսվածքի հնչյունական համակարգը հետևյալ պատկերն ունի.*

### Ձայնավորներ

*ա, ա̈, ը, ըէ, ըի, ի, ու, ու̈, օ, ö*

### Բաղաձայններ

| *Պայթականներ* | *Շփականներ* | *Ձայնորդներ* |
|---|---|---|
| *բ պ փ* | *զ ս* | *լ, լ̇, մ, յ, ն, ռ, ր* |
| *գ կ ք* | *ժ շ* | |
| *գʼ կʼ քʼ* | *ղ խ* | |
| *դ տ թ* | *վ —* | |
| *ձ ծ ց* | *— հ* | |
| *ջ ճ չ* | | |

*Այսպիսով, Շամշադին—Դիլիջանի խոսվածքում կան 44 հնչյուններ՝ 11 ձայնավորներ և 33 բաղաձայններ։*

*Վերոհիշյալ հնչյուններից բացի, Իջևանի և Դիլիջանի շրջանների գյուղերում սակավ տարածում ունի նաև* ֆ *խուլ շըփականը։ Այդ հնչյունը գործածվում է միայն* ֆօֆի *< հոգի,* ֆըէղ‖ֆօղ *< հող,* ֆըէտ‖ֆօտ *< հոտ,* ֆըէտիլ‖ֆօտիլ *< հոտել,* ֆըէր‖ֆօր *< հոր,* ֆըէրթ‖ֆօրթ *< հորթ,* ֆըէրս‖ֆօրս *< որս,* ֆըէրսկան‖ֆօրսկան *< որսկան բառերում, իսկ* ֆ*-ով սկսվող փոխառյալ բառերում հիշյալ հնչյունի փոխարեն գործածվում է* փ *շնչեղ խուլ պայթականը, ինչպես՝ փաբրիկա, փիզիկա, փուդբոլ, փայտոն ևն։*

---

[13] Վերջիններս իրենց հնչյունական կազմով ներկայացնում են ոչ թե խոսվածքի, այլ փոխատու լեզվի առանձնահատկությունները:

*2. Խոսվածքում առկա հնչյունների մեծ մասն իր արտասանությամբ նույնանում է ժամանակակից հայերենի համապատասխան հնչյուններին, իսկ մի փոքր մասը հատուկ է Շամշադին—Դիլիջանի խոսվածքին և հայ բարբառներից մի քանիսին։ Վերջիններիս համար պետք է հիշել հետևյալը.*

ä.— *առաջնային շարքի ստորին բարձրացման* ա, *որ առավելապես տարածված է երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառներում կամ խոսվածքներում։*

ըէ.— *ը և է ձայնավորների միանական արտասանությունն է, որ նույնանում է Ղարաբաղի, Մեղրու, Հադրութի ևն բարբառների* ըէ-*ին։*

ըի.— *ը և ի ձայնավորների միանական արտասանությունն է։*

ü.— *առաջնային շարքի վերին բարձրացման* ու, *որ արտասանվում է ինչպես գերմաներեն* ü*։*

ö.— *առաջնային շարքի միջին բարձրացման* o, *որ արտասանվում է ինչպես գերմաներեն* ö:

*գյ, կյ, քյ.— գ, կ, ք հնչյունների քմային տարբերակներն են, որոնք մեծ մասամբ հանդես են գալիս առաջնային շարքի ձայնավորների մոտ։*

լյ.— *լ հնչյունի քմային տարբերակն է։*

## 2. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

### Ա. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Ա

*3. Բառասկզբի նախաշեշտ* ա *ձայնավորը ընկնում է, եթե բառի առաջին վանկը բաց է*[14]*։ Եղած օրինակներն են՝ ածելի*>ծիլի *(Իջ.* առծըլի), *աղանձել*>ղաճձիլ, *աղաչել*>ղաճչաf աճիլ, *աղաչանք*>ղաճչաf, *աշակերտ*>*շäգէրդ (վարպետի աշակերտ), ապսպարել*>բըսպարիլ, *ապսպրանք*>բըսպäրաճf, *արեգակն*>rէfճակ *(Իջ.* ըrէfճակ), *աքացի*>fացի, *աքացել*>fացի տալ:

[14] Տե՛ս Է. Աղայան, Մեղրու բարբառը, Եր., 1954 թ., էջ 21:

*Արածել բառի դիմաց բոլոր տեղերում էլ ունենք* բրածիլ *ձևը։*

*4. Նախաշեշտ* ա *ձայնավորի դիմաց ունենք* ը.

*ա) եթե բառի առաջին վանկը փակ է, ինչպես՝ ազգական>*ըզգական, *ամսական>*ըմսական, *աշխատանք>*ըշխադանք *(իշ.* աշխատանք), *աշխատել>*ըշխադիլ, *առաջնեկ>*ըռշընա̈կ *(իշ.* ըռշընէկ), *արմանալ>*ըրմանալ, *արտասուք>*ըռտասունք:

*բ) եթե բարդության առաջին բաղադրիչը անկախ է գիտակցվում, ինչպես՝ աղաման>*ըղաման *(իշ.* աղաման), *աղաջուր>* ըղաճո̈ւր, *աղբյուրաջուր>*ըխպըրա̈ճո̈ւր||ըխպիրա̈ճո̈ւր:

*Ամաչել>*նըմանչիլ, *ամաչեցուցանել>*նըմընչըցընիլ *բառերի սկզբի* ա-*ն* ն *բաղաձայնի հավելման պատճառով չի ընկել։*

Ան *նախածանցն անկախ գիտակցելու պատճառով փոփոխության չի ենթարկվել, ինչպես՝ անամօթ>*անամօթ, *անաստուած>*անաստված, *անլեզու>*անլյո̈ւզո̈ւ, *անհաւատ>*աննավատ, *անհոգի>*աննօքի, *անշնորհք>*անշընօրք:

*Անալի>*ըլանի *(իշ. նաև՝* լանի) *գիտակցվում է ոչ թե որպես ածանցավոր, այլ պարզ բառ, որի պատճառով էլ բառասկզբի նախաշեշտ* ա *ձայնավորը դարձել է* ը:

*5. Բառասկզբի շեշտակիր* ա *ձայնավորը սովորաբար մընում է անփոփոխ, ինչպես՝ ազատ>*ազատ, *ազգ>*ազգ, *ակն>*ակը, *աղալ>*աղիլ, *աղուն>*աղուն, *ամառն>*ամառ, *աշուն>*աշունք, *ասել>*ասիլ, *արծաթ>*էրծաթ *(իշ.* արծաթ):

Աղտ *բառի դիմաց ունենք ժամանակակից հայերենին և արևելահայ բարբառներին հատուկ* կէխտ *ձևը։*

*Արձակ>*նա̈րզա̈կ *բառի շեշտակիր* ա *ձայնավորը* ձ>զ *փոփոխության պատճառով դարձել է* ա̈։

*6. Բառամիջի նախաշեշտ* ա *ձայնավորի դիմաց սովորաբար ունենք* ը, *ինչպես՝ բանալի>*պըլա̈նիք, *բառաչել>*պըռա̈նչիլ, *բարակել>*պըրա̈կիլ, *բարձրանալ>*պըցրա̈նա̈լ, *գանգատիլ>*կյընգա̈տվիլ, *դադարել>*թըթա̈րիլ, *(զ)արդարել>*զըրթա̈րիլ, *թաթխել>*թըթախիլ, *թալանել>*թըլանիլ, *խանգարել>*խընգարիլ, *ծանրանալ>*ծընդրանալ, *կարճանալ>*կըրճանալ, *հարցանել>*նըրցընիլ, *շաղախել>*շըղաղիլ, *տափակել>*տըփակիլ, *փաթաթել>*փըթաթիլ:

*7. Բառասկզբի և բառամիջի նախաշեշտ* ա *ձայնավորը անփոփոխ է մնացել.*

*ա) կրոնական և գրական նոր փոխառությունների մեջ, ինչ-*

*պես՝ բարեկենդան*>բարիկէնքան, *խաղալիք*>խաղալիf, *խա-չապաշտ*>խաչապաշտ, *խարազան*>խարազան, *կաթողիկոս*>կաթօղիկօս, կարօտիլ>կարօտիլ, *հակառակ*>հակառակ:

*բ) ութիւն*>ութին *ածանց ունեցող բառերում, ինչպես՝ ար-քայութիւն*>արfաութին, *ծանօթութիւն*>ծանօթութին, *հաստու-թիւն*>հաստութին, *հարըստութիւն*>հարըստութին, *չարութիւն*>չարութին, *պակասութիւն*>պակասութին:

*8. Բառամիջի չեշտակիր* ա *ձայնավորի դիմաց ունենք* ա̈ *հետևյալ դեպքերում.*

*ա) Անառյանի օրենքի համաձայն: Այս շարքի 50-ից ավե-լի բառերից այստեղ նշենք մի քանիսը՝ բահ*>պա̈ն, *բամբակ*>պա̈մբա̈կ, *բարակ*>պա̈րա̈կ, *բաց*>պա̈ց, *գազար*>կյա̈զա̈ր, *գան-գատ*>կյա̈նգա̈տ, *դաս*>տա̈ս, *ձագ*>ծա̈f, *ձախ*>ծա̈խ, *ջարդել*>ճա̈րթիլ,

*բ) նախորդ* գ *ձանեղ շփականի և* լ *ձայնորդի ազդեցու-թյամբ, ինչպես՝ գանգ*>գա̈նգ, *(գ)արդ*>գա̈րթ, *(գ)արդարել*>գըրթա̈րիլ, *գարթուն*>գա̈րթուն, *լական*>լյա̈գա̈ն, *լաւ*>լյա̈վ, *լա-ւանալ*>լյիվա̈նա̈լ, *լաց*>լյա̈ց, *լափ*>լյա̈փ, *լափել*>լյա̈փիլ,

*գ) վերոհիշյալ օրենքներից դուրս նաև հետևյալ բառերում՝ թանաք*>թա̈նա̈f, *ժառանգ*>ժա̈ռա̈նգ, *իմաստուն*>մա̈ստուն, *իմանալ*>մա̈նա̈լ, *կիրակէ*>գյիրա̈գի, *համարք*>հա̈մբա̈րf, *հանդարտ*>հա̈նդա̈րտ, *ճանճ*>ճա̈նչ, *ճաշ*>ճա̈շ, *մաղձ*>մա̈խծ, *մանգաղ*>մա̈նգէղ, *մարտ (ամիս)*>մա̈րդ, *շաքաթ*>շա̈փա̈թ, *շալակ*>շա̈լա̈կ, *շաբաթ*>շա̈րթա̈թ, *շաքար*>շա̈fա̈ր, *սատափ*>սա̈դա̈փ, *սուսամբար*>սուսա̈մբա̈ր:

*9. Պատճառական բայածանցի չեշտակիր* ա *ձայնավորի դիմաց ամեն դեպքում ունենք* ը, *ինչպես՝ հաստացուցանել*>հըստըցընիլ, *հասուցանել*>հըսցընիլ, *հեշտացուցանել*>հէշտըցընիլ, *ուրախացուցանել*>ըրխըցընիլ, *վախեցուցանել*>վըխծը-նիլ, *տաքացուցանել*>թըfցընիլ:

*Բառամիջի չեշտակիր* ա *ձայնավորի դիմաց* ը *ունենք նաև հետևյալ բառերում՝ դամբրիլ*>թըմբըրիլ, *հարցանել*>հարցը-նիլ, *մաղկատել*>մըխկըտալ, *սալոր*>շըլöր, *սարսռալ*>սըռսը-ռալ:

*10. Հիմքակազմ* -ան- *ածանցի չեշտակիր* ա *ձանավորը սղվել է հետևյալ բառերի մեջ՝ բուսանիլ*>բուսնիլ||բըսնիլ, *գը-տանել*>fըթնիլ, *կակղանալ*>կակղիլ, *հասանել*>հասնիլ, *հա-*

տանել>հատիլ, մեռանել>մըէռնիլ, մտանել>նի մըտնիլ, սկըսանիլ>ըսկըսիլ, տամկանալ>ծամկիլ, փափկանալ>փափկիլ:

Շեշտակիր ա ձայնավորը սղվել է նաև երանի>էռնէկ, թաւալել>թավլի տալ, ճախարակ>ճäñrը բառերում։

11. Մնացած բոլոր դեպքերում բառամիջի շեշտակիր ա ձայնավորը մնում է անփոփոխ։ Խոսվածքում այս շարքի բառերի թիվը մեծ է, ուստի այստեղ ներկայացնում ենք դրանցից մի քանիսը՝ ազատել>ըզատիլ, ամսական>ըմսական, թաղ>թաղ, թաղել>թաղիլ, խառնել>խառնիլ, խնամի>խնամի, ծախել>ծախիլ, ծաղիկ>ծաղիկ, կանաչ>կանանչ, կաշառ(ք)>կաշառf:

12. Շեշտին հաջորդող ա-ն նախորդ առաջնային ձայնավորների ազդեցությամբ դառնում է ä: Այս շարքի 30-ից ավելի բառերից այստեղ նշենք մի քանիսը՝ բանջար>պäնչär, բարակ>պäräկ, գաւազան>կյըվäզäն, (Իջ. կյäվäզäն), գոռալ>կյöռäլ, գութան>կյüթäն, դանակ>տäնäկ, դառնալ>տäռնäլ, դատարկ>տäռտäկ, դարման>տärմäն:

13. Մնացած բոլոր դեպքերում շեշտին հաջորդող ա ձայնավորը մնում է անփոփոխ։ Այդ շարքի բազմաթիվ բառերից այստեղ նշենք մի քանիսը՝ ազատ>ազատ, աղաման>ըղաման, աման>աման, աշխարհ>աշխաr, կանաչ>կանանչ, կապան>կապան, կարագ>կարաf, հաստատ>հաստատ, տախտակ>տախտակ:

14. Ա ձայնավորը ենթարկվել է նաև ա>է մասնակի փոփոխության, ինչպես՝ բաժինք>պէժինf, բառնալ>պէռնիլ, երախ>ըռէխ||ռէխ, երախայ>rէխա||ըrէխա, ծագել>ծէfիլ, կածան>կյէծան:

## Ե

15. Միավանկ բառերի սկզբում ե ձայնավորի դիմաց ունենք յէ, ինչպես՝ եզն>յէզը, եկ>յէկ, եռ>յէռ (նաև՝ յէռ կյäլ «եռալ»), ես>յէս, երբ>յէփ:

16. Բազմավանկ բառերի սկզբում ե ձայնավորի դիմաց սովորաբար ունենք պարզ է, ինչպես՝ եղի>հէղի, երանի>էռնէկ, երդիկ>հէրթիկ, երեկ>էրէգ, երևալ>էրէվալ (նաև՝ րէվալ), երինջ>հէրինջ, երկար>էրգյär||էրգյäն, երկարութիւն>էրգյäնութին, երկու>էրկու, երկուշաբթի>էրկուշափթի, եփել>էփիլ:

*Ն-ի դիմաց պարզ* է *ձայնավոր ունենք նաև եմ*>էմ, *եփ*> էփ *միավանկ բառերի սկզբում։*

*17. Մի շարք բառերի սկզբում* ե *ձայնավորը բոլորովին դուրս է ընկել, ինչպես՝ եղունգն*>ղինգ, *երախ*>ռէխ (*նաև՝* ըռէխ), *երախայ*>rէխա (*նաև՝* ըrէխա), *երեկոյ*>rüւզöւ(ն):

*18. Մի քանի երկվանկ բառերի սկզբում* ե *ձայնավորի դիմաց ունենք* ա, *եթե հաջորդ ձայնավորը ևս* ա *է, ինչպես՝ երազ*>արազ, *երաշտ*>արաշտ, *երկաթ*>արկաթ, *երկանք*>արկանf:

*Ծանոթություն.— Ե>ա փոփոխությունը առկա է միայն Շամշադինի և Կրասնոսելսկի շրջանների գյուղերում, իսկ Իջևանի և Դիլիջանի շրջանների գյուղերում այդ բառերի սկզբում ունենք պարզ* է *ձայնավոր, ինչպես՝ երազ*>էրազ, *երաշտ*> էրաշտ, *երկաթ*>էրկաթ, *երկանք*>էրկանf:

*Նախաձայն* ա-*ի առկայությունը բարբառներում պրոֆ. Է. Աղայանը բացատրում է բարբառային հնագույն տարբերություններով. «Հին հայերենի բարբառների մի խմբում ր-ով սկըսվող բառերի սկզբում ավելացել է այն ձայնավորը, ինչ որ եղել է բառի մեջ։ Բարբառների մյուս խմբում անխտիր ավելացել է* ե»[15]։

Եղբայր *բառի դիմաց ունենք* ախպէր, *իսկ* եօթն *բառի դիմաց՝* օխտը *ձևերը։* Ախպէր *բառի ծագումը Հր. Աճառյանը կապում է գրաբարյան* եղբայր *բառին զուգահեռ* աղբայր *ձևի հետ։*

*Գրական նոր փոխառությունների մեջ բառասկզբի* ե *ձայնավորն ունի* յէ *արտասանությունը, ինչպես՝ եթե*>յէթէ, *եպիսկոպոս*>յէպիսկօպօս, *երդումն*>յէրթում, *երեսուն*>ռէսուն, *երգել*>յէրfիլ, *երկինք*>երգյինf, *երկիր*>յէրգիր:

*19. Բառամիջի նախաշեշտ* ե *ձայնավորի դիմաց սովորաբար ունենք* ը, *ինչպես՝ ամաչեցուցանել*>հըմընչըցընիլ, *հեշտանալ*>հըշտանալ (*Իջ.* հէշտանալ), *հեռանալ*>հըռանալ (*Իջ.* հէռանալ), *նմանեցուցանել*>նըմընըցընիլ, *սերկևիլ*>սըրգէվիլ, *սերկևլի*>սըրգէվլի, *սերմնացու*>սըրմացու, *քեռակին*>fըռակին:

*Բառամիջի նախաշեշտ* ե *ձայնավորի դիմաց* ի *ունենք բա-*

---

[15] **Է. Աղայան,** Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1958, № 5, էջ 70։

*ընկենդան*>բարիկէնթան (*Իջ.* պարիկէնթան), *թեթևանալ*>թիթ-վճնալ (*Իջ.* թիթէվանալ) *բառերում։*

*20. Հաջորդական* ե *ունեցող բառերի մեջ շեշտակիր* ե *ձայնավորի դիմաց ունենք* ի, *ինչպես՝ բերել*>պիրիլ, *երես*>իրէս, *երեք*>իրէf, *թեթև*>թիթէվ, *շերեփ*>շիրէփ, *վերև*>վիրէվ, *տերև*>տիրէվ, *ցերեկ*>ցիրէկ, *քերել*>fյիրել:

Ե *ձայնավորի դիմաց* ի *ունենք նաև անորոշ դերբայի* -ել *վերջավորության մեջ, ինչպես՝ բերել*>պիրիլ, *թրջել*>թըրշիլ, *խաբել*>խափիլ, *խառնել*>խառնիլ, *ծռել*>ծըռիլ, *կապել*>կապիլ, *կտրել*>կըտրիլ *ևն։*

*21. Բառամիջում շեշտակիր* ե *ձայնավորի դիմաց* ը *կամ* ըէ *ունենք հետևյալ բառերում՝ դեղնուց*>տըղնüց, *դեպի*>դըբö, *լեղի*>լըղի (*Իջ.* լէղի), *խելք*>խըէլf, *խելոք*>խըէլունf‖ խըէլօf, *մենակ*>մըէնակ, *մեռանիլ*>մըէռնիլ, *մեք*>միէնf, *նեղ-*նըէղ, *սեպ*>սըէպ, *սերմն*>սըէրմը, *վերայ*>վըրա:

*22. Մնացած բոլոր դեպքերում բառամիջի շեշտակիր* ե *ձայնավորը արտասանվում է որպես պարզ* է: *Այս շարքի բառերի թիվը մեծ է։ Այստեղ նշենք դրանցից մի քանիսը՝ բեռն*> պէռը, *բերան*>պէրան, *տեղ*>տէղ, *դեղին*>տէղին, *թել*>թէլ, *թեփ*>թէփ, *կեռ*>կէռ, *հեշտ*>հէշտ, *վերջ*>վէրչ, *վեց*>վեց:

*23.* Ե *ձայնավորը ընկել է հետևյալ բառերում՝ ածելի*> առծըլի, *աւելուկ*>ավլüկ, *կեանք*>գյանf, *հայելի*>հայլի: *Այդպիսի ձևերը առանձնապես գործածվում են Իջևանի և Դիլիջանի գյուղերում, մինչդեռ Շամշադինի և Կրասնոսելսկի գյուղերում հիշյալ բառերի* ե-*ի դիմաց ունենք* ի *ձայնավոր, ինչպես՝ ածելի*<ծիլի, *աւելուկ*<վիլուկ, *հայելի*<հիլի:

*24. Շեշտին հաջորդող* ե *ձայնավորը սովորաբար արտասանվում է որպես պարզ* է, *ինչպես՝ ասեղն*>ասէղ, *աներ*>հանէր, *անմեղ*>ամմէղ, *գիշեր*>fըշէր, *թիթեռն*>թիթէռ, *սիպեխ*> սիբէխ, *տերտեր*>տէրտէր, *տրեխ*>տըրէխ, *ցերեկ*>ցիրէկ:

*25. Գրական նոր փոխառություններում* ե *ձայնավորը ամեն դիրքում էլ արտասանվում է որպես պարզ* է, *ինչպես՝ դեկտեմբեր*>դէկտէմբէր, *հոկտեմբեր*>հօկտէմբէր, *մեղավոր*>մէղավէր, *ներել*>նէրիլ, *սեպտեմբեր*>սէկտէմբէր, *փետրուար*> փէտրվար:

*26.* Ե *ձայնավորի համար մասնակի փոփոխություններ են.*

Ե>*ա.— առաջնեկ*>բռչընակ, *դեռ*>տառ:

Ե>*ու.— երեկոյ*>րուգու(ն), *լեզու*>լյուզու: *Հնարավոր է,*

*որ վերջին բառում նախապես տեղի է ունեցել ե-ու դրափոխու-թյուն. այնուհետև լ ձայնորդին հաջորդելով՝* ու-ն *վերածվել է* ü-*ի։*

## Է

27. *Գրաբարյան է հնչյունի դիմաց խոսվածքում ամեն դեպքում էլ ունենք պարզ արտասանվող է, ինչպես.*

*Բառասկզբում՝ էգ*>էք, *էջ*>էջ, *էշ*>էշ:

*Բառամիջում՝ աղուէս*>աղվէս, *անպէտք*>ամպէտկ (*Իջ.* ամպէտք), *դէզ*>տէզ, *դէմ*>տէմ, *խէթ*>խէթ, *խէժ*>խէժ, *խէչ*>խէչակ, *կէս*>կէս, *կէտ*>կէտ *ևն։*

*Բառավերջում՝ եթէ*>յէթէ, *թէ*>թէ, *չէ*>չէ:

28. *է ձայնավորի համար մասնակի փոփոխություններ են.*

*է>ի.— անէծք*>անիսկ (*Իջ.* անէծք), *նարգէս*>նärգիզ, *սէզ*>սիզ:

*է>ա.— թէ*>թա:

*Ծանոթություն.—* Թէ *շաղկապի տարբեր ձևերի կիրառու-թյունը պայմանավորված չէ տարածքով, այլ միևնույն վայրում հաճախ համապատասխան գործածվում է և՛* թէ, *և՛* թա *ձևերը։*

## Ը

29. *Մի քանի բառերի սկզբում* սպ, ստ *հնչյունակապակ-ցություններից առաջ արտասանվում է* ը, *ինչպես՝ սպանանել*> ըսպանիլ, *ստանալ*>ըստանալ, *ստիպել*>ըստիպիլ, *ստուգել*> ըստուգիլ:

*Ծանոթություն.— Որոշ գյուղերում* ը *ձայնավորը արտա-սանվում է ոչ թե ս-ից առաջ, այլ ս և պ, տ բաղաձայնների միջև, ինչպես՝* սըպանիլ, սըտանալ, սըտիպիլ, սըտուգիլ:

*Գրաբարյան բառասկզբի* ը *ձայնավորը* ն-*ի հավելման պատճառով տեղափոխվել է բառամեջը, ինչպես՝ ընկեր*>նըն-գէր, *ընտրել*>նընդըրիլ:

30. *Գրաբարյան գաղտնավանկ* ը *ձայնավորը ամեն դեպ-քում էլ արտասանվում է որպես* ը: *Այդ շարքի բազմաթիվ բա-ռերից այստեղ նշենք մի քանիսը՝ զգուիլ*>զըգվիլ, *զկեռ*>զը-կէռ, *թթու*>թըթու, *թռչել*>թըռչիլ, *լծել*>լըծիլ, *խմել*>խըմիլ, *խրատել*>խըրատիլ, *ծլել*>ծըլիլ, *մնալ*>մընալ, *նկար*>նըկար:

31. Գրաբարյան վերջնահանգ ն-ի և նրան նախորդող բաղաձայնի միջև լսվող ը-ն բազմավանկ բառերում ընկել է, իսկ միավանկ բառերում լսվող այդ ը-ն տեղափոխվել է բառավերջը՝ ն-ի անկման պատճառով, ինչպես.

Բազմավանկ բառերում՝ ամառն>ամառ, ասեղն>ասէղ, արեգակն>rէfնակ||ըrէfնակ, արմուկն>արմունգ, երդումն>յէրթում, թիթեռն>թիփէռ, կոտիմն>կոտիմ:

Միավանկ բառերում՝ բեռն>պէռը, գառն>կյäռը, դուռն>տöւռը, եզն>յէզը, եօթն>օխտը, թոռն>թօռը, խառն>խառը, ծոռն>ծուռը, ծունգն>ծունգը, կամն>կամը են։

32. Ը ձայնավորը ետընթաց լրիվ ներդաշնակության հետևանքով դարձել է ու կամ öւ, ինչպես.

Ը>ու.— կկու>կուկու, կկուզ>կուկուզ:

Ը>öւ.— բրուտ>պöւröւտ:

## Ի

33. Ի ձայնավորի դիմաց սովորաբար ամեն դիրքում էլ ունենք ի, ինչպես.

Բառասկզբում՝ իլ(իկ)>իլիկ, ինն>իննը, իննսուն>իննäսուն, ինչ>ինչ, ինքն>ինfը, իսկական>իսկական:

Բառամիջում՝ բաժինք>պէժինf (Իջ. պäժինf), բրինձ>պըrինձ, դիզել>տիզիլ, զատիկ>զատիկ, ծաղիկ>ծաղիկ, ծիլ>ծիլ, ծիրան>ծիrան, կծիկ>կըծիկ, կոպիտ>կօպիտ, քիթ>fիթ:

Բառավերջում՝ աղի>աղի, աքացի>fացի, թի>թի, թըղքի>թըխկի, ծիրանի>ծիrանի, հացի>հացի, ձի>ծի, քամի>fամի, քանի>fանի:

34. Մի քանի միավանկ բառերի մեջ շեշտակիր ի ձայնավորի դիմաց ունենք ըի: Ի>ըի փոփոխությունը տարածված է Շամշադինի գյուղերում։ Այդ բառերն են՝ ծին>ծըին, ծիտ>ծըիտ, ծիր>ծըիr, միս>մըիս, միտք>մըիտկ:

Իմանալ>մäնäլ, իմաստուն>մäստöւն բառերի սկզբում նախաշեշտ ի ձայնավորն ընկել է։

35. Ի ձայնավորի համար մասնակի փոփոխություններ են.

Ի>է.— ծիրտ>ծէռտ, ցից>ցէց:

Ի>ը.— իսկի>ըսկի:

Ի>öւ.— սիրուն>սöւröւն: Այս վերջին փոփոխությունը

*տեղի է ունեցել ձայնավորների ետընթաց ներդաշնակության պատճառով։*

## Ո

36. *Բառասկզբի* ո *ձայնավորի դիմաց ունենք* վէ, վըէ, ֆըէ (*Դիլիջանում*՝ վօ, ֆօ), *ինչպես*՝ *ոչ*>վէչ, *ոչինչ*>վէչինչ, *ոչխար* > վըէխճար||վըէխչար, *ոսկի* > վըէսկի, *ոսկոր* > վըէսկուռ (*Դլջ.* վօսկօռ), *ոտն*>վըէտը (*Դլջ.* վօտը), *որ*>վըէր (*Դլջ.* վօր), *որձկալ*>վըէրձկալ, *որձ*>վըէրց (*Դլջ.* վօրց), *որս*>վըէրս (*Ճմք., Կրս.*), ֆըէրս (*Իջ.*), ֆօրս (*Դլջ.*), *որսկան*>վըէրսկաճ (*Ճմք., Կրս.*), ֆըէրսկաճ (*Իջ.*), ֆօրսկաճ (*Դլջ.*)։

*Ողողել*>ղօղիլ, *ողորմիլ*>ղօրմի տալ *բառերի սկզբում* ղ-*ից առաջ նախաշեշտ* ո *ձայնավորը ընկել է։ Հիշյալ բառերի համար ունենք նաև* ըղօղիլ, ըղօրմի տալ *ձևերը, ուր բառասկզբի* ո-*ի դիմաց ունենք* ը *ձայնավոր։*

Ոզնի *բառի դիմաց ունենք* վօզնի *կամ* կուզնի *ձևերը։*

*Ով*>օվ, *ոռնալ*>օռնալ *բառերի սկզբում* ո-ն *արտասանվում է ինչպես պարզ* օ:

37. *Բառամիջում նախաշեշտ* ո *ձայնավորի դիմաց ունենք* ը, *ինչպես*՝ *խորոված*>խըրօված, *խորովել*>խըրօվիլ, *կոլորել*> կըլօլիլ, *կոտորել*>կըտօրիլ, *խորացնել*>խօրըցընիլ, *հովանալ*> ճօվանալ (*Ճմք.* ճուվանալ) *բառերում նախաշեշտ* ո-ն *մնացել է անփոփոխ։*

38. *Բառամիջում նախաշեշտ, շեշտակիր և շեշտին հաջորդող* ո *ձայնավորի դիմաց Աճառյանի օրենքի համապատասխան ունենք* ö: *Օ*>ö *փոփոխության համար բերենք հետևյալ բառերը*՝ *գող*>կյöղ, *գողանալ*>կյöղանալ, *գողություն*>կյöղութին, *գոմ*>կյöմ, *գոմէշ*>կյöմէշ, *գոռալ*>կյöռäլ, *գործել*>կյöրծիլ, *գորտնուկ*>կյöռըթնուկ, *դող*>տöղ, *դողալ*>տöղäլ:

*Աճառյանի օրենքից դուրս* օ>ö *փոփոխություն ունենք նաև* *լոր*>լյöր, *խնձոր*>խըճձöր *բառերում։*

39. Ավոր *ածանցը Դիլիջանում արտասանվում է* ավօր, *իսկ մնացած բոլոր շրջաններում*՝ ավէր *ձևով, ինչպես*՝ *բախտավոր*> բախտավէր (*Դլջ.* բախտավօր), *թագավոր*>թաfավէր (*Դլջ.* թաfավօր), *կեղծավոր*>կէղծավէր (*Դլջ.* կէղծավօր), *ձիավոր*>ձիյավէր (*Դլջ.* ձիյավօր), *շնորհավոր*>շընճավէր (*Դլջ.* շընճավօր):

40. Ո *ձայնավորի դիմաց* ու *ունենք հետևյալ բառերում*՝

*որոճ*>աrուն, *ծոմ*>ծում, *ծոպ*>ծուպ, *ծոռ*>ծուռը, *կանոն*>կանուն, *մոմ*>մում, *սապոն*>սապուն:

41. *Մնացած բոլոր դեպքերում շեշտակիր և շեշտին հաջորդող* ո *ձայնավորն արտասանվում է ինչպես պարզ* օ, *ինչպես՝ առողջ*>առօխն, *արիւնոտ*>առնօտ, *խմոր*>խըմօr, *խոզ*>խօզ, *խոտ*>խօտ, *կոծիկ*>կօծիկ, *կոշտ*>կօշտ, *կոտրել*>կօտrիլ, *կորկոտ*>կօrկօտ:

42. Ո *ձայնավորի համար մասնակի փոփոխություններ են.*

*Ո>ա.— որոճ*>աrուն, *սովոր*>սավէr:

*Ո>է.— բոկիկ*>պէպիկ:

## ՈՒ

43. *Ղ-ից առաջ բառասկզբի* ու *ձայնավորը ընկել է, ինչպես՝ ուղարկել*>ղարգիլ, *ուղեղ*>ղուղ (*նաև՝* հըղուղ), *ուղղորդ*>ղօrթ:

44. *Բառամիջի շեշտակիր և շեշտին հաջորդող* ու *ձայնավորի դիմաց ունենք* ü*՝ Աճառյանի օրենքի համապատասխան։ Այդ շարքի բառերն են՝ բազումք*>պյäզüւկ, *բուրդ*>պüւրթ, *բըրուտ*>պüւrüւտ, *գարուն*>կյärüւնf, *գլուխ*>կյըլüւխ, *գութան*>կյüւթäն, *դեղնուց*>տըղնüւց, *դու*>տüւ, *դուր*>տüւr, *դուրս*>տüւս, *ձու*>ծüւ, *ձուկն*>ծüւկը, *ջուր*>ճüւr:

45. *Աճառյանի օրենքից դուրս* ու *ձայնավորի դիմաց* üւ *ունենք նաև հետևյալ բառերում՝ գուլպայ*>գյüւլբä, *զարթուն*>զärթüւն, *թունդ*>թüւնդ, *լեզու*>լյüւզüւ, *լուծ*>լյüւծ, *շուշան*>շüւշäն, *ուլ(ունք)*>հüւլüւնf, *ուր*>üւr, *ուրիշ*>üւrüւշ||üւrիշ, *սիրուն*>սüւrüւն:

46. *Մնացած բոլոր դեպքերում գրաբարյան* ու *ձայնավորին համապատասխանում է* ու, *ինչպես՝*

*Բառասկզբում՝ ուզել*>ուզիլ, *ութ*>ութ, *ուլ*>ուլ||հուլ, *ուղտ* >ուղտ, *ունիլ*>ունիլ, *ունկն*>ունգը, *ունչ*>ունչ, *ուռենի*>ուռի, *ուռչիլ*>ուռչիլ, *ուռուցք*>ուռուցf, *ուս*>ուս, *ուտել*>ուտիլ, *ուրագ*>հուrաf, *ուրախ*>ուrախ, *ուրանալ*>ուrանալ, *ուրբաթ*> ուrփաթ, *ուրեմն*>ուrէմը:

*Բառամիջում՝ անքուն*>անfուն, *թուզ*>թուզ, *թութ*>թութ, *թուխ*>թուխ, *թուխս*>թուխս, *թուղթ*>թուխտ, *խունկ*>խունգ, *խուրձ*>խուrց, *ծուխ*>ծուխ, *ծուռ*>ծուռ, *կուժ*>կուժ, *հարուստ* >հաrուստ *են։*

*Բառավերջում՝ թթու*>թըթու, *կծու*>կըծու, *կկու*>կուկու, *կատու*>կատու:

*47.* Ու *ձայնավորի համար մասնակի փոփոխություններ են.*

*Ու*>*ը.— անուն*>անըմ, *ուրախանալ*>ըրխանալ (*Իջ.* ուր-խանալ), *փուճակ*>փըշակ:

*Ու*>*օ.— սունկ*>սօկօն, *քուղ*>fօղ:

*Ու*>ի.— *լուսանալ*>լիսäնäլ, *մանուշակ*>մանիշակ||մը-նիշակ:

## Բ. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԱՅ

*48. Գրաբարի* այ *երկբարբառի դիմաց բաղաձայնից առաջ բառասկզբում և բառամիջում ունենք պարզ* է *ձայնավոր, ինչ-պես.*

*Բառասկզբում՝ այգուց*>էfուց||էfուծ, *այդ*>էտ, *այդպէս*>էտպէս, *այդքան*>էտfան, *այլ*>էլ, *այծ*>էծ, *այն*>էն, *այնպէս*>էնպէս, *այնքան*>էնfան, *այս*>էս, *այսպէս*>էսպէս, *այսքան*>էսfան, *այրել*>էրիլ:

*Բառամիջում՝ գայլ*>կյէլ, *լայն*>լէն, *ծայր*>ծէր, *հայր*>հէր, *ձայն*>ծէն, *մայր*>մէր, *սայլ*>սէլ, *սայր*>սէռ, *վայր*>վէր, *տայգր*>տէfըր||տէfիր, *փայտ*>փէտ, *փայտանալ*>փէտա-նալ:

*Ծանոթություն.— Այ*>*է փոփոխությունը տեղի է ունենում նաև որոշյալ հոդից և հոգնակերտ վերջավորությունից առաջ, ինչպես՝ գուլպայ, հգն. գուլպայք*>գüլբէf, *երախայ, հգն. երախայք*>rէխէf, *տղայ, հգն. տղայք*>տըղէf, *սատանայ, եզ. ուղղ.* սըտանէն, *փեսայ, եզ. ուղղ.* փէսէն *են:*

*48*ա. *Ձայնավորից առաջ* այ *երկբարբառի դիմաց ունենք ձայնավորի և բաղաձայնի կապակցություն՝* այ, *ինչպես՝ խնա-յել*>խընայիլ, *Հայաստան*>Հայաստան, *հայելի*>հայլի (*Շմդ., Կրս.* հիլի), *մայիս*>մայիս:

Այ-*ի դիմաց ձայնավորի և բաղաձայնի կապակցություն ունենք նաև կայծակ (միայն Իջևանում և Դիլիջանում), հայ բառերում:*

*49. Բազմավանկ բառերի վերջում* այ *երկբարբառի դիմաց ունենք պարզ* ա *ձայնավոր, ինչպես՝ ապրայ*>äբrä, *գուլպայ*>

գյöւլբա̈, *երախայ*>rէխա‖ըrէխա, *ծառայ*>ծառա, *տղայ*>տըղա, *փեսայ*>փէսա, *քուլայ*>fոլա:

Այuor *բառի դիմաց ունենք* uor‖ըuor *ձևերը։*

## ԱՒ

50. *Բաղաձայնից առաջ բառասկզբում և բառամիջում հին հայերենի* աւ *երկբարբառի դիմաց ունենք* օ, *ինչպես.*

*Բառասկզբում՝ օգնել*>օfնիլ, *օգուտ*>օfուտ, *օդ*>օթ, *օղ*>օղ, *օձ*>օg, *օր*>օr, օrէն(f)>օrէնf, *օրհնել*>օխնիլ:

*Բառամիջում՝ աղօթք*>աղօթկ, *ամօթ*>ամօթ, *խօսել*>խօսիլ, *խօսք*>խօսկ, *ծանօթ*>ծանօթ, *մօտենալ*>մօտանալ *(Իջ.)*, *նօթ*>նօթ:

51. *Ձայնավորից առաջ և բառավերջում* աւ *երկբարբառի դիմաց ունենք ձայնավորի և բաղաձայնի կապակցություն։ Ձայնավորից առաջ* աւ *երկբարբառի համար ունենք 20-ից ավելի օրինակներ. այստեղ նշենք դրանցից մի քանիսը՝ բախտաւոր*>բախտավէr, *թագաւոր*>թաfավէr, *խաւար*>խավար, *խաւիծ*>խավիծ, *կաւիճ*>կավիճ, *հաւատ*>հավատ, *ձիաւոր*>ծիյավէr, *նաւասարդ*>նավասարդ:

*Բառավերջին* աւ *կապակցության համար հիշենք հետևյալ օրինակները՝ կաքաւ*>կաfավ, *կտաւ*>կըտավ, *հարաւ*>հաrավ, *հաւ*>հավ, *պառաւ*>պառավ, *ցաւ*>ցավ:

52. Աւ *երկբարբառի համար մասնակի փոփոխություններ են.*

*Աւ>ա̈ւ.— գաւազան*>կյա̈վա̈զա̈ն *(Իջ., Դլջ.)*, *լաւ*>լյա̈վ, հըվանիլ, *հաւատալ*>հըվատալ, *հաւաքել*>հըվաfիլ:

*Աւ>ա̈ւ.— գաւազան*>կյա̈վա̈զա̈ն *(Իջ., Դլջ.)*, *լաւ*>լյա̈վ, *լաւանալ*>լյա̈վա̈նա̈լ *(Իջ.)*, *ձաւար*>ծա̈վա̈r:

*Աւ>իվ.— լաւանալ*>լյիվա̈նա̈լ *(Շմղ., Կրս.)։*

*Աւ>ու.— մօրուք*>մուrուf (*նաև՝* մըrուf):

## ԵԱ

53. *Գրաբարում* եա *երկբարբառը գործածվում էր միայն բառամիջում՝ շեշտի տակ և շեշտին հաջորդող վանկում։ Այդ երկբարբառի դիմաց խոսվածքում ունենք պարզ* է *ձայնավոր, ինչպես՝ կորեակ*>կօrէկ, *չարեակ*>չաrէf, *ցորեան*>gօrէն:

ԵԱ *երկբարբառի դիմաց պարզ է ձայնավոր ունենք նաև գրաբարյան անցյալ դերբայի եալ վերջավորության մեջ, ինչպես՝ ածեալ*>ածէլ, *ասեալ*>ասէլ, *թաղեալ*>թաղէլ, *կերեալ*>կէrէլ, *մանեալ*>մաճէլ, *նստեալ*>ճըստէլ:

54. ԵԱ *երկբարբառի համար մասնակի փոփոխություններ են.*

ԵԱ>*յա.— գոնեա*>կօճյա, *օրհնեալ*>օխճյալ:

*ԵԱ*>*ա.— իւրեան*>իrաճ:

*ԵԱ*>ä.— *կեանք*>գյäճf||կյäճf:

## ԵԱՒ

55. ԵԱՒ *եռաբարբառի դիմաց ունենք* էվ՝ *սեաւ*>սէվ *բառի մեջ։*

## ԵԱՅ

56. *Քրիստոնեայ*>frիստօճյա *բառի մեջ* եայ *եռաբարբառի դիմաց ունենք* յա:

## ԵՒ

57. ԵՒ *երկբարբառը գրաբարում գործածվում էր միայն ձայնավորից առաջ և բառավերջում. երկու դեպքում էլ* եւ *երկբարբառի դիմաց խոսվածքում ունենք ձայնավորի և բաղաձայնի կապակցություն՝* էվ, *ինչպես՝ արև*>արէվ, *թեթև*>թիթէվ, *թև*>թէվ, *սերկևիլ*>սըrգէվիլ, *սևանալ*>սէվաճալ (*Շմդ., Կրս.* սըվաճալ), *տերև*>տիrէվ:

*Բացառություն է կազմում ալևոր*>ճալիվօr *բառը, ուր ձայնավորից առաջ* եւ-*ի դիմաց ունենք* իվ:

## ԻՒ

58. *Բառասկզբում* իւ *երկբարբառի համար ունենք հետևյալ օրինակները՝ իւղ*>յէղ, *իւղալի*>յըղալի (*Իջ.* յէղալի), *իւրեան*>իrաճ: *Հիշյալ բառերում* իւ *երկբարբառի դիմաց ունենք թե՛ պարզ ձայնավոր*(ի) *և թե՛ ձայնավորի ու բաղաձայնի կապակցություն* (յէ, յը)։

59. Բառամիջում իւ երկբարբառի դիմաց բաղաձայնից առաջ ունենք պարզ ի ձայնավոր, ինչպես՝ ալիւր>ալիր, արիւն>արին, կիւրակէ>գիրägի, հարիւր>հարիր, ձիւն>ծին (Իջ., Դլջ.), սիւն>սին:

Այս օրենքին են ենթարկվում նաև -ութիւն վերջածանց ունեցող բառերը, ինչպես՝ բարեկամութիւն>պըրէկամութին (Իջ. պարէկամութին), գողութիւն>կյօղութին, լայնութիւն>լյէնութին, ծանօթութիւն>ծանօթութին, հաստութիւն>հաստութին, նեղութիւն>նէղութին, պակասութիւն>պակասութին:

Ծանոթություն.— Արևելահայ գրական լեզվի ազդեցությամբ համարյա բոլոր տեղերում էլ -ութին վերջածանցն արտասանվում է -ութուն||ություն ձևով, սակայն դեռևս ծերերի մոտ պահպանվում է խոսվածքին հատուկ -ութին արտասանությունը։

60. Ձայնավորից առաջ և բառավերջում իւ երկբարբառի դիմաց ունենք ձայնավորի և բաղաձայնի կապակցություն՝ իվ, ինչպես՝ արծիւ>առծիվ, կրկիւ>կըռիվ, հաշիւ>հաշիվ, չիւ>չիվ, չիւան>չիվան, պատիւ>պատիվ, քթիւ>fըթիվ:

Ալիւրոտ>ալrօտ, արիւնել>ըռնիլ (Իջ. առնիլ) արիւնոտ>առնօտ բառերի մեջ իւ-ն ընկել է։

61. Իւ երկբարբառի համար մասնակի փոփոխություններ են.

Իւ>ü.— աղբիւր>ախպüր, հիւսիս>հüսիս, ձիւթ>ձüթ, ձիւն>ծüն (Շմղ., Կրս.)։

Իւ>ու.— ճիւղ>ճուղ:

Իւ>է.— գիւղ>կյէղ:

## ՈՅ

62. Գրաբարյան ոյ երկբարբառի դիմաց սովորաբար ունենք պարզ ի ձայնավոր, ինչպես՝ բոյթ>պիթ, թոյլ>թիլ, լոյս>լիս, կապոյտ>կապիտ, քոյր>fիր:

63. ՈՅ երկբարբառի համար մասնակի փոփոխություններ են.

ՈՅ>ü.— բոյն>պüն, երեկոյ>rüգü(ն), հոյն>հüն:

ՈՅ>ու.— անոյշ>անուշ, ոյժ>ուժ:

## ՈՒԱ

64. ՈՒԱ հնչյունակապակցության դիմաց խոսվածքում ու-

նենք վա կամ վա̈՝ նախորդ ձայնավորի ներդաշնակությամբ, ինչպես.

ՈՒԱ>վա.— աստուած>աստված (Իջ. աստօծ), թլուատ>թըլվատ, լուանալ>լվանալ, խօսուածք>խօսվածք, նեղուածք>նէղվածկ||նըրէղվածկ, նուազ>նըվազ, չուան>չըվան:

ՈՒԱ>վա̈.— գրուածք>կյըրվա̈ծք, դժուար>տըժվա̈ր, լեզուանի>լյիզվա̈նիկ, լուածք>լյիվա̈ծկ||լյըվա̈ծկ:

## ՈՒԵ, ՈՒԻ

65. ՈՒԻ, ուի հնչյունակապակցությունների դիմաց խոսվածքում ունենք բաղաձայնի և ձայնավորի կապակցություն՝ վի, ինչպես՝ զզուիլ>զըզվիլ, թթուիլ>թըթվիլ, կնքուիլ>կընքվիլ, հաշուել>հաշվիլ, ցցուիլ>ցըցվիլ, քթուիլ>քըթվիլ:

## Գ. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

66. Շամշադին—Դիլիջանի խոսվածքի բաղաձայնական համակարգը ենթարկվում է առաջին տեղաշարժին, ըստ որի գրաբարի ձայնեղ պայթականների դիմաց ունենք պարզ խուլեր, իսկ պարզ և շնչեղ խուլ պայթականները արտասանվում են գրաբարյան համապատասխան հնչյունների նման։ Խոսվածքում ձայնեղ պայթականները պահպանվել են.

ա) մ, ն ռնգայիններից հետո, ինչպես.

Բ>բ.— ամբար>ամբար, բամբակ>պա̈մբա̈կ, բամբասանք>պըմբասանք, թումբ>թումբ, սեպտեմբեր>սէպտէմբէր:

Գ>գ.— գանգատ>կյա̈նգա̈տ, զանգ>զա̈նգ, ժառանգ>ժա̈ռա̈նգ, խանգարել>խընգարիլ, ծունգն>ծունգը, հինգ>հինգ, նիգ>լինգ:

Դ>դ.— զնդան>զընդա̈ն, թունդ>թու̈նդ, հանդարտ>հա̈նդա̈րտ, սանդալ>սանդալ, տենդ>տէնդ, տենդել<տէնդիլ, քանդել>քանդիլ:

Ձ>ձ.— աղանձ>աղանձ, բրինձ>պըրինձ, գինձ>կյինձ, թանձր>թանձրը, թանձրանալ>թընձրանալ, խնձոր>խընձո̈ր, հնձել>հընձիլ, նախանձ>նախանձ, տանձ>տանձ:

Ջ>ջ.— բանջար>պա̈նջա̈ր, երինջ>հէրինջ, կամուրջ>կարմունջ, նահանջ>նահանջ, նարինջ>նարինջ, ննջել>նընջիլ, ջնջել>ճընջիլ, տանջել>տանջիլ, տանջանք>տանջանք:

*բ) Արևելահայ գրական լեզվից կամ օտար լեզուներից կատարած նոր փոխառությունների մեջ, ինչպես.*

*Բ>բ.— բաժակ>*բաժակ, *բաժանել>*բըժանիլ, *բախտ>*բախտ, *բայց>*բայց, *բանակ>*բանակ, *բառ>*բառ, *բոռ>*բօռ, *բուսանել>*բուսնիլ, *բոլ>*բօլ, *բոյ>*բօյ:

*Գ>գ.— գերի>*գէրի, *գործ>*գօրծ, *թագ>*թագ, *ճագար>*ճագար, *նարգէս>*նärգիզ:

*Դ>դ.— դաշտ>*դաշտ, *դար>*դար, *դարդ>*դärդ, *դև>*դէվ:

## 1. Զայներ պայթականներ

*67. Բառասկզբի ձայնեղ պայթականների դիմաց սովորաբար ունենք պարզ խուլեր, ինչպես.*

*Բ>պ.— բազումք>*պäզöւկ, *բահ>*պäհ, *բամբակ>*պäմբäկ, *բան>*պäն, *բանջար>*պäնջär, *բառաչ>*պäռäնչ, *բարակ>*պäräկ, *բարձ>*պärց, *բերան>*պէrան, *բրինձ>*պըrինձ:

*Գ>կյ.— գալ>*կյäլ, *գառն>*կյäռը, *գարի>*կյärի, *գարուն>*կյärö̂յնf, *գերան>*կյէrան, *գզել>*կյըզիլ, *գինի>*կյինի, *գինձ>*կյինձ, *գիւղ>*կյէղ, *գող>*կյöղ, *գոմ>*կյöմ:

*Դ>տ.— դալար>*տäլär‖տիլար, *դաղձն>*տäխծը, *դանակ>*տäնäկ, *դառնալ>*տäռնäլ, *դաս>*տäս, *դատարկ>*տäռտäկ, *դեղ>*տէղ, *դեղին>*տէղին, *դիզել>*տիզիլ, *դմակ>*տըմակ, *դու>*տöւ, *դուռն>*տöւռը:

*Ձ>ծ.— ձագ>*ծäf, *ձախ>*ծäխ, *ձայն>*ծէն, *ձգել>*ծըfիլ, *ձևել>*ծէվիլ, *ձեռն>*ծէռը, *ձէթ>*ծէթ, *ձի>*ծի, *ձիւն>*ծին‖ծöւն, *ձմեռն>*ծըմէռ, *ձմերուկ>*ծըմէrուկ, *ձու>*ծöւ, *ձուկն>*ծöւկը:

*Ջ>ճ.— ջարդել>*ճäռթիլ, *ջերմ>*ճէrմ, *ջիլ>*ճիլ, *ջնջել>*ճընչիլ, *ջոկ>*ճօկ, *ջոկել>*ճօկիլ, *ջորի>*ճօrի, *ջուր>*ճöւr, *ջրաղաց>*ճաղաց, *ջրել>*ճըrիլ:

*69. Ր, ռ բաղաձայններից հետո, միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում ձայնեղ պայթականների դիմաց սովորաբար ունենք շնչեղ խուլեր, ինչպես՝*

*Բ>փ.— արբենալ>*ճärփիլ, *դարբին>*տärփին (*նաև՝* դարփին), *երբ>*յէփ, *լիրբ>*լիrփ, *ծնեբեկ>*ծընիփակ, *խաբել>*խափիլ, *շաբաթ>*շäփäթ, *սուրբ>*սուrփ:

*Գ>ք.— արեգակն>*rէfնակ, *երգ>*յէrf, *երգել>*յէrfիլ, *էգ>*էf, *թագաւոր>*թաfավէr, *կարագ>*կարաf, *կարգ>*կարf, *ձագ*

>ծäf, *ճրագ*>ճըrաf, *մարագ*>մարաf, *սգաւոր*>սըfավէr, *օ-գուտ*>օfուտ:

*Դ*>*թ*.— *արդար*>արթար, *աւելորդ*>ավէլճօrթ, *երդիկ*> ճէrթիկ, *(զ)արդ*>զärթ, *խառնուրդ*>խառճուrթ, *կարդալ*>կառ-թալ, *մարդ*>մառթ, *ջարդել*>ճäռթիլ, *վարդ*>վառթ, *փոխանորդ* >փօխճուrթ (*Իջ*. փօխճօrթ):

*Ձ*>*ց*.— *անփորձ*>ամփօrց, *փորձանք*>փօrցաճf, *բարձ*> պärց, *բարձր*>պärցrը||պärցըr, *խուրձ*>խուrց, *որձ*>վըէrց, *փորձ*>փօrց, *փորձել*>փօrցիլ:

*Ջ*>*չ*.— *աջ*>աչ, *առաջ*>առաչ, *առաջին*>առաչիճ, *առաջ-նեկ*>ըռչըճäկ||ըռչըճէկ, *արջ*>առչ, *մէջ*>մէչ, *ոջիլ*>վըէչիլ||ճօ-չիլ||ֆօչիլ, *վերջ*>վէrչ:

*70. Մի շարք բառերի մեջ* ղ *բաղաձայնին հաջորդող* բ, դ, ձ, ջ *ձայնեղ պայթականների դիմաց խոսվածքում ունենք* պ, տ, ծ, ճ *պարզ խուլեր, ինչպես՝ աղբ*>ախպ, *աղբիւր*>ախպöւr, *եղբայր*>ախպէr, *եղբայրութիւն*>ախպէrութիճ, *խեղդել*>խէխ-տիլ, *դաղձն*>տäխծը, *մաղձ*>մäխծ, *մաղձոտ*>մäխծօտ, *աղ-ջիկ*>ախճիկ, *առողջ*>առօխճ:

*71. Ձայնեղ պայթականների համար մասնակի փոփոխու-թյուններ են.*

*Բ*>*փ*.— *բոինչ*>փըռէչճը, *բռնել*>փըռճիլ, *բրդել*>փըռթիլ:

*Գ*>*ք*, *քյ*.— *գիշեր*>fյըշէr, *գնալ*>fյըճալ, *գտանել*>fըթ-ճիլ:

*Գ*>*գյ*.— *գաջ*>գյäջ, *գուլպայ*>գյöւլփä:

*Դ*>*թ*.— *դադար*>թäթär, *դադարել*>թըթարիլ:

*Ձ*>*զ*.— *արձակ*>ճärզäկ, *ձկռտալ*>զըկըռտալ:

*Ջ*>*չ*, *ճ*.— *մէջք*>մէչկ (*Իջ*. մէճկ), *քաջք*>fաչկ (*Իջ*. fաճկ):

## 2. Խուլ պայթականներ

*72. Խոսվածքի խուլ պայթականները գրաբարի համեմա-տությամբ սովորաբար մնացել են անփոփոխ, ինչպես.*

*Պ*>*պ*.— *կապել*>կապիլ, *կապերտ*>կաrպէտ, *պալատ*> պալատ, *պակաս*>պակաս, *պահել*>պաճիլ, *պահակ*>պաճակ, *պապ*>պապ, *պանիր*>պաճիr, *պարապ*>ճըպարապ, *պարզ*> պարզ, *պոկել*>պօկիլ *են*:

*Կ*>*կ*.— *ակն*>ակը, *աղջիկ*>ախճիկ, *կաթել*>կաթիլ, *կա-թըն*>կաթը, *կաղին*>կաղիճ, *կանաչ*>կաճաճչ, *կատիկ*>կա-

տիկ, *կարկատել*>կըրկատիլ, *կծիկ*>կըծիկ, *կծկել*>կըծկիլ, *կորկոտ*>կօrկօտ, *կրակ*>կըրակ, *կրակել*>կըրակիլ *ևն։*

Տ>*տ*.— *խրատ*>խըrատ, *նետ*>նէտ, *տալ*>տալ, *տախտակ*>տախտակ, *տանջել*>տանջիլ, *տանձ*>տանձ, *տարի*>տաrի, *տէր*>տէr, *տխուր*>տըխոււr, *տուն*>տուն, *ցուրտ*>ցուտ, *փայտ*>փէտ *ևն։*

Ծ>*ծ*.— *ածել*>ածիլ, *արծաթ*>էrծաթ (*Իջ.* աrծաթ), *լծել*>լըծիլ, *լուծ*>լյüւծ, *ծալ*>ծալ, *ծալել*>ծալիլ, *ծախել*>ծախիլ, *ծածկել*>ծածկիլ, *ծակել*>ծակիլ, *ծաղիկ*>ծաղիկ, *ծառ*>ծառ, *ծիլ*>ծիլ, *ծուռ*>ծուռ *ևն։*

Ճ>*ճ*.— *ճակատ*>ճակատ, *ճանաչել*>ճըճանչիլ, *ճանճ*>ճüնջ, *ճաշ*>ճüշ, *ճարտար*>ճաrտաr, *ճիպոտ*>ճիպօտ, *ճիւղ*>ճուղ, *ճուտ*>ճուտ, *ճրագ*>ճըrաf, *մաճ*>մաճ, *մաճառ*>մաճառ *ևն։*

*73.* Պ, տ, կ *խուլ պայթականների դիմաց մի շարք բառերի մեջ ունենք* փ, թ, f *շնչեղ խուլեր։ Խուլերի շնչեղացումը մեծ մասամբ տեղի է ունենում* ս, ռ *բաղաձայնների մոտ և նախորդ շնչեղ խուլի առնմանությամբ, ինչպես.*

Պ>*փ*.— *պարտակել*>փըռթակիլ, *պսակ*>փըսակ, *պսակել*>փըսակիլ, *սպարդիլ*>սըփüռթնիլ:

Կ>*ք*.— *կշեռք*>fըշէrf, *կռճել*>fըռճիլ, *չարեակ*>չաrէf:

Տ>*թ*.— *գործնուկ*>կյöռթնուկ, *գտանել*>fըթնիլ, *խրտնիլ*>խըռթնիլ, *պարտակել*>փըռթակիլ, *փետուր*>թէփուռ, *փտել*>փըթիլ:

*74. Գրաբարյան* պ, տ, կ *խուլ պայթականների դիմաց մի շարք բառերում ունենք* բ, գ, գյ, դ *ձայնեղ բաղաձայններ։ Այդպիսի անհամապատասխանությունները մեծ մասամբ տեղի են ունենում* ն, r *բաղաձայններից հետո և միջձայնավորային դիրքում, ինչպես.*

Պ>*բ*.— *ապսպարել*>բըսպաrիլ, *ապսպարանք*>բըսպաrանf, *ապրայ*>üբrü, *ապրշում*>աբrիշում, *պատարագ*>բադաrաf (*նաև՝* պըդաrաf):

Կ>*գ, գյ*.— *ականջ*>անգան, *աշակերտ*>շագէrդ, «*վարպետի աշակերտ*», *երեկ*>էrէգ, *երեկոյ*>rüւգüւ(ն), *երկայն*>էrգür‖էrգüն, *երկինք*>յէrգինf, *երկիր*>յէrգիr, *թանկ*>թանգ, *թանկանալ*>թընգանալ, *թիկունք*>թիգունf, *լական*>լüգüն, *կեանք*>գյüնf, *կիւրակէ*>գյիrüգի, *ունկն*>ունգը, *տունկ*>տունգ;

*Տ>դ.*— *անտէր*>անդէր, *աշակերտ*>շագէրդ, *հանդարտ*> ճա̈ճդա̈րդ, *մարտ*>մա̈րդ *(ամիսը)*, *պատարագ*>բադարաք (պըդարաք), *սատափ*>սա̈դա̈փ, *տաղել*>դաղիլ:

*75. Խուլ պայթականների համար մասնակի փոփոխություններ են.*

*Պ>կ.*— *սեպտեմբեր*>սէկտէմբէր: *Այս փոփոխությունը տեղի է ունեցել հոկտեմբեր բառի ազդեցությամբ։*

*Կ>պ.*— *բոկիկ*>պէպիկ, *բոկիկանալ*>պըպըկանալ *(Իշ.* պէպըկանալ):

*Ծ>ս.*— *Նեղուածք*>նէղվասկ||նըրէղվասկ:

*Ծ>ց.*— *փայծաղն*>փէցախ||փացախ:

*Ճ>շ.*— *փուճ*>փուշ, *փուճակ*>փըշակ:

### 3. Շնչեղ խուլ պայթականներ

*76. Խոսվածքի շնչեղ խուլ պայթականները սովորաբար արտասանվում են ինչպես գրաբարյան համապատասխան հնչյունները, ինչպես.*

*Փ>փ.*— *եփ*>էփ, *եփել*>էփիլ, *լափ*>լա̈փ, *շերեփ*>շիրէփ, *փախչել*>փախշիլ, *փափուկ*>փափաուկ, *փշատ*>փըշատ, *փշրել*>փըշրիլ, *փոխել*>փօխիլ, *փոս*>փօս:

*Ք>ք.*— *անքուն*>անքուն, *ապրանք*>ապրանք, *քաղաք*> քաղաք, *քաղել*>քաղիլ, *քաշել*>քաշիլ, *քամի*>քամի, *քանի*> քանի, *քար*>քար, *քացախ*>քացախ, *քեռի*>քէռի, *քիթ*>քիթ, *քուն*>քուն:

*Թ>թ.*— *անթեղ*>անթէղ, *արծաթ*>էրծաթ *(Իշ.* արծաթ), *բոյթ*>պիթ, *թաթախել*>թըթախիլ, *թամբել*>թամբիլ, *թան*> թան, *թանկ*>թանգ, *թել*>թէլ, *թի*>թի, *թուզ*>թուզ, *լաթ*>լաթ, *կթել*>կըթիլ, *կիթ*>կիթ:

*Ց>ց.*— *առանց*>առանց, *աքացի*>քացի, *խնոցի*>խընօցի, *կտուց*>կըտուց, *հարց*>հարց, *հաց*>հաց, *ցամաք*>ցամաք, *ցաւ*>ցավ, *ցել*>ցէլ, *ցից*>ցէց, *ցորեան*>ցօրէն, *ցուրտ*> ցուրտ:

*Չ>չ.*— *ամաչել*>հըմանչիլ, *թռչել*>թըռչիլ, *խաչ*>խաչ, *չամիչ*>չամիչ, *չար*>չար, *չարչարել*>չըրչարիլ, *չափ*>չափ, *չափել*>չափիլ, *չիր*>չիր, *չոր*>չօր, *չորս*>չօրս, *չուան*>չըվան:

*77. Մի շարք բառերի վերջում* ք *շնչեղ խուլի դիմաց ունենք* կ *պարզ խուլ։ Ք>կ փոփոխությունը տեղի է ունենում*

խ, շ *շփականներից հետո, ինչպես՝ աչք*>աշկ (*Իջ.* աճկ), *թղքի* >թըխկի, *խմիչք*>խըմիշկ (*Իջ.* խըմիճկ), *հրաշք*>ճըrաշկ, *մէջք* >մէշկ (*Իջ.* մէճկ), *շողք*>շօխկ, *փողք*>փօխկ, *քաջք*>fաշկ:

*78. Շնչեղ խուլ պայթականների համար մասնակի փոփոխություններ են.*

*Թ>տ.— եօթն*>օխտը, *եօթանասուն*>օխտընասուն, *թուղթ* >թուխտ: *Հավանական է, որ առաջին երկու բառերում թ>տ փոփոխությունը տեղի է ունեցել խ-ի հավելման պատճառով։*

*Թ>ծ, ց.— վաթսուն*>վածծուն‖վացցուն:

*Ց>ծ.— լուացք*>լըվա̈ծկ:

*Ց>ս.— ջրաղացպան*>ճըղասպան:

*Ց>ճ.— ցախ*>ճախ, *ցախաւել*>ճըխէվիլ:

*Չ>ճ.— աչք*>աճկ (*Իջ.*), *զոքանչ*>զա̈ճfա̈ճ, *խմիչք*>խը-միճկ (*Իջ.*), *ոչխար*>վըէխճար:

*Չ>շ.— աչք*>աշկ, *խմիչք*>խըմիշկ: *Այս փոփոխությունը տարածված է Շամշադինի և Կրասնոսելսկի շրջանների գյուղերում։*

## 4. Ձայնեղ շփականներ

*79. Խոսվածքի ձայնեղ շփականները սովորաբար արտասանվում են ինչպես գրաբարյան համապատասխան հնչյունները, ինչպես.*

*Զ>զ.— ազգ*>ազգ, *բազումք*>պազուկ, *դէզ*>տէզ, *եզն*> յէզը, *երազ*>էrազ‖աrազ, *զանգ*>զա̈ճգ, զատիկ>զատիկ, *զըրոյց*>զըrից, *թուզ*>թուզ, *ուզել*>ուզիլ, *պարզ*>պարզ:

*Ժ>ժ.— արժան*>էժաճ, *բաժինք*>պէժիճf (*Իջ.* պա̈ժիճf), *բոժոժ*>պօժօժ, *թեժ*>թէժ, *ժամ*>ժամ, *ժամանակ*>ժամաճակ, *ժառանգ*>ժա̈ռա̈ճգ, *ժողով*>ժօղօվ, *կուժ*>կուժ, *վարժ*>վարժ, *վարժիլ*>վարժվիլ:

*Ղ>ղ.— աղ*>աղ, *աղալ*>աղիլ, *աղի*>աղի, *աղուն*>աղուճ, *անմեղ*>ամմէղ, *ասեղ*>ասէղ, *դեղին*>տէղիճ, *մաղ*>մաղ, *մաղել*>մաղիլ, *շաղ*>շաղ, *շաղել*>շաղիլ, *ուղարկել*>ղարգիլ:

*Վ>վ.— սով*>սօվ, *սովոր*>սավէr, *սովորել*>սըվէrիլ, *վախ*>վախ, *վախել*>վախիլ, *վարազ*>վարազ, *վարար*>վա-rար, *վարել*>վարիլ, *վերայ*>վըrա, *վերջ*>վէrչ, *վնաս*>վը-ճաս:

*80.* Ղ *ձայնեղ շփականի դիմաց* խ *ունենք հետևյալ բառե-*

րում՝ աղբ>ախպ, աղբիւր>ախպöւr, աղջիկ>ախճիկ, առողջ> առօխճ, բողկ>պօխկ (նաև՝ պէխկ), գաղթական>կախտական, դաղձն>տա̈խծր, եղբայր>ախպէr, թղքի>թրխկի, թուղթ> թուխտ, խիղճ>խիխճ, մաղձ>մա̈խծ, շող(ք)>շօխկ, փող(ք)> փօխկ: Հիշյալ բառերում ղ>խ փոփոխությանը զուգահեռ ձայնեղ պայթականները վերածվում են պարզ խուլերի։ Այնպես որ հնարավոր չէ պարզել, թե որ փոփոխությունն է պայմանավորված մյուսով։

## 5. Խուլ շփականներ

81. Խոսվածքի խուլ շփականները սովորաբար համապատասխանում են գրաբարյան նույն հնչյուններին, ինչպես.

Ս>ս.— աղուէս>աղվէս, այս>էս, ասել>ասիլ, ասեղն> ասէղ, ուս>ուս, պսակ>փըսակ, սառել>սառիլ, սատանայ> սըտանա̈, սար>սաr, սկանալ>սըկանալ, սխալ>սըխալ, սուտ >սուտ, սուր>սուr:

Շ>շ.— աշուն>աշունf, երաշտ>էrաշտ||աrաշտ, թրթուաշ>թրթվաշ, թուշ>թուշ, շաղ>շաղ, շաղախել>շըղաղիլ, շար >շաr, շինել>շինիլ, շնորհաւոր>շընհավէr, շուն>շուն, փուշ >փուշ:

Խ>խ.— ախոռ>ախօռ, թաթախել>թըթախիլ, թուխ> թուխ, խազել>խազիլ, խանգարել>խընգաrիլ, խաչ>խաչ, խառնել>խառնիլ, խլել>խըլիլ, խմել>խըմիլ, խնամի>խընամի, խրատել>խըrատիլ, ծախել>ծախիլ, ծուխ>ծուխ:

Հ>հ.— ահ>ահ, հակառակ>հակառակ, համ>համ, համոզել>համօզիլ, հայելի>հայլի||հիլի, հանել>հանիլ, հարց> հաrց, հինգ>հինգ, հիւանդ>հիվանդ, հնձել>հընձիլ, հում> հում, պահել>պահիլ, պահակ>պահակ:

82. Ա ձայնավորից առաջ խ խուլ շփականը փոխվում է հ-ի, ինչպես՝ խաղ>հաղ, խաղալ>հաղ անիլ, խաղալիք>հաղալիf, խաղող>հաղօղ:

83. Ո ձայնավորից առաջ բառասկզբի հ խուլ շփականը փոխվում է ֆ-ի։ Ինչպես արդեն նշել ենք, այս փոփոխությունը տարածված է միայն Իջևանում և Դիլիջանում, մինչդեռ Շամշադինում և Կրասնոսելսկում հիշյալ հնչյունը ո ձայնավորից առաջ սովորաբար մնում է անփոփոխ։ Նշենք համապատասխան օրինակներ՝ հոգի>ֆօfի (Իջ., Դլջ.), հօfի (Շմդ., Կրս.),

*Հող*>ֆըէղ‖ֆօղ *(Իջ., Դլջ.)*, հօղ *(Շմղ., Կրս.)*, *Հոտ*>ֆըէտ‖ֆօտ *(Իջ., Դլջ.)*, հօտ *(Շմղ., Կրս.)*, *Հոտիլ*>ֆըէտիլ‖ֆօտիլ *(Իջ., Դլջ.)*, հօտիլ *(Շմղ., Կրս.)*, *Հոր*>ֆըէր‖ֆօր *(Իջ., Դլջ.)*, հօր *(Շմղ., Կրս.)*, *Հորթ*>ֆըէրթ‖ֆօրթ *(Իջ., Դլջ.)*, հօրթ *(Շմղ., Կրս.)*:

*84.* Ս *խուլ շփականի համար մասնակի փոփոխություններ են.*

*Ս>ծ ց.— Հիսուն*>հիցցուն‖իծծուն, *վաթսուն*>վածծուն‖վացցուն:

*Ս>զ.— Նարգէս*>նäրզիզ:

*Ս>շ.— սեամ*>շէմf:

## 6. Ձայնորդներ

*85. Խոսվածքի* լ, մ, ն, ռ, ր *ձայնորդ բաղաձայնները արտասանվում են ինչպես գրաբարյան համապատասխան հնչյունները, ինչպես.*

*Լ>լ.— ալիւր*>ալիր, *այլ*>էլ, *աւել*>ավէլ‖էվիլ, *աւելորդ*>ավէլնօրթ, *թոյլ*>թիլ, *իլ(իկ)*>իլիկ, *լաւ*>լäվ, *լակել*>լակիլ, *լայն*>լէն, *լաւաշ*>լավաշ, *լծել*>լըծիլ, *լողանալ*>լօղանալ, *ծալել*>ծալիլ, *ծլել*>ծըլիլ:

*Մ>մ.— ամբար*>ամբար, *ամիս*>ամիս, *խմել*>խըմիլ, *խմոր*>խըմօր, *ծամ*>ծամ, *կում*>կում, *համ*>համ, *հում*>հում, *մկրատ*>մըկրատ, *մնալ*>մընալ, *մոխիր*>մօխիր, *մութ*>մութ, *մրսել*>մըրսիլ, *քամել*>fամիլ, *քամի*>fամի:

*Ն>ն.— աման*>աման, *այն*>էն, *անքուն*>անfուն, *դնել*>տընիլ, *թան*>թան, *նամակ*>նամակ, *ներել*>նէրիլ, *նկար*>նըկար, *նման*>նըման, *նշան*>նըշան, *նստել*>նըստիլ, *նուռն*>նուռը:

*Ռ>ռ.— ախոռ*>ախօռ, *առակ*>առակ, *առանց*>առանց, *առաջ*>առաչ, *աստառ*>աստառ, *գկեռ*>զըկէռ, *թառ*>թառ, *թառել*<թառիլ, *խառնուրդ*>խառնուրթ, *ծառ*>ծառ, *ծառայ*>ծառա, *ռեհան*>ռէհան, *ռօճիկ*>ռօճիկ, *սառել*>սառիլ:

*Ր>ր.— աներ*>հանէր, *ապրել*>ապրիլ, *արածել*>ըրածիլ, *բերան*>պէրան, *բերել*>պիրիլ, *երեք*>իրէf, *ընկեր*>հընգէր, *խոր*>խօր, *խրատ*>խըրատ, *կատար*>կատար, *կար*>կար, *հարցանել*>հըրցընիլ:

*86.* Ա, ä, ö *առաջնային ձայնավորներից առաջ* լ *ձայնորդ*

բաղաձայնի դիմաց խոսվածքում ունենք լյ, ինչպես՝ լական> լյա̈գա̈ն, լաշակ>լյա̈շա̈կ, լաւ>լյա̈վ, լաւանալ>լյա̈վա̈նա̈լ (Իջ. լացել>լյա̈ց ըլիլ, լափ>լյա̈փ, լափել>լյա̈փիլ, լեզու>լյո̈ւզո̈ւ, լեզուանի>լյո̈ւզվա̈նի, լուծ>լյո̈ւծ, լու>լյո̈ւ, լոր>լյո̈ր, լորենի> լյո̈րի:

Լուանալ>լյիվա̈նա̈լ (Շմդ., Կրս.), լոյս>լյիս, լուացք>լյիվա̈սկ, լուսանալ>լյիսա̈նա̈լ բառերում քմային լյ ունենք նաև ի ձայնավորից առաջ։

87. Թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի վերջում գրաբարյան ն վերջնահնչյունը ընկել է։ Հարկ է նշել, որ ն-ից առաջ լսվող ը ձայնավորը բազմավանկ բառերի վերջում ևս ընկել է, իսկ միավանկ բառերի վերջում՝ պահպանվել։ Բերենք համապատասխան օրինակներ։

Միավանկ բառերի համար՝ ակն>ակը, բեռն>պէռը, գառն> կյա̈ռը, դաղձն>տա̈խծը, դուռն>տո̈ւռը, եզն>յէզը, եօթն>օխտը, թոռն>թօռը, ինքն>ինքը, խառն>խառը, խուփն>խուփը, ծոռն>ծուռը, ծունգն>ծունգը, կաթն>կաթը, կառն>կառը, կուռն>կուռը, հարսն>հարսը, ձեռն>ծէռը, ձուկն>ծո̈ւկը, մուկն >մուկը, նուռն>նուռը, ոտն>վըտը, որդն>վէռթը, ունկն> ունգը, տասն>տասսը:

Բազմավանկ բառերի համար՝ ամառն>ամառ, ասեղն>ասէղ, արեգակն>րէքնակ (Իջ. ըրէքնակ), արմուկն>արմունգ, եղունգն>ղինգ, երդումն>յէրթում, թիթեռն>թիթէռ, կայծակն >կէծակ (Իջ. կայծակ), կնճիռն>կընճիռ, կոտիմն>կօտիմ, ձըմեռն>ծըմէռ, ճպուռն>ճըպուռ, ոլոռն>հիլօռ, պալատն>պալատ, փայծաղն>փէցախ‖փացախ:

88. Բաղաձայնից առաջ ր ձայնորդ բաղաձայնի դիմաց ռ ունենք մի շարք բառերում։ Մեր աշխատանքի մեջ ներկայացրած «Գրաբարից-խոսվածք» բառացանկից երևում է, որ ր>ռ փոփոխությունը որոշ չափով օրինաչափ է տեղի ունեցել միայն թ և տ բաղաձայններից առաջ, թեև մասնակի դեպքեր են նըկատվում նաև ծ, ճ, մ, շ, ս բաղաձայնների մոտ։ Քննելով թ և տ բաղաձայններից առաջ տեղի ունեցած ր>ռ փոփոխությունը, պարզվում է, որ նոր գրական արևելահայերեն և կրոնական փոխառություններում հիշյալ հնչյունափոխությունը տեղի չի ունենում, ինչպես՝ ճարտար>ճարտար, որդի>վըէրթի, արդար> արթար, երդիկ>հէրթիկ, (զ)արդ>զա̈րթ, (զ)արդարել>զըրթա-

rիլ, *վարդապետ*>վարթապէդ, *վարդավառ*>վըrթիվէr, *տերտեր* >տէrտէr:

*Այժմ ներկայացնենք ր>ռ փոփոխության դեպքերը.*

*Թ-ից առաջ* r *բաղաձայնի դիմաց* ռ *ունենք հետևյալ բառերում՝ բրդել*>փըռթիլ, *բրդոտ*>պըռթöտ, *գորտնուկ*>կյöռթնուկ, *թրթնչուկ*>թըռթընչուկ, *թրթռալ*>թըռթըռալ, *խորթ*>խօռթ, *խորթանալ*>խօռթանալ, *խրտնուլ*>խըռթնիլ, *կարդալ*>կառթալ, *մարդ*>մառթ, *մարդասպան*>մառթասպան, *մորթի*>մօռթի, *որդն*>վէռթը, *պարտակել*>փըռթակիլ, *ջարդել*>ճöռթիլ, *սպարդիլ*>սըփöռթնիլ, *վարդ*>վառթ, *վարդենի*>վառթի:

Տ-*ից առաջ* r *բաղաձայնի դիմաց* ռ *ունենք հետևյալ բառերում՝ արտ*>առտ, *արտասուք*>ըռտասունf, *կրտել*>կըռտիլ, *լորտու*>լօռտու, *խարտ*>խառտ, *խարտոց*>խառտօց, *խարտոցել*>խառտօցիլ, *ծիրտ*>ծէռտ, *ծրտել*>ծըռտիլ, *պարտական*>պառտական, *պարտ(ք)*>պառտf, *սիրտ*>սէռտ, *ցուրտ*>ցուռտ, *ցրտել*>ցըռտիլ, *քրտնել*>fըռտնիլ:

*Մյուս բաղաձայններից առաջ* r-*ի փոխարեն* ռ *ունենք հետևյալ բառերում՝ արծիւ*>առծիվ, *արջ*>առչ, *կարճ*>կառճ, *կուրծ*>կուռծ, *կրծել*>կըռծիլ, *մարսել*>մառսիլ, *մարմառ*>մառմառ, *սարսռալ*>սըռսըռալ, *քարճիկ*>fառճիկ:

*Ծանոթություն.— Զգացվում է, որ ր>ռ փոփոխությունն այնքան էլ հաստատուն չի եղել, քանի որ ներկա սերունդն արդեն գրական հայերենի ազդեցությամբ* r-*ն արտասանում է անփոփոխ ձևով։*

*89. Գրաբարյան* յ *ձայնորդի դիմաց բառասկզբում սովորաբար ունենք* ɦ *խուլ շփական, իսկ բառավերջում այն դուրս է ընկնում։*

*Բառասկզբի* յ *ձայնորդի փոխարեն* ɦ *ունենք հետևյալ օրինակներում՝ յաղթել*>ɦախթիլ, *յաջող*>ɦաչօղ, *յարմար*>ɦաrմար, *յիմար*>ɦիմար, *յիշատակ*>ɦիշատակ, *յիսուս*>ɦիսուս, *յոյս*>ɦույս, *յուլիս*>ɦուլիս, *յունիս*>ɦունիս, *յունուար*>ɦունուվար, *յոպոպ*>ɦօպօպ, *յօժար*>ɦօժար:

*90. Ձայնորդ բաղաձայնների համար մասնակի փոփոխություններ են.*

*Ն>մ.— անմեղ*>ամմէղ, *անուն*>անըմ, *անպէտք*>ամպէտկ, *անփորձ*>ամփօrց:

*Նգ>ղ.— կանգնել*>կաղնիլ:

Ր>ռ.— մարմար>մառմառ, պաշար>պաշառ, փետուր> թէփուռ:

Ր>լ.— կոլորել>կըլօլիլ:

Յ>յ.— յետանալ>յէտանալ:

Յ>վ.— յուշապ>վիշապ:

Նապաստակ բառի դիմաց ունենք ըլապաստրակ, ալապաստրակ, ըլըքաստրակ ձևերը։

## Ամփոփում

Պատմական հնչյունափոխության ընդհանուր պատկերից երևում է, որ Շամշադին—Դիլիջանի խոսվածքի թե՛ ձայնավորներն ու երկբարբառները և թե՛ բաղաձայնները գրաբարի համեմատությամբ ենթարկվել են զգալի փոփոխությունների։

Ձայնավորների փոփոխության համար կարևոր դեր է խաղացել այն հանգամանքը, թե տվյալ հնչյունը գտնվում է շեշտից առաջ, շեշտի տակ, թե շեշտից հետո։ Այսպես, բառասկզբի նախաշեշտ ա ձայնավորը դառնում է ը, (եթե բառի առաջին վանկը փակ է), կամ դուրս է ընկնում (եթե բառի առաջին վանկը բաց է), մինչդեռ շեշտի տակ ա-ն դառնում է ä (Աճառյանի օրենքի համապատասխան) կամ մնում է անփոփոխ։

Ե, է ձայնավորները սովորաբար արտասանվում են որպես պարզ է, սակայն մի շարք բառերում ե-ն դառնում է ըէ:

Գրաբարյան գաղտնավանկ ը-ն սովորաբար մնում է անփոփոխ։ Գրաբարյան վերջնահանգ ն-ի և նախորդ բաղաձայնի միջև լսվող ը-ն տեղափոխվել է բառի վերջը կամ բոլորովին ընկել է՝ ն-ի անկման պատճառով։

Ի ձայնավորը մի քանի բառերում դառնում է ըի, իսկ մնացած դեպքերում մնում է անփոփոխ։

ՈՒ, ո ձայնավորները սովորաբար մնում են անփոփոխ, իսկ Աճառյանի օրենքի համաձայն դառնում են ü, ö:

Երկբարբառների կրած փոփոխությունների համար կարևոր դեր են խաղացել նախաբաղաձայնական և նախաձայնավորական դիրքերն ու բառավերջը։ Բաղաձայնից առաջ երկբարբառների դիմաց ունենք պարզ ձայնավորներ (այ>է, աւ>օ, իւ>ի, ոյ>ի), իսկ ձայնավորից առաջ և բառավերջում՝ բաղաձայնի և ձայնավորի կապակցություն։

*խոսվածքի բաղաձայնական համակարգի մեջ նկատելի են ձայնեղ պայթականների կրած փոփոխությունները։ Այդ հնչյուններր բառասկզբում օրինաչափորեն վերածվել են պարզ խուլերի։ Ձայնեղ պայթականները* r *ձայնորդից հետո և միջձայնավորային դիրքում վերածվել են խուլերի, իսկ անփոփոխ են մնացել* մ, ն *ռնգայիններից հետո։*

*Խուլ և շնչեղ խուլ պայթականներն ամեն դիրքում էլ մնացել են անփոփոխ։ Նույն կերպ անփոփոխ են մնացել նաև ձայնեղ և խուլ շփականները. միայն* ղ *ձայնեղ շփականը որոշ բառերում դարձել է* խ:

Ր *ձայնորդը որոշ բաղաձայններից առաջ կարող է դառնալ* ռ, *իսկ* յ-*ն բառասկզբում վերածվել է* հ-*ի։*

## 7. Անկում

*91. Ձայնավորների պատմական հնչյունափոխության նկարագրության ժամանակ ցույց ենք տվել նաև այդ հնչյունների հետ կապված անկման տարբեր դեպքերը, իսկ բաղաձայնների անկման մասին ոչինչ չենք խոսել։ Այժմ ներկայացնենք բաղաձայնների հետ կապված անկման բոլոր դեպքերը։*

*Եթե ձայնավորների անկումը հիմնականում տեղի է ունենում բառասկզբի նախաշեշտ վանկում, ապա բաղաձայնների անկման համար դժվար է առանձնացնել այդպիսի հաստատուն պայման։ Միայն կարելի է ասել, որ որոշ բաղաձայնների անկման պատճառը, անշուշտ, դրանց թույլ հնչումն է, ինչպես՝* աշխաr(հ), խոr(հ)ուrդ, շնոr(հ)f, պաշ(տ)պան, պա(տ)ճառ:

*92.* Ր *բաղաձայնը ընկել է հետևյալ բառերի մեջ՝ արժել>* աժի, *արջառ>*աչառ, *դուրս>*տö̈ւս, *երբ>*յէփ, *խարշել>*խաշիլ, *հորաքույր>*հօfիr, *մորաքույր>*մօfիr, *շնորհավոր>*շընհավէr, *ջրաղաց>*ճաղաց, *ջրաղացպան>*ճըղասպան, *ջրօրհնէք>*ճըrօխնէf, *քարշ>*fաշ *(կշիռ), քարշել>*fաշիլ, *օրհնել>*օխնիլ:

*93.* Հ *բաղաձայնը ընկել է հետևյալ բառերի մեջ՝ անշընորհք>*անշընօrf, *աշխարհ>*աշխաr, *խոնարհ>*խօնաr, *խորհուրդ>*խօrուrթ, *հաճար>*աճաr *(նաև՝* հաճաr), *շնորհք>*շընօrf:

*94.* Յ *բաղաձայնը ընկել է հետևյալ բառերի սկզբում՝ յիշոցք>*ö̈ւշö̈ւնց, *յիսուն>*իծծուն||հիցցուն, *յուշ>*ուշ, *յոնք>*ունf:

*95. Մյուս բաղաձայնների համար ունենք անկման հետևյալ մասնակի դեպքերը.*

*Բ.— թամբել*>թամfիլ, *թամբ(ք)*>թամf:
*Տ.— պաշտպան*>պաշպան, *պատճառ*>պանճառ:
*Ս.— սկեսուր*>կէսուր:
*Ք.— ճոճ(ք)*>ճոճ:

## 8. Հավելում

*96. Ձայնավորով սկսվող մի քանի բառերից առաջ ավելացել է* ն *հնչյունը, ինչպես՝ ալեւոր*>նալիվօր, *ամաչ*>նամանչ, *ամաչել*>նըմանչիլ, *ամաչեցուցանել*>նըմընշըցընիլ, *անիծ*> **նանիծ** *(Շմդ., Կրս.), արձակ*>նäրզäկ, *եղի*>նէղի, *երինջ*> նէրինջ, *ընկեր*>նընգէր, *ընտրել*>նընդըրիլ, *ոլոռն*>նիլօռ, *ոլորել*>նըլöրիլ, ուլն(ունf)>նöւլöւնf, *ուրագ*>նուրաf:

*97.* Ն *բաղաձայնը ավելացել է հետևյալ բառերում՝ բառաչ*>պäռäնչ, *բառաչել*>պըռäնչիլ, *լաթ*>լանթ, *կանաչ*>կանանչ, *կանաչել*>կընանչիլ, *կասկարայ(ք)*>կըսկարանf, *մեք*>մըէնf, *մի*>մին:

*98. Մյուս բաղաձայններն ունեն հավելման մասնակի դեպքեր.*

*Դ.— ծանր*>ծանդըր, *ծանրանալ*>ծընդրանալ, *ծունր*> **ծունդր**:

*Բ.— համարք*>նäմբäրf, *համարել*>նըմբäրիլ:

*Կ.— աղտ*>կէխտ, *ոզնի*>կուզնի:

*Խ.— եօթն*>օխտը:

*Մ.— ամէն*>ամմէն *(եղիցի)*:

*Ռ.— ածելի*>առծըլի *(Իջ., Դլջ)*:

## 9. Դրափոխություն

*99. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում տեղի են ունեցել բաղաձայնների դրափոխության հետևյալ դեպքերը.*

*Ն*>*կ(գ).— ականջ*>անգան, *արմունկ*>արմունգ:

*Ն*>*լ.— բանալի*>պըլäնիf:

*Ն*>*ք.— գոքանչ*>գäնfäչ||գäնfäն:

*Խ*>*շ.— բաշխել*>բախշիլ:

*Խ*>*թ(տ).— թթխմոր*>թըխտըմօր:

*Խ*>*ս.— խստոր*>սըխտօր:

*Խ*>*չ(ճ).— ոչխար*>վըէխճար||վըէխչար:

Ր>մ.— կամուրջ>կարմունջ:
Ր>պ.— կապերտ>կարպէտ:
Ր>տ.— դատարկ>տա̈ռտա̈կ:
Փ>տ(թ).— փետուր>թէփուռ:

## 10. Շեշտի հետ կապված հնչյունափոխություն

100. Երբ բառին նոր արմատ կամ ածանց է ավելանում, և կատարվում է շեշտի տեղափոխություն դեպի նախավերջին վանկը, շեշտակորույս ձայնավոր հնչյունները ենթարկվում են փոփոխության։ Շեշտի հետ կապված հնչյունափոխությունը տարածվում է ոչ միայն է, ի, ու, ո̈ւ, այլև ա, ա̈ ձայնավորների վրա։ Նշված բոլոր ձայնավորների համար էլ օրինաչափ հընչյունափոխությունը ը-ի փոխվելն է, ինչպես.

Ա>ը.— ա՛խպէր>ըխպըրա՛ցէղ «խորթ եղբայր», թա՛նգ> թընգա՛նալ, կա՛թը>կըթնըքա՛մի «կաթ քամելու մաղիկ», հա՛ստ >հըստա՛նալ, մա՛տը>մըտնա՛շունչ, մըտնը՛նուց։

Ա̈>ը.— թա̈՛թա̈ր>թըթա̈՛րիլ «դադարել», կյա̈՛ռը>կյըռնա̈՛տիլ «գառը վիժել», կյա̈՛նգա̈տ>կյընգա̈տվիլ «գանգատվել», պա̈ռա̈նչ>պըռա̈նչիլ «բառաչել», պա̈՛րա̈կ>պըրա̈կիլ «բարակել»։

Ի>ը.— լի՛րփ>լըրփո՛ւթին, խի՛խճ>խըխճմըտա՛նք, ծի՛ն >ծընըկօ՛լօլ, «ձյունաթաթախ», ճի՛լ>ճըլա̈՛տիլ «չլատել»։

Է>ը.— կէ՛ռ>կըռըհա̈՛քի «կեռ պոչով միջատ է», յէղ> յըղըծո՛ւ «ձվածեղ», սէ՛րմը>սըրմա՛ցու, սէվ>սըվա՛նալ։

Ու>ը.— կո՛ւշտ>կըշտա՛նալ, հո՛ւնձ>հընձա̈՛վարձ «հնձելու համար տրված վարձ», ճո՛ւխտ>ճըխտըկա՛թայ «զույգի ընկերը», սո՛ւք>սըքա՛վէր։

Ըէ, ըի>ը.— մըի՛տկ>մըտկա՛փօխ «նոր հղիացած կին», սըէ՛րտ>սըրտըպընդի՛լ «համարձակություն ստանալ», վըէ՛տը> վըտնա՛շօր «վարտիք»‖վըտնա՛ման «կոշիկ»։

101. Խոսվածքում հանդիպում ենք նաև շեշտի հետ կապված հնչյունափոխության այլ դեպքերի, ինչպես.

Ա̈>ի.— լյա̈՛փ>լյիփա̈՛կէր «ատամ», լյա̈՛վ>լյիվա̈՛նա̈լ։

Ու>ը, ի.— ճո̈ւր>ճիրա̈՛փօխ «ջուրը, օդը փոխած», ծո̈՛ւն (Շմդ., Կրս.), ծընծա՛ղիկ «ձնծաղիկ»։

Է>ի.— կյէ՛լ>կյիլա̈՛հաչ «գայլահաչ», է՛շ>իշա՛պէռ, իշա՛տէր։

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

## ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### 1. ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

*102. Շամշադին—Դիլիջանի խոսվածքի բառային կազմի մի զգալի մասը հայերեն ընդհանուր բառերն են, որոնք գործածվում են նաև հայերենի այլ բարբառներում, ինչպես՝* **ալիր**<*ալիւր,* **անգաճ**<*ականջ,* **ախպöւր**<*աղբիւր,* **ախճիկ**<*աղջիկ,* **ճաց**<*հաց,* **մուկը**<*մուկն,* **fար**<*քար են։*

*Բառերի այս շարքն ամբողջությամբ ներկայացված է գրքի վերջում բերվող գրաբարից Շամշադին—Դիլիջանի խոսվածքին անցած բառացանկի մեջ։ Բառացանկի առաջին սյունակում զետեղված են գրաբարյան բառերը, իսկ դրանց դիմացը տրված են խոսվածքի համապատասխան ձևերը։*

*103. Խոսվածքի բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրը ընդհանուր հայերեն բառերի հիման վրա կազմված բարբառային հատուկ ածանցումներն ու բարդությունները են, որոնց կազմության մասին կխոսվի ստորև։*

*104. Բառապաշարի մեջ առանձին ուշադրության են արժանի այն բառերը, որոնք չեն ավանդվել ոչ հին մատենագրությամբ և ոչ էլ գոյություն ունեն ժամանակակից հայերենում։ Այդ կարգի բառերից են՝* **պկան** *(բոլորը, ամբողջը),* **առվաճ** *(զարմանք),* **թօռ** *(անձրև),* **խաշամ** *(չորացած տերևներ) են։*

*Մեր կողմից առանձնացրած այդ կարգի բառերը զետեղված են բարբառային բառերի ցանկում։ Բառացանկի առաջին սյունակում բերված են բարբառային ձևերը, իսկ դիմացը տրված դրանց արտահայտած անմիջական և փոխաբերական իմաստները։*

*Պետք է նշել, որ այդ բառերի մի փոքրիկ մասը խոսվածքում գործածվում է միայն փոխաբերական իմաստով, որի*

*պատճառով էլ շատ հաճախ դրանք ներկայացվում են հենց այդ իմաստով։*

## 2. ԱծԱՆՑՆԵՐ

*105. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվող ածանցները մեծ մասամբ համապատասխանում են ժամանակակից հայերենի վերջածանցներին, ինչպես՝ -ակ, -ական, -անոց, -ավէր (ավոր), -ութին (ություն), -ք ևն։ Սակայն ունենք նաև մի շարք այնպիսի ածանցներ, որոնք հատուկ են միայն Շամշադին—Դիլիջանի խոսվածքին կամ հայերենի բարբառներից մի քանիսին, ինչպես՝ -ավէն (-ավուն), -ացու, -ուկ, -ուկի, -ուտկ ևն։ Խոսվածքին հատուկ այդ ածանցներով հավասարապես նոր բառեր են կազմվում հայերեն ընդհանուր և բարբառային բառերից։ Սակայն նույնպիսի գործածություն չունեն թուրքերենից կամ պարսկերենից փոխառյալ նոր ածանցները։ Վերջիններս մեծ մասամբ դրվում են փոխառյալ և բարբառային բառերի վրա, ինչպես՝ բէյխաբար, բէռազի, զուռնաչի, չոբանավարի։ Միայն -վարի (բար) վերջածանցն է, որ մեծ քանակով ածականներ կամ մակբայներ է կազմում նաև հայերեն ընդհանուր բառերից, ինչպես՝ ախպէրվարի (եղբայրաբար), հընգէրվարի (ընկերաբար), տըղավարի (տղայաբար) ևն։*

*106. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածական են հետևյալ ածանցները.*

*-ալի.— կազմում է՝*

*ա) ածականներ՝ մի բան շատ ունենալու նշանակությամբ, ինչպես՝ հըսալի (հայսով լի), յըղալի (յուղալի), սըրմալի (շատ սերմ ունեցող)։*

*բ) մակբայներ՝ ձևի նշանակությամբ, ինչպես՝ կըլկըլալի (գեղգեղանքով), սըրտալի (սրտով), քըլքըլալի (քչքչալով)։*

*-ակ.— կազմում է գոյականներ՝ նվազական նշանակությամբ, ինչպես՝ զանգուլակ (փոքրիկ օղ), կըլօլակ (կլորակ), պըթա̈կ‖պիթա̈կ (կեռ կամ ճանկ, որը կապում է լուծը սայլի հետ), վօրցակ‖վըէրցակ (աքաղաղ), տաշտակ։*

*-(ա)կան.— կազմում է՝*

*ա) գոյականներ՝ գործողի և այլ նշանակությամբ, ինչպես՝ ազգական, թըխսըկան, լըծկան, սիրէկան, ֆըէրսկան (որսկան)։*

բ) հարաբերական ածականներ, ինչպես՝ թաքավէրական, կյէղական (գյուղական), հօրական (հայրական), մօրական (մայրական)։

Խոսվածքում գործածվում են նաև -ական ածանցով կազմված հետևյալ ձևերը՝ խըմլական (խմելու համար հատկացված), տըլական (տալու համար հատկացված), ուտլական (ուտելու համար հատկացված), քյընյըկան (գնացող)։

Ինչպես հայտնի է, Ղարաբաղի բարբառում -ական վերջավորությամբ դերբայով և օժանդակ բայի հարադրությամբ կազմըվում են կատարելի ներկա և կատարելի անցյալ ժամանակաձևերը։ Խոսվածքիս մեջ ևս այդ ձևերը արտահայտում են կատարելի գործողության գաղափար, որով և կապվում են Ղարաբաղի բարբառի կատարելի դերբայի հետ։

-ան.— ժխտական նախածանց, որով կազմվում են ածականներ, ինչպես՝ անխէն (անյուղ, անհյութ կերակուր), անխըէլք, անհամ, ամմէր (անմայր), ամփօրց, անքուն ևն։

-ան.— կազմում է՝

ա) գոյականներ՝ գործիքի նշանակությամբ, ինչպես՝ կըրկատան, մէրան (մածնի մակարդ), փաթաթան, քաշան (քաշելու որևէ բան)։

բ) ածական՝ գործողի նշանակությամբ, ինչպես՝ կծան (կըծող), ղըլղըլան (եռացող), պըրպըրան (զարդարված, գեր), փըչան (ստախոս)։

-անի||անիկ.— կազմում է ածականներ՝ «ունեցող» նշանակությամբ, ինչպես՝ լյուզվյանիկ (շատախոս, մեծի խոսքին պատասխանող), հարկանի, ճըղնանի (ճյուղ ունեցող), վըտնանի (ոտք ունեցող)։

-անք.— կազմում է գոյականներ՝ հավաքական նշանակությամբ, ինչպես՝ բըսպարանք (ապսպարանք), պաղատանք, չըրչարանք, տանջանք, փօղցանք։

-անօց||օց.— կազմում է գոյականներ՝ տեղի կամ չափի նշանակությամբ, ինչպես՝ արկանօց (փեթակի այն տեղը, որով մեղուները ելումուտ են անում), հարիրանօց (հարյուրանոց), մատնօց||մըտնանօց, մէտրանօց։

-ացու||ածու.— կազմում է գոյականներ՝ մի բանի համար հատկացված լինելու նշանակությամբ, ինչպես՝ կըղացու (արբեխի փուկացու), կատարածու (գյուղսովետի հրահանգները կա-

տարող պաշտոնյա), մըսացու (մորթելու համար խնամված անասուն), տիրացու։

-ավէր.— կազմում է գոյականներ և ածականներ՝ մի բան ունենալու և գործողի անվան նշանակությամբ, ինչպես՝ բախտավէր, թաքավէր, կէղծավէր, ծիյավէր (ձիավոր), ճըքնավէր։

-ի.— կազմում է ծառատեսակների անուններ, ինչպես՝ խընձօրի, մօշի, ուռի, վառթի, տանձի, փրշատի։

-ի||է.— կազմում է ածականներ՝ ցույց տալով այն նյութը, որից շինված է առարկան, ինչպես՝ էրկաթէ, պըռթի (բըրդյա), փէտի (փայտե), քարի։

-իկ.— առարկաներին սաստկական իմաստ է հաղորդում, ինչպես՝ կյուճրիկ (շատ փոքրիկ), կուզիկ, շըխպըլիկ (շատ հին դանակ), փափլիկ, ցածլիկ։

-իշ.— կազմում է գործիքի կամ գործողի անուն արտահայտող գոյականներ, ինչպես՝ ծէվիշ (գութանի վրա ամրացված դանակը, որը ճեղքում է հողը), կըռթիշ (բուրդ գզելու գործիք), տասըրտըրաքիշ (հրացանի տեսակ է)։

-հան(ա).— կազմում է մակբայներ՝ ձևի կամ ժամանակի նշանակությամբ, ինչպես՝ ըմբըլահան (փետրահան), ըբըռհան (պատվազուրկ), քյըշէրհանա (վաղ առավոտյան)։

-ցի.— ցույց է տալիս տեղացի լինելը, ինչպես՝ կյէղացի (գյուղացի), ղըրղէցի, շընäցի (գյուղացի), պէրթցի (բերդցի), տընէցի։

-վածկ.— կազմում է գոյականներ՝ գործողության հետևանքի կամ արդյունքի նշանակությամբ, ինչպես՝ խօսվածկ, կյըրվäծկ (գրվածք), հինվածկ, նէղվածկ։

-ութին.— կազմում է վերացական գոյականներ, ինչպես՝ ախպէրութին (եղբայրություն), ծանօթութին, հաստութին, հարըստութին, նէղութին։

-ուկ.— կազմում ոյականներ և ածականներ՝ տարբեր նշանակությամբ, ինչպես՝ կաթուկ (շատ հասած և ծառից ընկած պտուղը), չօրուկ (չորացած ոստ, ճյուղ), պըտուտակ (փաթաթվող բույս), վախլուկ (վախկոտ)։

-ուկի.— կազմում է գոյականներ՝ տեսակի և հատկության նշանակությամբ, ինչպես՝ նընջըլուկի (ննջացող), տըպընուկի (պահմտոցի), սըտմէռուկի։

-ունք.— կազմում է գոյականներ՝ հավաքական նշանակու-

*թյամբ, ինչպես՝ ա̈ժմունք (արժեք, գին), կըռճունք (անասնա-
կերի կամ կերակրի մնացորդ), քըռասունք։*

*-ք(կ).— կազմում է գոյականներ՝ հավաքական նշանա-
կությամբ, ինչպես՝ խըմիշկ, ծալք (բրդի որակյալ մասը), խա-
ղալիք, հա̈մբա̈րք (հաշիվ, թիվ)։*

*-օվի.— կազմում է ածականներ՝ մի բանի համապատաս-
խան գալու նշանակությամբ, ինչպես՝ կյöղունօվի (գողացած),
հըրօվի, քաշօվի (փլավի մի տեսակը, որը պատրաստվում է
բրնձով կամ կորկոտով)։*

*-օտ.— կազմում է ածականներ՝ մի բան ունենալու, վե-
րագրվելու նշանակությամբ, ինչպես՝ ալրօտ (ալյուրոտ), առ-
նօտ (արյունոտ), կէխտօտ, քաշկօտ (դիվահար, գայրացկոտ),
ֆօշլօտ (ոչլոտ)։*

*-օտ||ուտ.— կազմում են գոյականներ՝ հավաքական նշա-
նակությամբ, ինչպես՝ թըթօտ, ծիրա̈նօտ, շըլօրկուտ, տանձօտ։*

*107. Մասնակի կիրառություն ունեն հետևյալ ածանցները.*

*-անց.— կազմում է մակբայներ՝ մի բան ունենալու նշա-
նակությամբ, ինչպես՝ գյüլբա̈հանց (միայն գուլպայով), շապ-
կանց (միայն շապիկով)։*

*-աշ.— կազմում է ածական՝ նվազական նշանակությամբ,
ինչպես՝ թըթվաշ։*

*-ավէն.— կազմում է ածականներ՝ մի բան ունենալու նը-
շանակությամբ, ինչպես՝ մըզավէն (մազերով), պօզավէն (եղ-
ջյուրներով)։*

*-արան.— կազմում է գոյականներ՝ տեղի նշանակությամբ,
ինչպես՝ ծվարան (թռչունների ծվարելու համար գործածվող
զամբյուղ), հանգըստարան (գերեզմանատուն)։*

*-էյին.— կազմում է՝ ածականներ՝ տևական հատկանիշի
նշանակությամբ, ինչպես՝ յէկէյին (անձրևային, խոնավ), չօ-
րէյին։*

*-չ.— կազմում է ժխտական նշանակություն ունեցող ածա-
կաններ, ինչպես՝ չըպէրք (չբեր), չըտէս։*

*-ութք||ուտկ.— կազմում է գոյականներ՝ բայանվան նշա-
նակությամբ, ինչպես՝ սըվէրութք (սովորույթ), րէվուտկ (երե-
վալը)։*

*-ուրթ.— կազմում է գոյականներ՝ հավաքական նշանակու-
թյամբ, ինչպես՝ խառնուրթ, փօխնուրթ։*

## 3. ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

108. *Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են հոդակապով և անհոդակապ բարդություններ։ Որպես հոդակապ խոսվածքում օգտագործվում են* ա *և* ը *ձայնավորները։* Ա *հոդակապի կիրառության ոլորտն ավելի մեծ է ընդհանուր հայերեն բառերից կազմված բարդությունների մեջ, իսկ* ը *հոդակապը՝ բարբառային բառերից կազմված բարդություններում։ Խոսվածքում սահմանափակ կիրառություն ունեն* ու *շաղկապով կապակցված կցական բարդությունները։*

*Այժմ բերենք օրինակներ.*

Ա *հոդակապով բարդ բառեր՝ ըղաճուր (աղաջուր), կըլխապըց (գլխաբաց), խաշապաշտ, մըտնաշունչ, մարթասպան, սըրտապըց (սրտաբաց) են։*

Ը *հոդակապով բարդ բառեր՝ ըխպըհար (աղբանոց), ըղըհաց (աղուհաց), թըխկըհանիլ (նոսր ատամներ ունեցող սանրով մազերը սանրել), թըռնըխառնի (երկար ձող, որով խառնում են թոնրի կրակը)։*

ՈՒ *շաղկապով բարդություններ՝ առուտուր, շուռումուռ, քունչուպուճախ (տան բոլոր անկյունները)։*

*Շամշադին—Դիլիջանի խոսվածքը հարուստ է անհոդակապ բարդ բառերով։ Այդպիսի բարդությունների մեծ մասը ձևով և իմաստով նույնն է ժամանակակից հայերենի համապատասխան բառերի հետ, իսկ դրանց մի որոշ քանակն էլ ստեղծվել է խոսվածքի ներսում։*

*Խոսվածքում առանձնապես մեծ տարածում ունեն հարադիր բարդ բառերը։ Այդ բարդությունների կազմության համար շատ հաճախ օգտագործվում են այնպիսի հարադիրներ, որոնք հատուկ չեն ժամանակակից հայերենին, ինչպես, օրինակ՝ ակը տալ (ստուգել), աղէտ անիլ (ամուսնու առաջին կնոջից ունեցած զավակին սիրել), աշկ ածիլ (զննել), թէղ տալ (հարդախառն հացահատիկը մի տեղ հավաքելով դեզ դարձնել), լանթ տալ (մեկին դիմադրություն ցույց տալ, պատասխանել), խըռիկ տալ (հեռացնել, քշել, վանել), դի տալ (կանչել, ձայն տալ). նի կյնյալ (դիպչել, վիրավորել), նի տալ (ներս լցնել), նի ունիլ (տեղալ, սկսել «անձրև, ձյուն»), շաղ կյնյալ (ցրվել), վէր կյնյալ (իջնել, իջևանել, մաքրվել, ջնջվել), վէր ունիլ (վերցնել), տապ անիլ (թաքնվել, կուչ գալ, սսկվել)։*

Խոսվածքում կրկնավոր բարդություններ են կազմվում բոլոր խոսքի մասերով։ Այստեղ առանձին հետաքրքրություններ են ներկայացնում ու շաղկապով կապակցվող բայական հարադրությունները, ինչպես՝ կօրավ ու կօրավ, տարավ ու տարավ, քյընա̈ց ու քյընա̈ց (գնաց ու գնաց)։ Բայական կրկնություններով կազմված այդպիսի ձևերը արտահայտվում են անվերադարձ կատարված գործողության իմաստ։

Այժմ բերենք օրինակներ.

Գոյականով կազմված կրկնություններ՝ ախպէր-ախպէր (եղբայր-եղբայր), հընգէր-հընգէր (ընկեր-ընկեր), յէրգիր-յէրգիր (երկիր-երկիր), տէղ-տէղ, տուն-տուն, աշխար-աշխար։

Ածականով կազմված կրկնություններ՝ լյա̈վ-լյա̈վ (լավ-լավ), կէծ-կէծ (տաք-տաք), մէծ-մէծ, պա̈րցըր-պա̈րցըր (բարձր-բարձրր), սէվ-սէվ, սըպտա̈կ-սըպտա̈կ (սպիտակ-սպիտակ), քաշ-քաշ (ցածր-ցածր)։

Թվականով կազմված կրկնություններ՝ մին-մին (մեկ-մեկ), էրկու-էրկու, իրէք-իրէք, չօրս-չօրս, վէց-վէց, օխտը-օխտը (յոթ-յոթ)։

Մակբայով կազմված կրկնություններ՝ կամաց-կամաց, յէտի-յէտի (ուշ-ուշ), շատ-շատ, շո̈ւտ-շո̈ւտ, քիչ-քիչ, վըռազ-վըռազ։

Անհոդակապ բարդությունների մեջ սակավ գործածություն ունեն կցականները։ Այդպիսի բարդությունները մեծ մասամբ կազմվում են գոյական բաղադրիչներով, ինչպես՝ խընամխօս, հօքիր, հըրօխպէր, մօքիր, էրկուհուքիս‖էրկուֆօքիս (հղի կին)։

## 4. ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

109. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում որևէ առարկայի կամ երևույթի իմաստն արտահայտելու համար հաճախ օգտագործում են մեկից ավելի բառեր։ Այդպիսի զուգահեռ ձևերն, իհարկե, ամբողջությամբ չեն նույնանում, այլ հանդես են բերում իմաստային ինչ-ինչ տարբերություններ, որի պատճառով էլ դրանք կարելի է ընդունել ոչ թե որպես նույնանիշներ, այլ համանիշ բառեր։ Խոսվածքում կարելի է տարբերակել հոմանիշության երկու շարք։ Առաջինի դեպքում հոմանիշի մի եզրում հայերեն ընդհանուր բառերն են, իսկ մյուս եզրում՝ բար-

*բառային բառերը։ Երկրորդ դեպքում երկու եզրերում էլ բար-բառային բառեր են։ Խոսվածքում մեծ թիվ են կազմում առա-ջին շարքի հոմանիշները, ինչպես՝ լըցնիլ-նի տալ (ներս լըց-նել), ըյüզյü-թէրթ (շան լեզու), ծընվիլ-öրշö կյöլ (լույս աշ-խարհ գալ), ծածկիլ-կալիլ (փակել), ծառա-քօծ (աղախին), ծէն-ծըպտուն (թույլ և կարճ ձայն), ծընիլ-ցըռթիլ (անասունի ծը-նելը), մընալ-կըէնալ (կանգ առնել, սպասել), տաք-կէծ (շատ տաք), փախշիլ-ծըլկիլ (աննկատ փախչել) են։*

*Երկրորդ շարքի հոմանիշներից կարելի է հիշել հետևյալ զույգերը՝ խաշամ-խազալ (չորացած տերևներ), ծըէղ-ցըլէպ (փոքրիկ կտորներ), շըմբիլ-շըլալիլ (կոպիտ կարել), սօրօն-քա-շան (սայլի հետևից կապած ցախը)։*

*Ծանոթություն.— Խոսվածքում նույնանիշ բառերի շատ սա-կավ ենք հանդիպում։ Թերևս այստեղ կարելի է հիշել հետևյալ զույգերը՝ դիփ-լօխ-չիմ (բոլորը), տըժօխկ-աստկ (դժոխք, ան-դունդ), տüուռը-մըղակ (դուռ), ծըմակ-քօլ (անտառ)։*

## 5. ԲԱԶՄԻՄԱՍՏ ԲԱՌԵՐ

*110. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում առանձնանում են բառերի մի փոքրիկ քանակ, որոնք արտահայտում են մեկից ավելի իմաստներ, ինչպես.*

*Ածիլ— 1. Նվագել, 2. Լցնել, 3. Ջու ածել*

*Թըխիլ— 1. Թխել, 2. Խփել, հարվածել*

*Ժէռ— 1. Սարյակի նման փոքրիկ թռչուն, 2. Թթի մի տե-սակը*

*Լակ— 1. Անասունի համար կերակուր, 2. Փչացած ձու*

*Ծըրիլ— 1. Առաջին ակոսի բացելը, 2. Ջվի վրա ճտի դուրս գալու նշան երևալ, 3. փխբ. Հաշտվել, հարմարվել*

*Կըռտիլ— 1. Ամորձատել, 2. Գինին մաքրելու համար մի ամանից մյուսը լցնել*

*Կըտրիլ— 1. Կիսել, 2. Կողոպտել*

*Ճըղիլ— 1. Պատռել, 2. Ճեղքելով առաջ շարժվել, 3. փխբ. Փախչել*

*Շօր— 1. Հագուստ, 2. Աղի ջուր*

# ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

## ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Այս բաժնում քննության է առնվում գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն խոսքի մասերի ձևաբանական փոփոխությունները՝ մասամբ ներկայացնելով նաև դրանց շարահյուսական կիրառությունները։*

*Եթե պատմական և դիրքային հնչյունափոխական երևույթները նկարագրելիս համեմատության եզր ենք ընդունել գրաբարը, ապա ձևաբանական առանձնահատկությունների քննությունը կատարվում է նկարագրական մեթոդով. միայն առանձին դեպքերում դիմել ենք պատմա-համեմատական մեթոդին՝ այս կամ այն մասնիկի առաջացումը կամ ծագումը ցույց տալու նպատակով։*

*Քանի որ վերոհիշյալ խոսքի մասերի առանձին քերականական կարգեր խոսվածքի համար ոչ մի առանձնահատկություն չեն ներկայացնում, ուստի մեր աշխատանքի մեջ դրանք ուսումնասիրության նյութ չեն դարձել (օրինակ՝ անձի և իրի, հատուկ և հասարակ անունների, բայի դեմքի և թվի են քերականական կարգերը)։*

## ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

### 1. ՀՈԳՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

*111. Ժամանակակից հայերենի նման Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գոյականների հոգնակի թիվը կազմելու համար բառի արմատին կամ հիմքին դրվում է որևէ վերջավորություն։ Խոսվածքի՝ ժամանակակից հայերենի նկատմամբ ունե-*

ցած տարբերությունները երևան են գալիս միայն հոգնակերտ վերջավորությունների մեծ քանակով և դրանց դրսևորման եղանակով։ Այսպես, ձայնավորներով վերջավորվող բազմավանկ բառերը հոգնակի թվում ստանում են -ք, իսկ ձայնավորով վերջավորվող միավանկ բառերը՝ -էր, -ան, -անիք (ծիյէր, ծիյան, ծիյանիք) վերջավորությունները։ Հոգնակի թվի կազմության համար տարբեր վերջավորություններ են ստանում ախպէր (եղբայր), ախճիկ (աղջիկ), կընիկ (կին), դաստատու և մի շարք այլ բառեր։

112. Խոսվածքում գոյականների հոգնակի թիվը կազմվում է -էր, -նի, -ք, -անք, -ունք, -ան, -իք, -քէր, -տինք, -անիք վերջավորություններով, որոնցից -էր, -նի, -ք, -անք, -ունք ընդգրկում են բառերի մեծ քանակ, իսկ մյուսները ունեն մասնակի գործածություն։

113. -էր վերջավորությամբ հոգնակի են կազմում.

ա) միավանկ բառերը, ինչպես՝ աշկ<աչք, հգն. աշկէր, առչ<արջ, հգն. առչէր, խօտ<խոտ, հգն. խօտէր, ծամ<ծամ, հգն. ծամէր, ծառ<ծառ, հգն. ծառէր, հաց<հաց, հգն. հացէր, մօմ<մոմ, հգն. մօմէր, նէտ<նետ, հգն. նէտէր, պատ<պատ, հգն. պատէր, սար<սար, հգն. սարէր, տուն<տուն, հգն. տընէր, քար<քար, հգն. քարէր։

Ծանոթություն. 1. Ձայնավորով վերջավորվող գոյականների հոգնակին կազմելու ժամանակ -էր վերջավորության և արմատական ձայնավորի միջև ավելանում են յ, վ բաղաձայնները, ինչպես՝ թի<թի, հգն. թիյէր, ծի<ձի, հգն. ծիյէր, լյüւ<լու, հգն. լյüւվէր, ծüւ<ձու, հգն. ծüւվէր։

Ծանոթություն 2.— Ձայնավորով վերջավորվող բոլոր միավանկ գոյականները, ինչպես նաև կենդանիների անունները արտահայտող մի շարք այլ միավանկ գոյականներ իրենց հոգնակին կազմում են նաև -ան||äն վերջավորությամբ, ինչպես՝ էծ<այծ, հգն. իծան, էշ<էշ, հգն. իշան, թի<թի, հգն. թիյան, լյüւ<լու, հգն. լյüւվäն||լյիվäն, կյէլ<գայլ, հգն. կյիլան, հուլ||ուլ<ուլ, հգն. ուլան։

Ծանոթություն 3.— Միավանկ բառերը -էր վերջավորության հետ միասին կարող են ստանալ նաև -նի և կազմել կրկնակի հոգնակի, ուր առաջինն արտահայտում է առարկայի, իսկ երկրորդը՝ ստացական հոդի հոգնակիություն, ինչպես՝ աշկ<աչք,

հգն. աշկերնիս, պյäն<բան, հգն. պյäներնիս, պյärց<բարձ, հգն. պյäրցէրնիս, խօսկ<խօսք, հգն. խօսկէրնիս։

Ծանոթություն 4.— Կրկնակի հոգնակիի կազմության ժամանակ ս, տ, հոդերից առաջ -նի վերջավորության ի ձայնավորը հաճախ փոխվում է ու-ի, աշկէրնիս-աշկէրնուս, պյäրցէրնիս-պյäրցէրնուս, սըրտէրնիտ-սըրտէրնուտ։

բ) Երկրորդ եզրում միավանկ բառ ունեցող բարդությունները, ինչպես՝ էrաքաթ (թիակի թաթաձև մասը), հգն. էրաթաթէր, ըխնըկաթօռ (աղչկաթոռ), հգն. ըխնըկաթօռէր, ընձղակօթ (կիսավառ փայտ), հգն. ընձղակօթէր, կյումշակօվ (գոմշակով), հգն. կյումշըկօվէր, յէզնատէր, հգն. յէզնատէրէր, տընատէր, հգն. տընըտէրէր։

114. -նէr վերջավորությամբ հոգնակի են կազմում գրաբարյան ն վերջնահնչյուն ունեցող միավանկ բառերը, ինչպես՝ ակը<ակն, հգն. ակնէր, պէռը<բեռն, հգն. պէռնէր, կյäռը<գառն, հգն. կյäռնէր, տöւռը<դուռն, հգն. տըռնէր, յէզը<եզն, հգն. յէզնէր, թօռը<թոռն, հգն. թօռնէր, ծուռը<ծոռն, հգն. ծոռնէր, հարսը<հարսն, հգն. հարսնէր, ծöւկը<ձուկն, հգն. ծըկնէր, մատը<մատն, հգն. մատնէր, մուկը<մուկն, հգն. մըկնէր։

Ծանոթություն 1.— Վերոհիշյալ օրենքին չեն ենթարկվում նուռը<նուռն, հգն. նըռէր, սէrմը<սերմն, հգն. սէրմէր, սօկօն<սունկն, հգն. սօկօննի բառերը։ Նուռ, սէrմ բառերի հոգնակին կազմվում է միավանկ բառերի օրինաչափությամբ, իսկ սունկ բառը ստանում է -նի հոգնակերտ վերջավորությունը՝ երկվանկի վերածվելու պատճառով։

Ծանոթություն 2.— Յէզը<եզն բառի հոգնակիի համար յէզնէr ձևին զուգահեռ գործածվում է նաև յէզնիf ձևը։

115. -նի վերջավորությամբ հոգնակի են կազմում.

ա) բաղաձայնով վերջավորվող երկվանկ և բազմավանկ բառերը, ինչպես՝ ըզզակյան<ազգական, հգն. ըզգականնի, աման<աման, հգն. ամաննի||ըմըննի, ապrանf<ապրանք, հգն. ապրանքնի, պաrէկամ<բարեկամ, հգն. պարէկամնի, թաfավէr<թագաւոր, հգն. թաքավէրնի, ծիծէռնակ<ծիծեռնակ, հգն. ծիծէռնակնի, ծինէփակ<ծնեբեկ, հգն. ծինէփակնի, կաrմունչ<կամուրջ, հգն. կարմունչնի, մատիտ<մատիտ, հգն. մատիտնի, նամակ<նամակ, հգն. նամակնի, պահակ<պահակ, հգն. պահակնի, տախտակ<տախտակ, հգն. տախտակնի։

բ) ռ բաղաձայնով սկսվող հետևյալ բառերը՝ ռէխ նաև՝

ըռէխ)<երախ, հգն. ըրխնի, ռուս (նաև՝ ըռուս)<ռուս, հգն. ռուսնի, ռուf (նաև՝ ըռուf)<ռուք, հգն. ռուքնի։ Այսպիսի բառերի հոգնակի թվի կազմության վերաբերյալ ճիշտ դիտողություն ունի Հ. Պետրոսյանը. «Սովորաբար ռ-ով սկսվող միավանկ բառերը նախաձայն ը-ի կամ այլ ձայնավորական տարրի հավելումով վերածվում են երկվանկի (երկվանկ հիմքի) և զուգորդվում են ըստ մեկից ավելի վանկանի հիմքերի հոգնակիության սկզբունքի»[16]։

116. -Ք վերջավորությամբ հոգնակի են կազմում.

ա) ձայնավորով վերջավորվող երկվանկ և բազմավանկ բառերը, ինչպես՝ առծըլի||ծիլի<ածելի, հգն. առծըլիք||ծիլիք, կյինի<գինի, հգն. կյինիք, խնամի<խընամի, հգն. խընամիք, խըռնօցի<խնոցի, հգն. խըռնօցիք, ճայլի||ճիլի<հայելի, հգն. հայլիք||հիլիք, մառանի<մառանի, հգն. մառանիք, տըղա<տղայ, հգն. տըղէք, փըէսա<փեսայ, հգն. փըէսէք, սըտանա<սատանայ, հգն. սըտանէք։

բ) -ացի ածանց ունեցող գոյականները, ինչպես՝ գիլիշանցի, հգն. գիլիշանցիք, իշէվանցի, հգն. իշէվանցիք, կլէղացի (գյուղացի), հգն. կլէղացիք, խաշթառակցի, հգն. խաշթառակցիք, շօրաթանցի, հգն. շօրաթանցիք, պէրթցի, հգն. պէրթցիք, ըէվանցի, հգն. ըէվանցիք, ուզունթալցի, հգն. ուզունթալցիք։

գ) ծառատեսակների անունները արտահայտող գոյականները, ինչպես՝ թըզի<թզենի, հգն. թըզիք, թըթի<թթենի, հգն. թըթիք, խըռնձöրի<խնձորենի, հգն. խըռնձöրիք, մօշի<մոշենի, հգն. մօշիք, մօրի<մորենի, հգն. մօրիք, ուռի<ուռենի, հգն. ուռիք, փըշատի<փշատենի, հգն. փըշատիք։

Ծանոթություն.— Ձայնավորով վերջավորվող մի շարք բազմավանկ գոյականներ -f վերջավորության հետ միասին ստանում են նաև -էր և կազմում կրկնակի հոգնակի ձևեր, ինչպես՝ դաստառու, հգն. դաստառուքէր||դաստավուքէր, խընամի, հգն. խընամըքէր, ճայլի<հայելի, հգն. հայլըքէր (Իշ.), վըրացի, հգն. վըրացիքէր։ Նույն կերպ նաև՝ ըրաբա (սայլ), հգն. ըրաբաքէր, հüրüն (փերի), հգն. հüրüնըքէր։

117. -Անf||üնf, -ունf վերջավորություններով հոգնակի են կազմում ազգակցություն կամ զբաղմունք ցույց տվող գոյականները։ -Անf||üնf ստանում են բաղաձայնով վերջավորվող

[16] Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972 թ., էջ 218։

բառերը, իսկ -ունf ստանում են ձայնավորով վերջավորվող բառերը, ինչպես՝ Աղատ, հգն. Ըղատանք, Առաքէլ, հգն. Առաքէլանք, Գիժլա̈ր, հգն. Գիժլա̈րա̈նք, Ջիրա̈բ, հգն. Ջիրա̈բա̈նք, Մէլի, հգն. Մէլունք, Զատի, հգն. Զատունք, Վանէս, հգն. Վանէսանք, Վանի, հգն. Վանունք, Ուհան, հգն. Ուհանանք։

118. Մասնակի կիրառություն ունեն հետևյալ հոգնակերտ վերջավորությունները.

-Անիf.— կընիկ<կին հգն. կընանիք, fըռակին<քեռակին, հգն. քըռըկընանիք։

-էf.— ախճիկ<աղջիկ, հգն. ախճըրկէք, մառթ<մարդ, հգն. մըռթկէք։

-Տինf.— ախպէr<եղբայր, հգն. ախպէրտինք, հընգէr<ընկեր, հգն. հընգէրտինք, հըռօխպէr<հօրեղբայր, հգն. հըռօխպէրտինք։

## 2. ՀՈԼՈՎՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

119. Շամշադին—Դիլիջանի խոսվածքն ունի հինգ հոլով՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական։ Խոսվածքի բոլոր հոլովներն էլ կարող են հանդես գալ հոդով և առանց հոդի։

120. Խոսվածքի գոյականների մեծ մասը ուղղական հոլովում չունի առանձին վերջավորություն։ Ի ձայնավորով վերջավորվող երկվանկ և բազմավանկ բառերի եզակի ուղղականը վերջավոր է, քանի որ բառավերջի ի ձայնավորը տրականում փոխվում է ու-ի[17]։

Հակառակ ժամանակակից հայերենին՝ Շամշադին—Դիլիջանի խոսվածքում ա ձայնավորով վերջավորվող բառերի ուղղականը ևս վերջավոր է։ Այս բառերի հոլովման ժամանակ տրականում տեղի է ունենում ա>ի փոփոխություն (ուղղ. տըղա, եզ. տր. տըղին, ուղղ. րէխա, եզ. տր. rէխին ևն)։

Բոլոր -f-ով հոգնակի կազմվող (-ք, -անք, -ունք, -էք ևն) բառերի հոգնակի ուղղականը ևս վերջավոր է, քանի որ տրա-

---

[17] Տե՛ս **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967 թ., էջ 234։

կանում –ք վերջավորությունը փոխվում է ց-ի (տե՛ս հոգնակի հոլովման պատկերը)։

121. Խոսվածքում տրական հոլովը կազմվում է երկու ձևով՝ վերջավորությամբ և առանց վերջավորության։ Վերջավոր տրականը կազմվում է կամ ուղղականի հիմքին որևէ ձայնավորի (հոլովիչ) ավելացումով, կամ եզակիում ու>ի, ա>ի (հայլի-հիլի||հայլու||հիլու, փըէսա-փըէսի), իսկ հոգնակիում՝ ք>ց (խընամիք-խընամուց, հայլիք||հիլիք-հայլուց||հիլուց) հընչյունափոխությամբ, ինչպես, օրինակ՝ Քօլի կէնթանիքը մի օր հըվաքվըմ էն ու ժօղօվ անըմ, վըէր կէտի վըրնօվը մի կարմունջ չինէն։ Զատունց Զատին ճօխտ տըղա յէր հըրսանիք անըմ։

Անվերջավոր տրականը կազմվում է ուղղականի հիմքի ձայնավորի փոփոխությամբ (ու>ա, է>օ), ինչպես՝ Տըրանից յէդը կամ սէվ ճըրաքը, կամ պատրիքը կըացընըմ ինք ու պատին կըպցընըմ, միթըմ թա ըխս անի տանը: Ըտէղ հօրը կարպէտըմը փըթաթըմ ա ու քյա՛լէրը քյըշըմ, պիրըմ։

122. Բացառական հոլովն ունի –ից, –ուց վերջավորությունները։ Ըի հոլովման բառերը խոսվածքում ունեն –ուց, իսկ մյուս հոլովման բառերը՝ –ից վերջավորությունը։ Բացառականի –ից և –ուց վերջավորությունները արտաքին հոլովման դեպքում դըրվում են ուղղականի հիմքի վրա, իսկ ներքին հոլովման դեպքում՝ տրականի հիմքի վրա, ինչպես, օրինակ՝ Օվ քյընըմ էր ճուր հանի, բըլյակիցը փըռնըմ ա, ասըմ։ Հօրիցը յէղը տըղան թըվանքը վէր ա ունըմ, վազ տալի, հօրը աղաքը ինգնըմ։

Ծանոթություն 1.— Ընդէղ (այնտեղ), ըտէղ (այդտեղ), ըստէր (այստեղ) դերանունների և մի քանի այլ բառերի բացառականը խոսվածքում կազմվում է –ան վերջավորությամբ, ինչպես՝ ընդիյան (այնտեղից), ըստիյան (այստեղից), ըտիյան (այդտեղից), ղօլան (կողմից), յէննատ (ետևից), վէրդիյան (որտեղից)։ Բացառականի –ան վերջավորության գոյությունը պետք է համարել կամ գրաբարից խոսվածքին անցած ձև, կամ Ղարաբաղի բարբառի ազդեցության հետևանք։

Ծանոթություն 2.— Սա, դա, նա ցուցական դերանունների բացառականը հաճախ գործածվում է առանց –ց վերջավորության, ինչպես՝ նըրանի, սըրանի, տըրանի։

123. Խոսվածքում գործիական հոլովն ունի –օվ վերջավորությունը, որը բառահիմքերի վրա է դրվում բացառական հոլովի կազմության կանոնով, ինչպես՝ Էտ մարթը հավի տանօվը

ու **բöկբöլօվը** կիր անըմ ա, տալիս իրան։ Մըէզ վէչ թէ տöւք կըսպանէք, էտ քըչէղակնին էլ մըէզ կըսպանէն, մըէնք **բոշակապօվ** էնք, տöւք էլ **թըվանfօվ**:

124. Խոսվածքում ներգոյական հոլովը սովորաբար կազմվում է -**ըմ** վերջավորությամբ, ինչպես՝ Մառթիցը վախիլէն մի ամանի մէչ ա ածըմ, տընըմ **ճօrfըմը**: **Կէrէզմանուտըմը** վէր ուզըմ ա մի պիհըը տափին միչին ցից անի, չինէլի փէչը պիհըի հէտ մըտնըմ ա տափը։

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտում է տրական հոլովով և **մէչ** կապով, ինչպես՝ Մի սöւրöւն հարսը մի **füհrիզի** **միչին** մի կլöռտը ծընգանը տըրած ստի կաղնէլ էր։ Ցէկէլ ա **կյէղի միչին** սաէլ՝ օվ կարա լյöվ մօռթի։

## 3. ՀՈԼՈՎՈՒՄ

125. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում անվանական հոլովումներն իրենց արտաքին և ներքին բնույթով նման են ժամանակակից հայերենին։ Դրանց հիմնական տարբերությունները երևան են գալիս միևնույն գոյականների տարբեր հոլովման ենթարկվելու անհամապատասխանության մեջ։ Այսպես, ժամանակակից հայերենում արտաքին **ու** հոլովման բառերի մեծ մասը խոսվածքում ենթարկվում է ներքին **ո** հոլովման, իսկ -**ություն** ածանց ունեցող վերացական գոյականները ներքին **ա** հոլովման փոխարեն ունեն արտաքին **ի** հոլովմամբ թեքման ձև։

Գոյականի հոգնակի հոլովումը ևս որոշակի առանձնահատկություններ է հանդես բերում ժամանակակից հայերենի նըկատմամբ։ Այսպես, եթե **ի** հոլովումը ժամանակակից հայերենում արդեն ընդհանրացվել է և տարածվել համարյա բոլոր գոյականների վրա, ապա Շամշադին—Դիլիջանի խոսվածքը դեռևս հեռու է հոգնակի հոլովման միակերպությունից։ Այստեղ **ի** հոլովման կողքին լայն տարածում ունի նաև գրաբարակերպ **ց** հոլովումը։

### ԵԶԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՄ

Շամշադին—Դիլիջանի խոսվածքն ունի յոթ հոլովումներ՝ հինգ արտաքին (**ի**, **ու**, **ան**, **վա**, **օչ**) և երկու ներքին (**ա**, **օ**):

## ԱՐՏԱՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

### Ի հոլովում

*126. Այս հոլովման ենթարկվող բառերի տրականը կազմելու համար ուղղականի հիմքին ավելանում է* ի *հոլովիչը։*

*Բացառական հոլովն ունի* -ից, *գործիական հոլովը՝* -ով, *իսկ ներգոյական հոլովը՝* -ըմ *վերջավորությունը։*

Ի *հոլովման ենթարկվում են.*

*ա) բաղաձայնով վերջավորվող գոյականների մեծ մասը։*

*բ)* ա, ա̈, ու, ո̈ւ *ձայնավորներով վերջավորվող բոլոր գոյականները։*

*Ծանոթություն.—* Ու, ո̈ւ *ձայնավորներով վերջավորվող բառերի թեք հոլովաձևերում արմատական* ու *ձայնավորը փոխվում է* վ-*ի։*

*գ)* Ի *ձայնավորով վերջավորվող միավանկ և* հա̈fի<*ագի,* կաշի<*կաշի երկվանկ բառերը։*

*դ) Գրաբարյան* ն *վերջնահնչյուն ունեցող բոլոր բազմավանկ և* կաթը<*կաթն,* կամը<*կամն,* հարսը<*հարսն,* մատը<*մատն,* վըէոթը<*որդն,* ունգը<*ունկն,* սօկօն<*սունկն երկվանկ բառերը։*

*ե)* -ութին *վերջածանցով կազմված վերացական գոյականները։*

*Ծանոթություն 1.—* -ութին *վերջածանցն ունեցող գոյականները ժամանակակից հայերենի ազդեցությամբ թեքվում են նաև ներքին* ա *հոլովմամբ։*

*Ծանոթություն 2.—* Ա, ա̈ *ձայնավորներով վերջավորվող գոյականների տրական հոլովը կազմվում է ուղղականի* ա *վերջավորությունը* ի-*ի փոխվելով, իսկ մնացած դեպքերում տրական հոլովը կազմելու համար* ի *հոլովիչը ավելանում է ուղղականի հիմքի վրա։*

*Այժմ ներկայացնենք* ի *հոլովման ամբողջական պատկերը.*

*Բաղաձայնով վերջավորվող գոյականների հոլովման օրինակներ.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *սարը* | *թաքավէրը* |
| Տր. | *սարի(ն)* | *թաքավէրի(ն)* |
| Բաց. | *սարից(ը)* | *թաքավէրից(ը)* |
| Գործ. | *սարով(ը)* | *թաքավէրով(ը)* |
| Ներգ. | *սարըմ(ը)* | *թաքավէրըմ(ը)* |

Ու, ո̈ւ ձայնավորներով վերջավորվող գոյականների հոլովման օրինակներ

| | |
|---|---|
| Ուղղ. կատուն | ծո̈ւն (ձու) |
| Տր. կատվի(ն) | ծըվի(ն), ծո̈ւյի(ն) |
| Բաց. կատվից(ը) | ծըվից(ը), ծո̈ւյից(ը) |
| Գործ. կատվօվ(ը) | ծըվօվ(ը), ծո̈ւյօվ(ը) |
| Ներգ. կատվըմ(ը) | ծըվըմ(ը), ծո̈ւյըմ(ը) |

Ի ձայնավորով վերջավորվող միավանկ և հա̈քի<ագի, կաշի<կաշի երկվանկ բառերի հոլովումը հետևյալ պատկերն ունի.

| | |
|---|---|
| Ուղղ. ծին (ձի) | կաշին |
| Տր. ծիյի(ն) | կաշվի(ն) |
| Բաց. ծիյից(ը) | կաշվից(ը) |
| Գործ. ծիյօվ(ը) | կաշվօվ(ը) |
| Ներգ. ծիյըմ(ը) | կաշվըմ(ը) |

Գրաբարյան ան վերջնահնչյուն ունեցող միավանկ բառերի մեծ մասը խոսվածքում ենթարկվում է արտաքին ան հոլովման, սակայն այդ շարքի բառերից մի քանիսը, ինչպես վերը նշեցինք, ունեն ի հոլովիչով թեքման ձև։ Ահա այդ բառերի հոլովումը հետևյալ պատկերն ունի.

| | |
|---|---|
| Ուղղ. կաթը | հարսը |
| Տր. կաթի(ն) | հարսի(ն) |
| Բաց. կաթից(ը) | հարսից(ը) |
| Գործ. կաթօվ(ը) | հարսօվ(ը) |
| Ներգ. կաթըմ(ը) | հարսըմ(ը) |

-Ութին<ութիւն վերջածանցն ունեցող բառերը հոլովվում են հետևյալ կերպ.

| | |
|---|---|
| Ուղղ. շընութինը | ախպէրութինը |
| Տր. շընութինի(ն) | ախպէրութէնի(ն) |
| Բաց. շընութինից(ը) | ախպէրութէնից(ը) |
| Գործ. շընութինօվ(ը) | ախպէրութէնօվ(ը) |
| Ներգ. շընութինըմ(ը) | ախպէրութէնըմ(ը) |

Ա, ա̈ ձայնավորներով վերջավորվող գոյականների հոլովումը տարբերվում է ի հոլովման վերոհիշյալ ձևերից նրանով, որ այս դեպքում տրականը կազմվում է ոչ թե հոլովիչի ավելա-

*ցումով, այլ ա>ի փոփոխությամբ։ Հաշվի առնելով այս ա-ռանձնահատկությունը, գյուլբա<գուլպայ, րէխա||ըրէխա<երա-խայ, սըռաճա<սառանայ, տըղա<տղայ, փըէսա<փեսայ բա-ռերի հոլովումը կարելի է ընդունել որպես ի հոլովման առան-ձին ձև։*

*Այժմ բերենք ա, ա̈ ձայնավորներով վերջավորվող բառերի հոլովման օրինակներ.*

| | |
|---|---|
| Ուղղ. *տըղան* | *գյո̈ւլբա̈ն* |
| Տր. *տըղի(ն)* | *գյո̈ւլբի(ն)* |
| Բաց. *տըղից(ը)* | *գյո̈ւլբից(ը)* |
| Գործ. *տըղայօվ(ը)* | *գյո̈ւլբօվ(ը)* |
| Ներգ. *տըղայըմ(ը)* | *գյո̈ւլբըմ(ը)* |

## ՈՒ հոլովում

*127. Այս հոլովման տրականը կազմվում է՝ ուղղականի* ի *վերջավորությունը* ու-*ի փոխելով։*

*Բացառական հոլովն ունի* –ուց, *գործիականը՝* –օվ, *իսկ ներ-գոյականը՝* –ըմ *վերջավորությունները։*

*Ու հոլովման են ենթարկվում* ի *ձայնավորով վերջավորվող գոյականները, որոնց հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

| | |
|---|---|
| Ուղղ. *հայլին, հիլին (հայելի)* | *խընամին* |
| Տր. *հայլու(ն), հիլու(ն)* | *խընամու(ն)* |
| Բաց. *հայլուց(ը), հիլուց(ը)* | *խընամուց(ը)* |
| Գործ. *հայլօվ(ը), հիլօվ(ը)* | *խընամօվ(ը)* |
| Ներգ. *հայլըմ(ը), հիլըմ(ը)* | *խընամըմ(ը)* |

*Ծանոթություն.— Ինչպես վերը նշեցինք,* ի *ձայնավորով վերջավորվող* կաշի<*կաշի,* ճա̈ֆի<*ագի բառերը չեն ենթարկ-վում արտաքին* ու *հոլովման։ Այդ բառերից բացի արտաքին* ու *հոլովման համակարգից դուրս է մնում նաև տարի գոյա-կանը, որը ժամանակի իմաստ արտահայտող բառերի նման ենթարկվում է արտաքին* վա *հոլովման։*

## ԱՆ հոլովում

*128. Այս հոլովման տրականը կազմելու համար ուղղակա-նի հիմքին ավելանում է* աճ *հոլովիչը։*

*Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են սովորական ձևով։*

*Ան հոլովման են ենթարկվում գրաբարյան ն վերջնահընչյուն ունեցող* կյäռը<*գառն,* տöւռը<*դուռն,* յէզը<*եզն,* թօռը<*թոռն,* ծունգը<*ծունկն,* կուռը<*կուռն,* ծöւկը<*ձուկն,* մուկը<*մուկն,* նուռը<*նուռն, ինչպես նաև* ախճիկ<*աղջիկ,* կընիկ<*կին,* ֆըռակին<*քեռակին բառերը։*

*Այժմ բերենք հոլովման օրինակներ.*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | *թոռը* | *ախճիկը* | *կընիկը* |
| Տր. | *թոռան(ը)* | *ախճըկան(ը)* | *կընգյäն(ը)* |
| Բաց. | *թոռից(ը)* | *ախճըկանից(ը)* | *կընգյäնից(ը)* |
| Գործ. | *թոռով(ը)* | *ախճըկանով(ը)* | *կընգյäնով(ը)* |
| Ներգ. | *թոռըմ(ը)* | *ախճըկանըմ(ը)* | *կընգյäնըմ(ը)* |

## ՎԱ հոլովում

*129. Այս հոլովման տրականը կազմելու համար ուղղականի հիմքին ավելանում է* վա *հոլովիչը։*

*Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են սովորական ձևով։*

Վա *հոլովման ենթարկվում են ժամանակի իմաստ արտահայտող գոյականները, որոնց հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *քըշէրը* | *ծըմէռը* |
| Տր. | *քըշէրվա(ն)* | *ծըմէռվա(ն)* |
| Բաց. | *քըշէրվանից(ը)* | *ծըմէռվանից(ը)* |
| Գործ. | *քըշէրօվ(ը)* | *ծըմէռօվ(ը)* |
| Ներգ. | *քըշէրըմ(ը)* | *ծըմէռըմ(ը)* |

## ՕՉ (ՈՉ) հոլովում

*130.* Օչ *հոլովումը մասնակի հոլովում է, քանի որ այս հոլովման են ենթարկվում միայն* ըրնգէր<*ընկեր և* տէր<*տէր բառերը։ Այդ բառերի տրականը կազմելու համար ուղղականի հիմքին ավելանում է* օչ *հոլովիչը։*

*Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազ-*

*մելու համար* -ից, -օվ, -ըմ *վերջավորությունները դրվում են ինչպես ուղղականի, այնպես էլ տրական հոլովաձևերի վրա։*

*Այդ բառերի հոլովման պատկերն է.*

Ուղղ. *հընգէրը* *տէրը*
Տր. *հընգէրօչ(ը)* *տիրօչ(ը)*
Բաց. *հընգէրօչից(ը), հընգէրից(ը)* *տիրօչից(ը), տէրից(ը)*
Գործ. *հընգէրօչօվ(ը), հընգէրօվ(ը)* *տիրօչօվ(ը), տէրօվ(ը)*
Ներգ. *հընգէրօչըմ(ը), հընգէրըմ(ը)* *տիրօչըմ(ը), տէրըմ(ը)*

*Ծանոթություն 1.—* Հընգէr<*ընկեր բառն օրինաչափորեն հոլովվում է նաև արտաքին* ի *հոլովմամբ, ինչպես՝ ուղղ. հընգէրը, տր. հընգէրի(ն), բաց. հընգէրից(ը)· գործ. հընգէրօվ(ը), ներգ. հընգէրըմ(ը)։*

*Ծանոթություն 2.— Իջևանում և որոշ այլ գյուղերում* տէr *բառի սեռականը գործածվում է նաև* տըrüնչ *ձևով։*

## ՆԵՐՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

### Օ (Ո) հոլովում

*131. Ներքին* օ *հոլովման են ենթարկվում* հանէr<*աներ,* ախպէr<*եղբայր,* հէr<*հայր,* հըrօխպէr<*հորեղբայր,* մէr<*մայր,* տէֆըr<*տայգր,* ֆիr<*քույր բառերը, որոնց տրական հոլովը կազմելու համար ուղղականի հիմքի* է, ի *ձայնավորները փոխվում է* օ-*ի։*

*Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմելու համար* -ից, -օվ, -ըմ *վերջավորությունները դրվում են ուղղականի կամ տրականի հիմքի վրա։*

Օ *հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

Ուղղ. *ախպէրը* *տէքըրը*
Տր. *ախպօր(ը)* *տէքօր(ը)*
Բաց. *ախպօրից(ը), ախպէրից(ը)* *տէքօրից(ը), տէքըրից(ը)*
Գործ. *ախպօրօվ(ը), ախպէրօվ(ը)* *տէքօրօվ(ը), տէքըրօվ(ը)*
Ներգ. *ախպօրըմ(ը), ախպէրըմ(ը)* *տէքօրըմ(ը), տէքըրըմ(ը)*

### Ա հոլովում

*132. Ներքին* ա *հոլովումը մասնակի հոլովում է, քանի որ*

*այս հոլովման են ենթարկվում միայն* շուն *և* տուն *բառերը։ Այդ բառերի տրականը կազմելու համար ուղղականի հիմքի* ու *ձայնավորը փոխվում է* ա-*ի։*

*Բացառական և գործիական հոլովները կազմելու համար* -ից, -ով *վերջավորությունները դրվում են ուղղականի կամ տրականի հիմքի վրա։*

*Ներգոյական հոլովը առանձին ձև չունի։*

*Այդ բառերի հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *շունը* | *տունը* |
| Տր. | *շան(ը)* | *տան(ը)* |
| Բաց. | *շանից(ը), շընից(ը)* | *տանից(ը), տընից(ը)* |
| Գործ. | *շանով(ը), շընով(ը)* | *տանով(ը), տընով(ը)* |
| Ներգ. | ------ ------ | ------ ------ |

## ՀՈԳՆԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՄ

*133. Շամշադին — Դիլիջանի խոսվածքում գոյականների հոգնակի թվի հոլովումը կատարվում է տարբեր եղանակներով։ Նախ՝ գոյականների մի զգալի մասի տրականը կազմելու համար ուղղականի հիմքին ավելանում է* ի *հոլովիչը։ Հոլովման այս ձևը իր բնույթով նույնանում է եզակի հոլովման հետ։ Խոսվածքում կան մի խումբ գոյականներ, որոնց հոգնակի հոլովումը ուղեկցվում է ուղղականի* -ք *վերջավորությունը* ց-*ի փոխվելով։ Ըստ այսմ էլ խոսվածքում գոյականների հոգնակի թվի համար ընդունում ենք երկու հոլովում՝* ի *և* ց:

### Ի հոլովում

*134. Այս հոլովումն իր թեքման եղանակով և հոլովների կազմությամբ նույնանում է եզակի թվի արտաքին* ի *հոլովման հետ։ Միայն այստեղ հոլովիչն ու հոլովային վերջավորությունները դրվում են ոչ թե եզակի, այլ հոգնակի հիմքի վրա։*

*Հոգնակի* ի *հոլովման ենթարկվում են* -էր, -նէր, -նի *հոգնակերտ վերջավորություններն ունեցող գոյականները, որոնց հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | *սարէրը* | *ակնէրը* | *նամակնին* |
| Տր. | *սարէրի(ն)* | *ակնէրի(ն)* | *նամակնէրի(ն)* |

| | | | |
|---|---|---|---|
| Բաց. | *սարէրից(ը)* | *ակնէրից(ը)* | *նամակնէրից(ը)* |
| Գործ. | *սարէրով(ը)* | *ակնէրով(ը)* | *նամակնէրով(ը)* |
| Ներգ. | *սարէրըմ(ը)* | *ակնէրըմ(ը)* | *նամակնէրըմ(ը)* |

## Ց հոլովում

*135. Հոգնակի ց հոլովման ենթարկվող բառերը խոսվածքում ունեն թեքման որոշ տարբերություններ։ Այսպես, կան մի խումբ գոյականներ, որոնց հոլովումը ուղեկցվում է ուղղականի* –է *վերջավորությունը օրինաչափորեն* ց*-ի փոխվելով։ Խոսվածքի համար օրինաչափ պետք է համարել նաև հոգնակի հոլովման այն ձևը, երբ բառի մեջ ք>ց փոփոխությունից առաջ տեղի է ունենում նաև եզակի ուղղականի վերջավորության փոփոխություն (եզ. խընամի>խընամու, հգն. խընամիք>խընամուց)։ Այս բոլորից դուրս խոսվածքում ունենք մի խումբ գոյականներ, որոնց թեքման ձևերը ամբողջությամբ պարզ չեն։ Այդ կարգի բառերի հոգնակի ուղղականի* –է *վերջավորության* ց*-ի փոխվելը կատարվում է ընդհանուր կանոնի համաձայն, սակայն վերջավորությունից առաջ կատարվող հնչյունափոխությունները կամ հնչյունների հավելումը չեն բացատրվում ոչ եզակի հոլովման ձևերի պահպանմամբ և ոչ էլ այլ օրինաչափությամբ։ Վերոհիշյալ առանձնահատկություններից ելնելով՝* ց *հոլովման ենթարկվող բառերը բաժանում ենք երեք տարբեր խմբերի։*

*Առաջին խմբի մեջ են մտնում* –անէ *և* –ունէ *վերջավորություններով ազգակցություն, գերդաստան ցույց տվող գոյականները։ Այս բառերի հոլովումը տեղի է ունենում ուղղականի* –է *վերջավորությունը* ց*-ի փոխվելով, ինչպես, օրինակ.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *Ուհանանք* | *Մէլունք* |
| Տր. | *Ուհանանց* | *Մէլունց* |
| Բաց. | *Ուհանանցից(ը)* | *Մէլունցից(ը)* |
| Գործ. | *Ուհանանցով(ը)* | *Մէլունցով(ը)* |
| Ներգ. | ------ | ------ |

*Երկրորդ խմբին են պատկանում* –է *հոգնակերտ վերջավորությունն ունեցող գոյականները, որոնց թեքման ժամանակ պահպանվում է նաև եզակի հոլովման ձևը, ինչպես, օրինակ.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | հայլիքը, հիլիքը | պերթըցիքը |
| Տր. | հայլուց(ը), հիլուց(ը) | պերթըցուց(ը) |
| Բաց. | հայլուցից(ը), հիլուցից(ը) | պերթըցուցից(ը) |
| Գործ. | հայլուցով(ը), հիլուցով(ը) | պերթըցուցով(ը) |
| Ներգ. | հայլուցում(ը), հիլուցըմ(ը) | ------- |

*Երրորդ խմբին են պատկանում* -անիf, -էf, -տինf, -իf *հոգնակերտ վերջավորություններն ունեցող գոյականները, որոնց հոլովումը հետևյալ առանձնահատկություններն ունի.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | կընանիքը | ըխճըկէքը |
| Տր. | կընանոց(ը) | ըխճըկէրանց(ը) |
| Բաց. | կընանոցից(ը) | ըխճըկէրանցից(ը) |
| Գործ. | կընանոցով(ը) | ըխճըկէրանցով(ը) |
| Ներգ. | կընանոցըմ(ը) | ըխճըկէրանցըմ(ը) |

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | ախպէրտինքը | մառթիքը |
| Տր. | ախպէրտանց(ը) | մըռթկէրանց(ը) |
| Բաց. | ախպէրտանցից(ը) | մըռթկէրանցից(ը) |
| Գործ. | ախպէրտանցով(ը) | մըռթկէրանցով(ը) |
| Ներգ. | ախպէրտանցըմ(ը) | մըռթկէրանցըմ(ը) |

## 4. ՈՐՈՇՅԱԼ ԵՎ ԱՆՈՐՈՇ ՀՈԴԵՐ

*136. Շամշադին—Դիլիջանի խոսվածքի որոշյալ հոդերն են՝* ը *և* ն: Ը-ն *սովորաբար դրվում է բաղաձայնով վերջավորվող բառերի վրա, իսկ* ն-ն՝ *ձայնավորով վերջավորվող բառերի վրա, ինչպես. էտ* թաfավէրը *վէր ա ունըմ* թըվանfը *ու դըքա էտ* մառքը *կըրակ տալի։* Տինէլը *հանըմ ա ու ինքը փախչըմ։ Վաախլ* դäյին *քյընäլիս ա լէլ ախպօր* կօխկը: *Էս* նօղը *էն մառթին կըլխին կէնա, վըէր իրա սըրտի* կախտնիfը *իրա* կրնգյäնը *կասի։*

*137.* Ը *հոդը ձայնավորից առաջ սովորաբար մնում է անփոփոխ, ինչպես.* Հաrսը *ասէլ ա՝ յէս գնիդըմ էմ։ էս* կընիկը *ասէլ ա՝ յէս ըրրա կըլխին մի օյին դէմ տընիլ։*

*Սակայն* էլ *շաղկապից (գործածված նաև, ևս իմաստով) և օժանդակ բայերից առաջ որոշյալ* ը *հոդը փոխվում է* ն-*ի, ինչպես. Մառթը սաղ օրը ըշխադըմ ա, իսկ* կընիկն *էլ տանն ա լըմ։ Ախպէրը իրա հին* շօrէրն *էլ տըված ա լէլ նըրան։ էտ*

փօղը վօ՛զիրն ա տալի, հա՛ ։ Իմ մըէրը տէրտէրի քըվօր ախճիկն էր։ Քէռի չան, վէր կաց, քնեմըլի վախտն ա։

138. Հակառակ ժամանակակից հայերենին՝ խոսվածքի բացառական, գործիական և ներգոյական հոլովները կարող են գործածվել որոշյալ հոդով, ինչպես. Խիլթէն իմ նըռիցը հանըմ էմ, քու ճիտը քըցըմ։ Վէրի նըմփօվը կամաց-կամաց քընեմըլիս ա ըլըմ։ Մըէծ Թըլըմը տէսավ, վըէր Ղահըրմանը իրանից շուտ ա յէկէլ։

139. Խոսվածքի անորոշ հոդն է միլմին, որն իր գործածությամբ չի տարբերվում ժամանակակից հայերենի անորոշ հոդից, ինչպես. Վըէր մի կյօւնիւր քընեցին, մաոթիքը էլի կըղնէցին։ Մի թախավէրին իրէք տըղա ունէր։ Քընեցին մի կյէղից մուտացան, տէհան հարսին պիրըմ էն։

## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

140. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են որակական և հարաբերական ածականներ։ Հարաբերական ածականները սովորաբար կազմվում են գոյականներից՝ ածականակերտ ածանցների միջոցով։ Խոսվածքում տարածված ածականակերտ ածանցներից են՝ -ալի (ցըղալի), -ական (կյէղական), -ան (անխէն), -անի (հարկանի), -ավէր (բախտավէր), -ի (պըռթի), -օվի (քաշօվի), -օտ (ալրօտ)[18]։

141. Որակական ածականներն ունեն համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական և գերադրական։ Դրական աստիճանը ածականի անփոփոխ աստիճանն է, ինչպես՝ պա՛րի, պ՛ա՛րըցըր, լա՛վ, կարմիր, կանանչ, սըէվ, ուժէղ։

142. Որակական ածականի բաղդատական աստիճանը կազմելու համար դրականի վրա դրվում է ավէլի բառը, ինչպես. Մըէր կյէղըմը ավէլի պա՛րցըր տունը իմն ա։ Նըրա պատմած հէքյաթը ավէլի ճին ա։

Բաղդատական աստիճանն արտահայտելու համար հաճախ համեմատվող առարկան դրվում է ուղղական, իսկ համեմատելի առարկան՝ բացառական հոլովով, ինչպես. Իմ տըղէն քու

---

[18] Ամբողջական օրինակները տե՛ս «Ածանցներ» բաժնում։

ըխճըկանիցը մըէծ ա։ Մըէր կնէղի Ջատին Ղահըրմանիցը սըրտօկ ա։

Նվազական բաղդատական աստիճանը կազմվում է **-ավուն** ածանցի միջոցով, ինչպես՝ տըղնավուն (քիչ դեղին), կըրճավուն (քիչ կարճ), էրգյա̈րավուն||էրգյա̈նավուն (քիչ երկար)։

143. Որակական ածականի գերադրական աստիճանը կազմելու համար դրականի վրա ավելանում է **ամէնա** մասնիկը, ինչպես՝ ամէնապարի (ամենաբարի), ամէնապյօ̈րցըր (ամենաբարձր), ամէնալյա̈վ (ամենալավ), ամէնածանդըր (ամենածանր), ամէնամըէծ (ամենամեծ), ամէնաուժէղ են։

Բացարձակ գերադրական աստիճանի իմաստն արտահայտելու համար ածականի դրական աստիճանի վրա դրվում են **դիփ, չիմ, լօխ** (բոլորը) բառերի բացառականը, ինչպես. Նըրա ծէռը **դիփիցը ուժէղ էր**: Քու տէսածը **չիմից||չըմնուց լյա̈վն** ա։ **Լօխից լյա̈վը** իմ հընգէրն ա։

144. Որակական ածականը գոյականաբար գործածվելիս հոդ է ստանում և հոլովվում արտաքին **ի** հոլովմամբ, ինչպես.

| | | |
|---|---|---|
| **Ուղղ.** | կարմիրը | պյու̈ճու̈րը |
| **Տր.** | կարմըրի(ն) | պյու̈ճու̈րի(ն) |
| **Բաց.** | կարմըրից(ը) | պյու̈ճու̈րից(ը) |
| **Գործ.** | կարմըրօվ(ը) | պյու̈ճու̈րօվ(ը) |
| **Ներգ.** | կարմըրըմ(ը) | պյու̈ճու̈րըմ(ը), պյու̈ճու̈րու̈մ(ը) |

145. Ածականը միշտ դրվում է գոյականից առաջ և նրա հետ չի համաձայնվում ո՛չ թվով և ո՛չ էլ հոլովով։ Այն նախադասության մեջ սովորաբար լինում է որոշիչ, իսկ գոյականաբար գործածվելիս կարող է դառնալ ենթակա, ստորոգյալ կազմող բառ և անվանական ու բայական անդամների լրացումներ, ինչպես. **Էրգյա̈ր||էրգյա̈ն** պօչէրօվ կօվը մօրթէցին։ **Պու̈ճու̈րը** էրէգ էմ պիրէլ։ Իմ **մըէծը** լյա̈վ ա սըվօրըմ։

## ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

146. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են քանակական, դասական, բաշխական, չափական թվականներ։

147. Բացարձակ քանակական թվականներն են՝ մին, էրկու, իրէք, չօրս, հինգ, վէց, օխտը, ութ, իննը, տասը, քըսան,

յէռէսուն, քառասուն, հիցցուն (նաև՝ իծծուն), վացցուն (նաև՝ վածծուն), օխտընասուն, ութանասուն, իննասուն, հարիր, հա̈զա̈ր։

Տասնավորներով և միավորներով կազմված բացարձակ թը-վականներում տասնավորները դրվում են միավորներից առաջ։ Եթե միավորն սկսվում է բաղաձայնով, տասնավորի վերջում միշտ դրվում է ը ձայնավորը, իսկ երբ միավորն սկսվում է ձայնավորով, ը-ն կարող է դրվել կամ չդրվել։ Այսպիսի բար-դություններում վերականգնվում է տասը<տասն թվականի ն վերջնահնչյունը, ինչպես՝ տասնըմին, տասնըչորս, տասնըհինգ, քըսանէրկու||քըսանըէրկու, քըսանիրէք||քըսանըիրէք, յէռէսունը-վէց, յէռէսունօխտը||յէռէսունըօխտը, քառասունիննը||քառասունը-իննը են։

Ծանոթություն.— Տասսը<տասն բացարձակ թվականն ա-ռանձին գործածվելիս արտասանվում է կրկնակի ս-ով, իսկ բարդությունների մեջ այն արտասանվում է մեկ ս-ով, ինչպես՝ տասսը մառթ յէկավ. բայց՝ Մէլունց Սարգիսը տասնըմին րէխա ունէր։

Հարյուրավորները և հազարավորները կազմվում են միա-վորների և հարիր<հարիւր, հա̈զա̈ր<հազար բառերի հարադրու-թյամբ, ինչպես՝ էրկու հարիր, իրէք հարիր, հինգ հարիր, ութ հարիր, վէց հա̈զա̈ր, իննը հա̈զա̈ր են։

148. Բաշխական թվականները կազմվում են բացարձակ թվականների կրկնությամբ, ինչպես՝ մին-մին, էրկու-էրկու, ի-րէք-իրէք, չորս-չորս, հինգ-հինգ, վէց-վէց, օխտը-օխտը, ութ-ութ, իննը-իննը, տասսը-տասսը են։

149. Ջափական թվականները կազմվում են -անօց ածան-ցով, որը դրվում է բացարձակ քանակականների վրա, ինչպես՝ իրէքանօց, հինգանօց, տասսանօց, հարիրանօց են։ Նշենք, որ այս բառերը ավելի շատ գոյական անվան, քան թվականի նշա-նակություն ունեն։

150. Բացարձակ քանակականներով և -տակ ածանցով կազմված բառերը սովորաբար արտահայտում են մակբայա-կան իմաստ, ինչպես՝ էրկուտակ, իրէքտակ, չորստակ||չորսը-տակ, օխտըտակ, իննըտակ, տասսըտակ են։

Ծանոթություն.— Որոշ բարբառագիտական ուսումնասիրու-թյուններում բացարձակ թվականներով և -տակ ածանցով կազ-մըված բառերը համարում են բազմապատկական թվականներ,

*սակայն իրականում այդպիսի ձևերը ունեն մակբայական նշանակություն։*

*151. Խոսվածքում դասական թվականների կազմության առանձին ձև չկա, այլ գործածվում են ժամանակակից հայերենի* -րորդ *և* -երորդ *ածանցներով կազմված դասականները, ինչպես՝ յէրգրորթ, յէրորթ, չորորթ, հինգէրորթ, վէցէրորթ, ութէրորթ ևն։*

*152. Գոյականաբար գործածվելիս և՛ քանակական, և՛ դասական թվականները հոդ են ստանում և հոլովվում անվանական արտաքին* ի *հոլովմամբ։*

*Բարդ և բաղադրյալ բացարձակ քանակական թվականների հոլովման ժամանակ փոփոխության է ենթարկվում միայն վերջին բաղադրիչը։*

*Բերենք բացարձակ թվականների հոլովման օրինակներ.*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | *չորսը* | *տասնըհինգը* | *հարիր ութը* |
| Տր. | *չորսի(ն)* | *տասնըհինգի(ն)* | *հարիր ութի(ն)* |
| Հայց. | *չորսից(ը)* | *տասնըհինգից(ը)* | *հարիր ութից(ը)* |
| Գործ. | *չորսօվ(ը)* | *տասնըհինգօվ(ը)* | *հարիր ութօվ(ը)* |
| Ներգ. | *չորսըմ(ը)* | *տասնըհինգըմ(ը)* | *հարիր ութըմ(ը)* |

## ԴԵՐԱՆՈՒՆ

*153. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են անձնական, ցուցական, ստացական, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, փոխադարձ և ժխտական դերանունները, որոնցից դերանվանական հոլովում ունեն բոլոր անձնական,* սա, տա, նա *ցուցական և* օ՞վ *հարցական դերանունները։ Մնացած հոլովվող դերանունները ենթարկվում են անվանական հոլովման։ Հակառակ անվանական հոլովման բառերի, որոնք ունեն թեքման հինգ ձև, անձնական դերանունները խոսվածքում ունեն հոլովային վեց ձև. առաջին և երկրորդ դեմքերում տարբերակում են սեռական և տրական հոլովաձևերը։*

*154. Անձնական դերանուններն են՝* յէս, տöւ *(դու)*, նա, մըէնf *(մենք)*, տöւf *(դուք)*, նըրանf||նըրäնf, նըհանf||նըհäնf, ինfը, իրանf:

*Անձնական դերանունների հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

## Առաջին դեմք

| | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | *յէս* | *մըէնք‖մէնք* |
| Սեռ. | *իմ* | *մըէր, մէր* |
| Տր. | *ինձ* | *մըէզ, մէզ* |
| Բաց. | *ինձանի(ց)* | *մըզանի(ց), մէզանի(ց)* |
| Գործ. | *ինձանով* | *մըզանով, մէզանով* |
| Ներգ. | *ինձանըմ* | *մըզանըմ, մէզանըմ* |

## Երկրորդ դեմք

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *տո̈ւ* | *տո̈ւք* |
| Սեռ. | *քու* | *ծըէր, ծէր* |
| Տր. | *քըէզ, քէզ, քիէ* | *ծըէզ, ծէզ* |
| Բաց. | *քըզանի(ց), քէզանի(ց)* | *ծըզանի(ց), ծէզանի(ց)* |
| Գործ. | *քըզանով, քէզանով* | *ծըզանով, ծէզանով* |
| Ներգ. | *քըզանըմ, քէզանըմ* | *ծըզանըմ, ծէզանըմ* |

## Երրորդ դեմք

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *նա* | *նըրանք, նըʻանք* |
| Սեռ. | *նըրա* | *նըրանց, նըʻանց* |
| Տր. | *նըրան* | *նըրանց, նըʻանց* |
| Բաց. | *նըրանի(ց)* | *նըրանցից, նըʻանցից* |
| Գործ. | *նըրանով* | *նըրանցով, նըʻանցով* |
| Ներգ. | *նըրանըմ* | *նըրանցըմ, նըʻանցըմ* |

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *ինքը* | *իրանք* |
| Սեռ. | *իրա* | *իրանց* |
| Տր. | *իրան* | *իրանց* |
| Բաց. | *իրանի(ց)* | *իրանցից* |
| Գործ. | *իրանով* | *իրանցով* |
| Ներգ. | *իրանըմ* | *իրանցըմ* |

*Ծանոթություն.— Երրորդ դեմքի* նա *անձնական դերանունը և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում թեքվում է նաև հիմքի* ա *ձայնավոր քմայնացումով, ինչպես.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *նա̈* | *նըրա̈նք, նըʻա̈նք* |
| Սեռ. | *նըրա̈* | *նըրա̈նց, նըʻա̈նց* |
| Տր. | *նըրա̈ն* | *նըրա̈նց, նըʻա̈նց* |

| | | |
|---|---|---|
| Բաց. | *նըրա̈նի(ց)* | *նըրա̈նցից, նըհա̈նցից* |
| Գործ. | *նըրա̈նով* | *նըրա̈նցով, նըհա̈նցով* |
| Ներգ. | *նըրա̈նըմ* | *նըրա̈նցըմ, նըհա̈նցըմ* |

*155. Ցուցական դերանուններն են՝* էս, էտ, էն, սա, տա, նա, սըրանք||սըհանք, տըրանք||տըհանք, նըրանք||նըհանք, սըհէնց *(այսպես)*, տըհէնց *(այդպես)*, նըհէնց *(այնպես)*, էսքան, էտքան, էնքան, ըստի||ըստէղ *(այստեղ)*, իտի||ըտէղ *(այդտեղ)*, ընդի||ընդեղ *(այնտեղ)*։

Սա, տա, նա *ցուցականները հոլովվում են դերանվանական հոլովմամբ։* էս, էտ, էն *ցուցականները չունեն առանձին հոլովական ձևեր, իսկ մյուս ցուցական դերանունները ենթարկվում են անվանական արտաքին* ի *հոլովման։*

Դերանվանական հոլովում

| | *Եզակի* | *Հոգնակի* |
|---|---|---|
| Ուղղ. | *սա* | *սըրանք, սըհանք* |
| Սեռ. | *սըրա* | *սըրանց, սըհանց* |
| Տր. | *սըրան* | *սըրանց, սըհանց* |
| Բաց. | *սըրանի(ց)* | *սըրանցից, սըհանցից* |
| Գործ. | *սըրանով* | *սըրանցով, սըհանցով* |
| Ներգ. | *սըրանըմ* | *սըրանցըմ, սըհանցըմ* |
| Ուղղ. | *տա* | *տըրանք, տըհանք* |
| Սեռ. | *տըրա* | *տըրանց, տըհանց* |
| Տր. | *տըրան* | *տըրանց, տըհանց* |
| Բաց. | *տըրանի(ց)* | *տըրանցից, տըհանցից* |
| Գործ. | *տըրանով* | *տըրանցով, տըհանցով* |
| Ներգ. | *տըրանըմ* | *տըրանցըմ, տըհանցըմ* |

Նա, նըրանք||նըհանք *ցուցականների հոլովումը բոլորովին նույնն է անձնական դերանվան երրորդ դեմքի հետ։*

*Ծանոթություն.—* Սա, տա, նա *ցուցական դերանունները և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում թեքվում են նաև հիմքի* ա *ձայնավորի քմայնացումով, ինչպես, օրինակ.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *սա̈* | *սըրա̈նք, սըհա̈նք* |
| Սեռ. | *սըրա̈* | *սըրա̈նց, սըհա̈նց* |
| Տր. | *սըրա̈ն* | *սըրա̈նց, սըհա̈նց* |

| | | |
|---|---|---|
| Բաց. | *սրբանի(ց)* | *սրբանցից, սրհանցից* |
| Գործ. | *սրբանով* | *սրբանցով, սրհանցով* |
| Ներգ. | *սրբանըմ* | *սրբանցըմ, սրհանցըմ* |

*Անվանական հոլովում ունեցող ցուցական դերանունների հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *ըստեղը* | *էսքանը* |
| Տր. | *ըստեղի(ն)* | *էսքանի(ն)* |
| Բաց. | *ըստեղից, ըստիյան* | *էսքանից(ը)* |
| Գործ. | *ըստեղով, ըստիյով* | *էսքանով(ը)* |
| Ներգ. | ---- ---- | *էսքանըմ(ը)* |

156. *Որպես ստացական դերանուններ խոսվածքում գործածվում են* յէս, տու *(դու)*, մըէնք||մէնք, տուք *(դուք)*, նա, նըրանք||նըրհանք, ինքը, իրանք *անձնական դերանունների սեռական հոլովաձևերը՝* իմ, քու, մըէր||մէր, ծըէր||ծէր, նըրա, նըրանց||նըրհանց, իրան, իրանց: *Եզակի թվում բոլոր դեմքի ստացական դերանունները հոդ են ստանում և հոլովվում անվանական* ի *հոլովմամբ, իսկ հոգնակի թվում հոլովվում են միայն առաջին և երկրորդ դեմքի ստացականները՝ ենթարկվելով* ց *հոլովման:*

*Ստացական դերանունների հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

### *Եզակի թիվ*

### Առաջին դեմք

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *իմը* | *մէրը* |
| Տր. | *իմինը* | *մէրինը* |
| Բաց. | *իմից(ը), իմինից(ը)* | *մէրից(ը), մէրինից(ը)* |
| Գործ. | *իմով(ը), իմինով(ը)* | *մէրով(ը), մէրինով(ը)* |
| Ներգ. | *իմըմ(ը), իմինըմ(ը)* | *մէրըմ(ը), մէրինըմ(ը)* |

### Երկրորդ դեմք

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *քունը* | *ծէրը* |
| Տր. | *քունինը* | *ծէրինը* |
| Բաց. | *քունից(ը), քունինից(ը)* | *ծէրից(ը), ծէրինից(ը)* |
| Գործ. | *քունով(ը), քունինով(ը)* | *ծէրով(ը), ծէրինով(ը)* |
| Ներգ. | *քունըմ(ը), քունինըմ(ը)* | *ծէրըմ(ը), ծէրինըմ(ը)* |

### Երրորդ դեմք

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *նըրանը* | *նըրանցը, նըհանցը* |
| Տր. | *նըրանինը* | *նըրանցինը, նըհանցինը* |
| Բաց. | *նըրանինից(ը)* | *նըրանցինից(ը), նըհանցինից(ը)* |
| Գործ. | *նըրանինօվ(ը)* | *նըրանցինօվ(ը), նըհանցինօվ(ը)* |
| Ներգ. | *նըրանինըմ(ը)* | *նըրանցինըմ(ը), նըհանցինըմ(ը)* |

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *իրանը* | *իրանցը* |
| Տր. | *իրանինը* | *իրանցինը* |
| Բաց. | *իրանինից(ը)* | *իրանցինից(ը)* |
| Գործ. | *իրանինօվ(ը)* | *իրանցինօվ(ը)* |
| Ներգ. | *իրանինըմ(ը)* | *իրանցինըմ(ը)* |

*Ծանոթություն.*— *Երրորդ դեմքի ստացական դերանունների հոլովումը տեղի է ունենում նաև արմատական ա ձայնավորի քմայնացումով, ինչպես՝ նըրա̈նը, նըրա̈նինը, նըրա̈նինիցը, նըրա̈նինօվը, նըրա̈նինըմը են։*

## *Հոգնակի թիվ*

### Առաջին դեմք

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *իմունքը, իմօնքը* | *մէրունքը, մէրօնքը* |
| Տր. | *իմունցը, իմօնցը* | *մէրունցը, մէրօնցը* |
| Բաց. | *իմունցից(ը), իմօնցից(ը)* | *մէրունցից(ը), մէրօնցից(ը)* |
| Գործ. | *իմունցօվ(ը), իմօնցօվ(ը)* | *մէրունցօվ(ը), մէրօնցօվ(ը)* |
| Ներգ. | *իմունցըմ(ը), իմօնցըմ(ը)* | *մէրունցըմ(ը), մէրօնցըմ(ը)* |

### Երկրորդ դեմք

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *քունունքը, քունօնքը* | *ծէրունքը, ծէրօնքը* |
| Տր. | *քունունցը, քունօնցը* | *ծէրունցը, ծէրօնցը* |
| Բաց. | *քունունցից(ը), քունօնցից(ը)* | *ծէրունցից(ը), ծէրօնցից(ը)* |
| Գործ. | *քունունցօվ(ը), քունօնցօվ(ը)* | *ծէրունցօվ(ը), ծէրօնցօվ(ը)* |
| Ներգ. | *քունունցըմ(ը), քունօնցըմ(ը)* | *ծէրունցըմ(ը), ծէրօնցըմ(ը)* |

*Ծանոթություն.*— Ունք *հոգնակերտ վերջավորությամբ ստացականները տարածված են Շամշադինի և Կրասնոսելսկի շըրջաններում, իսկ* -օնք *վերջավորությամբ ստացականները՝ Իջևանի և Դիլիջանի շրջաններում։*

157. *Խոսվածքում գործածվող հարցական դերանուններն*

են՝ ո՞վ, ի՞նչ, հի՞շքան (*ի՞նչքան*), վըէ՞ր (*ո՞ր*), վըէ՞րդէղ‖վըէ՞րդի (*ո՞րտեղ*), վըէ՞նց (*ինչպե՞ս*), յէ՞փ (*ե՞րբ*), քա՞նի *բառերը, որոնցից վերջին երեքը չեն հոլովվում։ Հոլովվող հարցական դերանուններից* ո՞վ-*ը ենթարկվում է դերանվանական, իսկ մյուսները՝ անվանական հոլովման։* Ո՞վ, հի՞շքան, վըէ՞րդի *հարցականներն ունեն միայն եզակի, իսկ մնացածները՝ եզակի և հոգնակի հոլովումներ։*

*Հարցական դերանունների հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

### *Եզակի թիվ*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | *օ՞վ* | *ի՞նչը* | *հի՞շքանը* |
| Տր. | *ո՞ւմ* | *ի՞նչին* | *հի՞շքանին* |
| Բաց. | *ո՞ւմից* | *ի՞նչից(ը)* | *հի՞շքանից(ը)* |
| Գործ. | *ո՞ւմօվ* | *ի՞նչօվ(ը)* | *հի՞շքանօվ(ը)* |
| Ներգ. | ----- | *ի՞նչըմ(ը)* | *հի՞շքանըմ(ը)* |

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *վըէ՞րը* | *վըէ՞րդէղը* |
| Տր. | *վըէ՞րին(ը)* | *վըէ՞րդէղին(ը)* |
| Բաց. | *վըէ՞րից(ը)* | *վըէ՞րդէղից(ը)* |
| Գործ. | *վըէ՞րօվ(ը)* | *վըէ՞րդէղօվ(ը)* |
| Ներգ. | *վըէ՞րըմ(ը)* | *վըէ՞րդէղըմ(ը)* |

### *Հոգնակի թիվ*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *ի՞նչէրը* | *վըէ՞րունք, վըէ՞րօնք* |
| Տր. | *ի՞նչէրին* | *վըէ՞րունց, վըէ՞րօնց* |
| Բաց. | *ի՞նչէրից(ը)* | *վըէ՞րունցից(ը), վըէ՞րօնցից(ը)* |
| Գործ. | *ի՞նչէրօվ(ը)* | *վըէ՞րունցօվ(ը), վըէ՞րօնցօվ(ը)* |
| Ներգ. | *ի՞նչէրըմ(ը)* | *վըէ՞րունցըմ(ը), վըէ՞րօնցըմ(ը)* |

*158. Հարաբերական դերանունները նույն հարցական դերանուններն են առանց հարցի։ Որպես հարաբերական դերանուն խոսվածքում գործածվում է նաև* օվ վըէր (*ով որ*) *բառը, որն ունի միայն եզակի հոլովաձևեր, ինչպես՝ ուղղ.* *օվ վըէր, տր. ում վըէր, բաց. ումից վըէր, գործ. ումօվ վըէր։*

*159. Խոսվածքում գործածվող որոշյալ դերանուններն են՝* ամէնը, ամէնքը, ամէն մինը (*ամեն մեկը*), դիփ (*բոլորը*), չիմ (*բոլորը*), լօխ (*բոլորը*) (*գործածվում է միայն Շամշադինում և Կրասնոսելսկում*)։

*Որոշյալ դերանունները հոլովվում են միայն եզակի թվով՝ ենթարկվելով արտաքին* ի *հոլովման, ինչպես.*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | *ամէնը* | *ամէնքը* | *ամէն մինը* |
| Տր. | *ամէնի(ն)* | *ամէնքի(ն)* | *ամէն մընի(ն)* |
| Բաց. | *ամէնից(ը)* | *ամէնքից(ը)* | *ամէն մընից(ը)* |
| Գործ. | *ամէնով(ը)* | *ամէնքով(ը)* | *ամէն մընով(ը)* |
| Ներգ. | *ամէնըմ(ը)* | *ամէնքըմ(ը)* | *ամէն մընըմ(ը)* |

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | *դիփը* | *լօխ* | *չիմը* |
| Տր. | *դիփի(ն)* | *լօխի(ն)* | *չիմի(ն)* |
| Բաց. | *դիփից(ը)* | *լօխից(ը)* | *չիմից(ը)* |
| Գործ. | *դիփով(ը)* | *լօխով(ը)* | *չիմով(ը)* |
| Ներգ. | *դիփըմ(ը)* | *լօխըմ(ը)* | *չիմըմ(ը)* |

*160. Խոսվածքում գործածվող անորոշ դերանուններն են՝* **ինչ-ինչ, ինչ-վըէր, մէկէլ** *(այլ),* **մինը** *(մեկը),* **ուրիշ**: **Ինչ-ինչ** *և* **ինչ-վըէր** *դերանունները սովորաբար չեն հոլովվում,* **մինը** *դերանունը հոլովվում է միայն եզակի թվով, իսկ* **մէկէլ, ուրիշ** *դերանունները հոլովվում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվով։*

*Անորոշ դերանունների հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

*Եզակի թիվ*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | *մէկէլը* | *մինը* | *ուրիշը* |
| Տր. | *մէկէլի(ն)* | *մընի(ն)* | *ուրիշի(ն)* |
| Բաց. | *մէկէլից(ը)* | *մընից(ը)* | *ուրիշից(ը)* |
| Գործ. | *մէկէլով(ը)* | *մընով(ը)* | *ուրիշով(ը)* |
| Ներգ. | *մէկէլըմ(ը)* | *մընըմ(ը)* | *ուրիշըմ(ը)* |

*Հոգնակի թիվ*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *մէկէլնին* | *ուրիշնին* |
| Տր. | *մէկէլնէրին* | *ուրիշնէրին* |
| Բաց. | *մէկէլնէրից(ը)* | *ուրիշնէրից(ը)* |
| Գործ. | *մէկէլնէրով(ը)* | *ուրիշնէրով(ը)* |
| Ներգ. | *մէկէլնէրըմ(ը)* | *ուրիշնէրըմ(ը)* |

*161. Խոսվածքում գործածվող փոխադարձ դերանուններն են՝* **միմընի, մինըմընին, իրար**: *Խոսվածքի փոխադարձ դերանունները ժամանակակից հայերենի համապատասխան դերանունների նման չունեն ուղղական և ներգոյական հոլովաձևեր,*

իսկ բացառական և գործիական հոլովաձևերը կազմվում են սովորական ձևով, ինչպես.

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | ----- | ----- | ----- |
| Տր. | մինմընին | մինըմընին | իրար |
| Բաց. | մինմընից(ը) | մինըմընից(ը) | իրարից(ը) |
| Գործ. | մինմընով(ը) | մինըմընով(ը) | իրարով(ը) |
| Ներգ. | ----- | ----- | ----- |

162. Խոսվածքում գործածվող ժխտական դերանուններն են՝ վէչ մինը (ոչ մեկը), վէչ մի (ոչ մի), վէչինչ, որոնք հոլովվում են արտաքին ի հոլովմամբ, ինչպես.

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | վէչ մինը | վէչինչ |
| Տր. | վէչ մընի(ն) | վէչինչի(ն) |
| Բաց. | վէչ մընից(ը) | վէչինչից(ը) |
| Գործ. | վէչ մընով(ը) | վէչինչով(ը) |
| Ներգ. | վէչ մընըմ(ը) | վէչինչըմ(ը) |

## ԲԱՅ

163. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում բայերը լինում են երկու տեսակ՝ դիմավոր և անդեմ։ Հին և ժամանակակից հայերենների նման խոսվածքում էլ դիմավոր բայերին հատուկ են դեմքի, թվի, ժամանակի և եղանակի քերականական կարգերը, որոնց խոնարհումը կատարվում է թե՛ թեքական և թե՛ վերլուծական եղանակներով։ Անդեմ բայերին հատուկ չեն նրման հատկանիշները. դրանց մի մասը ցույց է տալիս գործողության (անորոշ) կամ գործողի (ենթակայական) անվանումը, իսկ մյուս մասը օժանդակ բայի հետ մասնակցում է դիմավոր ձևերի կազմությանը։

Բայերը ըստ կազմության լինում են պարզ և ածանցավոր։ Խոսվածքի բոլոր բայածանցներն էլ միջածանցներ են, որոնք դրվում են կամ անորոշի վերջավորությունից անմիջապես առաջ, կամ դերբայի վերջավորությանը նախորդող հիմքակազմիչից առաջ։ Ածանցավոր բայերի մեծ մասի խոնարհման ժամանակ տեղի են ունենում և՛ բայահիմքի անցումներ, և՛ հիմքակազմիչի սղում կամ փոփոխություն, մինչդեռ պարզ բայե-

*րին հատուկ են միայն բայահիմքերի անցումներ (անորոշի բայահիմքից կատարյալի բայահիմք)։*

## 1. ԴԵՐԲԱՅՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

*164. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում կան ութ դերբայներ՝ անորոշ, անկատար, ապակատար, վաղակատար, հարակատար, ենթակայական, համակատար և ձևի։ Ժխտական դերբայի համար խոսվածքն առանձին ձև չունի։ Պայմանական եղանակի ժխտականի իմաստն արտահայտվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի հարադրությամբ կազմված ձևերով։*

*165. Անորոշ դերբայը կազմվում է* -իլ, -ալ *վերջավորություններով, որոնք դրվում են ներկայի հիմքի վրա։ Շամշադին—Դիլիջանի խոսվածքում բայերը լինում են միայն* ի *և* ա *խոնարհման։*

Ի *խոնարհում ունեն.*

*ա) գրաբարյան* Ե *խոնարհման բայերը (չհաշված առանձին բացառությունները), ինչպես՝* ածիլ<*ածել,* ճըստիլ<*նստել,* ապրիլ<*ապրել,* տըճիլ<*դնել,* թափիլ<*թափել,* խըճգարիլ<*խանգարել,* խըմիլ<*խմել,* պաճիլ<*պահել,* պատմիլ<*պատմել,* սիրիլ<*սիրել են։*

*բ) Գրաբարյան* ի *և* ու *խոնարհման բայերը, ինչպես՝* առճիլ<*առնուլ,* զäրթճիլ<*զարթնուլ,* զըզվիլ<*զզուիլ,* թթվիլ<*թըթուիլ,* թօղիլ<*թողուլ,* խռթճիլ<*խրտնուլ,* կյըճգäտվիլ<*գանգատիլ,* կըտաղիլ<*կատաղիլ,* կօրչիլ<*կորնչիլ,* ճըմբäրիլ<*համարիլ,* ուռչիլ<*ուռչիլ,* սըխալվիլ<*սխալիլ են։*

*Խոսվածքի* ա *խոնարհման բայերը սովորաբար համապատասխանում են գրաբարյան նույնատիպ բայերին, ինչպես՝* կյäլ<*գալ,* fյըճäլ<*գնալ,* կյöռäլ<*գոռալ,* էրէվալ<*երևալ,* կառթալ<*կարդալ,* ճըվատալ<*հաւատալ,* մըճալ<*մնալ,* օռճալ<*ոռնալ,* տալ<*տալ։*

*Խոսվածքի* ա *խոնարհման բայերի մի զգալի մասը բնաձայնական և բնական երևույթներն արտահայտող բառեր են, ինչպես՝ դըռդըռալ, գըռգըռալ, բըղբըղալ, թըշթըշալ, խըշխըշալ, ճըռճըռալ, վըշվըշալ են։*

*Անորոշ դերբայն ունի անվանական և բայական գործածություն։ Անվանաբար գործածվելիս անորոշ դերբայը հոդ է ըն-*

տանում և հոլովվում արտաքին ու հոլովմամբ։ Բայական գործածությամբ անորոշ դերբայը մասնակցում է հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակների, ինչպես նաև պայմանական եղանակի ժխտական ձևերի և արգելական հրամայականի կազմությանը (օրինակները տե՛ս խոնարհման համակարգում)։ Բայական գործածությամբ անորոշ դերբայն ստանում է կերպային իմաստ։ Թեև նրա արտահայտած իմաստները տարբեր են (կատարելի, ենթադրություն, հարկադրանք), այնուամենայնիվ այստեղ կարելի է տարբերել մի ընդհանուր՝ կատարելի կերպի իմաստ։

166. Անկատար դերբայը կազմվում է ներկայի հիմքից՝ -ըմ վերջավորության միջոցով։ Անկատար դերբայն արտահայտում է շարունակական կերպի իմաստ և ունի միայն բայական գործածություն։ Այս դերբայով և օժանդակ բայերի հարադրությամբ կազմվում են ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը։

167. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում է ապակատար դերբայի մեկ ձև, որի կազմության համար -ի վերջավորությունը դրվում է անորոշ դերբայի վրա, ինչպես՝ խըմիլ-խըմիլի, ծակիլ-ծակիլի, կապիլ-կապիլի, կըռծիլ-կըռծիլի, հալիլ-հալիլի, մօռթիլ-մօռթիլի, նըկարիլ-նըկարիլի, շինիլ-շինիլի։

-Ի վերջավորությամբ ապակատար դերբայն արտահայտում է կատարելի կերպային գաղափար և ունի միայն անվանական գործածություն։

Ծանոթություն.— Խոսվածքը չունի բայական գործածությամբ ապակատար դերբայի առանձին ձև։ Ապառնի և անցյալ ապառնի ժամանակաձևերի իմաստն արտահայտվում է հարկադրական ապառնի և անցյալ ժամանակներով (օրինակները տե՛ս խոնարհման համակարգում)։

168. Վաղակատար դերբայը կազմվում է -էլ վերջավորությամբ, որը դրվում է ներկայի կամ կատարյալի բայահիմքի վրա։ Վաղակատար դերբայի -էլ վերջավորությունը ծագում է գրաբարյան անցյալ դերբայից՝ -եալ>էլ փոփոխությամբ։

Ի խոնարհման բայերի վաղակատար դերբայը կազմելու համար -էլ վերջավորությունը դրվում է ներկայի բայահիմքի վրա՝ ինչպես՝ ասիլ-ասէլ, ապրիլ-ապրէլ, խըմիլ-խմէլ, կապիլ-

կապել, նըկարիլ-նըկարել, պիրիլ-պիրել, փըռնիլ-փըռնել, քամիլ-քամել, օխնիլ-օխնել։

Ա խոնարհման պարզ, ինչպես նաև ան սոսկածանցն ունեցող բայերի վաղակատար դերբայի կազմության համար -էլ վերջավորությունը դրվում է կատարյալի վերջավոր (ցոյական) հիմքի վրա, ինչպես՝ էրէվալ-էրէվացէլ, ըրվանալ-ըրվացէլ, կառթալ-կառթացէլ, կյöղանալ-կյöղացէլ, կյöռնäլ-կյöռնäցէլ, հըվատալ-հըվատացէլ, մընալ-մընացել, մօտանալ-մօտացէլ, քյընäլ-քյընäցէլ, օռնալ-օռնացէլ։

Ն և չ սոսկածանցներն ունեցող բայերի վաղակատար դերբայը սովորաբար կազմվում է կատարյալի արմատական բայահիմքից, ինչպես՝ առնիլ-առէլ, թըռչիլ-թըռէլ, հըսնիլ-հըսէլ, ուռչիլ-ուռէլ, փախչիլ-փախէլ, քըթնիլ-քըթէլ։

Վաղակատար դերբայն արտահայտում է ավարտված կերպային գաղափար և ունի միայն բայական գործածություն։ Վաղակատար դերբայով և օժանդակ բայերի հարադրությամբ կազմըվում են վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերը։

169. Հարակատար դերբայը կազմվում է -ած||äծ վերջավորությամբ։ -Ած||äծ վերջավորությունը դրվում է ներկայի կամ կատարյալի բայահիմքին վաղակատարի կանոնով, ինչպես՝ թափիլ-թափած, խըմիլ-խըմած, նըստիլ-նըստած, պիրիլ-պիրած, կառթալ-կըռթացած, հըվատալ-հըվատացած, մընալ-մընացած, քյընäլ-քյնäցäծ։

Հակառակ ժամանակակից հայերենին, ուր հարակատար դերբայը մասամբ է մասնակցում դիմավոր ձևերի կազմությանը, Շամշադին—Դիլիջանի խոսվածքում այդ դերբայով և օժանդակ բայով հարադրված հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևերը դեռևս լայն կիրառություն ունեն։ Բայական գործածությամբ հարակատար դերբայն արտահայտում է ավարտված գործողության կերպային գաղափար։

Հարակատար դերբայն ունի նաև անվանական գործածություն։ Այս գործածությամբ հարակատարն արտահայտում է գործողության վիճակի գաղափար՝ նախադասության մեջ ունենալով որոշչի, ձևի պարագայի պաշտոն։

Քանի որ խոսվածքում հարակատար դերբայն արտահայտում է և՛ ավարտված գործողության կերպային իմաստ, և՛

վիճակի գաղափար, ուստի այն կարելի է անվանել կերպային-վիճակային դերբայ։

170. Ենթակայական դերբայը կազմվում է –ող||օղ վերջավորությամբ։ Ա և ի խոնարհման պարզ և ան սոսկածանցն ունեցող բայերի ենթակայական դերբայը սովորաբար կազմվում է վաղակատար և հարակատար դերբայների կազմության կանոնով, ինչպես՝ էփիլ-էփօղ, թակիլ-թակօղ, ըրվանալ-ըրվացօղ, խընգարիլ-խընգարօղ, խափիլ-խափօղ, կՙըրիլ-կՙըրöղ, կառթալ-կառթացօղ, հըվատալ-հըվատացօղ, մընալ-մնացօղ, մօտանալ-մօտացօղ, ուտիլ-ուտօղ, քՙընäլ-քՙընäցöղ։

Ծանոթություն.— Ա խոնարհման պարզ բայերի ենթակայական դերբայը կազմելու համար հաճախ –օղ||öղ վերջավորությունը դրվում է նաև ներկայի բայահիմքի վրա, ինչպես՝ կառթալ-կառթօղ, հըվատալ-հըվատօղ, մընալ-մընօղ, քՙընäլ-քՙընöղ։

Ն և Չ սոսկածանցներն ունեցող բայերի ենթակայական դերբայը կազմելու համար –օղ||öղ վերջավորությունը դրվում է ներկայի բայահիմքի վրա, ինչպես՝ առնիլ-առնօղ, թըռչիլ-թըռչօղ, հըսնիլ-հըսնօղ, ուռչիլ-ուռչօղ, փախչիլ-փախչօղ, քըթնիլ-քըթնօղ։

Ենթակայական դերբայն ունի միայն անվանական գործածություն և ցույց է տալիս գործողություն կատարողի վիճակ։

171. Համակատար դերբայը կազմելու համար –իս վերջավորությունը դրվում է անորոշի բայահիմքի վրա, ինչպես՝ էփիլ-էփիլիս, ըրցնիլ-ըրցնիլիս, խըմիլ-խըմիլիս, կՙöռäլ-կՙöռäլիս, մընալ-մընալիս։

Համակատար դերբայը ցույց է տալիս գլխավոր գործողության չավարտված վիճակը և ունի մակբայական գործածություն։ Համակատար դերբայով կազմում են նաև երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր։

172. Ձևի դերբայը[19] կազմելու համար –էն վերջավորությունը դրվում է անորոշ դերբայի վրա, ինչպես՝ ասիլ-ասիլէն, խօսիլ-խօսիլէն, նըստիլ-նըստիլէն, պիրիլ-պիրիլէն, վազ տալ-վազ տալէն։

Ձևի դերբայը ցույց է տալիս գլխավոր գործողության կատարման ձևը և ունի միայն մակբայական գործածություն։

---

[19] Դերբայական այս ձևերի գործածությունը առանձնապես տարածված է Իջևանի շրջանի գյուղերում։

## 2. ԴՐԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

### ԵՂԱՆԱԿՆԵՐ

*173. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում բայն ունի հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, ենթադրական (պայմանական), հարկադրական և հրամայական։*

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

*174. Սահմանական եղանակն ունի ութ ժամանակաձևեր, որոնցից վեցը բաղադրյալ են՝ ներկա, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ, իսկ երկուսը պարզ՝ անցյալ կատարյալ և անկատար անցյալի երկրորդ ձև։*

*Սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևերը կազմվում են համապատասխան դերբայներով և օժանդակ բայի ներկա ու անցյալ ձևերի հարադրությամբ, իսկ պարզ ձևերը կազմվում են բայահիմքով և դիմային վերջավորություններով։ Այսպես,* ի *խոնարհման բայերի անցյալ կատարյալի համար ունենք* –էցի, –էցիr, –էց, –էցինf, –էցիf, –էցին, *իսկ* ա *խոնարհման պարզ բայերի համար՝* –ացի, –ացիr, –աց, –ացինf, –ացիf, –ացին: *Հիշյալ բոլոր ձևերը դրվում են ներկայի բայահիմքի վրա։*

*Ծանոթություն.— Պատճառական բայերի օրինակով խոսվածքում մի քանի պարզ բայեր անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում ունեն* –ուց *վերջավորությունը (պիրուց, տըվուց)։*

*175. Խոսվածքում օժանդակ բայերի ներկա ձևերն են՝* էմ, էս, ա, էնf, էf, էն, *իսկ օժանդակ բայերի անցյալ ձևերն են՝* ի, իr, էr, ինf, իf, ին:

*Օժանդակ բայի դրական ձևերը սովորաբար դրվում են դերբայից հետո, սակայն երբ տրամաբանական շեշտը նախադասության ստորոգյալից անցնում է ենթակայի վրա, օժանդակ բայը գործածվում է դերբայից առաջ, ինչպես՝ յէս էմ ասէլ, ինքն ա պիրէլ, նա յա տըվէլ ևն։*

*Այժմ պարզ բայերի խոնարհումը ներկայացնենք ըստ սահմանական եղանակի ժամանակաձևերի։*

## Ներկա

| | |
|---|---|
| *նըստըմ էմ* | *մընըմ էմ* |
| *նըստըմ էս* | *մընըմ էս* |
| *նըստըմ ա* | *մընըմ ա* |
| *նըստըմ էնք* | *մընըմ էնք* |
| *նըստըմ էք* | *մընըմ էք* |
| *նըստըմ էն* | *մընըմ էն* |

## Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստըմ ի* | *մընըմ ի* |
| *նըստըմ իր* | *մընըմ իր* |
| *նըստըմ էր* | *մընըմ էր* |
| *նըստըմ ինք* | *մընըմ ինք* |
| *նըստըմ իք* | *մընըմ իք* |
| *նըստըմ ին* | *մընըմ ին* |

## Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *նըստէլ էմ* | *մընացել էմ* |
| *նըստել էս* | *մընացել էս* |
| *նըստել ա* | *մընացել ա* |
| *նըստէլ էնք* | *մընացել էնք* |
| *նըստէլ էք* | *մընացել էք* |
| *նըստէլ էն* | *մընացել էն* |

## Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստէլ ի* | *մընացել ի* |
| *նըստէլ իր* | *մընացել իր* |
| *նըստէլ էր* | *մընացել էր* |
| *նըստէլ ինք* | *մընացել ինք* |
| *նըստէլ իք* | *մընացել իք* |
| *նըստէլ ին* | *մընացէլ ին* |

## Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *նըստած էմ* | *մընացած էմ* |
| *նըստած էս* | *մընացած էս* |
| *նըստած ա* | *մընացած ա* |
| *նըստած էնք* | *մընացած էնք* |

| | |
|---|---|
| *նըստած էք* | *մընացած էք* |
| *նըստած էն* | *մընացած էն* |

Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստած ի* | *մընացած ի* |
| *նըստած իր* | *մընացած իր* |
| *նըստած էր* | *մընացած էր* |
| *նըստած ինք* | *մընացած ինք* |
| *նըստած իք* | *մընացած իք* |
| *նըստած ին* | *մընացած ին* |

Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *նըստէցի* | *մընացի* |
| *նըստէցիր* | *մընացիր* |
| *նըստէց* | *մընաց* |
| *նըստէցինք* | *մընացինք* |
| *նըստէցիք* | *մընացիք* |
| *նըստէցին* | *մընացին* |

*Ծանոթություն.— Անկատար անցյալ պարզ ժամանակաձևի խոնարհումը ամբողջությամբ նույնն է ըղձական անցյալ ձևերին. դրանց տարբերությունը երևում է միայն խոսքի մեջ։*

## ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

*176. Ըղձական եղանակն ունի երկու պարզ ժամանակ՝ ապառնի և անցյալ։ Ըղձական ապառնի և անցյալ ժամանակների կազմության համար դիմային վերջավորությունները դրվում են անկատարի բայահիմքի վրա։*

*Ըղձական ապառնիի եզակի երրորդ և ըղձական անցյալի առաջին դեմքերը խոսվածքում առանձին վերջավորություններ չունեն, իսկ ըղձական անցյալի երկրորդ և երրորդ դեմքերն ունեն միևնույն* **-r** *վերջավորությունը։*

*Ըղձական ապառնիի խոնարհման ժամանակ* **ա** *խոնարհիչը բոլոր վերջավորություններից առաջ և եզակի երրորդ դեմքում մնում է անփոփոխ, մինչդեռ* **է** *խոնարհիչը եզակի երրորդ դեմքում դառնում է* **ի**:

*Ըղձական անցյալի խոնարհման ժամանակ թե՛* **ի** *և թե՛* **ա**

*խոնարհիչները ադվում են (բացառությամբ և խոնարհման բայերի եզակի երրորդ դեմքի)։*

*Ըղձական եղանակի խոնարհումը հետևյալ պատկերն ունի.*

Ապառնի

| | |
|---|---|
| *նըստեմ* | *մընամ* |
| *նըստես* | *մընաս* |
| *նըստի* | *մընա* |
| *նըստենք* | *մընանք* |
| *նըստեք* | *մընաք* |
| *նըստեն* | *մընան* |

Անցյալ

| | |
|---|---|
| *նըստի* | *մընի* |
| *նըստիր* | *մընիր* |
| *նըստէր* | *մընար* |
| *նըստինք* | *մընինք* |
| *նըստիք* | *մընիք* |
| *նըստին* | *մընին* |

## ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

*177. Ենթադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակները կազմելու համար* կը||կ *եղանակիչը դրվում է ըղձական եղանակի համապատասխան ժամանակների վրա։* Կը-ն *դրվում է բաղաձայնով սկսվող բառերի վրա, իսկ* կ-ն՝ *ձայնավորով սկսվող բառերի վրա։*

*Ենթադրական եղանակի խոնարհումը հետևյալ պատկերն ունի.*

Ապառնի

| | |
|---|---|
| *կընըստեմ* | *կըմընամ* |
| *կընըստես* | *կըմընաս* |
| *կընըստի* | *կըմընա* |
| *կընըստենք* | *կըմընանք* |
| *կընըստեք* | *կըմընաք* |
| *կընըստեն* | *կըմընան* |

### Անցյալ

| | |
|---|---|
| կընըստի | կըմընի |
| կընըստիր | կըմընիր |
| կընըստէր | կըմընար |
| կընըստինք | կըմընինք |
| կընըստիք | կըմընիք |
| կընըստին | կըմընին |

## ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

*178. Հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակների կազմության համար օգտագործվում է անորոշ դերբայը և* դ *եղանակիչը, որը դրվում է օժանդակ բայի ձևերի վրա։ Խոսվածքի* դ *մասնիկը ժամանակակից հայերենի* պիտի *եղանակիչի կրճատված ձևն է։*

*Ինչպես արդեն նշել ենք, անորոշ դերբայով և* դ *եղանակիչով կազմված ձևերը արտահայտում են ոչ միայն հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակների, այլև սահմանական եղանակի կատարելի ներկա և կատարելի անցյալ ժամանակաձևերի իմաստ։*

*Հարկադրական եղանակի խոնարհումը հետևյալ պատկերն ունի.*

### Ապառնի

| | |
|---|---|
| նըստիլ դէմ | մընալ դէմ |
| նըստիլ դէս | մընալ դէս |
| նըստիլ դի | մընալ դի |
| նըստիլ դէնք | մընալ դէնք |
| նըստիլ դէք | մընալ դէք |
| նըստիլ դէն | մընալ դէն |

### Անցյալ

| | |
|---|---|
| նըստիլ դի | մընալ դի |
| նըստիլ դիր | մընալ դիր |
| նըստիլ դէր | մընալ դէր |
| նըստիլ դինք | մընալ դինք |
| նըստիլ դիք | մընալ դիք |
| նըստիլ դին | մընալ դին |

*179. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում թե՛ ի և թե՛ ա խոնարհման բայերի եզակի հրամայականը չունի որևէ վերջավորություն. այն ձևավորվում է ներկայի բայահիմքով և համապատասխան խոնարհիչով, ինչպես՝ էփիլ-է՛փի, թափիլ-թա՛փի, խընգարիլ-խընգա՛րի, խափիլ-խա՛փի, նըստիլ-նըստի՛, քամիլ-քա՛մի, քանդիլ-քա՛նդի, կառթալ-կա՛ռթա, հըվատալ-հըվա՛տա, մընալ-մընա՛, քյընա̈լ-քյընա̈ (նաև՝ քյա̈):*

*Մի շարք բայերի եզակի հրամայականը կազմվում է առանց խոնարհիչի: Այս դեպքում հրամայականը նույնանում է կատարյալի բայահիմքի հետ, ինչպես՝ կյա̈լ(<գալ)-յէ՛կ, պա̈նա̈լ(<բանալ)-պա̈՛ց, պիրիլ(<բերել)-պի՛‖պէ՛, ունիլ(<ունել)-կա՛լ, ուտիլ(<ուտել)-կէ՛ր, տալ(<տալ)-տո՛ւ:*

*Ածիլ-ա՛ծա, աղիլ-ա՛ղա, ասիլ-ա՛սա բայերի եզակի հրամայականում տեղի է ունեցել խոնարհիչի փոփոխություն:*

**Ա** *խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը կազմելու համար կատարյալի ցոյական բայահիմքին ավելանում է* **-էք** *վերջավորությունը, ինչպես՝ կառթալ(<կարդալ)-կառթա՛ցէք, կյօ̈ռա̈լ(<գոռալ)-կյօ̈ռա̈՛ցէք, հըվատալ(<հավատալ)-հըվատա՛ցէք, մըխկըտալ(<մղկտալ)-մըխկըտա՛ցէք, մընալ(<մնալ)-մընա՛ցէք, մըռմըռալ-մըռմըռա՛ցէք, տօ̈ղա̈լ(<դողալ)-տօ̈ղա̈ցէք, քյընա̈լ(<գնալ)-քյընա̈՛ցէք:*

**Ի** *խոնարհման պարզ բայերի հրամայականը կազմելու համար* **-էք** *վերջավորությունը դրվում է ներկայի կամ անցյալի ցոյական բայահիմքերի վրա: Պետք է նշել, որ անցյալի հիմքի* **ց** *ցուցիչից առաջ* **ի** *խոնարհիչը դառնում է* **է**, *ինչպես՝ էփիլ (<եփել)-է՛փէք‖իփէ՛ցէք, խափիլ(<խաբել)-խա՛փէք‖խըփէ՛ցէք, խըրատիլ-խըրա՛տէք‖խըրատէ՛ցէք, ծակիլ( < ծակել)-ծա՛կէք‖ծըկէ՛ցէք, կազմիլ(<կազմել)-կա՛զմէք‖կըզմէ՛ցէք, կապիլ(< կապել)-կա՛պէք‖կըպէ՛ցէք, կօտրիլ(<կոտրել)կօ՛տրէք‖կօտրէ՛-ցէք:*

## 3. ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ[20]

*180. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են*

[20] Տե՛ս **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 309—342:

*Հետևյալ բայածանցները՝ կերպային-բառակազմական, սոսկածանցներ և սեռային-քերականական։*

## ԿԵՐՊԱՅԻՆ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱԾԱՆՑՆԵՐ

*181. Խոսվածքի կերպային-բառակազմական ածանցներն են՝* **օտ||öտ, ատ, կօտ,** *որոնք դրվում են բայահիմքի և անորոշ դերբայի* **-իլ** *վերջավորության միջև։ Այս բայերը սովորաբար արտահայտում են սաստկական կամ կրկնվող գործողության իմաստ, ինչպես՝ կյիրիլ(<գրել)-կյիրöտիլ, ծալիլ-ծըլօտիլ, ծակիլ-ծըկօտիլ, կյիպտիլ(<կապտել)-կյիպտöտիլ, կընանչիլ(<կանաչել)-կընընչկօտիլ, կօտրիլ-կօտրատիլ, նըստիլ-նըստօտիլ, մօռթիլ( < մորթել)-մօռթօտիլ, ճäռթիլ( < ջարդել)-ճըռթöտիլ, ճընջիլ(<ջնջել)-ճընջöտիլ։*

**Օտ||öտ** *ածանցով կազմված մի քանի բայեր սաստկական, կրկնվող իմաստի հետ միասին ցույց են տալիս նաև տվյալ գործողության ոչ ավարտուն վիճակը, ինչպես՝ պըռըվօտիլ (գործածվում է առավելապես ծառերի, բույսերի համար) «լրիվ չեն պառավել», սիպտըկօտիլ «լրիվ չեն սպիտակել», տըղնօտիլ «լրիվ չեն դեղնել»։*

*Կերպային-բառակազմական ածանցներ ունեցող բայերի խոնարհումը նույնն է համապատասխան պարզ բայերի հետ։ Միայն դերբայական կամ դիմային վերջավորություններից առաջ պահպանվում են ածանցները, ինչպես՝ նստօտըմ էն, նըստօտէլ էն, նըստօտած էն, նըստօտէն, կընըստօտէն, նըստօտիլ պէն, կօտրäտըմ էմ, կօտրատէլ էմ, կօտրատէն ևն։*

## ՍՈՍԿԱԾԱՆՑՆԵՐ

*182. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են հետևյալ սոսկածանցները՝* **-ան, -ն, -չ,** *որոնք ընկած են անորոշ դերբայի* **-իլ, -ալ** *վերջավորություններից առաջ, ինչպես՝ առնիլ<առնուլ, պäնäլ<բանալ, պըցրäն·լ<բարձրանալ, քըթնիլ<գտնել, թընգանալ<թանկանալ, թըռչիլ<թռչիլ, լղանալ<լողանալ, հըսկանալ<հասկանալ, հըստանալ<հաստանալ, մըէռնիլ<մեռանել, մըտնիլ<մտանել, մօտանալ<մոտենալ, ուռչիլ<ուռչիլ, պըռծընիլ<պրծանել, տէսնիլ<տեսանել, փախչիլ<փախչել։*

Ներկայի բայահիմքից կազմված ձևերում բոլոր սոսկածանցները մնում են անփոփոխ, իսկ կատարյալի հիմքից կազմված դերբայներում և դրանցով համադրված դիմավոր ձևերում –ան սոսկածանցը դառնում է –ց, իսկ –ն և –ղ ածանցները սըղվում են։

Հակառակ ի և ա խոնարհման պարզ բայերի՝ սոսկածանցավոր բայերի հրամայական եղանակի և՛ եզակին, և՛ հոգնակին կազմվում են կատարյալի հիմքից (ցոյական կամ արմատական)։ Այս դեպքում եզակի հրամայականը ունի –ի, իսկ հոգնակի հրամայականը՝ –էf վերջավորությունները, ինչպես՝ հըսնիլ(<հասնել)-հա՛սի||հա՛սէք, հըռանալ(<հեռանալ)-հըռա՛ցի||հըռա՛ցէք, հօվանալ-հօվա՛ցի||հօվա՛ցէք, մօտանալ(<մօտենալ)-մօտա՛ցի||մօտա՛ցէք, կամ՝ մուտա՛ցի||մուտա՛ցէք, ուրխանալ(<ուրախանալ)-ուրխա՛ցի||ուրխա՛ցէք։

Սոսկածանցավոր բայերի անցյալ կատարյալի դիմային վերջավորությունները նման են ժամանակակից հայերենին՝ –ա, –ար, –ավ, –անf, –աf, –ան:

Այժմ ներկայացնենք սոսկածանցավոր բայերի խոնարհման ընդհանուր պատկերը.

## Դերբայներ

| | | | |
|---|---|---|---|
| Անորոշ | լըվանալ | հասնիլ | թըռչիլ |
| Անկատար | լըվանըմ | հասնըմ | Թըռչըմ |
| Ապակատար | լըվանալի | հասնիլի | թըռչիլի |
| Վաղակատար | լըվացէլ | հասէլ | թըռէլ |
| Հարակատար | լըվացած | հասած | թըռած |
| Ենթակայական | լըվացող | հասնող | թըռչող |
| Համակատար | լըվանալիս | հասնիլիս | թըռչիլիս |
| Ձևի | լըվանալէն | հասնիլէն | թըռչիլէն |

## Սահմանական եղանակ

### Ն ե ր կ ա

| | | |
|---|---|---|
| լըվանըմ էմ | հասնըմ էմ | թըռչըմ էմ |
| լըվանըմ էս | հասնըմ էս | թըռչըմ էս |
| լըվանըմ ա | հասնըմ ա | թըռչըմ ա |
| լըվանըմ էնք | հասնըմ էնք | թըռչըմ էնք |
| լըվանըմ էք | հասնըմ էք | թըռչըմ էք |
| լըվանըմ էն | հասնըմ էն | թըռչըմ էն |

## Անկատար անցյալ

| | | |
|---|---|---|
| *լըվանըմ ի* | *հասնըմ ի* | *թըռչըմ ի* |
| *լըվանըմ իր* | *հասնըմ իր* | *թըռչըմ իր* |
| *լըվանըմ էր* | *հասնըմ էր* | *թըռչըմ էր* |
| *լըվանըմ ինք* | *հասնըմ ինք* | *թըռչըմ ինք* |
| *լըվանըմ իք* | *հասնըմ իք* | *թըռչըմ իք* |
| *լըվանըմ ին* | *հասնըմ ին* | *թըռչըմ ին* |

## Վաղակատար ներկա

| | | |
|---|---|---|
| *լըվացել էմ* | *հասել էմ* | *թըռել էմ* |
| *լըվացել էս* | *հասել էս* | *թըռել էս* |
| *լըվացել ա* | *հասել ա* | *թըռել ա* |
| *լըվացել էնք* | *հասել էնք* | *թըռել էնք* |
| *լըվացել էք* | *հասել էք* | *թըռել էք* |
| *լըվացել էն* | *հասել էն* | *թըռել էն* |

## Վաղակատար անցյալ

| | | |
|---|---|---|
| *լըվացել ի* | *հասել ի* | *թըռել ի* |
| *լըվացել իր* | *հասել իր* | *թըռել իր* |
| *լըվացել իր* | *հասել էր* | *թըռել էր* |
| *լըվացել ինք* | *հասել ինք* | *թըռել ինք* |
| *լըվացել իք* | *հասել իք* | *թըռել իք* |
| *լըվացել ին* | *հասել ին* | *թըռել ին* |

## Հարակատար ներկա

| | | |
|---|---|---|
| *լըվացած էմ* | *հասած էմ* | *թըռած էմ* |
| *լըվացած էս* | *հասած էս* | *թըռած էս* |
| *լըվացած ա* | *հասած ա* | *թըռած ա* |
| *լըվացած էնք* | *հասած էնք* | *թըռած էնք* |
| *լըվացած էք* | *հասած էք* | *թըռած էք* |
| *լըվացած էն* | *հասած էն* | *թըռած էն* |

## Հարակատար անցյալ

| | | |
|---|---|---|
| *լըվացած ի* | *հասած ի* | *թըռած ի* |
| *լըվացած իր* | *հասած իր* | *թըռած իր* |
| *լըվացած էր* | *հասած էր* | *թըռած էր* |
| *լըվացած ինք* | *հասած ինք* | *թըռած ինք* |

| | | |
|---|---|---|
| *լըվացած իք* | *հասած իք* | *թըռած իք* |
| *լըվացած ին* | *հասած ին* | *թըռած ին* |

### Անցյալ կատարյալ

| | | |
|---|---|---|
| *լըվացա* | *հասա* | *թըռա* |
| *լըվացար* | *հասար* | *թըռար* |
| *լըվացավ* | *հասավ* | *թըռավ* |
| *լըվացանք* | *հասանք* | *թըռանք* |
| *լըվացաք* | *հասաք* | *թըռաք* |
| *լըվացան* | *հասան* | *թըռան* |

## Ըղձական եղանակ

### Ա պ ա ռ ն ի

| | | |
|---|---|---|
| *լըվանամ* | *հասնեմ* | *թըռչեմ* |
| *լըվանաս* | *հասնես* | *թըռչես* |
| *լըվանա* | *հասնի* | *թըռչի* |
| *լըվանանք* | *հասնենք* | *թըռչենք* |
| *լըվանաք* | *հասնեք* | *թըռչեք* |
| *լըվանան* | *հասնեն* | *թըռչեն* |

### Ա ն ց յ ա լ

| | | |
|---|---|---|
| *լըվանի* | *հասնի* | *թըռչի* |
| *լըվանիր* | *հասնիր* | *թըռչիր* |
| *լըվանար* | *հասնէր* | *թըռչէր* |
| *լըվանինք* | *հասնինք* | *թըռչինք* |
| *լըվանիք* | *հասնիք* | *թըռչիք* |
| *լըվանին* | *հասնին* | *թըռչին* |

## Ենթադրական եղանակ

### Ա պ ա ռ ն ի

| | | |
|---|---|---|
| *կըլըվանամ* | *կըհասնեմ* | *կըթըռչեմ* |
| *կըլըվանաս* | *կըհասնես* | *կըթըռչես* |
| *կըլըվանա* | *կըհասնի* | *կըթըռչի* |
| *կըլըվանանք* | *կըհասնենք* | *կըթըռչենք* |
| *կըլըվանաք* | *կըհասնեք* | *կըթըռչեք* |
| *կըլըվանան* | *կըհասնեն* | *կըթըռչեն* |

Ա ն ց յ ա լ

| | | |
|---|---|---|
| կըլըվանի | կըհասնի | կըթըռչի |
| կըլըվանիր | կըհասնիր | կըթըռչիր |
| կըլըվանար | կըհասնէր | կըթըռչէր |
| կըլըվանինք | կըհասնինք | կըթըռչինք |
| կըլըվանիք | կըհասնիք | կըթըռչիք |
| կըլըվանին | կըհասնին | կըթըռչին |

Հարկադրական եղանակ

Ա պ ա ռ ն ի

| | | |
|---|---|---|
| լըվանալ դէմ | հասնիլ դէմ | թըռչիլ դէմ |
| լըվանալ դէս | հասնիլ դէս | թըռչիլ դէս |
| լըվանալ դի | հասնիլ դի | թըռչիլ դի |
| լըվանալ դէնք | հասնիլ դէնք | թըռչիլ դէնք |
| լըվանալ դէք | հասնիլ դէք | թըռչիլ դէք |
| լըվանալ դէն | հասնիլ դէն | թըռչիլ դէն |

Ա ն ց յ ա լ

| | | |
|---|---|---|
| լըվանալ դի | հասնիլ դի | թըռչիլ դի |
| լըվանալ դիր | հասնիլ դիր | թըռչիլ դիր |
| լըվանալ դէր | հասնիլ դէր | թըռչիլ դէր |
| լըվանալ դինք | հասնիլ դինք | թըռչիլ դինք |
| լըվանալ դիք | հասնիլ դիք | թըռչիլ դիք |
| լըվանալ դին | հասնիլ դին | թըռչիլ դին |

Հրամայական եղանակ

| Ե զ ա կ ի | Հ ո գ ն ա կ ի |
|---|---|
| լըվա՛ցի, հա՛սի, թըռի՛ | լըվա՛ցէք, հա՛սէք, թըռէ՛ք |

## ՍԵՌԱՅԻՆ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԾԱՆՑՆԵՐ

183. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում սեռային-քերականական ածանցները երկուսն են՝ վ և ց-ն։ Վ ածանցով կազմում են կրավորական, իսկ ց ածանցով՝ պատճառական բայեր։

## ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

184. *Խոսվածքում գործածվող* վ *ածանցով բայերը թեև շարահյուսական մակարդակում ստեղծում են կրավորական, անդրադարձ և փոխադարձ սեռերի հակադրություն, սակայն ձևաբանական մակարդակում սեռերի այդպիսի զանազանություն չկա։ Ձևաբանական մակարդակում* վ *ածանցով բայերն ունեն անանցողականություն, որով հակադրվում են անցողական բայերին։*

*Կրավորական բայեր կազմելու համար* վ *ածանցն անմիջապես դրվում է խոնարհիչից առաջ։ Մնացած բոլոր ածանցները նախորդում են* վ-*ին։ Խոսվածքում կրավորական բայեր կազմըվում են ներգործական սեռի բայերից։ Պետք է նշել, որ թե՛* ի *և թե՛* ա *խոնարհման բայերից կրավորական կազմելու համար* վ *ածանցը դրվում է միայն ներկայի բայահիմքի վրա, ինչպես՝ աղիլ(<աղալ)-աղվիլ, խըմիլ-խըմվիլ, կառթալ(<կարդալ)-կառթվալ, կյըզիլ(<գզել)-կյըզվիլ, կյըրիլ(<գրել)-կյըրվիլ, պիրիլ(<բերել)-պիրվիլ, փըռնիլ(<բռնել)-փըռնըվիլ։*

*Կրավորական բայերի խոնարհումը կատարվում է* ի *և* ա *խոնարհման պարզ բայերի նման։ Միայն դերբայական կամ դիմային վերջավորություններից առաջ պահպանվում է* վ *ածանցը, ինչպես՝ փըռնըվըմ էն, փըռնըվէլ էն, փըռնըվէցին, փըռնըված էն, փըռնըվէն, կըփըռնըվէն, փըռնըվիլ չէն, կառթվըմ ա, կըռթացվէլ ա, կըկըռթացվի ևն։*

## ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐ

185. *Շամշադին—Դիլիջանի խոսվածքում պատճառական բայեր կազմվում են* ցըն *ածանցով, որը կատարյալի հիմքից կազմված ձևերում փոխվում է* ցըր-*ի, ինչպես՝ խըմըցընիլ-խըմըցըրէլ, հըվըտըցընիլ-հըվըտըցըրէլ, հասցընիլ-հասցըրէլ, խօրացընիլ-խօրացըրէլ, նըստըցընիլ-նըտըցըրէլ, վըխցընիլ-վըխցըրէլ։*

Ցըն *ածանցով ներգործական սեռի բայերն ստանում են պատճառական, իսկ չեզոք սեռի բայերը՝ ներգործական սեռի իմաստ։ Սեռային այդ տարբերությունները, սակայն, չեն առաջացնում խոնարհման տարբերություններ։ Թե՛ պատճառական և թե՛ ներգործական սեռի իմաստով գործածվող պատճառական բայերի* ցըն *ածանցը ներկայի հիմքից կազմված դերբայներում և սրանցով բաղադրված ժամանակաձևերում պահպան-*

վում է, իսկ կատարյալի հիմքից կազմված բոլոր ձևերում տեղի է ունենում հիմքակազմիչի փոփոխություն (ն>ր), եզակի հրամայականն ամեն դեպքում ունի –ու վերջավորությունը։

Պատճառական բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքն ունի խոսվածքին յուրահատուկ –ուց վերջավորությունը, իսկ եզակի առաջին և երկրորդ ու հոգնակի բոլոր դեմքերի վերջավորությունները նման են ժամանակակից հայերենի համապատասխան բայերի անցյալ կատարյալին։

Ծանոթություն.— Առանձին դեպքերում առոկածանցավոր բայերի նմանությամբ պատճառական բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքն ունի նաև –ավ վերջավորությունը, ինչպես՝ սըվըցըրավ (սևացրեց), սüւրüնըցըրավ (սիրունացրեց)։

Խոսվածքում պատճառական բայեր են կազմվում նաև տալ բառով, ինչպես՝ խօսիլ տալ, կառթալ տալ, պիրիլ տալ, սիրիլ տալ, փըռնիլ տալ։ Պատճառականի այս ձևի մեջ միշտ խոնարհվում է տալ բաղադրիչը։

Պատճառական բայերի խոնարհումը հետևյալ պատկերն ունի.

**Դերբայներ**

| | | |
|---|---|---|
| Անորոշ | նըստըցընիլ | մընացընիլ |
| Անկատար | նըստըցընըմ | մընացընըմ |
| Ապակատար | նըստըցընիլի | մընացընիլի |
| Վաղակատար | նըստըցըրէլ | մընացըրէլ |
| Հարակատար | նըստըցըրած | մընացըրած |
| Ենթակայական | նըստըցընօղ | մընացընօղ |
| Համակատար | նըստըցընիլիս | մընացընիլիս |
| Ձևի | նըստըցընիլէն | մընացընիլէն |

**Սահմանական եղանակ**

*Ն ե ր կ ա*

| | |
|---|---|
| նըստըցընըմ էմ | մընացընըմ էմ |
| նըստըցընըմ էս | մընացընըմ էս |
| նըստըցընըմ ա | մընացընըմ ա |
| նըստըցընըմ էնք | մընացընըմ էնք |
| նըստըցընըմ էք | մընացընըմ էք |
| նըստըցընըմ էն | մընացընըմ էն |

## Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստըցընում ի* | *մընացընում ի* |
| *նըստըցընում իր* | *մընացընում իր* |
| *նըստըցընում էր* | *մընացընում էր* |
| *նստըցընում ինք* | *մընացընում ինք* |
| *նըստըցընում իք* | *մընացընում իք* |
| *նըստըցընում ին* | *մնացընում ին* |

## Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *նըստըցըրել էմ* | *մընացըրել էմ* |
| *նըստըցըրել էս* | *մընացըրել էս* |
| *նըստըցըրել ա* | *մընացըրել ա* |
| *նըստըցըրել էնք* | *մընացըրել էնք* |
| *նըստըցըրել էք* | *մընացըրել էք* |
| *նըստըցըրել էն* | *մընացըրել էն* |

## Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստըցըրել ի* | *մընացըրել ի* |
| *նըստըցըրել իր* | *մընացըրել իր* |
| *նըստըցըրել էր* | *մընացըրել էր* |
| *նըստըցըրել ինք* | *մընացըրել ինք* |
| *նըստըցըրել իք* | *մընացըրել իք* |
| *նըստըցըրել ին* | *մընացըրել ին* |

## Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *նըստըցըրած էմ* | *մընացըրած էմ* |
| *նըստըցըրած էս* | *մընացըրած էս* |
| *նըստըցըրած ա* | *մընացըրած ա* |
| *նըստըցըրած էնք* | *մընացըրած էնք* |
| *նըստըցըրած էք* | *մընացըրած էք* |
| *նըստըցըրած էն* | *մընացըրած էն* |

## Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստըցըրած ի* | *մընացըրած ի* |
| *նըստըցըրած իր* | *մընացըրած իր* |
| *նըստըցըրած էր* | *մընացըրած էր* |
| *նըստըցըրած ինք* | *մընացըրած ինք* |

| | |
|---|---|
| *նըստըցրած իք* | *մընացըրած իք* |
| *նըսըտըցըրած ին* | *մընացըրած ին* |

### Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *նըստըցըրի* | *մընացըրի* |
| *նըստըցըրիր* | *մընացըրիր* |
| *նըստըցըրուց* | *մընացըրուց* |
| *նըստըցըրինք* | *մընացըրինք* |
| *նըստըցըրիք* | *մընացըրիք* |
| *նըստըցըրին* | *մընացըրին* |

## Ըղձական եղանակ

### Ա պ ա ռ ն ի

| | |
|---|---|
| *նըստըցընեմ* | *մընացընեմ* |
| *նըստըցընես* | *մընացընես* |
| *նըստըցընի* | *մընացընի* |
| *նըստըցընենք* | *մընացընենք* |
| *նըստըցընեք* | *մընացընեք* |
| *նըստըցընեն* | *մընացընեն* |

### Ա ն ց յ ա լ

| | |
|---|---|
| *նըստըցընի* | *մընացընի* |
| *նըստըցընիր* | *մընացընիր* |
| *նըստըցըներ* | *մընացըներ* |
| *նըստըցընինք* | *մընացընինք* |
| *նըստըցընիք* | *մընացընիք* |
| *նըստըցընին* | *մընացընին* |

## Ենթադրական եղանակ

### Ա պ ա ռ ն ի

| | |
|---|---|
| *կընըստըցընեմ* | *կըմընացընեմ* |
| *կընըստըցընես* | *կըմընացընես* |
| *կընըստըցընի* | *կըմընացընի* |
| *կընըստըցընենք* | *կըմընացընենք* |
| *կընըստըցընեք* | *կըմընացընեք* |
| *կընըստըցընեն* | *կըմընացընեն* |

### Անցյալ

| | |
|---|---|
| կընըստըցընի | կըմընացընի |
| կընըստըցընիր | կըմընացընիր |
| կընըստըցընէր | կըմընացընէր |
| կընըստըցընինք | կըմընացընինք |
| կընըստըցընիք | կըմընացընիք |
| կընըստըցընին | կըմընացընին |

## Հարկադրական եղանակ

### Ապառնի

| | |
|---|---|
| նըստըցընիլ դէմ | մընացընիլ դէմ |
| նըստըցընիլ դէս | մընացընիլ դէս |
| նըստըցընիլ դի | մընացընիլ դի |
| նըստըցընիլ դէնք | մընացընիլ դէնք |
| նըստըցընիլ դէք | մընացընիլ դէք |
| նըստըցընիլ դէն | մընացընիլ դէն |

### Անցյալ

| | |
|---|---|
| նըստըցընիլ դի | մընացընիլ դի |
| նըստըցընիլ դիր | մընացընիլ դիր |
| նըստըցընիլ դէր | մընացընիլ դէր |
| նըստըցընիլ դինք | մընացընիլ դինք |
| նըստըցընիլ դիք | մընացընիլ դիք |
| նըստըցընիլ դին | մընացընիլ դին |

## Հրամայական եղանակ

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| նըստըցըրո՛ւ | նըստըցըրէ՛ք |
| մընացըրո՛ւ | մընացըրէ՛ք |

## 4. ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

**186.** Շամշադին—Դիլիջանի խոսվածքում բայերի ժխտական խոնարհումը կազմվում է չ և վէչ մասնիկներով։ Չ-ն գործածվում է բաղադրյալ ժամանակաձևերի և ժամանակների, իսկ

*վէշ-ը՝ պարզ ժամանակաձևերի և ժամանակների ժխտականը կազմելու համար։*

*Սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևերի ժխտականը կազմվում է համապատասխան դերբայներով և օժանդակ բայի ժխտական ձևերով։ Օժանդակ բայի ժխտական ձևերն են. ներկա՝* չէմ, չէս, չի, չէնք, չէք, չէն, *անցյալ՝* չի, չիր, չէր, չինք, չիք, չին։

*Պետք է նշել, որ օժանդակ բայի ժխտական ձևերը և* վէշ *մասնիկը խոսվածքում միշտ ետադաս գործածություն ունեն։*

*Ենթադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակների ժխտական ձևերի իմաստն արտահայտելու համար խոսվածքում գործածում են անորոշ դերբայով և օժանդակ բայերի ժխտականով կազմված ձևերը, իսկ արգելական հրամայականը կազմվում է նույն դերբայով և* մի, միք *մասնիկներով։*

*Ժխտական խոնարհման ամբողջական պատկերը ցույց տալու համար խոնարհենք նըստիլ և մընալ բայերը։*

### Սահմանական եղանակ

| | |
|---|---|
| *նըստըմ չէմ* | *մընըմ չէմ* |
| *նըստըմ չէս* | *մընըմ չէս* |
| *նըստըմ չի* | *մընըմ չի* |
| *նըստըմ չէնք* | *մընըմ չէնք* |
| *նըստըմ չէք* | *մընըմ չէք* |
| *նըստըմ չէն* | *մընըմ չէն* |

### Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստըմ չի* | *մընըմ չի* |
| *նըստըմ չիր* | *մընըմ չիր* |
| *նըստըմ չէր* | *մընըմ չէր* |
| *նըստըմ չինք* | *մընըմ չինք* |
| *նըստըմ չիք* | *մընըմ չիք* |
| *նըստըմ չին* | *մընըմ չին* |

### Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *նըստէլ չէմ* | *մընացէլ չէմ* |
| *նըստէլ չէս* | *մընացէլ չէս* |
| *նըստէլ չի* | *մընացէլ չի* |

| | |
|---|---|
| *նըստել չէնք* | *մընացել չէնք* |
| *նըստել չէք* | *մընացել չէք* |
| *նըստել չէն* | *մընացել չէն* |

### Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստել չի* | *մընացել չի* |
| *նըստել չիր* | *մընացել չիր* |
| *նըստել չէր* | *մընացել չէր* |
| *նըստել չինք* | *մընացել չինք* |
| *նըստել չիք* | *մընացել չիք* |
| *նըստել չին* | *մընացել չին* |

### Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *նըստած չէմ* | *մընացած չէմ* |
| *նըստած չէս* | *մընացած չէս* |
| *նըստած չի* | *մընացած չի* |
| *նըստած չէնք* | *մընացած չէնք* |
| *նըստած չէք* | *մընացած չէք* |
| *նըստած չէն* | *մընացած չէն* |

### Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *նըստած չի* | *մընացած չի* |
| *նըստած չիր* | *մընացած չիր* |
| *նըստած չէր* | *մընացած չէր* |
| *նըստած չինք* | *մընացած չինք* |
| *նըստած չիք* | *մընացած չիք* |
| *նըստած չին* | *մընացած չին* |

### Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *նըստէցի վէչ* | *մընացի վէչ* |
| *նըստէցիր վէչ* | *մընացիր վէչ* |
| *նըստէց վէչ* | *մընաց վէչ* |
| *նըստէցինք վէչ* | *մընացինք վէչ* |
| *նըստէցիք վէչ* | *մընացիք վէչ* |
| *նըստէցին վէչ* | *մընացին վէչ* |

## Ըղձական եղանակ

### Ապառնի

| | |
|---|---|
| *նըստեմ վէչ* | *մընամ վէչ* |
| *նըստես վէչ* | *մընաս վէչ* |
| *նըստի վէչ* | *մընա վէչ* |
| *նըստէնք վէչ* | *մընանք վէչ* |
| *նըստէք վէչ* | *մընաք վէչ* |
| *նըստէն վէչ* | *մընան վէչ* |

### Անցյալ

| | |
|---|---|
| *նըստի վէչ* | *մընի վէչ* |
| *նըստիր վէչ* | *մընիր վէչ* |
| *նըստէր վէչ* | *մընար վէչ* |
| *նըստինք վէչ* | *մընինք վէչ* |
| *նըստիք վէչ* | *մընիք վէչ* |
| *նըստին վէչ* | *մընին վէչ* |

## Ենթադրական եղանակ

### Ապառնի

| | |
|---|---|
| *նըստիլ չէմ* | *մընալ չէմ* |
| *նըստիլ չէս* | *մընալ չէս* |
| *նըստիլ չի* | *մընալ չի* |
| *նըստիլ չէնք* | *մընալ չէնք* |
| *նըստիլ չէք* | *մընալ չէք* |
| *նըստիլ չէն* | *մընալ չէն* |

### Անցյալ

| | |
|---|---|
| *նըստիլ չի* | *մընալ չի* |
| *նըստիլ չիր* | *մընալ չիր* |
| *նըստիլ չէր* | *մընալ չէր* |
| *նըստիլ չինք* | *մընալ չինք* |
| *նըստիլ չիք* | *մընալ չիք* |
| *նըստիլ չին* | *մընալ չին* |

Հարկադրական եղանակ

Ա պ ա ռ ն ի

| | |
|---|---|
| նըստիլ չդէմ | մընալ չդէմ |
| նըստիլ չդէս | մընալ չդէս |
| նըստիլ չդի | մընալ չդի |
| նըստիլ չդէնք | մընալ չդէնք |
| նըստիլ չդէք | մընալ չդէք |
| նըստիլ չդին | մընալ չդին |

Ա ն ց յ ա լ

| | |
|---|---|
| նըստիլ չդի | մընալ չդի |
| նըստիլ չդիր | մընալ չդիր |
| նըստիլ չդէր | մընալ չդէր |
| նըստիլ չդինք | մընալ չդինք |
| նըստիլ չդիք | մընալ չդիք |
| նըստիլ չդին | մընալ չդին |

Հրամայական եղանակ

| Ե զ ա կ ի | Հ ո գ ն ա կ ի |
|---|---|
| նըստիլ մի՛ | նըստիլ մի՛ք |
| մընալ մի՛ | մընալ մի՛ք |

## 5. ԲԱՅԻ ՀԻՄՔԵՐԸ

*187. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում բայերը գործածվում են երեք հիմքերով՝ ներկայի կամ անորոշի, անցյալի կամ կատարյալի և դերբայական կամ բացարձակ։*

*Ներկայի բայահիմքը լինում է աննշույթ և նշույթավոր։ Աննշույթ բայահիմք ունեն ի և ա խոնարհման պարզ, կրավորական և կերպային-բառակազմականածանցներ ունեցող բոլոր բայերը, իսկ նշույթավոր հիմք ունեն բոլոր պատճառական և ռոսկածանցներ ունեցող բայերը։*

*Ներկայի հիմքից (աննշույթ և նշույթավոր) կազմվում են՝*

*ա) ի և ա խոնարհման պարզ և ածանցավոր բայերի անորոշ դերբայը, ինչպես՝ նըստիլ, մընալ, կոտրատիլ, թըռչիլ, կնըրվիլ, մոտանալ, մըտնիլ, խըմըցընիլ են։*

բ) Նույն բայերի անկատար դերբայը, ինչպես՝ նըստըմ, մընըմ, կոտրատըմ, թըռչըմ, մոտանըմ, մըտնըմ, կծըրվըմ, խըմըցընըմ,

գ) Նույն բայերի ըղձական ապառնի և անցյալ ժամանակները, ինչպես՝ նըստէմ||նըստի, մընամ||մընի, կոտրատէմ||կոտրատի, թըռչէմ||թըռչի, մոտանամ||մոտանի, մըտնէմ||մըտնի, կծըրվէմ||կծըրվի, խըմըցընէմ||խըմըցընի,

դ) ի խոնարհման պարզ բայերի վաղակատար և հարակատար դերբայները, ինչպես՝ նըստէլ||նըստած, խըմէլ||խըմած, քընէլ||քընած,

ե) ի խոնարհման պարզ և ածանցավոր բայերի ենթակայական դերբայը, ինչպես՝ նըստիլ-նըստող, կոտրատիլ-կոտրատող, թըռչիլ-թըռչող, մըտնիլ-մըտնող, խըմըցընիլ-խըմըցընող։

Ծանոթություն.— Ա խոնարհման պարզ և ածանցավոր բայերի ենթակայական դերբայը կարող է կազմվել և՛ անկատարի, և՛ կատարյալի բայահիմքերով, ինչպես՝ մընող||մընացող, մոտանող||մոտացող։

Կատարյալի հիմքը լինում է երեք տեսակ՝ ցոյական (նըշույթավոր), ըեական (նշույթավոր) և պարզ արմատական (աննշույթ)։

Կատարյալում ցոյական հիմք ունեն՝

ա) ի, ա խոնարհման պարզ և ան սոսկածանց ունեցող բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևը, ինչպես՝ նըստիլ-նըստէցի, խօսիլ-խօսէցի, մընալ-մընացի, մոտանալ-մոտացա||մուտացա,

բ) Նույն բայերի հոգնակի հրամայականը, ինչպես՝ խօսէցէք, նըստէցէք, մընացէք, մոտացէք||մուտացէք։

Ծանոթություն.— Կերպային-բառակազմական և կրավորական բայերը համապատասխան պարզ բայերի նման անցյալ կատարյալում և հոգնակի հրամայականում ունեն ցոյական հիմք, ինչպես՝ կոտրատիլ-կոտրատէցի, կծըրվիլ-կծըրվէցի, նըստոտիլ-նըստոտէցին;

գ) ա խոնարհման պարզ և -ան սոսկածանցն ունեցող բայերի վաղակատար և հարակատար դերբայները, ինչպես՝ մընալ-մընացէլ||մընացած, մոտանալ-մոտացէլ||մուտացէլ||մոտացած||մուտացած։

Կատարյալում ըեական հիմք ունեն՝

ա) ցըն ածանցն ունեցող բոլոր պատճառական բայերը,

*ինչպես՝ նըստըցընիլ-նըստըցըրէլ||նըստըցըրի||նըստըցըրած, չօ-րացընիլ-չօրացըրէլ||չօրացըրի||չօրացըրած,*

*բ) մի քանի անկանոն բայեր, ինչպես՝ անիլ-արէլ, տանիլ-տարէլ, տընիլ (<դնել)-տըրէլ։*

*Պարզ արմատական հիմք ունեն՝*

*ա) -ն և -չ սոսկածանցներն ունեցող բայերը, ինչպես՝ թըռ-չիլ-թըռէլ, մըտնիլ-մըտէլ, փախչիլ-փախէլ, քըթնիլ-քըթէլ,*

*բ) մի քանի անկանոն բայեր, ինչպես՝ կյյա̈լ(<գալ)-յէկէլ, տալ<տվէլ, ուտիլ<կէրէլ, ըլիլ(<լինել)-ըլիլ, պիրիլ(<բերել)-պէրէլ։*

*Դերբայական կամ բացարձակ հիմքը ամբողջությամբ նույնըն է անորոշ դերբայի հետ, որից կազմվում են ապակատար, համակատար և ժխտ դերբայները, ինչպես՝ նըստիլ-նըստիլի||նըստիլիս||նըստիլէն, մընալ-մընալի||մընալիս||մընալէն ևն։*

## 6. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

*188. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվող անկանոն բայերն ըստ կատարյալի հիմքում կրած փոփոխությունների հիմնականում երկու խմբի են բաժանվում։ Առաջին խմբի մեջ են մտնում այն բայերը, որոնց հիմքը վաղակատար, հարակատար դերբայներում և նրանցով կազմված ժամանակաձևերում, անցյալ կատարյալում և հրամայականում ամբողջությամբ փոխվում է, իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում այնպիսի անկանոնները, որոնց հիմքը նշված ձևերում ենթարկվում է ն>ր, ն>ց հնչյունափոխությունների։ Երկրորդ խմբի մեջ պետք է ընդունել նաև այն անկանոն բայերը, որոնք նույն խոնարհման պարզ բայերի համեմատությամբ անցյալ կատարյալում ունեն տարբեր վերջավորություններ։*

*Ահա այդ բայերի խոնարհման առանձնահատկությունները ըստ նշված խմբերի.*

### Առաջին խումբ

**Կյյա̈լ** *(գալ).*

## Դերբայներ

| | |
|---|---|
| Անորոշ | կյա̈լ |
| Անկատար | |
| Համակատար | կյա̈լիս |
| Ապակատար | կյա̈լի |
| Վաղակատար | յէկէլ |
| Հարակատար | յէկած |
| Ենթակայական | յէկօղ |

*Կյա̈լ բայի խոնարհման անկանոնությունը երևան է գալիս սահմանական եղանակի ներկա, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ, անցյալ կատարյալ ժամանակաձևերում և հրամայականում, ինչպես.*

### *Ներկա*

| | |
|---|---|
| *կյա̈լիս էմ* | *կյա̈լիս էնք* |
| *կյա̈լիս էս* | *կյա̈լիս էք* |
| *կյա̈լիս ա* | *կյա̈լիս էն* |

### Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *կյա̈լիս ի* | *կյա̈լիս ինք* |
| *կյա̈լիս իր* | *կյա̈լիս իք* |
| *կյա̈լիս էր* | *կյա̈լիս ին* |

### Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *յէկէլ էմ* | *յէկէլ էնք* |
| *յէկէլ էս* | *յէկէլ էք* |
| *յէկէլ ա* | *յէկէլ էն* |

### Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *յէկէլ ի* | *յէկէլ ինք* |
| *յէկէլ իր* | *յէկէլ իք* |
| *յէկէլ էր* | *յէկէլ ին* |

### Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *յէկած էմ* | *յէկած էնք* |
| *յէկած էս* | *յէկած էք* |
| *յէկած ա* | *յէկած էն* |

### Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *յէկած ի* | *յէկած ինք* |
| *յէկած իր* | *յէկած իք* |
| *յէկած էր* | *յէկած ին* |

### Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *յէկա* | *յէկանք* |
| *յէկար* | *յէկաք* |
| *յէկավ* | *յէկան* |

### Հրամայական

| | |
|---|---|
| *յէ՛կ* | *յէ՛կէք* |

### Դերբայներ

| | |
|---|---|
| **Անորոշ** | *տալ* |
| **Անկատար\|\|համա-կատար** | *տալիս* |
| **Ապակատար** | *տալի* |
| **Վաղակատար** | *տըվէլ* |
| **Հարակատար** | *տըված* |
| **Ենթակայական** | *տըվօղ* |
| **Ձևի** | *տալէն* |

Տալ *բայի անկանոնությունը երևան է գալիս ներկա, անկատար անցյալ ու անցյալ կատարյալ ժամանակաձևերում, ինչպես.*

### Ներկա

| | |
|---|---|
| *տալիս էմ* | *տալիս էնք* |
| *տալիս էս* | *տալիս էք* |
| *տալիս ա* | *տալիս էն* |

### Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *տալիս ի* | *տալիս ինք* |
| *տալիս իր* | *տալիս իք* |
| *տալիս էր* | *տալիս ին* |

### Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *տըվի* | *տըվինք* |
| *տըվիր* | *տըվիք* |
| *տըվուց\|\|տուվուց* | *տըվին* |

*Տալ բայը անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում ունենում է նաև* տըվավ, իբրև *ձևերը։*

Ուտիլ

### Դերբայներ

| | |
|---|---|
| Անորոշ | *ուտիլ* |
| Անկատար | *ուտըմ* |
| Ապակատար | *ուտիլի* |
| Վաղակատար | *կէրէլ* |
| Հարակատար | *կէրած* |
| Ենթակայական | *ուտօղ* |
| Համակատար | *ուտիլիս.* |
| Ձևի | *ուտիլէն։* |

Ուտիլ *բայի անկանոնությունը երևան է գալիս վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ, անցյալ կատարյալ ժամանակաձևերում և հրամայականում, ինչպես.*

### Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *կէրէլ էմ* | *կէրէլ էնք* |
| *կէրէլ էս* | *կէրէլ էք* |
| *կէրէլ ա* | *կէրէլ էն* |

### Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *կէրէլ ի* | *կէրէլ ինք* |
| *կէրէլ իր* | *կէրէլ իք* |
| *կէրէլ էր* | *կէրէլ ին* |

### Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *կէրած էմ* | *կէրած էնք* |
| *կէրած էս* | *կէրած էք* |
| *կէրած ա* | *կէրած էն* |

### Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *կերած էի* | *կերած էինք* |
| *կերած էիր* | *կերած էիք* |
| *կերած էր* | *կերած էին* |

### Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *կերա* | *կերանք* |
| *կերար* | *կերաք* |
| *կերավ* | *կերան* |

### Հրամայական

| | |
|---|---|
| *կե՛ր* | *կե՛րեք* |

## Երկրորդ խումբ

**Անիլ**

### Դերբայներ

| | |
|---|---|
| Անորոշ | *անիլ* |
| Անկատար | *անում* |
| Ապակատար | *անելի* |
| Վաղակատար | *արել* |
| Հարակատար | *արած* |
| Ենթակայական | *անող* |
| Համակատար | *անելիս* |
| Ժխտ | *անելէն* |

**Անիլ** *բայի խոնարհման անկանոնությունը երևան է գալիս վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ, անցյալ կատարյալ ժամանակաձևերում և հրամայականում, ինչպես.*

### Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *արել եմ* | *արել ենք* |
| *արել ես* | *արել եք* |
| *արել ա* | *արել են* |

### Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *արել ի* | *արել ինք* |
| *արել իր* | *արել իք* |
| *արել էր* | *արել ին* |

### Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *արած եմ* | *արած ենք* |
| *արած ես* | *արած եք* |
| *արած ա* | *արած են* |

### Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *արած ի* | *արած ինք* |
| *արած իր* | *արած իք* |
| *արած էր* | *արած ին* |

### Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *արի* | *արինք* |
| *արիր* | *արիք* |
| *արավ, արուց* | *արին* |

### Հրամայական

| | |
|---|---|
| *ա՛րա* | *ա՛րեք* |

Ըլիլ *(լինել)*.

### Դերբայներ

| | |
|---|---|
| Անորոշ | *ըլիլ* |
| Անկատար | *ըլըմ, լըմ* |
| Ապակատար | *ըլիլի* |
| Վաղակատար | *ըլէլ, լէլ* |
| Հարակատար | *ըլա̈ծ, իլա̈ծ* |
| Ենթակայական | *ըլո̈ղ, իլո̈ղ* |
| Համակատար | *ըլիլիս* |
| Ձևի | *ըլիլէն* |

***Ըլիլ բայի խոնարհման անկանոնությունը երևան է գալիս անցյալ կատարյալ ժամանակաձևում, ինչպես.***

### Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *ըլա̈, իլ* | *ըլա̈նք, իլա̈նք* |
| *ըլա̈ր, իլա̈ր* | *ըլա̈ք, իլա̈ք* |
| *ըլա̈վ, իլա̈վ* | *ըլա̈ն, իլա̈ն* |

**Պիրիլ** *(բերել)*.

### Դերբայներ

| | |
|---|---|
| Անորոշ | *պիրիլ* |
| Անկատար | *պիրըմ* |
| Ապակատար | *պիրիլի* |
| Վաղակատար | *պիրէլ* |
| Հարակատար | *պիրած* |
| Ենթակայական | *պիրօղ* |
| Համակատար | *պիրիլիս* |
| Ձևի | *պիրիլէն* |

**Պիրիլ** *բայի խոնարհման անկանոնությունը երևան է գալիս անցյալ կատարյալ ժամանակաձևում և հրամայականում, ինչպես.*

### Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *պիրա* | *պիրանք* |
| *պիրար* | *պիրաք* |
| *պիրուց, էպիր* | *պիրան* |

### Հրամայական

| | |
|---|---|
| *պի՛, պէ՛* | *պի՛րէք* |

**Տանիլ.**

### Դերբայներ

| | |
|---|---|
| Անորոշ | *տանիլ* |
| Անկատար | *տանըմ* |
| Ապակատար | *տանիլի* |
| Վաղակատար | *տարէլ* |
| Հարակատար | *տարած* |
| Ենթակայական | *տանօղ* |
| Համակատար | *տանիլիս* |
| Ձևի | *տանիլէն* |

Տանիլ *բայի խոնարհման անկանոնությունը երևան է գալիս վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ, անցյալ կատարյալ ժամանակաձևերում և հրամայականում, ինչպես.*

Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *տարել եմ* | *տարել ենք* |
| *տարել ես* | *տարել եք* |
| *տարել ա* | *տարել են* |

Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *տարել ի* | *տարել ինք* |
| *տարել իր* | *տարել իք* |
| *տարել էր* | *տարել ին* |

Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *տարած եմ* | *տարած ենք* |
| *տարած ես* | *տարած եք* |
| *տարած ա* | *տարած են* |

Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *տարած ի* | *տարած ինք* |
| *տարած իր* | *տարած իք* |
| *տարած էր* | *տարած ին* |

Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *տարա* | *տարանք* |
| *տարար* | *տարաք* |
| *տարավ* | *տարան* |

Հրամայական

| | |
|---|---|
| *տա՛ր* | *տա՛րեք* |

Տընիլ *(դնել).*

Դերբայներ

| | |
|---|---|
| Անորոշ | *տընիլ* |
| Անկատար | *տընըմ* |
| Ապակատար | *տընիլի* |

| | |
|---|---|
| Վաղակատար | *տըրէլ* |
| Հարակատար | *տըրած* |
| Ենթակայական | *տընօղ* |
| Համակատար | *տընիլիս* |
| Ձևի | *տընիլէն* |

Տրնիլ *բայի խոնարհման անկանոնությունը երևան է գալիս վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ, անցյալ կատարյալ ժամանակաձևերում և հրամայականում, ինչպես.*

Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *տըրէլ էմ* | *տըրէլ էնք* |
| *տըրէլ էս* | *տըրէլ էք* |
| *տըրէլ ա* | *տըրէլ էն* |

Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *տըրէլ ի* | *տըրէլ ինք* |
| *տըրէլ իր* | *տըրէլ իք* |
| *տըրէլ էր* | *տըրէլ ին* |

Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *տըրած էմ* | *տըրած էնք* |
| *տըրած էս* | *տըրած էք* |
| *տըրած ա* | *տըրած էն* |

Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *տըրած ի* | *տըրած ինք* |
| *տըրած իր* | *տըրած իք* |
| *տըրած էր* | *տըրած ին* |

Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *տըրա* | *տըրանք* |
| *տըրար* | *տըրաք* |
| *տըրավ, տըրուց* | *տըրան* |

Հրամայական

| | |
|---|---|
| *տի՛ր* | *տըրէ՛ք* |

Վախիլ (*վախենալ*).

Դերբայներ

| | |
|---|---|
| Անորոշ | *վախիլ* |
| Անկատար | *վախըմ* |
| Ապակատար | *վախիլի* |
| Վաղակատար | *վըխէցէլ* |
| Հարակատար | *վըխէցած* |
| Ենթակայական | *վըխէցող, վախող* |
| Համակատար | *վախիլիս* |
| Ձևի | *վախիլէն* |

Վախիլ *բայը թեև խոսվածքում ունի պարզ կազմություն, սակայն դրա խոնարհումը մեծ մասամբ կատարվում է* -ան *սոսկածանց ունեցող բայերի օրինակով։* Վախիլ *բայի հիմնական անկանոնությունը երևան է գալիս միայն ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերում ու եզակի հրամայականում, ինչպես՝*

Ներկա

| | |
|---|---|
| *վախըմ էմ* | *վախըմ էնք* |
| *վախըմ էս* | *վախըմ էք* |
| *վախըմ ա* | *վախըմ էն* |

Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *վախըմ ի* | *վախըմ ինք* |
| *վախըմ իր* | *վախըմ իք* |
| *վախըմ էր* | *վախըմ ին* |

Հրամայական

*վա՛խի (վախցի)* *(վըխէ՛ցէք)*

## 7. ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

*189. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվող պակասավոր բայերն են՝ էմ, կամ, ունէմ, ունիլ (ծածկել)։*

էմ, կամ, ունէմ *պակասավոր բայերը խոնարհվում են միայն ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերով, իսկ* ունիլ *բայը՝ կատարյալի հիմքից կազմված ժամանակաձևերով։*

*Էմ օժանդակ բայի խոնարհման պատկերը արդեն տրված է· այստեղ մնում է ներկայացնել* կամ, ունէմ, ունիլ *բայերի խոնարհման ընդհանուր պատկերը·*

**Կամ.**

### Ներկա

| | |
|---|---|
| *կամ* | *կանք* |
| *կաս* | *կաք* |
| *կա* | *կան* |

### Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *կայի* | *կայինք* |
| *կայիր* | *կայիք* |
| *կար* | *կային* |

**Ունէմ.**

### Ներկա

| | |
|---|---|
| *ունէմ* | *ունէնք* |
| *ունէս* | *ունէք* |
| *ունի* | *ունէն* |

### Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *ունի* | *ունինք* |
| *ունիր* | *ունիք* |
| *ունէր* | *ունին* |

**Ունիլ.**

### Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *կալէլ էմ* | *կալէլ էնք* |
| *կալէլ էս* | *կալէլ էք* |
| *կալէլ ա* | *կալէլ էն* |

### Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *կալէլ ի* | *կայէլ ինք* |
| *կալէլ իր* | *կայէլ իք* |
| *կալէլ էր* | *կայէլ ին* |

Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *կալած եմ* | *կալած ենք* |
| *կալած ես* | *կալած եք* |
| *կալած ա* | *կալած են* |

Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *կալած ի* | *կալած ինք* |
| *կալած իր* | *կալած իք* |
| *կալած էր* | *կալած ին* |

Անցյալ կատարյալ

| | |
|---|---|
| *կալա* | *կալանք* |
| *կալար* | *կալաք* |
| *կալավ* | *կալան* |

Հրամայական

| | |
|---|---|
| *կա՛լ* | *կա՛լէք* |

## 8. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

***190.*** *Շամշադին—Դիլիջանի խոսվածքում բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են համակատար և հարակատար դերբայներով ու* ըլիլ *(լինել) բայի խոնարհված ձևերով։*

*Երկրորդական բաղադրյալ ժամանակների խոնարհման ընդհանուր պատկերը ցույց տալու համար խոնարհենք* նըստիլ *և* մընալ *բայերը.*

Սահմանական եղանակ

*Ն ե ր կ ա*

| | |
|---|---|
| *նըստիլիս եմ ըլմ* | *մընացած եմ ըլմ* |
| *նըստիլիս ես ըլմ* | *մընացած ես ըլմ* |
| *նըստիլիս ա ըլմ* | *մընացած ա ըլմ* |
| *նըստիլիս ենք ըլմ* | *մընացած ենք ըլմ* |
| *նըստիլիս եք ըլմ* | *մընացած եք ըլմ* |
| *նըստիլիս են ըլմ* | *մընացած են ըլմ* |

## Անկատար անցյալ

| | |
|---|---|
| *Նըստիլիս ի լըմ* | *մընացած ի լըմ* |
| *Նըստիլիս իր լըմ* | *մընացած իր լըմ* |
| *Նըստիլիս էր լըմ* | *մընացած էր լըմ* |
| *Նըստիլիս ինք լըմ* | *մընացած ինք լըմ* |
| *Նըստիլիս իք լըմ* | *մընացած իք լըմ* |
| *Նըստիլիս ին լըմ* | *մընացած ին լըմ* |

## Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| *Նըստիլիս էմ լէլ* | *մընացած էմ լէլ* |
| *Նըստիլիս էս լէլ* | *մընացած էս լէլ* |
| *Նըստիլիս ա լէլ* | *մընացած ա լէլ* |
| *Նըստիլիս էնք լէլ* | *մընացած էնք լէլ* |
| *Նըստիլիս էք լէլ* | *մընացած էք լէլ* |
| *Նըստիլիս էն լէլ* | *մընացած էն լէլ* |

## Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| *Նըստիլիս ի լէլ* | *մընացած ի լէլ* |
| *Նըստիլիս իր լէլ* | *մընացած իր լէլ* |
| *Նըստիլիս էր լէլ* | *մընացած էր լէլ* |
| *Նըստիլիս ինք լէլ* | *մընացած ինք լէլ* |
| *Նըստիլիս իք լէլ* | *մընացած իք լէլ* |
| *Նըստիլիս ին լէլ* | *մընացած ին լէլ* |

## Հարակատար ներկա

| | |
|---|---|
| *Նըստիլիս էմ ըլա̈ծ* | *մընացած էմ ըլա̈ծ* |
| *Նըստիլիս էս ըլա̈ծ* | *մընացած էս ըլա̈ծ* |
| *Նըստիլիս ա ըլա̈ծ* | *մընացած ա ըլա̈ծ* |
| *Նըստիլիս էնք ըլա̈ծ* | *մընացած էնք ըլա̈ծ* |
| *Նըստիլիս էք ըլա̈ծ* | *մընացած էք ըլա̈ծ* |
| *Նըստիլիս էն ըլա̈ծ* | *մընացած էն ըլա̈ծ* |

## Հարակատար անցյալ

| | |
|---|---|
| *Նըստիլիս ի ըլա̈ծ* | *մընացած ի ըլա̈ծ* |
| *Նըստիլիս իր ըլա̈ծ* | *մընացած իր ըլա̈ծ* |
| *Նըստիլիս էր ըլա̈ծ* | *մընացած էր ըլա̈ծ* |
| *Նըստիլիս ինք ըլա̈ծ* | *մընացած ինք ըլա̈ծ* |

նըստիլիս իք ըլլած մընացած իք ըլլած
նըստիլիս ին ըլլած մընացած ին ըլլած

## Անցյալ կատարյալ

նըստիլիս ըլլա մընացած ըլլա
նըստիլիս ըլլար մընացած ըլլար
նըստիլիս ըլլավ մընացած ըլլավ
նըստիլիս ըլլանք մընացած ըլլանք
նըստիլիս ըլլաք մընացած ըլլաք
նըստիլիս ըլլան մընացած ըլլան

## Ըղձական եղանակ

### Ապառնի

նըստիլիս ըլլեմ մընացած ըլլեմ
նըստիլիս ըլլես մընացած ըլլես
նըստիլիս ըլլի մընացած ըլլի
նըստիլիս ըլլենք մընացած ըլլենք
նըստիլիս ըլլեք մընացած ըլլեք
նըստիլիս ըլլեն մընացած ըլլեն

### Անցյալ

նըստիլիս ըլլի մընացած ըլլի
նըստիլիս ըլլիր մընացած ըլլիր
նըստիլիս ըլլեր մընացած ըլլեր
նըստիլիս ըլլինք մընացած ըլլինք
նըստիլիս ըլլիք մընացած ըլլիք
նըստիլիս ըլլին մընացած ըլլին

## Ենթադրական եղանակ

### Ապառնի

նըստիլիս կըլլեմ մընացած կըլլեմ
նըստիլիս կըլլես մընացած կըլլես
նըստիլիս կըլլի մընացած կըլլի
նըստիլիս կըլլենք մընացած կըլլենք
նըստիլիս կըլլեք մընացած կըլլեք
նըստիլիս կըլլեն մընացած կըլլեն

Անցյալ

| | |
|---|---|
| նըստիլիս կըլի | մընացած կըլի |
| նըստիլիս կըլիր | մընացած կըլիր |
| նըստիլիս կըլէր | մընացած կըլէր |
| նըստիլիս կըլինք | մընացած կըլինք |
| նըստիլիս կըլիք | մընացած կըլիք |
| նըստիլիս կըլին | մընացած կըլին |

### Հարկադրական եղանակ

Ապառնի

| | |
|---|---|
| նըստիլիս դէմ ըլիլ | մընացած դէմ ըլիլ |
| նըստիլիս դէս ըլիլ | մընացած դէս ըլիլ |
| նըստիլիս դի ըլիլ | մընացած դի ըլիլ |
| նըստիլիս դէնք ըլիլ | մընացած դէնք ըլիլ |
| նըստիլիս դէք ըլիլ | մընացած դէք ըլիլ |
| նըստիլիս դէն ըլիլ | մընացած դէն ըլիլ |

Անցյալ

| | |
|---|---|
| նըստիլիս դի ըլիլ | մընացած դի ըլիլ |
| նըստիլիս դիր ըլիլ | մընացած դիր ըլիլ |
| նըստիլիս դէր ըլիլ | մընացած դէր ըլիլ |
| նըստիլիս դինք ըլիլ | մընացած դինք ըլիլ |
| նըստիլիս դիք ըլիլ | մընացած դիք ըլիլ |
| նըստիլիս դին ըլիլ | մընացած դին ըլիլ |

## ՄԱԿԲԱՅՆԵՐ

*191. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են տեղի, ժամանակի, ձևի և չափ ու քանակի մակբայներ։*

### 1. ՏԵՂԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ

*192. Տեղի մակբայները ըստ կազմության լինում են պարզ և բարդ։ Եթե պարզ կազմություն ունեցող տեղի մակբայները մեծ մասամբ համապատասխանում են ժամանակակից հայե-*

*ջրենի նույն կազմությունն ունեցող մակբայներին, ապա բարդությամբ առաջացած տեղի մակբայներն ունեն յուրահատուկ կազմություն։ Այդպիսի բարդությունների մեջ որպես առաջին բաղադրիչ հանդես է գալիս «դեպի» բառի կրճատված ձևը, ինչպես՝* դէսը *(դեպի այս),* դէնը *(դեպի այն),* դըբէտ *(դեպի ետ),* դըյէr *(դեպի վեր),* դըվէr *(դեպի վար),* դörը *(դեպի որը)։*

*Թե՛ պարզ և թե՛ բարդ կազմությամբ տեղի մակբայները Նախադասության մեջ գործածվում են որպես տեղի պարագաներ, ինչպես.*

Առաչ.— *Ըընթըրղան նըրա ծէռն ա տալի, ու իրանք* առաչ *էն քյընըմ (Սանձը տալիս է նրա ձեռքը, ու իրենք առաջ են գընում)։*

Աղաf *(առաջ).—* Աղաf *քյընըմ ին դաշտը, վըէր հունձ անէն (առաջ գնում էին դաշտ, որ հունձ անեն)։*

Դէնը *(դեպի այն կողմ).— Ղահըրմանը իրա ծին մի քիչ* դէնը *քըշէց (Ղահրամանը իր ձին մի քիչ դեպի այն կողմ քշեց)։*

Դէսը *(դեպի այս կողմ).— Թաքավէրը քյընաց, համա վազիրը* դէսը *վազ տվուց (Թագավորը գնաց, բայց վազիրը դեպի այս կողմ վազեց)։*

Դըբէտ *(դեպի ետ).— Ղօշը փընջած վէր ա կալէլ յէտ* դըբէտ *քյընացէլ (Արու ոչխարը զարդարված վերցրել ու դեպի ետ է գնացել)։*

Դըյէr *(դեպի վեր).— Բուգունը քընէցի, ռավէտը մացա, վըէր* դըյէr *էմ քյընըմ (Երեկոյան քնեցի, առավոտյան իմացա, որ դեպի վերև եմ գնում)։*

Դըվէr *(դեպի ներքև).— Յէրգըրորթ հէտը վըէր քյըցըմ ա, կիսիցը* դըվէr *քար ա տառնըմ (Երկրորդ անգամ որ գցում է, կեսից ներքև քար է դառնում)։*

Դիմացը.— *Ղահըրմանը յէկավ,* դիմացի *թըլիցը տէսավ, իրանց տափի մղակըմը ժօղօվուրթը թուփ ըլած (Ղահրամանը եկավ, դիմացի լանջից տեսավ, որ իրենց հողամասի դռանը ժողովուրդ է հավաքված)։*

Դörը *(դեպի որը).— էն մինին ասէլ ա՝ ասած* դö՞rն *ա մըտիկ անըմ (Այն մեկին ասել է՝ ասված դեպի ո՞րն է նայում)։*

Հէռու.— *Ջաtին իրա ախճըկանը* հէռու *յա մառթի տըվէլ (Ջատին իր աղջկան հեռու տեղ է ամուսնացրել)։*

Մէշդօլ *(ներսը, դեպի ներսը).— Լըծկաննին լըծըմ ին ու*

*Կէրանը* մէչղօլ *քաշըմ (Լծկանները լծում են ու գերանը դեպի ներս տանում)։*

Ղաֆին *(առջև).— էտ մառթը քընըմ ա, շիբուխն էլ* ղաֆին *ըրհէ տըրրա̈ծ ա լըմ (Այդ մարդը քնում է, շիբուխն էլ այսպես առջևը ցած դրած է լինում)։*

Տըռանը *(դուրսը).— Ա տան տէր, քյէ մատաղ,* ղըռանն *էմ մընացէլ, խընթըրըմ էմ էս քըշէր ինձ տէղ տաս (Այ տան տեր, դուրսն եմ մնացել, խնդրում եմ այս գիշեր ինձ տեղ տաս)։*

## 2. ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ

*193. Ժամանակի մակբայները սովորաբար ունեն պարզ կազմություն, ինչպես՝* առաչ, էլի, էրէգյ *(երեկ),* էֆսը *(հաջորդ օրը),* ճըլա *(դեռ),* ճըլէ *(նորից),* մըճէնգ‖մըճի *(հիմա) ևն։*

*Ժամանակի մակբայները նախադասության մեջ լինում են ժամանակի պարագա բայական անդամի լրացում, ինչպես.*

Առաչ.— Առաչ *տանըմ էն մառթի կուշտը (Առաջ տանում են մարդու մոտ)։*

Էլի.— *Հէնց էքսի օրը կյա̈լիս ա կյէղը,* էլի *ա ըսկըսըմ ա̈ւշա̈նց տալը (Հենց հաջորդ օրը գալիս է գյուղ, նորից է սկսում հայհոյել)։*

Էլօր *(մյուս օրը).— Ու տըրա̈ թափշուր ա անըմ, վըէր էքոծ (նաև՝ էքուծ) չէ* էլօր *կըղարկինք (Նրան պատվիրում է, որ վաղը չէ մյուս օրը կուղարկենք)։*

Էսօր‖սօր *(այսօր).— Ասէց՝ ախպէր,* սօրի *մի մառթ էմ ըսպանէլ, քյընա̈նք անհէտ անէնք (Ասաց, եղբայր, այսօր մի մարդ եմ սպանել, գնանք թաքցնենք)։*

Էրէգյ *(երեկ).—* Էրէգյ *մըէնք ճօկ, նըրանք ճօկ, պադրաստըվըմ ինք (Երեկ մենք առանձին, նրանք առանձին, պատրաստվում էինք)։*

Էֆուծ‖Էֆօծ *(վաղը).—* Էֆուծ *վէ կէնամ, քյընա̈մ աշխարաշխար ման կյա̈մ (Վաղը ելնեմ, գնամ աշխարհ-աշխարհ շրջեմ)։*

Էֆսը *(հաջորդ օրը).—* Էֆսը *վէ կըցանք, մի հատ կըխտար էլ ըսպանէցինք (Հաջորդ օրը ելանք, մի այծյամ էլ սպանեցինք)։*

Թöւշում (*մի ժամանակ*).— *էտ մառթը մի* թöւշում *մըտիկ արավ, տէհավ տան տէրը շատ քյäսիր ա (Այդ մարդը մի ժամանակ նայեց, տեսավ տան տերը շատ աղքատ է)։*

Հար-յէրգä (*ամեն անգամ*).— *Տէրտէրը* հար-յէրգä *տըրä կօխկըն ա քյըլնըմ (Տերտերը ամեն անգամ դրա մոտ է գնում)։*

Հըլա (*դեռ*).— *Ժամացույցին մըտիկ ա անըմ, տէնըմ ա* հըլա *ժամի մէկն ա (Ժամացույցին նայում է, տեսնում է դեռ ժամի մեկն է)։*

Հըլէ (*նորից*).— Հըլէ *մի ճըմփնօրթ պըրդահէլ ա, պիրէլ էն (Նորից մի ճամփորդ է հանդիպել, բերել են)։*

Հըմի (*հիմա*).— Հըմի *մութն ա, ու ճըրաքնին կըպցըրած ըսպասըմ ին (Հիմա մութն է, ու ճրագները վառած սպասում են)։*

Մըհէնգ (*հիմա*).— Մըհէնգ *տըրանցից տասնըշօրսը տըրնվէրվէլ էն (Հիմա դրանցից տասնչորսը ընտանիք են կազմել)։*

Մըհի (*հիմա*).— *Համա* մըհի *էս մըղըրճäնչէրի հալալ քըրտինքը հըրամէլ էն (Բայց հիմա այս մեղուների արդար աշխատանքը փչացրել են)։*

Յէդը (*հետո*).— *Մի ժամիցը* յէդը *էշը ասըմ ա՝ ըրգäնքին էք շի՞նըմ, թä՞ լէնքին (Մի ժամից հետո էշը ասում է՝ երկարությամբ եք պատրաստո՞ւմ, թե՞ լայնությամբ)։*

Յէդօվ (*հետո*).— *Դօլմի իրիսին մի աթար կըտինէս,* յէդօվ *ղուփը տընէս պիրäնին (Տոլմայի երեսին մի աթար կդնես, հետո կափարիչը դնես բերանին)։*

Յէտնա (*հետո*).— Յէտնա *յէլ քյընäց մի էրկու-իրէք ծաղկած հաց պիրուց (Հետո էլ գնաց մի երկու-երեք հին հաց բերեց)։*

Շöւտ (*շուտ*).— *Թօղէք ծիյանիքը ըրած էն, վըէր* շöւտ *ճամփա ինգնէնք (Թողեք ձիերը արածեն, որ շուտ ճանապարհվենք)։*

Չöւշտ (*շուտով*).— *էս ա մըծացէլ էք,* չöւշտ *թըռչիլ դէք քյընäք (Արդեն մեծացել եք, շուտով կթռչեք, կգնաք)։*

Վէրշը (*վերջապես, հետո*).— Վէրշը *տըվարածը ասըմ ա՝ էն մութ տէղը տէղէրըս քյըցի (Հետո նախրապանը ասում է՝ տեղաշորս մութ տեղ բացիր)։*

Տäռ (*դեռ*).— *Կընիկը ասըմ ա՝ ա մառթ, տա* տäռ *քէզ քիչ ա (Կինն ասում է՝ այ մարդ, այդ դեռ քեզ քիչ է)։*

## 3. ՁԵՎԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ

*194.* *Խոսվածքում գործածվում են պարզ, ածանցավոր և բարդ կազմություն ունեցող ձևի մակբայներ, որոնք նախադասության մեջ կատարում են ձևի պարագայի պաշտոն։*

*«Ածանցներ» բաժնում արդեն խոսվել է ածանցավոր ձևի մակբայների բառակազմական նշանակությունների մասին, իսկ այժմ ցույց տանք պարզ և բարդ կազմությամբ ձևի մակբայների շարահյուսական կիրառությունները, ինչպես.*

Ալախ-մալախ *(շտապ, արագ).— Պառկը պիրի,* ալախ-մալախ *վըրէն ածէցի (Պարկը բերի, արագ վրան լցրի)։*

Արթա̈կ-ա̈րթնա̈կ *(միանգամից).— Մառթը տէղին* ա̈րթա̈կ *կէրավ ու թինգը տվուց (Մարդը միանգամից կերավ ու թիկնեց)։*

Գիրթ *(հանկարծ, հանկարծակի).— Սէլը ճամփըմը* գիրթ *կաղնէց (Սայլը ճանապարհին հանկարծ կանգնեց)։*

Թաfուն.— *Նարիմանը քյընըմ ա,* թաfուն *նի մըտնըմ ժամը (Նարիմանը գնում, մտնում է եկեղեցին)։*

Իրան-իրան *(ինքն իրեն).— Քօռը նըստած* իրան-իրան *պատմըմ ա (Կույրը նստած ինքն իրեն պատմում է)։*

Կէծ-կէծ *(տաք-տաք).— Խավիծը* կէծ-կէծ *վէր ա ունըմ, էտ մառթին պէրանը լըցնըմ (Խավիծը վերցնում է տաք-տաք ու այդ մարդու բերանը լցնում)։*

Ղըմա̈րա̈-ղըմա̈րա̈ *(շերտ-շերտ).— էն կօթը կօտրած դըմա̈լթին էլ քաշէց ու հացը ղըմա̈րա̈-ղըմա̈րա̈ կըտօրէց (Այն կոթը կոտրած դանակն էլ առավ ու հացը շերտ-շերտ կտրտեց)։*

Ճօկ *(առանձին).— Կընիկը պիրուց հում ծո̈ւկը* ճօկ, *էփած ծո̈ւկը* ճօկ *տէղ տըրա̈վ (Կինը բերեց հում ձուկը առանձին, եփած ձուկը առանձին տեղ դրեց)։*

Վըռագ-վըռագ *(շտապ-շտապ).—* Վըռագ-վըռագ *էտ կօճակնին հէտ քաշէցին, քարը բըկիցը վէ կալան (Շտապ-շտապ կոճակները արձակեցին, քարը վզից վերցրին)։*

Տրռնէտռո̈ւռ *(դռնեդուռ).—* Տրռնէտռո̈ւռ *ման յէկան, հալ ու հարց ըլա̈ն սըրան-նըրան (Դռնեդուռ ընկան, հարցուփորձ արին սրան-նրան)։*

Ուրախ-ուրախ.— *Էտ տէրտէրը* ուրախ-ուրախ *քյընըմ ա տուն (Այդ տերտերը ուրախ-ուրախ գնում է տուն)։*

## 4. ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ

*195. Խոսվածքում չափ ու քանակի մակբայները նախադասության մեջ կատարում են պարագայի պաշտոն, ինչպես.*

Ավէլ *(ավելի, առավել).— Էսօր շունը լակը* ավէլ *ա լա̈փել։*

Բաբաթ *(շատ).— Սըհէ* բաբաթ *խէթ արած ծէռնէրն ա տափին տալի (Այսպես շատ խեթ արած ձեռքերն է գետին տալիս)։*

Մի–մի *(մեկ-մեկ).— Նըրանց հալ ու հարց կըլէմ, ամէնքին էլ* մի–մի *վըէսկի կըտամ (Նրանց հարցուփորձ կանեմ, ամենքին էլ մի-մի ոսկի կտամ)։*

Շատ.— *Մառթը տէնըմ ա, վըէր կընգյա̈ քէփը շատ լա̈վ ա (Մարդը տեսնում է, որ կնոջ տրամադրությունը շատ լավ է)։*

*Վերոհիշյալ մակբայներից բացի Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են նաև ժամանակակից հայերենից փոխառնված մի շարք ժամանակի, ձևի և չափ ու քանակի մակբայներ, ինչպես՝ առանձին-առանձին, արագ, կամաց, կամաց-կամաց, հանգարծ, միյասին, միշտ, նորից, քիչ, քիչ-քիչ ևն։ Այս մակբայների շարահյուսական կիրառություններին կարելի է հանդիպել աշխատանքի մեջ բերված նմուշներում։*

## ԿԱՊ

*196. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում կան նախադաս և ետադաս գործածությամբ կապեր։ Կապերի մի զգալի մասը չի թեքվում և ունի կախյալ կիրառություն, իսկ մյուս մասը կարող է հոդ ստանալ և հոլովվել։ Հոլովվող կապերը կախյալ կիրառության հետ միասին դառնում են նաև նախադասության առանձին անդամներ։*

*Խոսվածքում կապերը դրվում են ուղղական և տրական հոլովներով գործածված բառերի հետ։ Ուղղական հոլովի հետ գործածվող կապերը նախադրություններ են, իսկ տրական հոլովի հետ դրվողները՝ ետադրություններ։*

*Ուղղական հոլովի հետ դրվող կապերն են.*

Դըբա̈ *(դեպի).— Էտ թըվանքը վէր ա ունըմ ու* դըբա̈ *էն մառթը կըբրակ տալի (Այդ հրացանը վերցնում է ու դեպի այն մարդը կրակում)։*

Չըfէլ *(մինչև).— Չըfէլ հասան տուն, արթէն մութն էր (Մինչև տուն հասան, արդեն մութ էր)։*

Չէլ *(մինչև).— էն օրից չէլ սօր արխային ապրէլ էնք (Այն օրից մինչև այսօր հանգիստ ապրել ենք)։*

*Տրական հոլովի հետ դրվող կապերն են.*

Կուշտը *(մոտ).— Հըրէվանը քնացէլ ա էն մընին* կուշտը, *ասէլ՝ էտ ինչ էս արէլ (Հարևանը գնացել է մյուսի մոտ, ասել՝ այդ ինչ ես արել)։*

Կօխկը *(մոտ).— Մառթը ասըմ ա՝ զօլ քու մըռըլի* կօխկից *էմ կյալի (Մարդն ասում է՝ հենց քո մեռելի մոտից եմ գալիս)։*

Հէտ.— *Մառթ ու կընիկ իրար* հէտ *զըրից անիլօվ քնընըմ ին արտը (Մարդ ու կին իրար հետ զրուցելով արտ էին գնում)։*

Հէտի *(համար).— Նըրա* հէտի *էմ պար կյալի, վըէր խիլթէն իմ ճըտիցը հանըմ էմ, քու ճիտը քցըմ (Նրա համար եմ պարում, որ փորձանքը իմ վզից հանում եմ, քո վիզն եմ գցում)։*

Հըմար *(համար).— Կարաս մըէզ* հըմար *կիր անէս, վըէր մէզ րէխա ըլի (Կկարողանաս մեզ համար գուշակես, որ մենք երեխա ունենանք)։*

Մէչ.— *Իրան տըղին մի մըրըքի* մէչը *ղարկէր, ախպօրը՝ մին (Իր տղային մի խնջույքի մեջ էր ուղարկում, իսկ եղբորը՝ մի)։*

Մըճար *(համար).— Մըէնք էլ կյէղի* մըճար *խօտ ինք հընձըմ (Մենք էլ գյուղի համար խոտ էինք հնձում)։*

Նըճէտ *(հետ).— Քյասիբը ասըմ ա՝ տուք մառթ ու կընիկ, զաղն էլ ծըէզ* նըճէտ՝ *իրէք (Աղքատն էլ ասում է՝ դուք մարդ ու կին, սազն էլ ձեզ հետ՝ երեք)։*

Նըման.— *Ամիրխանն էլ ուրիշնէրին* նըման *ծին թամըքէց, խիզանին հէտի տէս-տէն տարավ (Ամիրխանն էլ ուրիշների նման ձին թամբեց, երեխաների համար բան-ման տարավ)։*

Վըրա.— *Թըխտի* վըրա *կիր անըմ ա, տալի իրան (Թղթի վրա գուշակում է, իրեն տալիս)։*

Տակ.— *Տէնըմ ա, վըէր կյէղի* տակօվը *կէտ ա քնընըմ (Տեսնում է, որ գյուղի տակով գետ է անցնում)։*

## ՇԱՂԿԱՊ

*197. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում գործածվում են համադասական և ստորադասական շաղկապներ, որոնց մեծ*

մասն իր կազմությամբ համապատասխանում է ժամանակակից հայերենի նույն շաղկապներին և ունի կիրառական նույն նշանակությունը՝ միմյանց հետ կապակցում է ինչպես նախադասության համադաս անդամներ ու նախադասություններ, այնպես էլ երկրորդական նախադասությունները՝ գլխավորի հետ։

## 1. ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

*198. Խոսվածքում գործածվող համադասական շաղկապներն են՝* ħամ *(և),* ħամա *(բայց, սակայն),* յա *(կամ),* ու։ *Խոսվածքում գործածվում են նաև ժամանակակից հայերենից փոխառնված* բայց, իսկ, կամ, և *համադասականները, որոնց շարահյուսական կիրառությունների համար օրինակներ չենք տալիս։*

Յա *համադասականը սովորաբար գործածվում է կրկնությամբ և ու շաղկապի նման կարող է կապակցել ինչպես համադաս նախադասություններ, այնպես էլ նախադասության համադաս անդամներ։*

*Խոսվածքի համադասական շաղկապների շարահյուսական կիրառությունները ցույց տալու համար բերենք հետևյալ օրինակները.*

Համ *(և).— Համ կըրակի ծուխն ա ըտիյօվ ք՚ընըմ,* ħամ *էլ լ՚իսն ա ըտիյօվ կ՚ա̈լի (Եվ կրակի ծուխն է այդտեղով գնում, և լույսն է այդտեղով գալիս)։*

Համա *(բայց, սակայն).— Վէրշը կըրակ վառէցի,* ħամա *քունըս տանըմ էր, քընէցի (Վերջապես կրակ վառեցի, բայց քունս տանում էր, քնեցի)։*

Յա *(կամ).— Քօռը ասըմ ա՝* յա *կընիկը ինձ կըտան,* յա *էշը, յա ըէխան (Կույրը ասում է՝ կամ կինը ինձ կտան, կամ էշը, կամ էլ երեխան)։*

Ու.— *Մի կ՚էղացի մառթ* ու *կընիկ էն ըլըմ (Մի գյուղացի մարդ ու կին են լինում)։*

## 2. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

*199. Խոսվածքում գործածվող ստորադասական շաղկապներն են՝* թէ||թա *(թե),* միթա̈մ թա *(իբր թե),* յէփ *(երբ),* վըէնց

**վըէր** *(ոնց որ)*, **վըէր** *(որ)*, **ֆաճի վըէր** *(քանի որ)*, **օվ վըէր** *(ով որ)։ Դրանցից առանձնապես լայն կիրառություն ունեն* **վըէր** *և* **թէ** *շաղկապները։* **Վըէր** *ստորադասականը շատ հաճախ գործածվում է որպեսզի, որովհետև, եթե և այլ շաղկապների իմաստներով, իսկ հաճախ էլ այն ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները կապում է գլխավորի հետ։*

*Այժմ բերենք ստորադասական շաղկապների կիրառության համար ամբողջական օրինակներ, ինչպես.*

**Թէ||թա.**— *Քյընա̈նք հըրէվաննէրին հըրցընէնք, թէ մըէր բաղը խի չի բէրք փըռնըմ (Գնանք հարևաններին հարցնենք, թե մեր այգին ինչու չի բերք վերցնում)։*

**Միթա̈մ թա** *(իբր թե).*— *Ծըրաքը պատիցը կըպցընըմ ինք,* **միթա̈մ թա** *լյիս անի (Ճրագը պատին ամրացնում էինք, իբր թե տանը լույս անի)։*

**Վըէճց վըէր** *(ոնց որ).*— *Կյօթու̈կնի յա կյա̈լի,* **վըէճց վըէր** *կանանչ տախտ ըլի (Ջոր փայտեր էին գալիս, ոնց որ կանաչ բացատ լիներ)։*

**Վըէր** *(որ).*— *Էտ մառթը միշտ քյընըմ ա բազար,* **վըէր** *առուտուր անի (Այդ մարդը միշտ գնում է շուկա, որ առևտուր անի)։*

**Ֆաճի վըէր** *(քանի որ).*— *Հին վախտը մի զուռնաչու ուզըմ էն տէրտէր օխնէն,* **ֆաճի վըէր** *տա շընօրքօվ ա ըըմ (Հին ժամանակ մի զուռնա նվագողի ուզում են տերտեր օծեն, քանի որ նա շնորհալի էր)։*

**Օվ վըէր** *(ով որ).*— **Օվ վըէր** *կյա̈լիս էր, ասըմ էր՝ մառթին մըռնիլիս վախտըն ա, էլ ինչ դի ջա̈հիլանա (Ով որ գալիս էր, ասում էր՝ մարդու մեռնելու ժամանակն է, էլ ինչ պիտի ջահելանա)։*

## ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**200.** *Շամշադին—Դիլիջանի խոսվածքը հարուստ է ձայնարկություններով, որոնք լինում են պարզ և կրկնավոր կազմությամբ։*

*Խոսվածքում գործածվող ձայնարկությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.*

*ա) զարմանք, հիացմունք և ափսոսանք արտահայտող ձայ-*

նարկություններ, ինչպես՝ ա՜խ, ա՜խկ, ա՜յ, ա՜յ-վա՜յ, ը՜հը, խըվա՜յ, հա՜յ, հա՜յ-հա՜յ, հա՜յ-հո՜ւյ, պա՜հ, պա՜հ-պա՜հ, պա՜-հօ, վա՜խ, վա՜յ, վա՜յ-վա՜յ, վը՜յ, վի՜շ, վի՜շ-վի՜շ, վո՜ւշ, վո՜ւշ-վո՜ւշ, ո՜ւհ, ո՜ւֆ, օ՜հօ, օ՜վվէ,

բ) մարդ կամ կենդանի կանչելու կամ վանելու ձայնարկություններ, ինչպես՝ ա՛խճի, ա՛րա, բի՛ժի, բի՛ժի-բի՛ժի, դա՜-հյէ, դէ՛ դէ՛հ, է՛հէ, թը՛ո, թը՛ո-թը՛ո, ի՛շ, ի՛շ-ի՛շ, հէ՜յ, հէ՜յ-հէ՜յ, հօ՛, հօ՛-հօ՛, հօ՛շ, ճո՛ւ-ճո՛ւ, փի՛շտ, քո՛ւչի-քո՛ւչի,

գ) բնաձայնություն արտահայտող ձայնարկություններ, ինչպես՝ դըրա՛խկ, դը՛ըխկ, թըրա՛խկ, թը՛ըխկ, թը՛ըմփ, ծը՛լթ, հա՛փ, հա՛փ-հա՛փ, շը՛րախկ, շը՛ըխկ, տըրա՛ք, փը՛խկ, փը՛խկ-փը՛խկ։

201. Ձայնարկությունները նախադասության անդամների հետ չեն կապակցվում, այլ նախադասությանը կամ նախադասության անդամներին զգայական երանգ են հաղորդում։ Այդպիսի երանգը ցույց տալու համար ստորև բերենք մի քանի օրինակներ, ինչպես.

Դա՜հյէ.— Ղահրըմանը համ ծիլին տալիս ա, համ ասըմ ա՝ տունըս քանդվէլ ա դա՜հյէ (Ղահրամանը ծիուն և խփում է, և ասում՝ տունս քանդվել է՝ դա՜հյէ)։

Հէ՜յ.— Սէրգօն ախպօրը կանչէց՝ հէ՜յ Վանէս, յէզը պի (Սերգոն եղբորը կանչեց՝ հեյ Վանես, եզը բեր)։

Հօ՛-հօ՛.— Նարիմանը կյա̈լիս ա տուն ու քյա̈լէքին ասըմ՝ հօ՛-հօ՛ (Նարիմանը գալիս է տուն ու գոմեշներին ասում՝ հո՛-հո՛)։

Պա՜հ-պա՜հ.— Տըղէն ասըմ ա՝ պա՜հ-պա՜հ, մառթը ու ծիտը մին էն ըլըմ հա (Տղան ասում է՝ մարդն ու ծիտը մեկ են լինում հա)։

Վա՜յ.— Տանից տո̈ւս էն կյա̈լի ու ըսկըսըմ՝ վա՜յ, ապի ջան, վա՜յ ապի ջան (Տանից դուրս են գալիս ու սկսում՝ վա՜յ հայրիկ ջան, վա՜յ, հայրիկ ջան)։

Վը՜յ.— Վը՜յ, ախպէր ջան, բա մըէր Մինասը վըէնց ա (Վը՜յ, եղբայր ջան, մեր Մինասը ի՞նչպես է)։

## Շ Խ Շ Տ

202. Շամշադին—Դիլիջանի խոսվածքում շեշտն ընկնում է բառի նախավերջին վանկի ձայնավորի վրա, ինչպես՝ ա՛խճիկ,

ա՛մառ, հա՛նէր, ա՛պրուստ, ա՛ստառ, խո՛րուրթ, ծա՛ղիկ, կա՛րմունջ, կա՛նանչ են։

203. Շեշտը բառի վերջնավանկն է տեղափոխվում հետևյալ դեպքերում.

ա) երբ նախավերջին վանկի ձայնավորը ոչ շեշտակիր ը հնչյունն է, ինչպես՝ թըթո՛ւ, խըրա՛տ, ծըմա՛կ (անտառ), կըծի՛կ, կըտո՛ր, կըրա՛կ, հըրա՛շկ, մըկրա՛տ, նըմա՛ն են,

բ) երբ բառն ստանում է -նի հոգնակերտ վերջավորությունը, ինչպես՝ ա՛ման-ամաննի՛, ծա՛նոթ-ծանոթնի՛, կա՛տար-կատարնի՛, կա՛րաս-կարասնի՛, ճա՛կատ-ճակատնի՛, մո՛ծակ-մոծակնի՛, նա՛մակ-նամակնի՛, շա՛մամ-շամամնի՛ են։

# ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

## ՆՄՈՒՇՆԵՐ

### ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

#### ԱՅԳԵՁՈՐԻՑ

Զատունց Զատին

*Զատունց Զատին Կարմիր Քարիցը կյա՛լիս էր շէնը։ Կյա՛լիս ա տէնըմ էտ կալըմը շատ ժողովուրթ ա հըվաքվէլ, փա՛հլիվա՛ն էլ յէկէլ ա։ Ու փա՛հլիվա՛նը ասըմ ա՝ կամ տըվէք ինձ հինգ մանէթ, կամ մի մառթ պիրէք ինձ հէտ կօխ անի։ Զատին հին մառթ ա լի, շուխա յա կէցած լըմ, ինքըն էլ շալվարը պըռթից կյօռծա՛ծ։ Խըլուղը սըհէ շըլվարի տակօվն ա անըմ ու կալըմը շուռ կյա՛լի, սըհէ բաբաթ խէթ արած փա՛հլիվա՛նի վըրա ծըլէռնէրն ա տափին տալի, վըէտնէրը։ Ասըմ ա՝ օ՞վ ա փա՛հլիվա՛նը, թօղ կյա՛ կօխ անէնք։*

*Էտ փա՛հլիվա՛նը տէնըմ ա, վըէր սա ըսկի փա՛հլիվա՛նի ղայդի չի կօխ անիլ։ Ջանօվ մառթ ա, վըէր փըռնի, տակին կըտըռնի։ Փա՛հլիվա՛նը կօխ չի անըմ։ Ջըբիցը հինգ մանէթ հանըմ ա, տալիս Զատին։*

*Զատին էտ փօղը տալիս ա ժողովուրթին, ու տանըմ էն էրկու վըէխճար առնըմ, քյէփ անըմ։*

*Պատմեց Գալուստ Զատյանը (ծն. 1909 թ.)*

*Զատունց Զատին ճօխտ տըղա չէր հըրսանիք անըմ։ Ցէրգըբօրթ տըղի հարսը կաղ էր։ Էտ հարսի տըռանը Զատին մէյդան ընգա՛վ։ Ղավալնէրին ասէց, վըէր իմ հավան ըծէցէք, խընամիս նըհէտ պար դէմ կյա՛մ։ Ու կանչէց իրա խնամի Պըղօսանց Կըր-*

բէդին։ Պարի վախտը պա̈րցըր-պա̈րցըր ժօղօվուրթի առաչ իրա խընամուն ասէց. «Պըղօսանց Կըրբէդ, յէս հա̈լա̈ պար էմ կյա̈լի, վըէր ճօխտ տըղա յէմ հըրսանիք անըմ, ըրխացէլ էմ, բա տո̈ւ ինչի յէս պար կյա̈լի»։

Նա յէն թա՝ յէս էլ խիլթէն իմ ճըտիցը հանըմ էմ, քու ճի-տը քյըցըմ, նըրա հէտի յէմ պար կյա̈լի։

Պատմեց Սուրեն Բաբայանը (ծն. 1930 թ.)

## Ամիրխանի սուտը

Տաշտի հընձիցը յէկէլ, սար ին քյընըմ, խիզա̈նին տէնան։ Ամիրխանն էլ ո̈ւրո̈ւշնէրին նման ծին թամքէց, խիզա̈նին հէտի տէս-տէն ա̈րավ, ճամփա ընգյա̈վ։ Ճըմփի կէսին տէռավ, վըէր Ղահըրմանը իրանից շո̈ւտ յէկէլ ա ըտէղ, վէր յէկած ա։

Ղահըրմանը ասէց՝ տո̈ւ յէլ վէր արի, հո̈ւրո̈ւր առ, իրար հէտ կըքյընա̈նք։

Ամիրխանը ասէց՝ յէս Ձըրթանա թո̈ւշո̈ւմը դէմ վէր կյա̈լ։ Ու ծին չափ քյըցէց քյընա̈ց։

Ամիրխանը իրա ասած տէղը վէր չէկավ ու քյընա̈ց Պըլըխ-կուտի ուրդը։ Միյի պէռը վէր տընիլից յէղը կամաց կընգյա̈նը հըրցըրուց.

— Ախճի, էս վըէնց, ա, տա̈ռ մա̈ցէլ չէն։

Կընիկը վըէր առանց էն էլ թա̈զա̈ խըբարի յէր ճամփա պա-հըմ, վըռազ հըրցըրուց՝ ատղա, էտ ի՞նչ ա պըդահէլ։

— Դէ լյա̈վ ա, լյա̈վլ ա, վըէր տա̈ռ մա̈ցէլ չէն, թօղ մըղա-նից չի վէր ըլի։

Կընիկը չանին ընգյա̈վ թա՝ ասա, ատղա, մի տըէղ էլ ա պա̈ն չէմ ասիլ, տէնանք ինչ ա պըդահէլ։

—Դէ, ախճի, ո̈ւրո̈ւշի պա̈ն չասէս։ Բա ասիլ չէս Ղահըր-մանն էլ խընչըփօթօթ ըլա̈վ, մըէռավ։

Կընիկը ծընգնէրին տըվուց ու կյէփը վէ կալավ, քյընա̈ց ախպո̈ւրը՝ ճըրի։ Ում պըդահէց, ասէց՝ ախճի, բա ասիլ չէս Ղա-հըրմանի տունը քանդվէլ ա։

Ձըքէլ աշկըտ ճըպիլը սաղ օրէն հըվաքվէց Ղահըրմանի տո̈ւնը սուք-շիվանի։

Ղահըրմանը իրա քէփին կամաց կյա̈լիս էր։ Յէկավ դիմացի ըըլա̈նիցը տէսավ իրանց տափի մըղտկըմը ժօղօվուրթը թուփ

ըլած։ Իրա մէջ ասէց՝ յա կնիկըս ա մըէռէլ, յա ըէխէս։ Ծին չափ քյըցէց, Հասավ օբէն։

Մի քանի հօքի յէկան աղաքը, թա՝ Ղաhըրման ջան, էտ ինչ յյավ ա յէկար։

Ղաhըրմանը էնքան մըտկի մէջ էր, վըէր նըրանց ասածը հըսկանըմ չէր։ Համ ծիյին տալիս ա, համ ասըմ՝ տունըս քանդ-վէլ ա՝ գյա՜հյէ։

Պատմեց Սուրեն Բարայանը

## ՉԻՆԱՐԻԻՑ

Մըէր պապէրի օջաղը հըրթավէր տուն էր։ Համ կըրակի ծուխն ա ըտիյօվ քյընըմ, համ էլ լիսն ա ըտիյօվ կյալի։ Օջաղի մէջտէղը կըրակ արած, հիցցուն-վացցուն սանտի հաստութէնի, իրէք մէտրը էրգյանութէնի փէտ մէջին տըրած։ էտ փէտը տընի-քի հըմար քյօմակ էն կանչըմ։ Մառթիքը նըհէ չափէլ էն, վըէր փէտի մի ղըրաղը տընին կըրակին, մի ղըրաղը մըղակիցը քիչ հէռու մընա, վըէր կարան քյըշէրը տուռը հէտ անէն։ Տըրանից յէղը կամ սէվ ճըրաքը, կամ պատրիքը կըռցընըմ ինք ու պա-տին կըպցընըմ, միթամ թա լիս անի տանը։

Ու մըէր կյէղացի մի մառթի մի կյուճուր տուն ունէր, քյա-սիբ էլ մառթ էր։ Այգէձօրի տէրտէրը յէկէլ ա մըէր կյէղը, կը-նունք կաղարէլ ու կըրացէլ չի քյընա, քյըշէրը մընացել ա էտ մառթի տանը։ Կըրակն էլ տան մէջտէղն էր ըրած։ Տըղէն տը-տանը փէտ ա կըտօրըմ, վըէր կըրակին տընի։ Տըղի հէրը տուս ա կյալին տընից, ասըմ.

— Ա Մուխ, ջան, լիսի փէտ էլ արա, տէրտէրը ըստի յա, ամօթ ա, մըէզ ճըրաք չունէնք։

Յէղօվ էտ մառթը մի հավ մօռթէց, տըրավ տէրտէրի ղա-ջին, միթամ թա տէրտէրին հարգըմ ա։

էտ տէրտէրը կէրավ վէչ, ասէց՝ քյէ մատաղ, յէս հիվանդ մառթ էմ, թէ կարըմ էք մի դօլչա սըպաս պէ՛ ուտէմ։

Նըրանց էլ սըպաս ունին պիրան։

Տէրտէրը կէրավ, օխնէց ու պըրանվէց քընէց։

Պատմեց Հակոբ Ղարախանյանը (ծն. 1891 թ.)

*Հա՛զա՛ր իննը հարիր տասնըվէց թըվին յէս ըլէլ էմ ռաբօչի կամանդըմ, ամսական ըստացէլ էմ իննա՛սունէրկու մանէթ։ Էտ վախտը ըլէլ էմ ըստարշինա։*

*Մի հէտ մի մառթ կանչըմ ա, վըէր ժօղօվ ա ըստարշին-նէրի։ Ք՚ընա՛ցէլ էնք էտ ժօղօվին։ Վօրօշված օրին փա՛հլին վէր էնք կալէլ ք՚ա՛ցէլ։ Մըէր տրուժինը տասնըհինգ մառթիք ին, լօխ էլ յէկէլ հըվաքվէլ էն։*

*Կէս ժամը թամամիլիցը յէդը տէհանք թիլիփօնօվ կանչէլ ին, վըէր օքնութին հըսէք։ Թօփէրը շարէցին։ Սըհէ էս ղօլը հի-լի յէր։ Կամանդիրը հրամա՛ն տըվուց, ու էրկու թօփը իրար յէտ-նա տըրաքէց, քըմակին էլ պո՛ւլո՛ւմյոտը։ Շատէրը փախան իրար հէտա՛ տա՛ռա՛ծ, վըէրին էլ փըռնէցին։ Տըրուժինը տա՛ռտա՛կ մը-նաց։*

*Ըտիյան մըէնք փախանք, յէկանք տուն։ Մի պի՛րա՛պի ք՚ը-շէրօվ փըռնէցին, վըէր ք՚ընա՛լ դէնք Բաթում։ Ըէսուն օր ըտէղ մընացինք ու փօղէրը լօխ տալիս էնք։ Մըէր տո՛ւրո՛ւթինը շատ վատ ա։ Ճամփա չըկա, պըրպըրան ծօվը ղըքնէրիս։*

*Մի մառթ ասէց՝ յէս ծըէզ կըտանէմ Բաթում, արխային կացէք։ Մինն էլ յէկավ, ասէց՝ նա ծըէզ տանիլ դի ծօվի մէչն ածի, ք՚ընա՛լ մի՞ք։*

*Յէկա հընգէրտանցըս ըսէցի՝ սըհէ-սըհէ մի մառթ յէկէլ ա մըէզ տանի։ Մինը ընդիյան ասէց՝ ք՚ընա՛նք, մինն էլ՝ ք՚ընա՛նք վէչ։ Վէրջը էլ ք՚ընա՛ցինք վէչ։*

*Էքսի օրը ծօվի ղըրաղին ման էմ կյա՛լի, տէսա մի ռուս յէկավ։ Ասէցի՝ ուզըմ էմ ք՚ընամ Բաթում։ Ասէց՝ ք՚ընա՛ցէք օս-մանլըվի դօն առէք կէցէք, յէկէք պըրախօղի կուշտը։ Ընդէղ պիլէն դէնք պիրիլ, էտ պիլէնի դօնօվը ծըէզ էլ դէմ տանի։*

*Ու մըէզ պիրավ Բաթում։*

*Պատմեց* Մակիչ Միրզոյանը *(ծն. 1888 թ.)*

**ԴՐԴԻՐՅ**

*Մի հէտ մի մառթ ա կյա՛լի մըէր շէնը, կյըրի յա առնըմ ժօ-ղօվուրթի հին առածնիրն։ Հարց ա տալի, թա օ՞վ կարա մի լա՛վ պա՛ն ասի։*

*Արզումա՛ն դա՛յին ասըմ ա, թա յէս կասէմ.*

*— Ծառի շէրին վարթն էմ,*

*էս կընգյա մառթն էմ։*

*Կընիկը յէդ ա տանըմ ու տըրըմ ծէփըմ։*

*Վըէր ժօղօվուրթը ծիծաղըմ ա, ծիծաղիցը յէդը Արզումանգյային ասըմ ա՝ նօրից մի՞նն էլ ասէմ, ու էլի ասըմ ա.*

*— Ծառի ծէրի շուղն էմ,*

*էս կընգյա բուղէն էմ։*

*Պատմեց* Արշալույս Սարդարյանը *(ծն. 1930 թ.)*

## Հըրէվանի ճարսը

*Էրկու հըրէվան էն ըլէլ։ Տըրանցից մինը հարսըն ա պիրէլ։ Կէսուրը քյընացէլ ա իրա էն հըրէվանին թափշուր արէլ, թա մըէնք ըշխադանքի էնք քյընըմ, հարսին մըտիկ կանէս, իփիլին կըսըվըրցընէս։*

*Էտ հըրէվանը քյացէլ ա հարսին ասէլ՝ քյէ մատաղ, տունը ըյավ հըվաքի։*

*Հարսը ասէլ ա՝ գյիդըմ էմ։*

*Մի հէտ էլ հըրէվանը քյացէլ ա տէսէլ հարսը դօլմա յա էփըմ, էլի հարսին ասէլ ա՝ սըհէ-սըհէ է՛փի։*

*Ասէլ ա՝ գյիդըմ էմ։*

*Կընիկը ասէլ ա, վըէր գյիդըմ էս, դօլմի իրիսին մի աթար կըտըրնէս, յէդօվ ղուփը տընէս պիրանին, փակէս։*

*Տըհէնց էլ հարսը էփէլ ա։*

*Տանըցիք աշխադանքից յէկէլ էն, թա ուտէն, տէսէլ էն լօխ փուշացէլ ա։*

*Կէսուրը քյացէլ ա էն հըրէվանին կուշտը, ասէլ՝ ա՝ էտ ի՞նչ էս արէլ, պա քյէ ի՞նչ էմ ասէլ։*

*Հըրէվանը ասէց՝ հարսըտ ասըմ էր «գյիդըմ էմ»։*

*Պատմեց* Վարանցով Վարդանյանը *(ծն. 1927 թ.)*

## Կընգյանը օյինը

*Մի մառթ ինքը կընիկ ա առէլ, տուն ա արէլ։ Տասյէրօրթըն էլ ա պիրէլ։ Ցէրօվ էտ մառթը քյընըմ ա բաղար, բաղարիցը իրէք կիլօ ծուկ ա առնըմ, ղարկըմ տուն ու կընգյանը ասըմ՝ կէփէս, չըքէլ կյամ։*

Էտ կընիկը ասըմ ա՝ կա-չըկա, կախտնիքը էս ծըկան միջին ա։ Պիրըմ ա մի կիլօն հում ա հիլ անըմ, մի կիլօն էլ յախնի յա էփըմ, մի կիլօն էլ ժարիտ ա անըմ։ Մառթի կյա̈լի վախտը ըէխէն մի քիչ կէխտօտած ա լըմ, մառթիցը վախիլէն մի ամանի մէչ ա ածըմ, տընըմ ճօրքըմը։

Մառթը կյա̈լիս ա, ասըմ՝ սօված էմ, հաց տո՛ւ։

Կընիկը էտ ժարիտ արածը տալիս ա իրան, մառթը ու̈շու̈նց ա տալի, ասըմ ա՝ բա̈լի յէս խաշած ի ուտըմ, խի՞ յէս ժարիտ արէլ։ Կընիկը խաշածն ա տընըմ ղաքին։ Մառթը էլի ասըմ ա՝ բա̈լի յէս հում ի ուտըմ, կընիկը հումն ա տընըմ ղաքին։ Հըմի էլ ասըմ ա՝ բա̈լի յէս կէխտն ի ուտըմ, կընիկը էն ամանն ա տընըմ ղաքին։ Տա̈ արթէն տազ ա անըմ։

Պատմեց Ասկո Առաքելյանը (ծն. 1932 թ.)

Քօլի կէնթնիքը մի օր հըվաքվըմ էն ու ժօղօվ անըմ, վըէր կէտի վըրնօվը մի կարմունջ շինէն, վըէր պաժառի վախտը փախչէն։

Մի ժամից յէղը էշը ասըմ ա՝ ըրգյա̈նքին էք շինըմ, թա̈ լէնքին։

Պատմեց Ասկո Առաքելյանը

## ՉՈՐԱԹԱՆԻՑ

Հինգ թըվից աղաք էրկու ախպէր քյընըմ էն մի շէն, վըէր հունձ անէն։ Ասըմ էն, վըէր փէնջաքիցը իրէք խուրցը տալիս էն հընձօղին։ Էտ մառթիքը էտ խազէյինի առտը վըէր պըրծընըմ ին, մին էլ տալիս ին հըրէվանին, վըէր նըրանցն էլ հընձի։ Համա հախի մասին պա̈ն չին ասըմ, թէ ինչ ին տալի։

Հընձիլիս վախտը մին էլ հըրէվաննին կանչըմ ին, թէ շանը լակ էս տըվէլ։ Ասըմ ա՝ չէ, հըլէ տըվէլ չէնք։ Էն մինը ասըմ ա՝ յէս իմին տըվէլ էմ։

Էտ էրկու ախպօրն ին ասըմ, հա՛։

Էտ էրկու ախպէրը ըռշակապը կապըմ էն, օրաղը տընըմ, վըէր քյըշէրվա վախտ կյա̈ն տուն. փախչըմ էն։

Խազէյիննին մա̈նըմ էն, վըէր փախէլ էն։ Միյանը լիլըմ էն, կյա̈լիս, վըէր տըրա̈նց փըռնէն, էլի հընձէն։ Յէկան հասան, Թօ-

*վուզա տակին աղաք ըրին, յէտ դըբէտ տարան կէտին մի յըրդանին դէմ ըրին, վըէր խընթըրէցէք։*

*Ախպօր մընի պըռօշը ճըղվըմ ա, արինը քյընըմ։ Կյո̈ւճո̈ւր ախպէրը շատ սըրտօկ ա լըմ, տըրա̈նց ասէց.*

*— Տո̈ւք մըէզ ըսպանիլ դէք, գյօ̈վա̈միշ ըլէք։ Մըէզ վէշ թա տո̈ւք կըըսպանէք, էտ քըշէղակնին էլ մըէզ կըըսպանէն, մըէնք ըռշակապօվ էնք ու մա̈նգէղօվ, տո̈ւք էլ թըվանքօվ։ Ասըմ ա, թօղ մի թըվանք իմ ծէռքին ըլի, մինն էլ քու, յէս քէզ վըրա կյա̈մ, տո̈ւ յէլ ինձ, տէնանք օվ ա ըսպանըմ։*

*Էտ հարուստը ասէց՝ վառյաթ ըրա։ Ասէց քանի րէխա ունէս։*

*Նա ասէց, վըէր օխտը ախճիկ, մի տըղա ունէմ։*

*Հարուստը ասըմ ա՝ յէս բախշէցի ծըէզ էտ տըղին, քյընա̈՛ցէք։*

*Էտ էրկու ախպէրը յէտ էն տա̈ռնըմ, տա̈ռտա̈կ կյա̈լիս տուն։*

*Պատմեց* Մեխակ Սարուխանյանը *(ծն. 1891 թ.)*

*Մի սո̈ւրո̈ւն հարսը մի քյա̈հրիզի միշին մի կյօ̈ռտը ծընգանը տըրա̈ծ ստի կաղնէլ էր։ Օվ քյընըմ ա ճո̈ւր հանի, բըլա̈կիցը փըռնըմ ա ասըմ.*

*— Մի պա̈ն դէմ ասիլ, թէ քյըթա̈նա̈ս, թիլ կըտամ ճո̈ւր տանէս, թէ քյըթա̈նա̈ս վէշ, կյըլո̈ւխըտ կըտրիլ դէմ։*

*Մի հէտ էլ մի տըղա յա էտ քյա̈հրիզը քյընըմ, հըլէ էտ հարսը էլի յա հարց տալի, ասըմ ա՝ այ տըղա, էս կյօ̈ռտը իմ նըշանածն ա, ինձ լա̈՞յէղ ա, թէ՞ չէ։*

*Էտ տըղէն հըսկացօղ տըղա յէր, ասէց.*

*— Աշկի փըռնածը, սըրտի սիրածը, շատ լյա̈վն ա։ Տո̈ւ վէր սիրէլ էս, լյա̈վն ա, էլի։*

*Տա ասէց՝ քյըթա̈ր։*

*Էտ տըղէն ճո̈ւրը տարավ։*

*Կյօ̈ռտըն էլ տըրաքէց, մի սո̈ւրո̈ւն տըղա տա̈ռա̈վ։*

*Պատմեց* Մեխակ Սարուխանյանը

## ՄՈՎՍԵՍԻՑ

*Ղարադաղիցը յարալու ի պիրըմ։ Էտ թո̈ւշո̈ւմը դըբէտ մըտիկ արի, տէսա ծիյանը կըղնըցըրին, թօփը իրէսըս կալան։*

*Յէս վըռըվէռ վազ տըվի։ Տէսա վըէխճարը փըխցըրած տանըմ էնւ*

*Ջօքանը յէկավ սըհէ մըտիկ ըրավ (չյ՜հիլ ի, հա՜), ասէց տըղէք ջան, քյընըմ է՞ք։ Վըէր տէնան, կըտօրիլ դէն։*

*էտ Մյըղյըթը փախավ։ Ասէց Թէվան ջան, յէս վախըմ եմ, էտ շըլօրկուտիցը դէմ պըցրյընյըլ։*

*էտ չօքանը մի վըէխճար տըվուց, ասէց՝ մօռթէցէք։ Մյը-ղյըթը կյյըռը վէ կալավ։*

*Այ մառթ, թա հիվանդ էր, թա ըսպանված, տէսանք մի մառթի փօրի վըրա էշին քյըցյած պիրըմ էն,*

*Ծին փըխշըցըրի, պիրի մարաքը։ Տէսա շէննիկ-մէննիկ չը-կա, փախէլ էն։*

*Պատմեց* Վարդևան Մարգարյանը *(ծն. 1892 թ.)*

*Մի հատ վարժաքէդ յէկավ մըէր կյէղը, վըէր մըէզ մօնթէ-րիս սըվըրցընի։*

*էտ մօնթէրըս քյընյացինք հավաքվէցինք մի տուն։ էրկու օր մըէզ տյա տըվավ։*

*էրկու օրիցը յէդը յէկան վարժաքէդին փըռնէն տանէն, վըէր թաքուն ըշկօլ ա պյաց ըրէլ։ էտ մառթը քյըշէրը վէ կըցավ փա-խավ։*

*Ջօրս օրիցը յէդը մյացյանք, վըէր քյնյացէլ ա Պէրթ կյղը։ Ի-րիցի տանն էր։ Վէր կըցանք մի վէց մօնթ հացը շըլյակած քյը-նյացինք տըրա կուշտը։*

*էտ քյըշէրը նօրից տըրա չօրս ղօլը կըտրէցին, վըէր փըռ-նէն։ էտ մառթին էլի ըտէղից փախցըրին։*

*էտ ղաթը անց կըցավ մի վէց օր։ Նօրից խյաբյարը յէկավ, վըէր Թօվուզ ա քյընյացէլ։ Դէ հըմի ի՞նչ անէնք։ Ըստէղ մօտիկ էր, հացը շըլյակած ճյընըմ ինք. հըմի հացի պակասութին, վօ-տօվ, շըլյկօվ տանիլի չի։ Վէ կալանք ծին պիռնէցինք հացօվ, քյընյացինք քյըթյանք։ էտ քյըշէրը մընացինք։ Ռավէտը խյաբյար մյացյանք, վըէր էլի յէն յէկէլ փըռնէն։*

*Խէխճ վարժաքէդը նօրից փախավ։ էտ փախչիլօվն էր, վըէր փախավ։ Մըէնք էլ ըշկօլ չի քյընյացինք։ Յէս էտ թըվըմը տաս-նըմին տարէկան ի։*

*Պատմեց* Իվան Ասատրյանը *(ծն. 1886 թ.)*

## ՆՈՐԱՇԵՆԻՑ

Մի մառթ՝ ինքն ու իրա կընիկը էշը աղաք ըրած, իրանց ըէխան էլ իշի վըրա նըստըցըրած քաղաք ին քյընըմ։ Ծին-ծըրմէռն ա լըմ։ Քյընըմ էն տէնըմ ճամփի կօխկին մի քօռ մառթ ըտի վէր ընգյած վընգըստըմ ա։

Մառթըն ասըմ ա.

— Այ կընիկ, մէխկ ա էս քօռը, իշի վըրա տընէնք, տանէնք քաղաքի ղըրաղին վէր կըտինէնք, ընդէղ կապրի։

Կընիկն էլ ասըմ ա՝ այ մառթ, քօռը նիդա̈րա̈թ կըլի, բըրախի կօրչի։

Մառթը համօզըմ ա։ Քօռին տընըմ էն իշի վըրա, ըէխէն տընըմ քօռին խըտտին, քյընըմ էն։

Քաղաքի ղըրաղին քօռին ասըմ էն՝ վէր յէ էշիցը։

Քօռը ասըմ ա.

— Դօ̈ըը վէր կյա̈մ, էս իմ էշը, էս իմ ըէխէն, էս էլ իմ կընիկը։

Ու ծըղըրտըմ ա։

Մառթիքը կյա̈լիս էն թուփ ըլըմ։ Տանըմ էն տըրա̈նց առանձին-առանձին նըստըցընըմ, տըրա̈նց տըռանը ղաքին էլ մառթ տընըմ, վըէր ասածնին լըսէն։

Հըմի մառթը ասըմ ա. «Այ կընիկ, ինչ լյա̈վ ըսիր, վըէր քօռը նիդա̈րա̈թ կըլի»։

Կընիկն էլ ասըմ ա. «Այ մառթ, տա տա̈ռ քյէզ քիչ ա, ասի՝ քօռը նիդա̈րա̈թ կըլի»։

Քօռն էլ իրան-իրան պատմըմ ա. «Յա կընիկը ինձ կըտան, յա էշը, յա էլ ըէխէն»։

Մառթիք տէնըմ էն, վըէր իրանը չի։

Պատմեց Մովսես Գրիգորյանը (ծն. 1899 թ.)

Էրկուսից իրէք մառթ ճամփա յէն ինգյնըմ։ Շատ էն քյընըմ, քիչ, մինը ասըմ ա.

— Տըղէք, պիրէք ծիյանուց վըրիցը վէր կյա̈նք, մի քիչ ծիյանիքը ըրածէն, նօրից ճամփա ինգյնէնք։

Էտ մառթիքը վէր էն կյա̈լի, ծիյանը բըրախըմ, իրանք նըստըմ հէքյաթնի պատմըմ։ Տըրա̈նցից մինը նընջըլուկի չա տալի, քընըմ ա, չիբուխն էլ ղաքին սըհէ վէր տըրա̈ծ։

*Հընգէրը պիրըմ ա շիբուխը վէր ունըմ, թափ տալի, մէջը ցէխ կօխըմ, էլի մօխիրը ածըմ կըլխին, տընըմ տէղը։*

*էտ քընած մառթը վէր ա կէնըմ, շըխմախին տալիս, աղըջին տընըմ շիբուխի վըրա, քաշըմ ա, քաշըմ, տէնըմ ա ծուխ չի կյալի։ Պիրըմ ա քանդըմ շիբուխի մէջը, տէնըմ ա ցէխ ա։ Ու գյիդըմ ա, թէ օվ ա արէլ էտ պանը։ Ըրհէ վըրէն մըտիկ ա անըմ ու քաշըմ։*

*Պատմեց* Սամսոն Առաքելյանը *(ծն. 1907 թ.)*

*Սարին ունէմ կյուճուր տուն,*
*Միշին ունէմ վըէսկի սին.*
*Սինի գյօրմ բար չունէմ,*
*Ըրտօվ սիրած յար չունէմ։*

*Կէտըմը տիրէլ էմ կաշի,*
*Աշկըս ճամփին կըյաշի.*
*Մինչէվ իմ յարին կյալը*
*Աշկիս յէղը կըմաշի։*

*Բաղըմըս կա բաղմանչի,*
*Շէվը չէվին նըման չի.*
*Թաղ ու թառակ տուս յէկան,*
*Վէչ մինն էլ իմ յարին նըման չի։*

*Այ ափը կյա, ափը կյա,*
*Մըէծ ղըզանին քափը կյա.*
*Օվ քու սիրածը քյէ շըտա,*
*Ընըրկօլօյ տափը կյա։*

*Պատմեց* Սամվել Խաչատրյանը *(ծն. 1931 թ.)*

## ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐԻՑ

*Հյազյր ինը հարիր տասնէրկու թըվին Վէրին Կարմիրախպըրի ու Մուսէս կյէղի հանդամասի հօղի մըհար դավի յա էլ։ Կառավարութինից հօղաչափ ա յէկէլ, վըէր մըէր կյէղի ու Մուսէսի սահրյաը կըտրի։ էրկու կյէղի մառթիք լօխ մի տէղ թուփ ըլյած ին, համա Վէրին Կարմիրախպըրի Մէլունց Շամիրը էտ հօղաչափի կըշտին ա ըըմ Ծակ քարըմը։*

*Յէղօվ մուսէսէցիք հօղաշափի մըհար կաշառք էն տանըմ։ Շամիրը ասըմ ա՝ աղան հիլ չի անըմ, վըէր պիրէք, թօղ էտ պա̈նէրը Վէրին Կարմիրախպըրի մառթիք պիրէն։*

*Էտ մառթիքը մուսէսէցունց պիրածը տանըմ էն տալի Շամիրին։ Շամիրը տէղիցը կաղնըմ ա, ասըմ.*

*— Աղէն ապրած կէնա, Վէրին Կարմիրախպըրի ժօղօվուրթը աղի հըմար ըրշվաթ էն պիրէլ, ի՞նչ անէնք։*

*Էն հօղաշափն էլ էտ հանդը Վէրին Կարմիրախպըրի օքտին ա անըմ։*

*Համ մուսէսէցունց կաշառքն ա քյընա̈ցէլ, համ էլ փօղը։*

*Պատմեց* Նարիման Վանեսյանը *(ծն. 1902 թ.)*

*Նօրաշէնցի մի ջա̈հիլ տըղա յէկէլ ա Վէրին Կարմիրախպըրի կյէղը, մի սո̈ւրո̈ւն ախճըկա հէտ նըշանվէլ։ Նըշանվէլ ա ու թօղէլ քյընա̈ցէլ իրանց տուն։*

*Մի էրկու օրիցը յէդը մի դօշ ա կանֆէտօվ փընչէլ, զինքա̈շա̈ց ա յէկէլ։ Յէկէլ ա հասէլ ախճըկա տուն, մա̈ցէլ ա, վըէր իրա նըշանածը քյընա̈ցէլ ա ո̈ւրիշի։ Դօշը փընջած վէր ա կալէլ, յէտդըբէդ քյընա̈ցէլ իրանց տուն։*

*Պատմեց* Մաթևոս Առաքելյանը *(ծն. 1906 թ.)*

## ԲԵՐԴԻՑ

### Նախագահի վըէխճարը

*Մըէր նախագահին մի վըէխճար ա լէլ։ Վըէր ուշունքացէլ ա, ուզէլ ա մօռթի։ Յէկէլ ա կյէղի միչին ասէլ՝ օ՞վ կարա լյա̈վ մօռթի։ Ըտի յէլ մի քանի լօթի մառթիք էն ըլըմ թուփ ըլա̈ծ։ Ասըմ էն ո՞ւմ ղարկէնք, վըէր բաբաթ ուտօղ ըլի։ Էն ա Մէժլումանց Մուսէսին ղարկըմ էն ու թափշուր անըմ.*

*— Ա Մուսէս, էն մառթը չօբանղօրմաքի յա ուզըմ անի, քյէ յէնք թէկնածու տըվէլ, կըքյընա̈ս մի լյա̈վ կուտէս։*

*Նախագահն էլ Մուսէսին քյըթա̈վ, ասէց՝ Մուսէս դա̈յի, ինձ մի վըէրց ունէմ, կարաս մօ՞ռթէս։*

*Մուսէս դա̈յին ասըմ ա՝ մըքյա̈ր վըէնց կըկարամ, մըքյա̈ր վըէնց կըկարամ, բա տա̈ իմ փէշակը չի։*

*Ու Մուսէսին տարավ, ասէց՝ էս վը՞րցը դէս մօռթիլ։*

*Սարքիսը պատմըմ ա, թա պալտօս կախ արա, տո̈ւս յէկա, վը՞ր բալկօնիցը նըրան ասէմ էքուծ արի, տէնամ արթէն մօռթած պադրաստ ա։ Մընացի ըրմացած։*

*Ղազան-մազան պիրանք։ Մուսէսը տըրէլ ա կըրակին, խառնէլ ա ու կէրէլ, խառնէլ ա ու կէրէլ։ Մի ղօլ էփէլ ա, մի ղօլ կէրէլ, մընացել ա էրկու ջամ յէղ։ Ասէլ ա՝ իշտա̈հըս նօր էր պա̈ց ըլէլ, էլ վը՞րց չունէս պի՞րէս։*

Պատմեց Վաղլամ Անանյանը (*ծն. 1912 թ.*)

## Ծրղարանց Նարիմանը

*Մը՞ր պէրթցի մի հատ Ծըղարանց Մինաս կար։ Էտ Մինասը Տըռօճանի սարըմը մըՙռնըմ ա, սարն էլ վէշ սէլ ա քյ̈ը-նըմ, վէշ ծի, վը՞նց պիրէն պա՛։*

*Տըղան՝ Նարիմանը քյ̈ա̈լէրը լըծըմ ա, էնէնց լծուծ ու ծինջիլ էլ վէր ունըմ, քյ̈ընըմ Տըռօճաննին։ Ըտէղ հօրը կարպէտըմը փըթաթըմ ա ու մի քաշան կըտրըմ, կարպէտը տըմըմ վըրէն, թօկօվ լծա̈վ կապըմ ա ու քյ̈ա̈լէրը քյ̈ըշըմ, պիրըմ։*

*Հըմի Վէրին Կարմիրախպըրին շըհասած մի փօ̈լ կա։ Քյ̈ա̈լէրը քաշանը տանըմ էն ճո̈ւրը, տո̈ւս չէն կյ̈ա̈լիս։ Նարիմանը ասըմ ա՝ ապի, քյ̈ըշի, ապի քյ̈ըշի։ Դէ պապին ո̈՞ւր ա, մըՙռած ա լի։*

*Տա մի հատ ճուղ ա կըտրըմ, քաշանին տո̈ւս անըմ։*

*Հըմի մութն ա։ Տանը ճըրաքնին կըպցըրած ըսպասըմ էն։*

*Տո̈ւ մի ասիլ մինչի ճամփին թօկը պա̈ց ա ըլըմ, հէրը վէր ա ինգ̈նըմ։*

*Նարիմանը կյ̈ա̈լիս ա տո̈ւռը ու կանչըմ՝ հօ՜-հօ՜։ Տանիցը տո̈ւս էն կյ̈ա̈լի ու ըսկըսըմ՝ վայ ապի ջան, վայ ապի ջան։ Համա տէնըմ էն ապին կա վէչ։*

*Նարիմանը ասըմ ա.*

*— Ըսպասէք, ըխճըկէք ջան, ապին սըղացէլ ա, էլի քյ̈ընա̈ցէլ ա Տըռօճաննին։*

*Էտ ա ճըրաքնին վէր էն ունըմ, քյ̈ընըմ տէնըմ ապին ճըմփըմը վէր ինգ̈ա̈ծ, տանըմ էն տուն։*

Պատմեց Մայիլ Գաբրիելյանը (*ծն. 1918 թ.*)

*Պէրթ կյէղիցը Հօվագիմանց Համբոն կործօվ քյընըմ ա Թօվուզ։ Էտ օրը կործը պըրծընըմ չի, ղօնաղ ա մընըմ Նախագահի տանը։ Նախագահի քյը̈լփա̈թըն էլ սարըմն ա լըմ։*

*Վըէր լյիսա̈նըմ ա, Համազասպը շը̈ւտ աշխադանքի յա քյընըմ։ Համբոյին թափշուր ա անըմ.*

*— Համբօ ջան, հըրէս պըրիմուսը կըռցըրէլ էմ, խօրակը վըրէն տըրէլ, վըէր էփի պըրծընի, պըրիմուսը կըհընցըցընէս։ Ու Նախագահը քյընըմ ա կործի։*

*Տրա̈նից յէդը Համբօն խօրակը վէր ա ունըմ, համա պըրիմուսին ծանօթ չի լըմ։ Փըչըմ ա, փըչըմ ա, հանգչըմ չի։ Ի՞նչ անէմ, վը՞նց անէմ. պիրըմ ա ճը̈ւր ա ածըմ վըրէն։*

Պատմեց Մայիլ Գաբրիելյանը

**ՆԱՎՈՒՐԻՑ**

*Շահ-Աբաս թաքավէրը ու վա̈զիրը իրար հէտ ճամփա յին քյընըմ։ Տէհան մի մառթ իրէք տըէղ հօղ ա թուփ անըմ։ Վա̈զիրը ասէց՝ էս ի՞նչ հօղ ա սա թուփ անըմ։*

*Թաքավէրը ասէց՝ փօղի թալակ ա, լի։*

*Մի կյը̈ւճը̈ւր վըէր քյընա̈ցին, էտ վա̈զիրը ասէց յէդ դէմ տա̈ռնա̈լ մինը առնէմ, տէնամ ըըրա գօվությունը վըէրն ա։ Ֆասսը մանէթ տըվուց, մինը առավ։*

*Ու ծախօղը ասէց.*

*— Էս հօղը էն մառթին կըլխին կէնա, վըէր իրա հալալ ախպէրը հիլ ա ըրէլ, խօրթ ախպէր փըռնէլ։*

*Մի քիչ քյնա̈ց, ասէց էն մինն էլ դէմ առնիլ։ Հանէց տասսը մանէթ տվուց, էն մինն էլ առավ։*

*Էլի թուփ անօղը ասէց.*

*— Էս հօղը էն մառթին կըլխին կէնա, վըէր իրա սըրտի կախնիքը կընգա̈նը կասի։*

*Վա̈զիրը վըէր յէրօրթըն էլ առավ, թուփ անօղը ասէց.*

*— Էս հօղն էլ էն մառթին կըլխին կէնա, վըէր իրա յէռէսուն տարվա աղուհացը կօխ կըտա ու նըրա վընաս կըտա։*

*Տա̈ հիլ արին քյընա̈ցին։*

*Վա̈զիրը քյընա̈ց մի չօբանից մի հէյվարա դըըըռ առավ, մօռթէց, շախկան կախ արավ ու ըը̈ւզը̈ւնը քյընա̈ց խօռթ ախպօր տունը։ Ասէց, ախպէր, սօրի մի մառթ էմ ըսպանէլ, քյը-*

*նանք անհէտ անէնք։ էս ինչ արավ, խօռթ ախպէրը մօտ չէկավ։ Տի հիլ արավ ու ք՚ընանց յէռէսուն տարվա խըռօվ մըէծ ախպօր կուշտը ասէց.*

*— Ախպէր, յէս մի մառթ էմ ըսպանէլ, ք՚ընանք անհէտ անէնք։ Կըլ՚խիանմ, թաքավէրը ինձ ղարաղաչի կանի։*

*Մըէծ ախպէրը ասէց՝ դէ վէր, ք՚ընանք։*

*Ու վէ կըցան ճամփա ինգ՚ան։ Վըէր տան կուշտը հասան, վանզիրը ասէց քյընանք մի պան թափշուր անէնք՝ նօր։*

*Ախպէրը ասէց՝ ռադ անէնք՝ նօր, թէ չէ կըլ՚խիանմ։*

*Համա ղաքին վանզիրը նի մըտավ, ախպէրն էլ յէնէնէն։ Տէսան շախկէն կախ արած։ Ասէց՝ ախպէր, սըպանած մառթըս էս ա։ Ընկըսէցին խըռօված անիլը ու ուտիլը։*

*Կընիկը չօլիցը յէկավ, տէհավ շախկէն կախ արած ուտըմ էն։ Հարցըրուց՝ այ մառթ, էս ի՞նչ մըխս ա։*

*Վազիրը ասէց՝ թաքավէրի կըխտարն էմ մօռթէլ։*

*Կընիկը տ՚ուս պըռծավ, ք՚ընաց թաքավէրին խաբար յէտ.*

*— Թաքավէրը ապրած կըէնա, պա ասիլ չէս քու յէռէսուն տարվա վանզիրը կըխտարըտ մօռթէլ ա, իրա խըռօվ ախպօր հէտ ուտըմ էն։*

*Թաքավէրը ջաննամթ կանչէց։*

*Վանզիրը ասէց.*

*Թաքավէր ջան, թօղ մի քանի խօսկ ասէմ, ընդիյան յէդը ինչ կուզէս արա, քու ծառան էմ։ Ասէց՝ մըխտըտ ա, վըէր էն ճամփէն նըվէր ք՚ընըմ ինք, տէհանք էն հօղէրը, մըխտըտ ա, վըէր տասսը մանէթ տըվի ու առա։ Առաչինը իմ կըլխին կէնա, վըէր իմ հալալ ախպօրը հիլ էմ ըրէլ, խօռթ ախպօրը փըռնէլ։ Ասէց՝ էն յէրգրօրթըն էլ իմ կըլխին կէնա, վըէր իմ սըրտի կախտնիքը իմ կընգանը հայտնէլ էմ։ էն յէդինն էլ նըրա կըլխին կէնա, օվ վըէր իր յէռէսուն տարվա աղուհացը կօխ ա տալի։ էտ էլ քու կըլխին կէնա։*

*Վանզիրը հանէց պըլանիքը, մի փակ տ՚ուռ կար, պանց անիլ տըվուց, ու կըխտարը տ՚ուս պըռծավ, յէր հանա ք՚ընաց։*

*Պատմեց* Շահար Դանիելյանը *(ծն. 1874 թ.)*

## ՁԻՆՁԻՆԻՑ

*Վասիլ դանյին ծին տանըմ ա կլէրէզմանուտը, վըէր էրուկի։ Մութն ա լըմ։ Կլէրէզմանուտըմը վըէր ուզըմ ա մի պիհըը տա-*

*փին միջին ցից անի, շինէլի փէշը պիհրի հէտ մըտնըմ ա տա-փը։ Ուզըմ ա թէ վէր կէնա, տէղիցը, կարըմ չի, տէնըմ ա փէշը քաշէց։ Վախիլէն ծըվվըմ ա ու ինքը փախչըմ, կնա̈լիս կնէղը։ Կնէղըմը պատմըմ ա, վըէր կնէրէզմանուտըմը սըհէ-սըհէ պա̈ն ա պըրդահէլ։*

*Էքսը քնընըմ ա, օքմի յա հէտը տանըմ, ու տէնըմ էն, վըէր շինէլը պիհրի հէտ թաղված ա։*

*Պատմեց* Վարդանուշ Ադամյանը *(ծն. 1926 թ.)*

*Հին վախտի սըհէ օջաղ ա ըլըմ։ Էտ օջաղը հանգած ա ըլըմ։ Մի քնըշէր Վասիլ դա̈յին տէղիցը զա̈րթնըմ ա, տէնըմ ա իրանց օջաղի ղըրաղին մի հատ մառթ կա, թըվանքըն էլ ծէռին դըբա̈ իրան մէգնած ա։ Տա̈ վախըմ ա, ծէն չի հանըմ։ Իրան էլ մի թըվանք ա ունըմ։ Էտ թըվանքը վէր ա ունըմ ու դըբա̈ էտ մառթը կըրակ տալի։ Կըրակ տալիցը յէդը քնընըմ ա տէնըմ մառթ չի, չուգունն ա շաղ հընցած։*

*Կընիկն էլ ա տէղիցը վէր կէնըմ, վախիցը հարցընըմ ա՝ ճէտ ի՞նչ ա, էտ ի՞նչ ա։*

*Վասիլ դա̈յին ասըմ ա, թէ մառթ էր, ուզըմ էր մըէզ սըպանի։*

*Ջիմ էլ տէղնէրիցը վէր էն կէնըմ, տէնըմ չուգունն ա՝ մի շօր կըլխին քնըցա̈ծ։*

*Պատմեց* Վարդանուշ Ադամյանը

*Մի ամառ Վասիլ դա̈յին քնընա̈լիս ա ըլէլ Մօսկվա՝ ախպօր կօխկը։ Ախպէրն էլ ըտի նաչալնիկ ա ըլէլ։ Վասիլ դա̈յին խուրջինը ըլցրէլ ա ամէն ինչ, ճամփա ինգնէլ։ Ախպօրը տէհէլ ա ու հէտ նօրից յէկէլ։ Հէտ կնա̈լիս իրա ախպէրը իրա հին շօրէրը տըված ա ըլէլ, խուրջինի մէջին ա ըլէլ։ Խուրջինը վէր ա կալէլ, պօյէզ նըստէլ։*

*Էտ պօյէզի մէջ կանդօխտօրը հըրցընիլիս ա ըլէլ՝ ո՞ւր էս քնընըմ։*

*Վասիլ դա̈յին վախիցը մըտնըմ ա մի տէղ, ախպօր տըված վա̈յէննի շօրէրը կէնըմ ու կանդօխտօրի ղաքին սըհէ կա̈ղնըմ, ասըմ.*

— Ցէս Գարէգինն էմ, Վասիլը չէմ, տուք իրավունք չունէք ինձ փռնէք։

Վէրչը Վասիլ դայլին փռնըմ էն, տանըմ։ Խուրջինը ուսը քցած տանըմ էն Թիֆլիզ, պօյէզից վէր պիրըմ։ Մի Հայ էն պիրըմ, խօսէցընըմ, մանըմ էն, թէ ուր ա կնալի։ Պաց էն թօղըմ, կնալիս ա իրանց տուն։

*Պատմեց* Վարդանուշ Ադամյանը

**ԹՈՎՈՒՁԻՑ**

Հին վախտը սըհէ տընէր չէն լէլ։ Ձօրս սինի վըրա մի հատ մըէծ տուն ա լէլ, մէջտէղը կըրակ արած։ Մըէծ տուըը ունէր։ Էտ տուըը պաց ին անըմ մըէծ կնէրանը պիրըմ ին փիլլանի տակը քցըմ։ Հըմի հէտէվից լըծկաննի յին լըծըմ ու քաշըմ մէչ-ղօլ, չըքէլ կըրակին հասնիլը։ Էտ էլ տան մէջտէղը քարօվ շինած օջաղ էր։ Մի հատ էլ ակօշկա յէր ըլըմ, վըէր ծուխը ըտէ-ղօվ տուս կնա։ Էտ օջաղի ղըրաղին փէտից շինած ճըրաք էր ըլըմ։ Տըրան ճըրաքթաթ ասինք։ Տըրա մէչը կամ ծէթ ին ածըմ, կամ յէղ ու կըռացընըմ, պատից կախ տալի։

Ցէղօվ կընանիքը օջաղի ղըրաղը չէն կնալի տըքանան, վըէր մըռթկէքը ընդէղ ին։ Ճաշի վախտը մառթիքը էտ օջաղի ղըրա-ղին ին նըստըմ, իսկ կընանիքը, հարսնիքը քցընըմ ին էն ղօլը ու փալասնին կըլխընէրին քցըմ, վըէր էտ մըթնըմը հաց ու-տէն։

*Պատմեց* Ջահան Սմբատյանը *(ծն. 1890 թ.)*

Բինա ունինք, էլի։ Հըմի էլ էտ բինըմը կնուճիկ տուն շի-նած ապրըմ ինք։ Մըէր ժօղօվուրթը բըրախ ին կին տուն, էր-կու ըրէխէքիս էլ էտ օլաչաղըմը հիլ անինի։

Մըէնք մի ղընամէր կօվ ունինք։ Էտ կօվը կըթինք պըղըն-ձըմը, կաթը տըքցընինք ու էտ պըղընձըմն էլ փըռթինք ու իրար հէտ ուտինք։ Վըէր շատ ինք ուտըմ, վազ ինք տալի, վըէր կէ-րածնիս մարսէնք։ Տըրանի յէտն էլ վըէր մըէծէրը յէկան վէչ, էրկու հավ ունինք, մինը մօռթէցինք, կէրանք։

Ուավէտը իմ պապը յէկավ, ասէց՝ էս վը՞նց ա հավէրիցը մինը կա վէչ։

*Ասի՝ այ պապ, ղըրղին տարէլ ա։*

*Ասէց՝ բա թէփուռ-մէփուռը ո՞ւր ա։*

*Ասի՝ ի՞նչ էմ գիղըմ, յէտնան ման չի դէմ կյա̈լ, ղըրղին տարէլ ա լի։*

*Տըրա̈նի յէդը վըէր օլաչաղը ցըրտէր, քյընինք էտ տավարնէրի կօխկին քընինք, վըէր տաք ըլի։*

Պատմեց Աստղիկ Սմբատյանը *(ծն. 1910 թ.)*

*Պատրօնը տանն ա լըմ։ Էրկու հարսնէրն էլ էն տանը ըլըմ։ Տըրա̈նց մառթիքը սալդաթ քյընա̈ցա̈ծ էն ըլըմ։ Էտ ա հարսնէրը ՝կըզնըվէլ էն պատրօնի վըրա ու բուխարիկըմը կըրակ արէլ, ՝կօխկը նըստէլ։ Ճըղօպուրը կըտրատըմ էն, ուտըմ, կըտրատըմ էն, ուտըմ, խըճէպը ըտէղ ածըմ։*

*Էտ հայը կյա̈լիս ա ըտէղ պըրանվըմ։ Վըէր պըրանվըմ ա, տէնըմ ա կարըմ չի քընի։ Էն ա պա̈ց ա անըմ, տէնըմ ճըղօպուրի խըճէպըն ա իրա տակին։ Մի լյա̈վ ղայիշ ա ունէնըմ, վէր ա ունըմ, տո̈ւռը փակըմ ու տըրա̈նց թակըմ։*

*Էտ ա հարսնէրը տո̈ւս էն տա̈ռնըմ, փախչըմ։*

Պատմեց Անդրանիկ Սիմոնյանը *(ծն. 1904 թ.)*

## ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐԻՑ

*Ըլէլ ա, չէլ չի, մի կյօղ մառթ ա լէլ՝ անըմը Մակի։ Էտ Մակին վըէր կյօղութէնի մէչ փըռնըվըմ ա, քյօխվէն նըրան մի լյա̈վ տուր ա տալի, դընգըստըմ ա ու տանըմ իրանց մարաքը քյըցըմ, տո̈ւռը փակըմ, վըէր տո̈ւս չի կյա̈։ Մարաքի տըռանն էլ մի ղաբավուլ ա տընըմ, վըէր տըրան պահի։*

*Քյըշէր վախտը էս կյօղ Մակին մարաքի քըմակի ծակօվը տո̈ւս ա կյա̈լի քյընըմ չէնի դո̈ւքա̈նը կըտրըմ, ճօթը, կըտօրը մէչօկը լըցնըմ ու տանըմ մի ո̈ւրիշ մարաքի մէչ մէչօկը պահըմ։ Էլի հէտ ա կյա̈լի նի մըտնըմ իրան մարաքը։*

*Ռավէտը վըէր խալխը զա̈րթնըմ ա, վըրավո̈ւդ էն անըմ, տէնըմ դո̈ւքա̈նը կըտրած, բըղավըմ էն։*

*— Այ խալխը, յէ՛կէք, դո̈ւքա̈նը տարան, թըլանէցին, ճօթկըտօր չըմընաց։*

*Խալի ծէնը վըէր լըսըմ ա, Մակին պահակին ասըմ ա. «Տը-*

րա̈նց հէրն էլ էն անիծէլ, դէ թօղ մին էլ ասէն, թէ Մակին ա կըտրէլ դո̈ւքա̈նը»։

Պատմեց Իվան Ադամյանը (ծն. 1902 թ.)

Մըէր կյէղացի մի բիձային ղարկըմ էն էշմիածին, վըէր քյը-նա̈ տէրտէր օխնըվի։

Էտ խըէխճըն էլ չըրխընդիկ ա լըմ։ Ծօրէր-մօրէրը կէնըմ ա, զո̈ւքվըմ-զըրթա̈րվըմ ա, մըրուք էլ թօղըմ։ Լյա̈վ կընգըրըշ-տուրիկ տըրխընի յա պիրըմ, չուխա-մուխա, ըրխալուղ, մօթալ փափախ թըղըցըրած վէր ա կըէնըմ, հացըճո̈ւրը շըլակըմ, մի հարիրանոց էլ տընըմ գյո̈ւլբի տակին, տըրխընի կէնըմ ու ճամ-փա ինգյնըմ, դըբա̈ էշմիյածին։

Շատ ա քյընըմ, թէ քիչ ա քյընըմ, մի շափթից յէդը հաս-նըմ ա սըրփատէղը։ Խըէխճը շատ էր սօվէլ, բըզա̈րէլ։ Մըտնըմ ա մի դալդա տէղ, վըէր փօղը հանի, հացը-ճըրի տա։ Վըէր տըր-խընին հանըմ ա, ուզըմ ա կըրընկի տակիցը փօղն էլ հանի, տէնըմ ա հարիրանոցը փութուր-փութուր ա լէլ։ Էրկու ծէռանը մի կյըլո̈ւխ։ Կյըլո̈ւխը թակըմ ա, մազէրը պուք ա տալի, համա օ՞վ ա նըրան մըտիկ անօղը։

Պատմեց Իվան Ադամյանը

Կընիկը կընիկ ա լըմ, անըմն էլ ա մին, համն էլ ա մին։ Կընիկ կա՝ տուն կըքանդի, կընիկ էլ կա՝ տուն կըշինի։ Տունըտ քանդվի այ անըմ տընօ̈ղ, վըէր թա̈մո̈ւզի անըմն էլ մին էս տը-րէլ։

Պատմեց Իվան Ադամյանը

Վըէր ծընօղնին լյա̈վ ըլէն իրանց ըխճըկանը չօլըմը չէն մառթի տալ, ըխպըհարը կըճըղէն, ըխպըհարըմը ախճիկ կըտան։ Իրանց մէյիդը չօլը չէն քյըցիլ։ Չէ վըէր ըխճըկանը վա̈թա̈ն չի կա։

Տըղա ունէցօղ հէրնըմէրն էլ իրանց էվլա̈դին իրա կյէղիցը ախճիկ կուզի, այսինքըն թէ ճիպօտը իրանց քօլիցը կըկըտրէն, ըխպըհարը կըճըղէն, ըխպըհարիցը ախճիկ կուզէն։

Պատմեց Իվան Ադամյանը

## ՊԱՌԱՎԱՔԱՐԻՑ

*Մըէր կյէղըմը մի հարուստ մառթ կար՝ անըմը Արսէն էր։ էնքան հարուստ էր, վըէր վէց ճաղաց ունէր։ էրկուսն էլ ուզէց շինի, ութը տա̈ռնա̈, հինգ թըվի փունդը վէր կըցավ։ էտ ճաղացնին էլ շինէց վէշ։*

*էտ Արսէնը վըէր տըղին հըրսանիք անէր, տա̈ իրէք-չօրս տէղ մա̈րա̈քա̈ յէր սարքըմ։ Իրա տըղին մի մա̈րա̈քի մէջ ղարկէր, ախպօրը՝ մին։ Ինքը մընար ժօղօվուրթի կըշտին։ Ասէր՝ իմ ժօղօվուրթի սուփրէն քաշէք, յէզօվ ղարիբինը։*

*Յէզօվ տըրա̈ քէփին դիպան վէշ։ Մըէր ժօղօվուրթը ասէց՝ տըրա̈ն մըէնք փըռնիլ չէնք։ էն ղայդի մառթին պահէցին կյէղըմը։ էն մէկէլ կյէղէրը մընացին զարմացած։*

*Պատմեց* Սերգո Դալլաքյանը *(ծն. 1879. թ.)*

*Մի օր քյընա̈ցինք հօրս, փակ արինք, սօւրա̈գ արինք։ Հընգէրըս մի կըխտար սըպանէց, մինն էլ յէս սըպանէցի։ էտ քյըշէրը մընացինք ըտէղ ու մըէս խըրօվէցինք կէրանք։ էքսը վէր կըցանք, չէլը րօւգօւնը ման յէկանք, մի հատ էլ էն մի հընգէրըս սըպանէց։*

*Մըէր կյէղըմը մի լյա̈վ մառթ ունինք։ Մի հէտ էլ էտ լյա̈վ մառթի տըղէն ասէց. «Ինձ մի կըխտար ա պէտկը, յէկէք քյընա̈նք սըպանէնք պիրէնք»։*

*Քյընա̈ցինք էտ օրն էլ տըրա̈ մըհար մինը սըպանէցինք։ Տա̈ վէր կալավ ու տարավ իրա նաչալնիկին։*

*Պատմեց* Սերգո Դալլաքյանը

*էրկու ախպէր էն ըլըմ։ Տըրա̈նցից մըէծը փըսակված ա ըլըմ։ Տա̈ վէր ա կըէնըմ քյընըմ կօրծի։*

*Տըրա̈ հարսին սիրէկան ա ըլըմ։ Սիրէկանը տէնըմ ա, վըէր էտ տըղէն քյընըմ ա կօրծի, ասըմ ա՝ էտ ա իմ պա̈նը օղատն ա ըլըմ։*

*Փըսակված տըղի կյօւճօւր ախպէրը ասըմ ա՝ աշկէրըս տէնըմ չէն, էս ի՞նչ պա̈ն ա։ Հարսըն էլ մըտկըմը ասըմ ա՝ լյա̈վ ա, տէնալ չի։ Ասըմ ա՝ էքուց մի վըէրցակ տանէմ մատաղ անէմ, վըէր աշկէրըտ սըղանա։ Ու քյընըմ ա ասըմ.*

— Ցա սըրփոտիկ, տո̈ւ Շըմօյի աշկէրը անէս կյօ̈տիկ-մօտիկ, հէ՜նց քօռըցընէս, վըէր տէնա վէշ իմ արարքը։

Հարսը կյա̈լիս ա հարցընըմ՝ վըէ՞նց ա աշկէրըտ։

Տըղան ասըմ ա՝ զօլ չի տէնըմ։

Հարսը ասըմ ա «էտ լյա̈վ ա»։ Պիրըմ ա կըտրին աղուն ա փըռըմ, մի սարի յա պիրըմ տալիս Շըմօյին, վըէր հավէրը քիշ անի։ Ինքը քյընըմ ա խավիծը տընըմ կըրակի վըրա ու վազ տալի ախպո̈ւրը, վըէր սառը ճո̈ւր պիրի։

Էտ սիրէկանը կյա̈լիս ա Շըմօյիցը թաքուն տան ծակօվը յաշըմ, տէնա հարսը տանն ա, թէ՝ չէ։ Շըմօն սարին տանըմ ա, ըրհէ պիրըմ, խըզըկօթին տալի։ Տա ինգյնըմ ա տանը մէշը ու մըէռնըմ։ Շըմօն խավիծը լըցնըմ ա էտ մառթի պէրանը, ու ինքը նըստըմ ա կըտրին։

Հարսը ախպըրիցը կյա̈լիս ա տէնըմ, ըրմանըմ ա։ Իրան-իրան ասըմ ա. «էս բալէն մըէռածը սօված ա լէլ»։

Պատմեց Մովսես Հարությունյանը (ծն. 1925 թ.)

## ՀԱԽՈՒՄԻՑ

Կյա̈րո̈ւնքը վըէր կյա̈լիս էր, համբարցում ին ասըմ, էտ համբարցումին նըստըմ ին, հարսն ու ախճիկ թուփ ըլըմ։ Մի հատ ըրհէ պուլիկ պիրըմ ին, մա̈շո̈ւր պա̈նէր՝ մըտանի կըլի, կօճակ կըլի, տըրհէ խո̈ւրդա̈ պա̈նէր ածըմ ճիրի մէշը։ Պիրըմ ին մի կյո̈ւճո̈ւր ըխճըկա աշկէրը կապըմ, պուլիկը տընըմ իրա կյօ̈քըմը։ Տըրհէ անըմ-անըմ ասիլ դէնք, վըէր հանի բախտը, օվ վըէր կըկյա̈՝ ախպէրը կըլի, նըշանածը կըլի, հընգէրը կըլի։ Էտ բախտի վըրա ստի պա̈նէր էր կյըրա̈ծ.

Սարի թըռթընչուկ թա̈զա̈,
Մըէղըրու շա̈քա̈ր քէզ մա̈զա̈.
Ինձ պէս նազան ախճիկը
Քէզ պէս տըղին վըէնց սազա։

Կյո̈ւճրիկ ախճիկ, համ ունէս,
Ծօրիտ դիմացը ծամ ունէս.
Խունչիկ-մունչիկ մի անիլ,
Ինձ տա̈նիլու կամ ունէս։

*Այ ալին տըղա, ալին տըղա,*
*Քյա̈քյու̈լըտ ղալին տըղա,*
*Այ տըղա, քյնէ վօրդի սիրէցի,*
*Իմ հէրանց կալին՝ տըղա։*

*Ծըէր տան տակին վար կանէմ,*
*Ջար ակռավին քար կանէմ.*
*Օվ իմ սիրածը ինձ կըտա,*
*Գիժութինըս թյո̈րգ կանէմ։*

*Ա հում տըղա, հում տըղա,*
*Ախպըրին կըլխին քուն տըղա.*
*Ծաղիկըս ճիրօվ էմ քաշըմ,*
*Կօ՛րի, քյընա՛, շան տըղա։*

*Պատմեց* Սանամ Աբրահամյանը *(ծն.1906 թ.)*

## ԾԱՂԿԱՎԱՆԻՑ

*Մի կյէղացի մառթ ու կընիկ էն ըլըմ։ Տըրա̈նց րէխա չէն ունէնըմ։ Էտ մառթը մի հէտ քյընըմ ա բազար, զատիկի հըմար առուտուր ա անըմ ու քյընըմ աշխադանքի։ Կընիկն էլ տանն ա լըմ։*

*Ռավէտը կընիկը տո̈ւս ա կյա̈լի տէնըմ մի անծանօթ մառթ իրանց կյէղի ղըրաղօվը կյա̈լիս ա, Ասըմ ա.*

*Ախպէր ջան, զատիկը տո̈ւ յէս, դէ յէկ քու փայը տար, իմ մառթը էրէգվանից տէսն ա բազարիցը պիրէլ ա, խի՞ չէս տանըմ։*

*Էտ կընիկը ինչ վըէր բազարիցը առած ին ըլըմ, տալիս ա էտ մառթին ու էլի ասըմ.*

*— Ախպէր ջան, մըէզ րէխա չունէնք, կա՞րաս մըէզ հըմար կիր անէս, վըէր մըէզ րէխա ըլի։*

*Տըրա̈նց էլ մի լյա̈վ դանա յէն ունէնըմ։ Էտ մառթը ասըմ ա, վըէր էտ դանէն ինձ տաս, կիր կանէմ։*

*Կընիկը համաձայնվըմ ա։ Իրանց սէվ հավը մօռթըմ ա, մի կըտօր էլ ընջօտած թուխտ ա պիրըմ տալիս էտ մառթին։*

*Մառթը հավի առնօվը ու բո̈ւլբո̈ւլօվը կիր անըմ ա։ Ցէղը հըրցընըմ ա.*

*— Ուզըմ էս առաշինը տըղա ունէնաս, թէ՝ ա՞խճիկ։*

*Կընիկը ասըմ ա՝ ախճիկ։*

*Տի չէլ թըխտի վըրա կիր անըմ ա, տալիս իրան։*

*Բո̈ւզա̈նը մառթը կյա̈լիս տուն, տէնըմ ա կընգյա̈նը քէփը շատ լյա̈վ ա, հըրցընըմ ա, թէ՝ ա կընիկ, էտ ի՞նչ ա պըրդահէլ։*

*Կընիկը ասըմ ա.*

*— Այ մառթ, սօր զատիկը չէկավ, իրա փայն էլ իրան տըվի, մըէր դանան էլ իրան տըվի, սէվ հավն էլ մօռթէցի,, առնօվը մըէզ կիր արավ։*

*Մառթը ասըմ ա. «Հայիփ քըէզ, իմ աշխադանք, վըէր էս կընիկը դէն ածէլ ա»։ Իրան-իրան ասըմ ա. «էքուծ վէ կէնամ, քյընա̈մ աշխար-աշխար ման կյա̈մ, թէ իմ կընգյա̈ նման շա̈շը էլ կըպըրդահի, կըկյա̈մ տիրութին կանէմ, թէ՝ չէ, կյըլո̈ւխ վէ կունէմ, փախչէմ»։*

*Ռավէտը լյիսա̈նըմ ա. էս մառթը ճամփա յա ինգյնըմ։ Թէ շատ ա քյընըմ, թէ՝ քիչ, վըէր մի ո̈ւրո̈ւշ կյէղիցը մօտանըմ ա, տէնըմ ա էտ կյէղի տակօվը կէտ ա քյընըմ, ղըրաղին էլ կընանիքը իրանց շօրէրը լըվանըմ էն։ Տըրա̈նցից մինը հարցընըմ ա՝ ախպէր ջան, վըէրդի՞յան էս կյա̈լի։*

*էս մառթըն էլ նէղացած մառթ, ասըմ ա՝ զօլ քու մըէռէլի կօխկից էմ կյա̈լի։*

*Կընիկը ասըմ ա.*

*— Վըյ ախպէր ջան, բա մըէր Մինասը վըէ՞նց ա։*

*Ասըմ ա՝ լյա̈վ չի. վէչ թո̈ւթո̈ւն ունի, վէչ փօղ ունի, վըէր ապրի։*

*էտ կընիկը վազ տալօվ քյընըմ ա տուն, իրա մառթը նէղ օրի համար վըէսկի ու արծաթ փօղ ա վըհաքած ըլըմ, պիրըմ ա տալի էտ մառթին։*

*էտ մառթը ասըմ ա. «Իմ կընգյա̈նիցն էլ շա̈շ կա, իմ կընիկը լյա̈վն ա»։*

*Վէր ա կէնըմ կյա̈լիս տուն ու իրա կընգյա̈նը տիրութին անըմ։*

Պատմեց Հրանտ Բաղալյանը *(ծն. 1930 թ.)*

*Մի քյա̈սիբ մառթ ա լըմ, տըրա̈նց էլ մի ղազ էն ունէնըմ։ Մի օր էտ մառթը ասըմ ա.*

*— Այ կընիկ, ղազը մօռթի, թըմըղի, տանիլ դէմ թաքավէրին նըվէր։*

*Կընիկը ղազը մօռթըմ ա։*

*Մառթը տանըմ ա, ասըմ.*

*— Թաքավէրը ապրած կէնա, քէզ մըՙար մի ըյա̈վ նըվէր ւ̈էմ պիրէլ։*

*Թաքավէրը ասըմ ա, վըէր պիրէլ էս, էրկու տըղա՛, էրկու ախճիկ ունէմ, մի կընիկ. մինն էկ յէս, մինն էլ տո̈ւ։ Թէ կարաս իմ ուզածօվը փայ անէս, քէզ վըէսկի կըտամ, թէ չէ՝ տո̈ւ տըՙէնց քյա̈սիբ էլ կըմընաս։*

*Էտ մառթը ղազի կյըլո̈ւխը կըտրըմ ա, տալիս ա թաքավէրին, ասըմ ա՝ վօրպէս աշխարի տէր, էս՝ քէզ։ Թէվէրն էլ տալիս ա ախճիկնէրին, ասըմ ա՝ էս ա մըծացէլ էք, չո̈ւշտ թըռչիլ դէք, քյընա̈ք։ Վըէտնէրն էլ տալիս ա տղօրանցը, ասըմ ա՝ ծըէր ըյա̈վ վըէտնիլած վախտն ա՝ ծըէզ։ Փօրը-մօրը տալիս ա կընգյա̈նը, վօրպէս ղըՙրաքաշ։ Էն մընացածը ինքն ա վէր ունըմ, ասըմ ա՝ քյա̈սիբ մառթ էմ, էս էլ՝ ինձ։*

*Թաքավէրը տըրան վըէսկի յա տալի։*

*Հըրէվանը ասըմ ա, վըէր տա մի ղազ ա տարէլ, յէս ՙինգը տանէմ, վըէր շատ վըէսկի տա։ Ու ղազէրը տանըմ ա, ՙամա ՙիշքան մըտածըմ ա, կարըմ չի փայ անի։*

*Թաքավէրը էլի առաչվա մառթին ա կանչըմ։*

*Տա մի ղազ ա վէր ունըմ, տալիս թաքավէրին, ասըմ՝ տո̈ւք մառթ ու կընիկ, ղազն էլ ծըէզ նըՙէտ՝ իրէք։ Մինը տալիս ա էրկու տըղէրանցը՝ էլի իրէք։ Մինն էլ տալիս ա էրկու ախճիկնէրին՝ էլի իրէք։ Էրկուսն էլ ինքն ա վէր ունըմ, ասըմ ա՝ յէս էլ ՙէտը՝ իրէք։*

*Էտ թաքավէրը էլի տըրան շատ վըէսկի յա տալի։*

*Պատմեց* Հրանտ Բաղալյանը

## ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

### ԼԱԼԻԳՅՈՒՂԻՑ

*Հէրվանի մըէր ղօշը յէկէլ ա տուն մըտէլ, մըտիկ ըրէլ ա, տէՙէլ վըէր շըփանէրի միչին մի ղօշ կա։ Գյիղա̈ցէլ ա, թէ ո̈ւրո̈ւշ ղօշ ա։ Տուր ՙա կըտաս ՙայլո̈ւն։ Տըվուց, ճա̈ռթէց, փըշըրէց վէր ածէց, կօտրատէց։*

Տան կընիկը նի յա մըտէլ տէնա, թէ էտ ինչ ա, ղօշը յէտ տա̈ռա̈վ, վըէր մին էլ կընգյա̈նը տա, մի հանքօվ տո̈ւս հանէց։

Պատմեց Հոռոմսիմ Ճոկլինյանը (ծն. 1905 թ.)

Ըլըմ ա, ըլըմ չի, մի հատ մառթ ա ըլըմ։ էտ մառթը շատ աժդահա յա ըլըմ։ Տըրան ունէնըմ ա իրէք տըղա. ամէնից պո̈ւճո̈ւրը շա̈շ ա ըլըմ։ Իրանցիցը մօտիկ էլ մի դէվ ա ըլըմ։ էտ դէվը մառթ ա ուտըմ, ախճիկ ա ուտըմ։

Մի հէտ էտ մառթի մըէծ տըղէն ասէլ ա, վըէր հըրէղէն ծին, թուրը տու, գընա̈մ դէվին ըսպանէմ, նըրա հարըստութինը պիրէմ մըէր տուն։ Ու գընա̈ց մըտավ կյո̈մը, հըրէղէն ծին հանէց, հօր թուրը վէ կալավ, մըտավ դէվի բաղը։

Դէվը նօքա̈րին ասէց, վըէր էտ մառթը բաղն ա մըտէլ, տէս հաղօղը ճիթօվ ա ուտըմ, թէ գիլէքն ա կուլ տալի։

Նօքա̈րը ասէց՝ գիլէքն ա պօկըմ ուտըմ։

Դէվը վըէր տո̈ւս յէկավ, մի հէտ փըշէց, էտ տըղէն ծիյի քըմակօվը վէր ինգյա̈վ։

Մին էլ նըրանից պո̈ւճո̈ւր ախպէրը յէկավ ու մըտավ դէվի բաղը։ էտ տըղէն մի քիչ ճիթօվ էր ուտըմ։

Դէվի հէտ կըռվէցին։ Դէվը հախթէց, նա փախավ գընա̈ց։

Հըմի խա̈բա̈րը տանք պո̈ւճո̈ւր շա̈շ ախպօրը։ Տա գընա̈ց հօրը ասէց.

— Ապի, թուրն էլ, ծին էլ ինձ տը՛ւ, յէս գընա̈մ դէվին ըսպանէմ, հարըստութինը պիրէմ։

Ապին ասավ, թէ քէզ էլ թաղէմ, նըրանց էլ թաղէմ։ Խէլօքնին ի՞նչ արին վըէր տո̈ւ ինչ անէս։

Պո̈ւճո̈ւր տըղէն ծին վէ կալավ, գընա̈ց մըտավ դէվի բաղը։

Նօքա̈րը ասըմ ա.

— Դէվ ախպէր, մինը յէկէլ ա, ասըմ ա՝ արի կըռիվ անէնք։ Տա վազնէրն էլ ա ուտըմ, վըէնց վըէր կյո̈մէշը բաղը մըտնի, նըհէնց ա ուտըմ։

Դէվը տըրանից վըխէցավ։

Տըղէն հըրէղէն ծին նըստէց, էրկու հէտ վըէր պատ տըվուց, դէվի կյըլո̈ւխը պօկէց։

Հըմի դէվի արինը արխի պէս գընըմ ա, կյըլո̈ւխն էլ ընդէղ վէր ընգյա̈ծ բըլբըլացնըմ ա։ Դէվի կըշտին էլ մի լյա̈վ սո̈ւրո̈ւն ախճիկ կա։

*Էտ տըղէն էտ ախճըկանը ասէց՝ արի դէվին ինչ-վըէր պահած պա̈ն ունի, չիմ տըէղը ինձ ասա։*

*Ախճիկը տըէղէրը ասէց։*

*Տըղէն դէվի կյըլո̈ւխը ու վըէսկի տիկը տըրո̈ւց ծիյին առաջին, քյընա̈ց տուն։*

*Ապին տո̈ւս յէկավ, ասէց. «Քյէ մատաղ, տո̈ւ դէս իմ ծուխը ծըխիլ, յէկ ճըկատիցըտ պաչէմ»։*

Պատմեց Հոռոմսիմ Ճոկլինյանը

## ԱՅԳԵՀՈՎՏԻՑ

*Մի ծույլ տըղա յա լէլ։ Էնքան ծույլ ա լէլ, վըէր վէր չի կըէնըմ իրանց տանիցը մի կըտօր հաց ուտի։*

*Տըրա̈ հէրը մի օր սէլը լըծըմ ա, տըղին շըլա̈կըմ ա տանըմ տընըմ սէլին, ու քյընըմ էն փէտի։ Վըէր քօլիցը մօտանըմ էն, հէրը յէզնիքը թօղըմ ա, տըղէն մընըմ ա սէլի միչին։*

*Հըմի արէվի տակին էրվըմ ա, վէ չի կյա̈լի, վըէր սէլի տակն էլ ա մըտնի։ Քիչ-քիչ իրան սէլի վըրէն բըզըմ ա, յէզօվ վէր ա ինգյնըմ ու սէլին մըտիկ անըմ, ասըմ. «Պա՜հ-պա՜հ, մառթըն ու ծիտը մին էն հա, յէս վըէրդէզ ի, հըմի վըէրդէզ էմ»։ Սէլի տակին մի փէտ ա վէր ունըմ, ըսկըսըմ ա ֆըէղը քանդիլը։ Մի պուլիկ վըէսկի յա տո̈ւս կյա̈լիս։ Հըմի իրան-իրան մըտածըմ ա. «Վըէր իմ հէրը կյա̈, կասի քանդի հանի, պա յէս քանդօղ էմ»։ Էտ մօմէնտին տէնըմ ա իրէք ծիյավէր էն քյընըմ, կանչըմ ա, վըէր իրանց տա։*

*Ծիյավէրնին կյա̈լիս էն սէլի կըշտին կաղնըմ։ Հըմը լյո̈ւզո̈ւն վըրա չի կյա̈լի, վըէր ասի վըէսկի յէմ քյըթէլ, ասըմ ա.*

*— Ա դա՛յ, էս կարմիր յէզը սէվ յէզանը ի՞նչն ա։*

*Տըհա̈նք ծիյանը քյըշըմ էն, հըռանըմ։*

*Տըղէն փո̈ւշմա̈նըմ ա, ասըմ ա. «Լյա̈վըն էն ա ջանըս թափէմ»։*

*Էտ մառթիքը վըէր հէտ էն տա̈ռնըմ, էլի չի լյո̈ւզո̈ւն վըրա կյա̈լի, ասըմ ա.*

*— Ա դա՛յ, նիգա̈րա̈ն չըլէք, էս սէվ յէզը էս կարմիր յէզանը ախպէրն ա։*

*Հէրը էտ մօմէնտին կյա̈լիս ա։ Հէր ու տըղա մի հանքօվ հանըմ էն, պուլիկը տընըմ սէլին, տանըմ տուն։*

Պատմեց Աղաբեկ Ամիրջանյանը *(ծն. 1902 թ.)*

Մի տըղա մի օր զընքա̈շյա̈ց ա յէկէլ։ Զա̈նքա̈շը տըրա̈ ըսա̈վ համփու ջա տընըմ։ Էտ տըղէն կծա̈լիս ա մի ծօ̈րըմ նըստըմ ու զա̈նքա̈շի տըված պա̈նէրը հանըմ ա ուտըմ։ Վիրէվ ա մըտիկ անըմ, ասըմ.

— Է, աստված ջան, բա վէր քծէ զա̈նքա̈շ չունէս, տո̈ւ վըէ՞նց էս անըմ։

Պատմեց Աղաբեկ Ամիրջանյանը

Էրկու ախպէր էն ըլըմ։ Մընի անըմը Շա̈քա̈ր ա ըլըմ, մընի անըմն էլ՝ Շա̈միր։ Էրկուսն էլ դո̈ւքա̈նչի յէն ըլըմ։ Ձըքէլ ճա̈շը պո̈ւճո̈ւր ախպէրն ա կաղնըմ, ճա̈շից յէգօ յէլ՝ մըէծը։

Հըմի պո̈ւճո̈ւր ախպէրը մի տախտակի վըրա օրվա պատկէրը կավիճօվ կծըրէլ ա։ Մըէծը յէկէլ ա, ասէլ՝ ա՛խպէր, տո̈ւ ըծա̈վ չէս կծըրըմ։

Տա̈ յէլ փափախը վէր ա կալէլ, ճընջէլ. ասէլ ա՝ դէ տո̈ւ կծըրի։

Պատմեց Ալեքսան Ամիրյանը (ծն. 1893 թ.)

## ԴԻՏԱՎԱՆԻՑ

### Կոպալանց Սըմբատի խօրակը

Մի ծըմէռ ուզունթալցիք ժամի տակին վըհաքված ըրքո̈ւնի յէն աբէլ, լըխկըռդու յէն անըմ։

Էն ղօլիցը մինը թէ՝ ա՛րա, էնքան հաչհաչէցինք, վըէր լիփակէրնէրուս էլ վէր տա̈ռա̈ն, սօված էլ էնք կըտօրվըմ, յէկէք քծընա̈նք։

Մինն էլ էն ղօլիցը թէ՝ ա̈գա̈՛րա̈, խի՞ սօրի զատ չէս կէրէլ։

Կօպալանց Սըմբատն էլ էն ղօլիցը՝ ա՛րա, սօրի մի յաման խօրակ էմ կէրէլ, մի յաման պա̈ն։

Էս ղօլա, էն ղօլա վըրա տըվին, թէ՝ ա՛սա, տէնանք էտ ի՞նչ էս կէրէլ։

Սըմբատը թէ.

— Ա՛րա, գծիդա̈մ վէչ, մըէր պառավը էրէ պըռունգը կօտ-

րած ծինգին պիրո̈ւց, տըրո̈ւց կըրակին, փէտի քյըթալօվը պուլկիցը մի քյըթալ յէղ հանէց, քյըցէց մէշը։ Մի պօլօզ սօխ էլ կըտօրէց, տըրո̈ւց կըրակին, ճընչըռըստըցըրուց, ճընչըռըստըցըրուց։ Յէտնա յէլ տըռան տակիցը տօ̈րա̈կը պա̈ցէց, քըլքըլալի ճո̈ւրը ածէց մէշը, էփէց-էփէց, աղ քյըցէց մէշը, այանք քյըցէց։ Յէտնա յէլ քյընա̈ց մի էրկու-իրէք ծաղկած հաց պիրո̈ւց։ Մըէր էն կյօթը կօտրած ղըմա̈լթին էլ քաշէց, էն հացը ղըմա̈րա̈-ղըմա̈րա̈ կըտօրէց, պիրո̈ւց էտ ղըլղըլան ղազղանի մէշը ածէց։ Մի ծո̈ւ էլ գա̈նգէց, իրէսին քյըցէց, տա̈ռա̈վ մի սալամաթ պա̈ն։

— Ի, քու կարկաժին վէ տամ, ղէ էն ա սաս կօնչօլ էս լյա̈փէլ, էլի։

Պատմեց Հայկ Խեմչյանը (ծն. 1907 թ.)

Մի տըղա տընըփէսա յա քյընա̈ցա̈ծ ըլէլ։

Զա̈նքա̈շը, մին էլ իրա կընիկը տըրան հալածէլիս էն ըլէլ, միշտ ուզըմ ին ճընշած պահէն։ Էտ մառթին ամէն ամիս մի ցուցակ էն տըվէլ, թէ օրը ինչ դի անի։

Տա յէլ ինչ-վըէր ցուցակըմը կյըրէլ էն, էն էլ անըմ ա։

Օրէրիցը մի օր զա̈նքա̈շը բաղնիքըմը լըղընալիս վախտը գազի ֆըէտիցը նըղավըմ ա։ Ախճիկը կարըմ չի յէտ պիրի։ Մառթին ասըմ ա.

— Այ մա՛ռթ, զա̈նքա̈շըտ բաղնիքըմ նըվաղէլ ա, յէ քյօ̈մա̈կ ա՛րա։

Մառթըն էլ ասըմ ա.

— Այ կընի՛կ, կացի քյընա̈մ տէնամ ցուցակըմը կյըրա̈ծ ա, նօր կյա̈մ քյօ̈մա̈կ անէմ։

Կընիկը ասըմ ա.

— Չէ, իմ մըէրը մըէռնըմ ա, արի տանէնք տուն, շըքէլ ցուցակին մըտիկ անէս, իմ մըէրը կըմէռնի։

Մառթը քյընըմ ա ցուցակը վէր ունըմ, կառթըմ ա տէնըմ, վըէր տըրա մասին պա̈ն չէն կյըրէլ։ Ասըմ ա.

— Այ կընի՛կ, էտ մասին կյըրա̈ծ կա վէչ, յէս կարալ չէմ քյօ̈մա̈կ անէմ։

Պատմեց Լևոն Մարդանյանը (ծն. 1929 թ.)

## Ուխայը (*կրճատումներով*)

*Մի քյասիբ մարթի մի տըղա յա լըմ։ Մըտածըմ ա, թէ ինչ փէշակի տա, տանըմ ա Ուխայի կուշտը։*

*Էտ ա վըՙր տարին ըլըանըմ ա, հէրը կյալիս ա տըղին տանի, տէնըմ ա հըլէ սըվէրէլ չի։ Վէր ա ունըմ քյըրնըմ իրանց տուն։*

*Ճամփին տըղան ասըմ ա.*

*— Տու ըստէղ նըստի, յէս քյընամ էն քօլըմը մի պան կա, վէր ունէմ կյամ։*

*Մի կօվ կյալիս ա հօրը պօզահարըմ։ Հէրը ուզըմ ա փըռնի, կարըմ չի։ Հէրը շատ ա նէղանըմ տըղի վըրա։*

*Վըՙր մի քիչ քյընըմ էն, տըղէն ասըմ ա.*

*— Էն ղօլին մի ծիտ ա ծըվըվըմ, հիլ արա քյընամ, տէնամ էն ի՞նչ ա։*

*Տըղէն քյընըմ ա. մի տըմակը մըՙծ ղօչ ա տառնըմ, կյալիս հօրը պօզահարըմ։*

*Մի քիչ էլ վըՙր քյընըմ էն, տըղէն էլի յա քօլը մըտնըմ։ Տառնըմ ա մի լյավ ծի, կյալիս հօրը կուշտը ու ասըմ, վըՙր էտքան պանէրը յէս էմ ըլէլ։ Ըստի տըղան հօրը ասըմ ա.*

*— Իմ նօխտէն յէս էմ։ Վըՙր ինձ կըտնէս բազար, էտ Ուխայը ինձ առնիլ դի, նօխտէն տաս վէչ։ Թէ տըվիր, ինձ ըսպանիլ դի։ Ծիյին կինը հարիր հազար մանէթ ա, նօխտէն տաս վէչ։*

*Հէրը նըստըմ ա քյընըմ բազար, տէնըմ ա Ուխայը յէկավ, ասէց՝ ծիյին, նօխտէն ի՞նչ դէմ տալ։ Հանըմ ա էրկու հարիր հազար մանէթ ա տալի։*

*Վըՙր տա ասըմ ա, ծին վըՙտէրը տափօվն ա տալի, վըՙր թանգ ա։ Համա հէրը հըսկանըմ չի, ծին, նօխտէն տալիս ա, ըրխացած քյընըմ իրանց տուն։*

*Ուխայը մըտնըմ ա տուն, վըՙր թուրը պիրի, ծին ծիտ ա տառնըմ, փախչըմ։ Ուխայն էլ տառնըմ ա մի ղըրղի, ծըտի հէտնէն ինգնըմ, քյընըմ էն մի հըրսանիք։*

*Ծիտը տէնըմ ա, վըՙր ղըրղին հասնըմ ա, մի փունջ մընիշակ ա տառնըմ, ինգնըմ փէսի դօշին։ Ղըրղին էլ մի աշուղ ա տառնըմ՝ սազը ծէռքին։*

*Շատ յէրքիլիցը յէղը աշուղը ասըմ ա՝ փէսի դօ̈շի փունջն էմ ուզըմ։*

*Հըրսընքավէրնին մընըմ էն պէլացած. ասըմ էն՝ տա փէսի ղըսմաթն ա։*

*Աշուղը ասըմ ա՝ չէ, էտ էմ ուզըմ։*

*Պիրըմ էն մընիշակը տալիս տըրան։ Մընիշակը տա̈ռնըմ ա կօրէկ։ Աշուղն էլ տա̈ռնըմ ա թուխսը, կօրէկին հիս ըլըմ, ուտըմ։ Մի հատ կօրէկ մընըմ ա թըխսի պըճղի տակին։ Էտ կօրէկը տա̈ռնըմ ա ասէղ, թուխսըն էլ տա̈ռնըմ ա թէլ։ Ասէղն էլ փէչն ա մըտնըմ, ու թէլը վառվըմ ա, կօրչըմ։*

*Պատմեց* Հրանուշ Գուլակյան *(ծն. 1928 թ.)*

## Հօսէփի ճա̈շը

*Մըէր կյէղացի Հօսէփը քյընա̈ցէլ ա ճաշարան, տէհէլ ա ճա̈շի ցուցակը կըպցըրած ա։ Ցուցակը կառթէլ ա, վէրչըմը կյը-րա̈ծ ա լէլ Լայլը։ Ասէլ ա թէ՝ էսքանիցը կէրէլ էմ, մինակ Լայլը չէմ կէրէլ, տէնանք էտ ի՞նչ ա։ Ճա̈շ պիրօղին կանչէլ ա, ասէլ՝ քյէ մատաղ, ինձ մըհար մի Լայլը պի՛։*

*Էտ կընիկը քյընա̈ցէլ ա թըրմասկը լըցրէլ, ըստիյան-ընդի-յան հըվաքէլ, պիրէլ տըրէլ էտ մառթին ղաքին։*

*Հօսէփը ասէլ ա՝ ի՞նչ դէմ տալ։*

*Մատուցօղը թէ՝ մի շա̈հի։*

*Ուտիլիս վախտը էտ մառթը խօրակի միչին մի կըտօր քէ-չա յա տէհէլ։ Ասէլ ա՝ էս ի՞նչ ա։*

*Մատուցօղը ասէլ ա. «Բա մի շա̈հի յէս տըվէլ, ուզըմ էս կարպէտ տո̈ւս կյա̈։*

*Պատմեց* Հրանուշ Թիրաքյանը *(ծն. 1939 թ.)*

*Մի օր տըղէն ապահօվագըրութէնի թէրթիկը ծէռին քյընա̈-ցէլ ա տուն, թէրթիկը տըվէլ մօրը, ասէլ՝ լյա̈վ պահի։*

*Մէրը ասէլ ա՝ բալա ջան, էտ ի՞նչ ա։*

*Տըղէն ասէլ ա.*

*— Ա՛մայ ջան, վըէր մըէռնէմ, շատ փօղ դի տո̈ւս կյա̈լ, լյա̈վ պա՛հի։*

*Մէրը ասէլ ա.*

— Բա՛լա ջան, յարաբ ըը՞է աշկ կըլի, վըէր ըը՞է պա՛ն ակնանք։

Պատմեց Հռանուշ Թիրաքյանը

## ՎԵՐԻՆ ԱՂԴԱՆԻՑ

Հին վախտը մի թաքավէր ա լէլ, ինքն էլ ծառա յա ունէ-ցէլ։ Մի օր թաքավէրը էտ ծառանէրին կանչէլ ա, ասէլ.

— Ամէքիտ մի հարց դէմ տալ, յէթէ հարցիս պադասխանը տաք վէչ, իրէքիտ վիզն էլ կըտրիլ դէմ տալ։ Էտ ա մընին ասէլ ա՝ աստոծ դö՞րն ա մըտիկ անըմ։

Նա պադասխանէլ չի։ Ասէլ ա՝ ի՞նչ էմ գիդըմ աստոծ դö՞րն ա մըտիկ անըմ։

Թաքավէրը վըէր էն մընին էլ ասէլ ա՝ յէրգինքի աստէղնին քանիսն էն, տա հըրաժարվէլ ա։ Էն յէռօրթին էլ ասէլ ա՝ աստոծ ի՞նչի մասին ա մըտածըմ, էտ էլ ա հըրաժարվէլ։

Թաքավէրը հըրաման ա տըվէլ, վըէր տարէք իրէքի վիզն էլ կըտրէցէք։

Ժանդարին ղաքին տընիլիս տըէղը մի ճըմփնօրթ պըդահէլ ա, թա՝ էտ ո՞ւր էք տանըմ։ Էտ իրէք մառթիքը պատմէլ էն։

Էտ ճըմփնօրթը ասէլ ա՝ յէտ պի՛, յէս կըքնընա՛մ պադաս-խանէմ։

Ժանդառը տըրանց յէտ ա պիրէլ, թաքավէրի ղաքին կաղ-նըցըրէլ։

Հըմի թաքավէրը էն իրէք հարցն էլ տալ դի։ Ասէլ ա՝ աստոծ դö՞րն ա մըտիկ անըմ։

Էն էլ թա՝ դöրը մըտիկ անէս, աստըծօ իրէսն ա։

Թաքավէրը ասէլ ա՝ ըստըղնին քա՞նիսըն էն։

Ասէլ ա՝ տöւ քու կըլխիտ մազէրը հաշվի, յէս էլ կասէմ ըստըղնին քանիսըն էն։

Էս էրկու հարցի պադասխանը վըէր տըվէլ ա, էն իրէք մառ-թիքը ասէլ էն՝ տըղէ՛ք ջան, հէնց ա մըէզ թափիլ դի։ Ըրխացէլ էն։

Թաքավէրը յէռօրթն էլ ասէց՝ բա աստոծ ի՞նչի մասին ա մըտածըմ։

Էտ մառթը թա՝ մի ժամ իրավունք տու, էտ էլ քէզ կասէմ։

*Ժօղօվուրթն էլ վըհաքված ա լէլ։ Էլի յէն յէկէլ շըտացէլ, վըէր էտ պյանը տըհի յա։*

*Էտ ա էտ թյուշյումը մառթը ասէլ ա.*

*Թաքավէրական պէնջակըտ ինձ տո՛ւ, ասէմ։*

*— Թաքավէրական շօրէրը կյէցէլ ա, քյընյացէլ ըստօլին նըստէլ ու ասէլ.*

*— Աստօծ նըրա մասին ա մըտածըմ, վըէր յէս թաքավէր տյանյամ, տյու յէլ ռյանչպյար, ծառա, վըէր գյիդէնաս ծառային նէղացընիլ չէն։*

*Թաքավէրը վըէր տէհէլ ա պադասխանը տըհէ տըվուց, ուզէցէլ ա վըրա տա, պէնջակը խըլի, էտ մառթը թըրավէրնէրին հըրամայէլ ա, վըէր տըրա վիզը կըտրէն։*

Պատմեց Արշակ Բեգնազարյանը *(ծն. 1887 թ.)*

*Մի թաքավէր մի մէտրը փալաս ա առէլ, ծառային հըրաման տըվէլ, վըէր էտ մէտրը փալասը մի յօրղան սարքի՝ վէշ վէտէրըս րէվա, վէշ էլ կյըլուխըս։*

*Էտ ծառան հըրաժարվէլ ա, ասէլ ա. «Քու բօյը էրկու մէտըր ա, վըէ՞նց սարքէմ»։*

*Թաքավէրը հըրաման ա տըվէլ, վըէր վիզը կըտրէցէք, խի՞ չի կարըմ։*

*Հըլէ մի ճըմփնօրթ պըդահէլ ա, ասէլ.*

*— Ի՞նչ ա ըլէլ։ Յէս պադասխանը կըտամ, յէտ պիրէք, ըսպանիլ միք։*

*Քյընյացէլ ա թաքավէրին ասէլ՝ պըրանվի։ Փալասը կըլխին ա քյըցէլ, մի փէտ վէ կալէլ, վըտնէրին տըվէլ։ Մին էլ վըէտնէրն ա ծածկէլ ու կյըլյուխն ա թակէլ։*

*Թաքավէրը ասէց՝ խի՞ թակէցիր։*

*Էտ մառթն էլ թա՝ քու կարպէտի գյօրյա չէս մըէկնըվըմ։*

*Թաքավէրը իրա ծառային ըզատէլ ա։*

Պատմեց Արշակ Բեգնազարյանը

**ԻՋԵՎԱՆԻՑ**

**Օսանը**

*Մի մառթ լյավ ռյանչպյար մառթ ա ըլըմ, լյավ էլ ընտանիք ա ունէնըմ։ Յէփ տըրա կընիկը մըէռնըմ ա, տունը ըսկըսվըմ ա*

քայքայվիլը։ Քյընըմ ա մի կընիկ պիրըմ՝ անըմը Օսան։

Էտ Օսանը ըսկըսըմ ա ըէխանցը թակիլը։ Մառթի հըմար ճաշ չի էփըմ, օքմի յէլ լըսըմ չի։

Մի օր էտ մառթը քյընըմ ա, վըէր յէզնիքը քյթնի, տէնըմ ա քօլի միչին մի խոր փօս, ասըմ ա. «էս ա լյավ ա, քյընանք Օսանին պիրէնք, քցէնք մէչը, նըրանից պըրծընէմ»։

Քյընըմ ա կընգյանը ասըմ.

— Այ կընի՛կ, մի թօկ վէ կա՛լ, մի փօս կա քօլըմը, միչին էլ վըէսկի կա, քյընանք հանենք։

Կընգյանը խափըմ ա պիրըմ փօսի կօխկը։ Վըէր կընիկը փօսին յէշըմ ա, մառթը բըռթըմ ա, քցըմ մէչը, թօղըմ քյընըմ տուն։

Էրկու օրից յէտը կյալիս ա տէնըմ փօսի միչիցը մի օց կանչըմ ա, խընթըրըմ, ղանչաք անըմ ա.

— Ա բի՛ձա ջան, ինձ ըզադի էս Օսանի ծէռիցը։

Էտ ա մի հանքօվ մառթը օցին հանըմ ա, Օսանիցը ազադըմ։

Պատմեց Վիկտոր Խեչյանը (ծն. 1920 թ.)

Մի թաքավէր իննասունհինգ տարէկան ա լըմ։ Տա՛ ուզըմ ա ջահիլանա։ Կանչըմ ա յէրգըրի հէքիմնէրին, վըէր իրան ջահիլացնէն։ Օվ վըէր կյալիս ա, ատկազ անըմ ա, ասըմ ա. «Մառթին մըէռնիլի վախտըն ա, էլ ի՞նչ դի ջահիլանա»։

Ցէփ չիմ ատկազ էն ըլըմ, իրա տարիքին մի պառավ հէքիմ ասըմ ա, վըէր յէս քէզ դարման կանէմ, թէ իմ ուզած տէղէրը ճարէս։ Ասըմ ա «ծօվըմը մի վըէսկի ծուկ կա, էտ ծուկը թէ պիրէս, քէզ կըսարքէմ մի ջահիլ մառթ»։

Էտ թաքավէրը իրան ինչքան թօռչի ունէր, չիմ էլ տանըմ ա ծօվը։ Մի հատ էլ տըղա ունէր. էտ էլ պըռավի հէտ ա տընըմ ու ասըմ.

— Օվ վըէր փըռնի, իրա քաշօվը մի վըէսկի կըտամ։

Թօռչիքը ըսկըսըմ էն թօռ քցիլը, թէ օվ դի վըէսկին շահի։

Պառավ մառթը մի քանի հէտ քցիլիցը յէդօվ տէնըմ ա վըէսկի ծուկը մէչը, կանչըմ ա.

— Ա՛յ-վա՛յ, թաքավէրին տըղան ապրած կէնա, հօրըտ դարմանը քթանք, վըէսկին էլ շահէցինք։

*Տըղան ծո̈ւկը վէր ա ունըմ պառավի ծէռքիցը, յէշըմ, տէնըմ ա էնքան սո̈ւրո̈ւն ա, վըէր ղէմիշ շանըմ աշկէրը ծըկնից քյըցի։ Իրան-իրան ասըմ ա. «էտ ա, թէ թաքավէրը իմ հէրն ա, արթէն իննա̈սունհինգ տարէկան ա, արթէն մըէռնիլի վախտն ա, հայիփ չի էտ ծո̈ւկը իմ հէրը ուտի, էրկու, իրէք տարի ապրի»։ Ասըմ ա ու քյըցըմ ծօվի մէշը։*

*էտ պառավ թօռշին էլ կըլխին, վըէտին տալիս ա՝ խի՞ իմ տունը քանդէցիր։*

*Տըղան պիրըմ ա թաքավէրի խօստացած վըէսկին տալի, յէդօվ էլ պահ տալի, վըէր օքմի պա̈ն չաաէս։*

Պատմեց Մուկուչ Սահրադյանը *(ծն. 1909 թ.)*

## ԹԱԼԱՅԻՑ

*Յէս քըսանիրէք թըվին սալդաթ տէղից յէկէլ էմ տուն, տանից էլ քյընա̈ցէլ սար՝ խօզէրի կուշտը։ Խօզէրի կուշտն էմ քյընա̈ցէլ, վըէր մըտիկ անէմ։ Իրէք հընգէրօվ ինք։ Մըէնք մըէր միշին վօրօշէլ էնք, վըէր մի հատ ախճիկ փախցընէնք։*

*Հըմի աճարի բօլ տարի յա։ Քյընա̈ցի քօլի մէշտէղը, տէհա կընանիքը աճար էն վըհաքըմ։ Մընին հարցըրի՝ Գյիգա̈նա̈նց կընանիքը վըէ՞րդի յէն վըհաքըմ։ Մի հարս ասէց՝ խըմհատի կըլխին հըրէտ վըհաքըմ էն։*

*Ըտէղից մըէնք ճամփա ինգյա̈նք, յէկանք տըհանց կուշտը։ Հըմի էտ տըղի մըհար փախցընիլ դէնք։ Յէս էտ տըղին ասի.*

*— Տո̈ւ քյընա̈՛ ըխճըկանըտ փըռնի, մըէնք կյա̈նք քըէզ քյօմա̈կ անէնք։*

*էտ ա էտ տըղէն քյընա̈ց էտ ըխճըկանը կըռնատակը կալավ, վըէր տանի, մի շուն վըէտիցը փըռնէց, կըծէց։ Վէրշը վըէր տըհանք էրկու հընգէրօվ վէ կալան, յէս աշկար չի տո̈ւս յէկա։ Յէդօվ ըէվուտկը ըլա̈, ասի՝ ի՞նչ խա̈բա̈ր ա։*

*էտ կընանիքը ասին՝ Փառանձիմին փախցըրէլ էն։*

*Յէս էլ ասի՝ ա ըըհանց-նըհանցը։*

Պատմեց Գարեգին Այդինյանը *(ծն. 1897 թ.)*

*Ծէս ու էտ փախցըրած Փառանձիմը էրկու ախպօր էրէխա ինք։ էտ վախտը յէս էլ չօբան էմ, վըէխչարն էլ սա̈րըմըն ա։*

*Յէս թօղէլ էմ յէկէլ կյէղը։ Վըէր քյընացի հասա կյէղի կյըլուխը, տէհա էս Գարէգինը, մէկ էլ Աղաբէկը ինձ պըտահէցին։ Աղաբէկը ասէց.*

*— Խընամի Ա՛րտաշ, խի՞ չէս պիրըմ մըէր Փառանձիմին տանք մըէր Համփարցումին, տըհանք իրար սիրըմ էն։*

*Յէս էլ ասի.*

*— Պա տա իմ պյա՞նն ա, մըէր տանը մըէծէր ունէնք։ Յէթէ ախճիկը համաձայն ա, յէս ի՞նչ դէմ ասիլ։*

*Վըէր հասա Ծակ քարի յալի պօպօքնիքի կուշտը, հըմի տըհանք ճօկվէցին։*

*Յէս Թուխ ախպըրի ճամփէն նի քյընացի Ըստէփանի խըմհատի կըլխին տէհա կընանիքը աճար էն վըհաքըմ։ էտ կընանօց միջին մի մըէծ կընիկ կար՝ անըմը Սօնա յէր։ Սօնան ասէց, վըէր էտ տըղէքը ծըէր խալխին տէղակ տըվին։ Ասէցի՝ ը՛հը, մի պյան կա ստի։ Յէդօվ Անդրանիկին ասէցի.*

*— էտ տօղլէնիքը աղաք արա տա՛ր, յէս էլ տէհամ էտ տըղէքը ի՞նչի չէն ման կյալի։*

*Քյընացի հասա կյէղի կօխկը, մըէր ժօղօվուրթին քյըթա վէշ։ Տուս յէկա տափէրի վըրա, տէհա ղըլմըղալ ա կյալի։ էտ ա վըէր մըտիկ արի, տէհա ըխճըկանը էտ էրկուսը ամէքը մի կըռնիցը փըռնած կյէրանի նըման քաշ տալէն պիրըմ էն։ Հըմի էլ քօլն էն տանըմ։ Ծէռիս էլ փէտ չըկա։ Մի աճարի չօր ճուղը կար։ Վէ կալա հասա, էտ չօրուկօվը Համփարցումին տըվի, վէր ինգյավ։ Հէտի հընգէրը ինձ փըռնէց։ Ախճիկը տուս պըռծավ, փախավ։*

*Հըրօխպէրըս էլ ասըմ ա՝ դատի դէմ տալ։*

*Յէդօվ Քօքօրը կյալիս ա տէնըմ Հայրօն դատի յա քյընըմ, ասըմ ա.*

*— Ա Հա՛յրօ, ամօթ ա, բարիշէնք, քյընա։*

*Հայրօն ղընամիշ ա անըմ։*

*Յէտ էն պիրըմ, բարիշացնըմ։ Ախճիկը տալիս էն տըղին։*

Պատմեց Արտաշ Խաչատրյանը *(ծն. 1901 թ.)*

ԵՆՈՔԱՎԱՆԻՑ

Ապկա՞ր թաքավէրի պատմութինը *(կրճատումներով)*

*Ըլըմ ա, ըլըմ չի, մի թաքավէր ա ըլըմ։ Էս թաքավէրին ի-*

րէք տըղա յա ունէնըմ։ էտ տըղէքն էլ փըսակա հասած տըղէք էն ըլըմ։

Մի օր Թաքավէրն ու վըզիրը դըվրիշի շորէր հաքան, նա-ջաղը վէ կալան ու ճամփա ինգյան։ Տընէտէռու ման էկան, սը-րան-նըրան հալ ու հարց ըլըն՝ Թաքուն ախճիկ էն ման կյալիս։ Քյընացին մի նախըրչու տուն, մի շատ սիրուն ախճիկ տէսս յէկավ, յէկավ տըրանց կուշտը։ Մի քիչ մընացին, մինն էլ յէ-կավ։ Իրէքը տըռըն։ Ըտէղ կէրան, խըմէցին, կուշտացան։

Ռավէտը լիսը պըցվէց, դըվրիշ ախպէրնին ղու ըլըն ու քյըցին հասան իրանց քաղաքը։ էս Թաքավէրը իրա վըզիրին հըրաման տըվուց, վըէր էքօծ մի հարիր հըզար մանէԹ փող վէ կունէս ու կըտանէս, էտ նախըրչին շատ քյըսիբ ա, մի կէս Թուժար կըշինէս։

Վըզիրը փողը վէ կալավ, քյընաց հասավ հէնց էն քաղա-քը, նի մըտավ նախըրչու տունը։ Հանէց փողը, տըրուց ղաքին։

Նախըրչու աշկէրը չըռվէց։ Շատ զարմացավ ու կատակ մը-ցավ։ Հէնց գիդի, Թէ շուլուղ ա անըմ։

Յէդօ մայիսին յէկան, իրէքին էլ հըրսանիք արին, կէրան, խըմէցին, շատ ըրխացան ու քյըցին։ Շատ քյըցին, քիչ քյըցին, մի տըէղ մուԹը վըրա հասավ։ Ըտէղ ամէնքը իրանց չադըրնին շինէցին ու քընէցին։ Ըտէղ պուճուր տըղէն կօրավ ու կօրավ։ Շատ ման յէկան, քյըԹըն վէչ։

Հըմի տըրա կընիկը վէչ քյընըմ ա իրա հէրանց, վէչ էլ կյալիս ա տըղի տուն, ըտէղ էլ մընըմ ա խէյրաԹխընըմը։

Յէկան-քյըցին, կէրան-խըմէցին, սըրան-նըրան շատ հար-ցըփօրց արավ ու էկօղին մի վըէսկի տըվուց, մառԹին քյըԹըվ վէչ։

Հըմի խըբըրը տանք մի քօռ ու Թօփալից։ էտ Թօփալը աշկը քյցէց տէս ու տէն, մըտիկ արավ, տէհավ մի ծառի վըրա մի մըէռէլի ղուշ ա տըրըծ։ Քյընաց վէ պիրուց։ Պըց արին տէ-հան մի շատ սիրուն տըղա յա, կօճակնին աչ ու Թըրս մէր ածած, բըգի վըրա մի հատ կախարդական քար տըրըծ։ Վըռազ-վըռազ էտ կօճակնին հէտ քաշէցին, քարը բըգիցը վէ կալան։

էտ տըղէն հէնց նըստէց, ընքէլ ասէց.

— Հուրուքէրը հըրէս կըկյըն, ծըէգ կըվընասէն, շուտ արէք կօճակնիս մէր ածէցէք։

Կօճակնին մէր ածէցին, քարը տըրին բըգի վըրա, վէ կա-

*լան տըրին ծառին։ Ճամփա ինգյան, յէկան հասան էտ խէյրաթ-խանէն։*

*Էտ ախճիկը տըրանց ուտըցըրուց, խըմըցըրուց, հինգ-հինգ վըէսկի տըվուց ու թօփալին մüննաթ արավ, ասէց՝ գյընանք, ինձ շահանց տո՛ւ։*

*Էլի յէկան, վէ պիրին, կօճակնին հէտ քաշէցին, քարը վէ կալան տըրին էն ղօլը, կէրան, խըմէցին, թէփ քաշէցին։ Մի տասսը օր, տասնըհինգ օր կընիկը յէկավ, քէփ քաշէցին։*

*Մի օր էլ կօճակնին ճիշտ չի մէր ածէց, հüրüքէրէրը կըլ-խու ինգյան, վըէր ղանջըղը յէկէլ, գյըթէլ ա։*

*Էտ հüրüքէրը ղուբը վէ կալան, Սէվ ծօվի ու Սիպտակ ծօվի ըրանքըմը մի հատ տըրախտական բախճա կա, տարան գյըցէցին ըտէղ։*

*Պատմեց* Գրիգոր Բեջանյանը *(ծն. 1905 թ.)*

## ԱԿՆԱՂԲՅՈՒՐԻՑ

*Էտ կյöղէրը գյընացէլ էն անց կըցէլ, ըշխադէլ ու շատ վըէս-կի պիրէլ։ Տըհանք կօճակնին տէղէրն էլ ին վըէսկի տըրէլ։ Յէ-կէլ էն վըէր ճամփէն նի անց կըէնան, մի կօճակի արանքը պüց ա լէլ, վըէսկին տէհէլ էն։ Գյընացէլ էն կյէղըմը ասէլ, վըէր սը-հէ-սըհէ մառթիք կան, վըէսկի շատ ունէն։*

*Յէկէլ էն թամüզ վէ կալէլ, տըհանց աղաք արէլ, վըէր տա-նէն կըտօրէն։ Զօռս մառթ էն ըկէլ՝ քըշէլ էն տարէլ։*

*Շատ էն գյընացէլ, քիչ, ճամփի վըրա էտ վէց կյöղէրը ա-սէլ էն, վըէր մըէզ կըտօրէն վէչ, յէկէք կըռիվ անէնք։ Տըհանց կըտօրէլ էն, յէտ տառէլ նույն կյէղը գյընացէլ։ Իրէքը զարա-վուլէն կաղնէլ, իրէքն էլ գյընացէլ էն էտ պառավին ասէլ.*

*— Ինչ վըէր մըզանից թըլանէլ էք, վէ կալէլ, հա՛նի։*

*Ջիմ էտ վըէսկէղէննին հանէլ ա իրանց տըվէլ։*

*Հընգէրնին ասէլ էն, վըէր պըռավի յաղլուխը ռէխը կօխի, մըէնք էլ գյընանք։*

*Պատմեց* Ավետիք Մայիլյանը *(ծն. 1887 թ.)*

*Հüզüր իննը հարիր վէց թըվին մի ախճիկ էմ փըխցըրէր ու տարէլ քօլը։ Իրէք օր մընացէլ էնք քօլըմը։ Ախճիկը ինձ ու-զէլ ա, յէս էլ վէր էմ կալէլ, փախէլ։*

էն ա հէրը համաձայնվէր վէշ ու տէրտէրին ասէց, վըէր զօ-ռի յա տարէլ իմ ըխճըկանը։

Ախճիկն էլ ասէց.

— Ցէս զոռի չէմ քյընացէլ, յէս ուզէլ էմ, ինքն էլ ինձ տա-րէլ ա։

Տէրտէրը փըսակէց։

Հէրն էլ օխտը տարի խըռով կըցավ։

Պատմեց Ավետիք Մայիլյանը

## ԼՈՒՍԱՁՈՐԻՑ

Թալիցը մի քյöխվա յա ըլէլ՝ անըմը Կօլյա։ Լուսաժöրն էլ ըլէլ ա էտ մառթին իրավունքին։ էն ա վըէր կյäլիս ա մըէր կյէ-ղը, ըսկըսըմ էր ժօղօվուրթին անպատվիլը։

Մէմէնձ մառթիքը վօրօշըմ էն, վըէր տըրան թակէն։

Իսկ մի մառթ ա ըլըմ՝ անըմը Ռուշան։ Ասըմ ա, վըէր ինձ քյöմäկ անէք, յէս նըրա կըթակէմ։

Ժօղօվուրթը չիմ խօսկ էն տալի, վըէր մէնք քու քըմակին կըկաղնէնք։

Հէնց էքսի օրը քյöխվան կյäլիս ա կյէղը, էլի ըսկըսըմ ա հուշöւնց տալը։ Ռուշանը էտ վախտը տըրան ծիյի վըրիցը վէր ա պիրըմ, տընըմ ա տակին, վըէր տա, իրան խօսկը տըված մառթիքը հըրաժարվըմ էն, մինն էլ ա մօտանըմ չի։ էն ա, վըէր տէնըմ ա իրան նախատըմ էն՝ խէլօք կա՞ց Ռուշան, խէլօք կա՞ց Ռուշան,— վըրիցը ինքնըմ ա քյöխվի տակը։

Քյöխվէն ժօղօվուրթի առաչ ըսկըսըմ ա Ռուշանին թակիլը։

Ռուշանը էտ օրից չըքէլ մըէռնիլը ժօղօվուրթիցը խըռով ա ըլըմ։

Պատմեց Ջարմայել Սարդարյանը (ծն. 1906 թ.)

Հին ժամանակ ժօղօվուրթիցը վըէր մըէռնօղ ա ըլէլ, ասին տէրտէրին պէտք ա էնքան պան տան, վըէր յէտ չի մըտիկ անի, թէ չէ յէրգըրօրթ մըէռնէլն էլ տöւս կըկյä տանիցը։ Մըռլի շօրէրը տալիս ին տէրտէրին։ Ցէթէ տէրտէրին չըտան, մըէռէլը տըրախ-տը չի քյընըմ, տըժօխքն ա քյընըմ։ Տըրա հէտ յէթէ մըէռնօղը

*փըսակված չի ըլըմ, տըռնօվը հանըմ չէն. պատը քանդըմ էն, պատօվը հանըմ, վըէր տան ըէխէքը անփըսակ չըմընան։*

*Պատմեց* Զարմայել Սարդարյանը

*Վէց լյո̈ւծ ուլախը լըծած վար ինք անըմ։ Մըէզ հէտ մի ջա̈հիլ տըղա յէլ կար։ Ըրգյինէց վըէր ուլախը բըզա̈րա̈ծ էր ըլըմ, տա կյո̈ւլթա̈նը թօղ անէր, ինքը ըսկըսէր հօռօլ տալը։ Մըէզ էլ զըռթնա̈ցընէր, հիլ չէր անըմ, վըէր քընած մընանք։*

*Տըրանից յէտօ քյընինք սարըմը անասնապահ։ Էն ծաղիկնէրիցը տասնէրկու փունջ անինք ու բուղի ճըկատիցը կապինք։ Վըրթըվէրի ժամանակը պիրինք դա̈գի տո̈ւնը, վըէր բուղի տէրը ըրխանա, մըէզ յէղ-պա̈ն տա։*

*Պատմեց* Ասխանազ Մատինյանը *(ծն. 1901 թ.)*

## ԱՉԱՋՐԻՑ

*Ռաշիդ թաքավէրը դիլա̈նչու շօրէր ա կյէնըմ ու տըռնէտո̈ւռ ման կյա̈լի։ Մի քյըշէր մի կյէղի ղըրաղօվը քյընա̈լիս տըէղը տէնըմ ա մի ճըրաք ա էրէվըմ։ Տըռնիցը ծէն ա տալի, վըէր խընթըրըմ էմ էս քյըշէր ինձ տէղ տաք։*

*Տան տէրը տո̈ւս ա կյա̈լի, ասըմ.*

*— Ա՜րի, դիլա̈նչի ախպէր, տունը քունն ա, ինչը տանը կըլի, յէս էլ կուտէմ, տո̈ւ վէլ կուտէս։*

*Էտ մառթը տէհավ, վըէր իրէք մառթ էլ կան սէղանին նըստած, կյինի յէն խըմըմ, շուլուղ էն անըմ։ Ու մի թո̈ւշո̈ւմ էտ իրէքն էլ քյընա̈ցին, մընաց տան տէրը։ Դիլա̈նչին տէհավ շատ քյա̈սիբ էն։ Հարց տըվուց, թէ էս ի՞նչ քէփ ա, վըէր անըմ էք։*

*Հասանը ասէց. «Քյա̈սիբ մառթ էնք, օրին հացը ըշխադօղ մառթ էնք. օրական շատ ըշխադէնք, քիչ ըշխադէնք, պէտք ա քէփ անէնք, կյինի խըմէնք»։*

*Դիլա̈նչին ասէց՝ ի՞նչ փէշակ ունէս։*

*Ասէց. «Կըրկատան անօղ էմ։ Օրական էրկու մանէթ էմ առնըմ, ուրախ ապրըմ»։*

*Ասէց՝ բա էս քէփը ի՞նչօվ էս անըմ։*

*Ասէց.*

— Դիլա̈նչի ա՛խպէր, քէփը փօղօվը չի, յէթէ կընիկըտ քէ-փօվըտ ըլի, ըէխէքը ուրախ ըլէն, միշտ քէփ կանէս։

Հըմի տէղ էն շինըմ։ Կընիկը մի լանթօտ յօրղան պիրուց, ինքը էս կօխկը պառկէց, Հասանը էն կօխկին խընդօրին տը-վավ, էրկու ըէխէն տըրո̈ւց մէշտէղը։

Հասանը դիլա̈նչուն էլ ուզէց իր կօխկը պիրի, տա ասէց, վըէր իմ մըհար մըտածիլ միք, իմ շօրէրը ղալին ա։

Ռավէտը լ̈իսա̈ցա̈վ, դիլա̈նչին ասավ.

— Հասան ա՛խպէր, էս ինչ քնա̈սիր էս։ Յէթէ իրէք օր աշ-խադանքի քնընա̈ցիր վէշ, վըէ՞նց կըլի։ Ասէց ու քնընա̈ց։

Հասանն էլ քնընա̈ց կօրծ անի։

Էտ ժամանակ Ռաշիդ թաքավէրը պըրիկազ տըվուց, վըէր դո̈ւքա̈ննին էսօր պա̈ց չանէն։

Հասանը մի կուժ ճո̈ւր վէ կալավ, ճամփու ղըրաղին նըս-տէց, ըսկըսէց ճո̈ւր ծախիլը։ Սըրան-նըրան խընթըրէց, վըէր չիմ խըմէն, ըէխանցը տանի քնօ̈մա̈կ անի։ Էտ օրը էրկու մանէթ քա-ռասուն կօպէկի ճո̈ւր ծախէց։ Նույն րո̈ւգո̈ւնը էլի հընգէրնին յէկան ու քէփ էն անըմ։

Դիլա̈նչին էտ թո̈ւշո̈ւմ յէկավ, լալ ու քառ նըստէց, մըտիկ արավ էտ մառթկանցը։ Վըէր էտ իրէք մառթը քնընա̈ց, դիլա̈ն-չին ասէց՝ բա փօղը վըէ՞նց էս ճարէլ։

Հասանը ասէց, վըէր էրկու մանէթ քառասուն կօպէկի ճո̈ւր էմ ծախէլ։

Թաքավէրը էտ սէկրէտը մա̈ցա̈վ։ Տա հիլ արէց քնընա̈ց, պը-րիկազ տըվուց, վըէր վադապըրավօղնին փակէն, վըէր ճո̈ւր վէ չունէն։

Հասանը ըսկըսէց ման կնա̈լը, վըէր հացի փօղ ճարի, ըլա̈վ վէշ։ Տէհավ մի մառթ յէկավ, ասէց՝ մի փօս տէղ կա, կա՞րաս կըտրէս։ Հասանը կօրծը արէց։ Էտ մառթը պիրուց էրկու մա-նէթ հիցցուն կօպէկ տըվուց։ Ընդիյան յէկավ, էլի էտ տըղէքը յէկան, քէփ արին։

Դիլա̈նչին էլ յէկավ ու էտ սէկրէտն էլ մա̈ցա̈վ։

Էտ ռավէտը վըէր լ̈իսա̈ցա̈վ, թաքավէրը պըրիկազ տըվուց, վըէր Հասանին պիրէն։

Հասանը յէկավ։ Թաքավէրը նըրան պահակ կըղնըցըրուց, մի թուր էլ տըվուց իրան։ Էտ օրը առանց փօղ տալի Հասանին ճամփու տըրա̈վ, ասէց ռավէտը էլի դէս կնա̈լ։

Հասանը թուրը վէ կալավ քնընա̈ց տա̈րփնօցը մըտավ։ Էտ

*թուրը իրէք մանէթօվ ծախէց ու փէտի թուր շինէց, վըէր ռա-վէտը հէտը տանի։*

*Դիլյանչին յէկավ, էտ սէկրէտն էլ մացավ։*

*Ռավէտը Հասանը ք՚ընաց թաքավէրին յավից ըլավ։ Ռա-շիդ թաքավէրը ասէց.*

*— Էսօր մընին սըպանիլ դէն, Հասան, տու ք՚ընա տըրա վիզը ք՚ըցի՛։*

*Հասանին տարան, վըէր վիզը տա, ասէց.*

*— Թաքավէրը ապրած կէնա, ինձ տասնըհինգ րօպէ ժա-մանակ տու, աստըծուն խընթըրէմ, տէնամ էտ մառթը մէղավէր ա, թէ՝ չէ։ Յէթէ մէղավէր ա, թօ էս պօղվատի թըրօվը սըպա-նէմ։*

*Յէղօվ թաքավէրը ասըմ ա.*

*— Հասան ա՛խպէր, յէս էն դիլյանչին էմ, քու սէկրէտը մա-ցէլ էմ։ Տու մի ք՚յասիբ մառթ էս, արի մի թիթէվ կօրծ տամ, ապրի։*

Պատմեց Սիմոն Փիրումյանը *(ծն. 1890 թ.)*

## ՍԵՎՔԱՐԻՑ

*Մի հարուստ մի մինուճար տըղա յա ունէնըմ։ Էտ հէրն էլ ա մըէռնըմ, մէրն էլ։ Հօր քառասունքից յէդը մի հարէվան կ՚յէ-ղացու ախճըկա հէտ փըսակվըմ ա։*

*Մի քանի վախտ անց կէնալուց յէդը կընիկը խընթըրըմ ա մառթին, վըէր ծընօղնիս միտըս էն ինգ՚յէլ, ք՚ընանք իմ հէրանց։*

*Մառթը համաձայնվըմ ա։ Կընիկը պադրաստութին ա տէ-նըմ, ծիյանը նըստըմ էն, ք՚ընըմ։ Ք՚ընըմ էն հէրանց տուն։ Էտ րուգունը մընըմ էն։ Ռավէտը վէր էն կըէնըմ, զանքանը փէ-սին խընթըրըմ ա, վըէր հիլ արա էրէխէս մի էրկու օր մընա մըէր տանը։*

*Տըղէն տասը օր ժամանակ ա տընըմ, ու ինքը ք՚ընըմ։*

*Վըէր ծընօղը չի ժառանգի մըհար ցավըմ։ Հարցըփօրց ա անըմ՝ վըէ՞նց էս ապրըմ, ա բա՛լա։*

*Ախճիկը ասըմ ա. «Մէ՛րա ջան, ի՞նչ կա, քօծը ըղաքիս, մառթըս խաղէյին, յէս էլ խանըմ։ Մինակ մի պան ա պակսըմ։ Վըէր մի սիրէկան էլ ունէնամ, կ՚յանքը տուս կըլի ճըտըհար»։*

*Մէրը ասըմ ա.*

— Ա բա՛լա, ամէն մառթ չի, վըէր էտ պա̈նը տանըմ ա։ Տո̈ւ մառթիտ փօռցի, յէզօ էտ քայլին դիմի։ Ասըմ ա, վըէր ծէր տուն ղօնաղնի կյա̈ն, սուփրա կըշինէս, սուփրին պակաս պա̈ն թօղ կանէս։ Խալաթիտ փէշը կըկապէս սուփրիցը։ Մառթըտ վըէր նըկատի, ասիլ դի վէ կաց։ Վէ կընալիս տէղը վըռազ վէ կըկէ-նաս, վըէր սուփրին ըլա̈ծը շաղ դի հընցընիլ։ Թէ տարավ, էն էլ կըտանի, թէ՝ չէ, մըղէյիդ կաց, կընգյա̈նէս էտ լյա̈վ նիստ ու կացիցը, համ էլ էտ լյա̈վ մառթիցը։

Մօրը ասած, ըխճըկա լըսած։

Մառթը բէյխաբար, իրա արէվի սըրտօվը քյընըմ ա կըն-գյա̈նը պիրըմ, մի վըէրց մօռթըմ, սուփրէն պադրաստըմ, ու նըստըմ էն հացի։

Կընիկը ամէն ինչ տընըմ ա, սուփրըմը աղ չի տընըմ։ Էտ վախտն էլ արթէն խալաթը կապած ա ըլմ սուփրի փէշիցը։

Մառթը նըկատըմ ա, վըէր աղ չըկա։

Կընիկը վըռազ վէր ա թըռչըմ։ Էտ ա սուփրի վըրա ըլա̈ծը շաղ ա հընցընըմ՝ մընի վըրա կյինի յա թափվըմ, մընի վըրա խօրակ ա թափվըմ։

Մառթը ասէց՝ այ կընի՛կ, սուփրէն թարմացրու։

Կընիկը ըրխացավ, իրա միչին ասէց. «Ջան, քու պիրօղին մէշկին մատաղ, տարավ, էքօծ չէ էլօր իրանից կուլը կարմըրի հէտ ման կըկյա̈մ»։

Մառթն էլ իրա միչին ա մըտածըմ. «էն ա յէս տէհա, թէ տո̈ւ ինչ պիրիր իմ օջաղի կըլխին, էս ժօղօվուրթին ճամփու տը-նէմ, յէս քու դիվանը իմ ծէռօվը կըտէնամ»։

Էն ա վըէր ուտըմ էն, խըմըմ, թա̈միզն էլ քյընըմ էն իրանց տուն, տըղէն նօ̈քա̈րին ասըմ ա՝ քյընա̈մ դա̈լլա̈քին պի՛։ Տըղէն դա̈լլա̈քին ասըմ ա՝ կընիկս հիվանդ ա, պէտք ա արին հանէս։

Կընիկը մէշկը պատին դէմ անըմ ա, ասըմ ա՝ հիվանդ չէմ։

Ասըմ ա, թէ վըէր հիվանդ չիր, հա՛, իմ արթար սուփրէն խի՞ հըրամիր։ Ասըմ ա.

— Դա̈լլա̈ք ա՛խպէր, առնին դամարնին կըտրի։

Դա̈լլա̈քը առնին դամարնին կըտրըմ ա, արինը ըսկըսըմ ա քյընա̈լը։

Հարսի ռա̈նգը տէղնըմ ա։

Տըղէն հանըմ ա մի տասանօց վըէսկի տալի, մի պո̈ւռն էլ

վըէսկի ջիբից հանըմ ա, տանըմ ա տընըմ պըտըրհանըմը, ասըմ ա.

— Դա̈լլա̈քը ապրած կէնա, տանը կըլէմ, տանը չէմ ըլի, շա̈փա̈թը մի հէտ կըկյա̈ս արին հանէս, մի հատ վըէսկի վէ կունէս քյընա̈ս։

Կընիկը վըէր աշկը քյըցըմ ա վըէսկէնուն, շատ ա ըէվում, վախից պըռօշը ճաքըմ ա։

Ու էտ տըղէն տա̈ռնըմ ա Կավկազի թաքավէրը ու արքէլըմ ա, վըէր վըէրդի կա ճօխ սուփրա, ընդէղ ըլիլ չի դի կընիկ արմատ։

Պատմեց Բուլո Ալիխանյանը (ծն. 1932 թ.)

## ՍԱՐԻԳՅՈՒՂԻՑ

